Հ Ե Ղ Ա

ՁԵՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

Մարտավարության զորությունը

Փ Ո Խ Ու

ԳԱՐԻ ԿԻՍԻ

Թ Յ Ու Ն Ը

ՁԵՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

Մարտավարության զորությունը

ԳԱՐԻ ԿԻՍԻ

Your Financial Revolution,
The Power of Strategy, Armenian

Copyright © 2021 by Gary Keesee
Originally published in English
Copyright © 2019 by Gary Keesee
ISBN: 978-1-945930-14-0

Gary Keesee Ministries,
P.O. Box 779, New Albany,
OH 43054, USA
GaryKeesee.com

This book is a FREE GIFT from Gary Keesee Ministries and is
NOT FOR SALE

Ձեր ֆինանսական հեղափոխությունը.
Մարտավարության զորությունը, հայերեն

Copyright © 2021 Գարի Կիսի
Սկզբնապես հրատարակված է անգլերենով
Copyright © 2019 by Gary Keesee
ISBN: 978-1-945930-14-0

Գարի Կիսիի ծառայություն
P.O. Box 779, New Albany,
OH 43054, USA
GaryKeesee.com

Այս գիրքն ԱՆՎՃԱՐ ՆՎԵՐ է Գարի Կիսիի ծառայությունից
և ՎԱՃԱՌՔԻ ԵՆԹԱԿԱ ՉԷ

«Ձեր ֆինանսական հեղափոխությունը» գրքաշարի երրորդ գրքում Գարի Կիսին բացահայտում է իր հաջողության էական բաղադրիչները և Աստծո Թագավորության ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ գաղտնիքը. մարտավարության զորությունը: Ամեն մարդ կարող է ձուկ որսալ, եթե իմանա, թե որտեղ գցի ուռկանը:

Աստված ունի ձեր բոլոր կարիքների պատասխանները, բայց դուք պետք է հասկանաք, թե ինչպես է հնարավոր լսել այդ պատասխանները և կիրառել կյանքում: Այս գիրքը հենց այդ մասին է:

ՆՎԻՐՎՈՒՄ Է

Ցանկանում եմ գիրքը նվիրել կնոջս՝ Դրենդային, քանի որ տարիներ շարունակ նրա քաջալերանքը, Աստծո գործերի հանդեպ սրտացավությունը, ընտանիքի և իմ հանդեպ մեծ սերը ոգևորել և ոգեշնչել են ինձ: Միասին մենք ապացուցել ենք, որ երազանքներն իրոք իրականանում են:

– Գարի Կիսի

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ **7**

ԳԼՈՒԽ 1. Ի՞նչ ես ուզում, որ անենք 21

ԳԼՈՒԽ 2. Թագավորությունը. 37

ԳԼՈՒԽ 3. Ապշած 47

ԳԼՈՒԽ 4. Հիմնական նախապայմանը.
Տնից դուրս չգաք առանց սրա. 67

ԳԼՈՒԽ 5. Սուրբգրային ապացույցներ 87

ԳԼՈՒԽ 6. Արդյո՞ք բոլորն են աղոթում
լեզուներով 97

ԳԼՈՒԽ 7. Գանձերի սնդուկը 111

ԳԼՈՒԽ 8. Առաջխաղացման դժվար կետը 131

ԳԼՈՒԽ 9. Հանդարտ, մեղմ ձայնը 143

ԳԼՈՒԽ 10. Տեսիլքներ և երազներ. 159

ԳԼՈՒԽ 11. Սուրբ Հոգին կարծես իմ
ղեկավարը լինի 173

ԳԼՈՒԽ 12. Ինչպես աղոթել և մկրտվել
Սուրբ Հոգով 189

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Ձեր ֆինանսական հեղափոխությունը. մարտավարության զորությունը» գիրքը երրորդն է «Ֆինանսական հեղափոխություն» գրքաշարում: Դրանց ընդհանուր թիվը հինգն է: Այս շարքում ներկայացված բոլոր գրքերը 2005 թվականին Ալբանիայում կայացած համաժողովի ընդլայնված տարբերակներն են: Այս համաժողովի ժամանակ էր, երբ կյանքիս ընթացքը կտրուկ փոխվեց: Եթե արդեն լսել եք այս պատմությունը, կարող եք ներածությունը բաց թողնել և կարդալ առաջին գլխից, բայց եթե չեք լսել, ուրեմն թույլ տվեք պատմել ձեզ «կապույտ մշուշի» մասին: Գուցե հարցնեք, թե ինչ է դա: Լիովին կիսում եմ ձեր զարմանքը: Երբ այն տեսա, ես էլ չգիտեի, թե ինչ է դա, բայց Աստծո զորությունն այնքան ուժեղ էր, որ հասկացա, որ դա Աստծուց է: Թույլ տվեք պատմել այդ պատմությունը:

Ես և կինս մեր ամուսնությունը սկսեցինք պարտքերի մեջ և ինը տարի շարունակ ապրում էինք պարտքերի մեջ: Ոչ միայն պարտքերի, այլ նաև ֆինանսական խնդիրների հետ կապված խելացնորության հասցնող սթրեսի և վախի մեջ: Թեև երբևէ մեր մտքով չէր անցել, որ ֆինանսապես կարող ենք կործանել մեր կյանքերը, բայց հենց այդպես էլ արեցինք: Մենք սկսեցինք մի պարզ բենզինի վարկային քարտից, հետո մեկ վիզա քարտ ավելացավ, ապա՝ տասը վիզա քարտ: Երբ չէինք կարողանում կատարել մեր վիզա քարտերի վճարումները, վարկային կազմակերպություններից վարկեր էինք վերցնում քսանութից մինչև երեսուներեք տոկոսադրույքով՝ վճարումները մեկտեղելու համար: Բայց երբ դուրս էինք գնում և կրկին օգտագործում քարտերը, պարտքերը հետզհետե աճում էին: Ի վերջո, արդյունքում

ունեցանք վարկային սահմանաչափը գերազանցած և չեղարկված տասը քարտ, երեք վարկ ֆինանսական կազմակերպությունում, և պետական մարմինների կողմից հարկադիր բռնագանձման ենթակա տասը հազարավոր դոլարների պարտք, գումարած շատ այլ մանր-մունր պարտքեր: Մենք պարտք էինք մեր ատամնաբույժին, քիմմաքրման ծառայությանը, հազարավոր դոլարներ՝ մեր ծնողներին, մեր երկու մեքենաների վճարումները, տան վարձավճարները... Կարելի է անվերջ շարունակել: Այդ ժամանակ մեր ապրուստի գումարները գալիս էին կոմիսիոն վճարներից, և այդ սթրեսը, բառիս բուն իմաստով, սպանում էր ինձ: Ես պարբերաբար խուճապի նոպաներ էի ունենում և հակադեպրեսանտներ էի օգտագործում, որոնք այդպես էլ օգուտ չէին տալիս:

Մեր ունեցած-չունեցած ամեն ինչն անսարք էր: Երկու մեքենաների վազքն արդեն գերազանցում էր 200.000 մղոնը: 1856 թվականին կառուցված մեր փոքրիկ ագարակային ոճի տնակը, որը վարձակալում էինք ամսական 300 դոլարով, քարուքանդ էր եղել: Հին պատուհանների մեծ մասը կոտրվել էր, և քանի որ վերանորոգելու գումար չունեինք, ճաքերը փակում էինք կպչուն ժապավենով: Բայց դա էլ օգուտ չէր տալիս: Խաղողի ճյուղերը պատուհանի շրջանակի ճաքերից ներս էին մտնում: Կինս՝ Դրենդան, դրանք պարզապես կտրատում, տեսքի էր բերում, և թվում էր, թե այն մեր տան ձևավորման մի մասն է կազմում: Մեր տղաների սենյակի գորգը գտել էինք ճանապարհի կողքը գոյացած աղբակույտից, նրանց ներքնակները՝ ծերանոցից օտարված իրերի կույտից: Կահույքի ամեն կտորը ձեռք էինք բերել ավտոտնակների դիմաց կազմակերպվող անպիտան իրերի վաճառքից, կամ էլ ինչ-որ մեկի աղբամանի մոտից:

Կյանքը բոլորովին վարդագույն չէ, երբ ամեն առավոտ արթնանում ու մտածում ես, թե ինչպես ես կերակրելու ընտանիքդ: Ամբողջ կյանքս վախով էր պարուրված, իսկ ուրախությունը և հույսը խորտակվել էին գոյատևման քաոսի մեջ: Դրենդան և ես

այդպես ապրեցինք ինը տարի: Ինը երկարատև տարիներ: Մեկ ամիս դեռ կարելի է հասկանալ, վատագույն դեպքում՝ մեկ տարի, բայց ինը տարի՞... Այդպիսի սթրեսային տարիներից հետո զգացմունքներդ հօդս են ցնդում, իսկ համբերությունդ անհետանում է:

Այս ինը տարիների ընթացքում մենք քրիստոնյաներ էինք ու այցելում էինք մի հիասքանչ եկեղեցի: Այնտեղ ուսուցանում էին, որ Աստված չի կամենում, որ իր ժողովուրդը աղքատ լինի: Մենք տասանորդ էինք տալիս և զոհաբերություններ էինք անում, բայց մեր ֆինանսները ոչ մի կերպ չէին արտացոլում Աստծո հավատարմությունը և Աստծո Խոսքում ասվածը: Ես Հին կտակարանի բակալավրի աստիճան ունեի, ինչպես նաև մեկ տարի աստվածաշնչյան դպրոց էի հաճախել: Գիտեի, որ մի բան սխալ էր, բայց շարունակում էի հույսեր փայփայել, որ, ի վերջո, ամեն բան կկարգավորվի: Բայց այդպես էլ ոչինչ տեղի չունեցավ: Հարկահավաքները գրեթե ամեն օր զանգում էին, մինչ Դրենդան և ես գրեթե ամբողջությամբ կորցրել էինք մեր հույսը:

Միաժամանակ բժիշկներն ասում էին, որ ինձ մոտ առկա էին շաքարային դիաբետի բոլոր նախանշանները: Առողջությունս բոլորովին տկարացել էր: Գումար չկար, բոլոր վարկային քարտերը չեղարկվել էին, տանն էլ ուտելու բան չկար: Վախն այնպես էր կեղեքում կյանքս, որ բառացիորեն վախում էի տնից դուրս գալ: Կինս արդեն մտքում ծրագրել էր, թե ինչպես պետք է երեխաների հետ վերադառնա հայրական տուն, քանի որ կարծում էր, որ կորցնում է ամուսնուն: Բայց այս անդունդի խորքում էր, որ իմ կյանքում շրջադարձ եղավ:

Մի իրավաբան անընդհատ զանգում էր ինձ, և ես շարունակ խոստանում էի կատարել նրա վճարումը, քանի որ հույս ունեի, թե կարող եմ անել: Բայց վարձավճարը տալու համար գումարը այդպես էլ չէր լինում: Այդ առավոտյան, երբ նա զանգեց, նրա համբերության բաժակն արդեն լցվել էր: «Երեք օրվա ընթացքում գումարը պետք է բերեք այստեղ, հակառակ դեպքում ձեր

դեմ դատական գործ կհարուցեմ»: Միայն այդ պահին հասկացա, որ այլևս չեմ կարող ձևեր թափել: Ես գումար չունեի, նույնիսկ իմ հայրական ընտանիքն այլևս ինձ պարտքով գումար չէր տալիս: Ամբողջովին հուսահատ բարձրացա մեր տան երկրորդ հարկի ննջարան, ընկա մահճակալիս և աղաղակեցի Աստծուն: Ի զարման ինձ, Նա անմիջապես պատասխանեց հոգուս ճիչին: Սկզբում Աստված հիշեցրեց աստվածաշնչյան մի խոսք, որը շատ անգամներ եմ լսել և կարդացել՝ Փիլիպեցիների 4.19.

«Եվ իմ Աստված լրացնի ձեր բոլոր կարիքները՝ Իր փառավոր հարստության չափով Քրիստոս Հիսուսում»:

«Իհարկե, ես այդ խոսքը գիտեմ, - ասացի Տիրոջը և շարունակեցի, - բայց դա իմ կյանքում տեղի չի ունենում: Իմ կարոտությունը, իմ կարիքները չեն լրացվում»: Տերը պատասխանեց. «Ես քո կյանքի խառնաշփոթի հետ ոչ մի գործ չունեմ: Դու հայտնվել ես այդ քաոսի մեջ, քանի որ երբեք չես հասկացել, թե ինչպես է գործում Իմ Թագավորությունը»: Նա շարունակեց ու մի քանի բան ևս ասաց, բայց ես հասկացա ուղերձը. Նա չէր կամենում, որ իմ կյանքում պարտք ունենայի: Թեև Աստծո ձայնը լսելուց ցնցված էի, բայց ստիպված էի ընդունել, որ ես չգիտեի, թե «Թագավորություն» ասելով, ինչ նկատի ուներ: Ես Աստվածաշնչի իմացության բակալավրի աստիճան ունեի, և ինձ թվում էր, որ Աստվածաշունչը բավականին լավ գիտեմ: Բայց, ակնհայտ էր, որ սխալվել եմ: Այս խոսքերը լսելուց հետո առաջինը գնացի Դրենդայի մոտ և ապաշխարեցի նրա առջև այն ամեն խառնաշփոթի համար, որի մեջ ներքաշել էի բոլորիս: Այդ ժամանակ երկուսս էլ աղոթեցինք Աստծուն և խնդրեցինք, որ սովորեցնի, թե ինչպես է գործում Իր Թագավորությունը: Նաև ապաշխարեցինք, որ մեր հույսը պարտքերի վրա էինք դրել, և որոշում կայացրինք, որ այլևս պարտքից կախում չենք ունենալու: Բայց, իրականում, թեև ես Աստվածաշնչյան իմացության գիտական

աստիճան ունեի, ինձ համար «Թագավորությունն» առեղծված էր այդ պահին: Միակ բանը, որ հիշում էի «Թագավորություն» բառի վերաբերյալ այն էր, որ այն օգտագործված էր Նոր կտակարանի Տերունական աղոթքում:

> *«Քո Արքայությունը գա, Քո կամքը լինի՝ ինչպես Երկնքում, այնպես էլ երկրի վրա»* (Մատթեոս 6.10):

Մենք իսկապես չէինք հասկանում, թե ինչ է Աստված փորձում ասել մեզ, բայց երբ սկսեցինք փնտրել Աստծո երեսը, Նա սկսեց սովորեցնել մեզ: Առաջին բանը, որը պետք է պարզեինք, այն էր, թե ինչ է Թագավորությունը, և թե ինչու է Աստված օգտագործել այդ եզրույթը: Ի՞նչ էր Նա փորձում սովորեցնել մեզ: Որոշ ուսումնասիրությունից հետո հասկացա, որ թագավորությունը պարզապես մեծաքանակ ժողովուրդը չէ. այն մեծաքանակ ժողովուրդ է, որն ապրում է կառավարության և թագավորության օրենսդրության ներքո: Իրականում, թագավորություն բառը վերաբերում է հենց թագավորի տիրակալությանը: Թագավորի տիրակալությունը կամ նրա իշխանությունն ու օրենքները կառավարության միջոցով գործի են դրվում յուրաքանչյուր քաղաքացու համար: Այստեղ մի շատ կարևոր բացահայտում կար ինձ համար. Աստծո Թագավորությունը կառավարություն է, իսկ կառավարությունն օրենքներ ունի:

Հասկանո՞ւմ եք, ես Աստծուն նայում էի այնպես, ինչպես քրիստոնյաներից շատերն են նայում: Ես սխալ պատկերացում ունեի, թե ինչ Նա կարող էր անել: Կարծում էի, որ քանի որ Նա Թագավոր է, ուրեմն կարող է անել այն, ինչ ցանկանա և երբ ցանկանա: Գիտեմ, գրքի այս հատվածում կարող եք ասել, որ սխալվում եմ, բայց թույլ տվեք շարունակել: Քանի որ ես հավատում էի, որ Աստված կարող է անել այն, ինչ ցանկանա, և երբ ցանկանա, չպատասխանված աղոթքը ես համարում էի որպես Նրա կողմից մերժված խնդրանք: Աղոթքի հանդեպ այս անորոշությունը

ինձ թողնում էր միայն հուսալ, որ Նա կպատասխանի: Ուստի, իմ աղոթքի կյանքի հիմնական ձևը ողորմություն խնդրելն ու աղերսելն էր, հուսալով, որ իմ խնդրվածքը լուրջ կինչեր Աստծո ուշադրությունը գրավելու համար: Բայց երբ Աստված սկսեց սովորեցնել, որ Իր ամբողջ Թագավորությունը մի կառավարություն է՝ Իր օրենքներով, որոնք մենք կարող ենք սովորել և օգտագործել, ես ոգևորվեցի: Ես հասկացա, որ այն օրը, երբ ընդունել եմ Հիսուսին, ես դարձել եմ Նրա հզոր Թագավորության ժառանգը և քաղաքացին:

> *«Ուրեմն, այսուհետև այլևս օտար և պանդուխտ չեք, այլ՝ Աստծո ժողովրդի հետ համաքաղաքացիներ և Նրա ընտանիքի անդամներ»* (Եփեսացիների 2.19):

Հիշում եմ, թե ինչ էի մտածում, երբ կարդում էի այս խոսքերը: *Ես օրինական իրավունքներ ունեմ Նրա Թագավորության մեջ: Սրանից պարզ չի կարող լինել: Որպես Միացյալ Նահանգների քաղաքացի՝ ես չպետք է խնդրեմ և աղերսեմ, որ ինձ տան այն, ինչը, որպես քաղաքացի, արդեն ինձ է պատկանում: Չպետք է մարմնով սարսուռ անցնի, որ ապացույց ունենամ, որ քաղաքացի եմ: Ես այստեղ եմ ծնվել: Եվ երբ վերստին ծնվեցի Աստծո Թագավորության մեջ, դարձա Նրա Թագավորության քաղաքացին: Դա նշանակում է, որ յուրաքանչյուր օրենք և արտոնություն, որը գրված է Իր Թագավորության օրենքներով, իրավական հիմքով հասանելի է ինձ:* Իմ աշխարհը կտրուկ փոխվեց, երբ Աստված սկսեց ցույց տալ դա ինձ: Ես և Դրենդան, ինչպես քրիստոնյաներից շատերը, չէինք հասկանում Թագավորությունը և Թագավորության օրենքները:

Իրականում, երբ ինչ-որ մեկը դժվարությունների առջև է կանգնում, քրիստոնյաների մեծ մասն այսպես է ասում. «Աստված թույլ է տալիս, Աստված ամենալավը գիտի, ամեն բան Աստծո ձեռքերում է, կամ՝ Աստված է տիրակալը»: Այս դիտարկում-

ները ցույց են տալիս, որ մարդիկ հավատում են, որ Աստված զորություն ունի պատասխան տալու, բայց չի կամենում, կամ էլ դեռ չի որոշել խառնվել: Աստծո մասին նմանատիպ սխալ պատկերացումների պատճառն այն է, որ նրանք չեն ճանաչում Աստծո բնավորությունը կամ չեն հասկանում Աստծո Թագավորության գործելու սկզբունքները:

Թույլ տվեք պատկերավոր նկարագրել, թե ինչ նկատի ունեմ: Եթե բանկում մեկ միլիարդ դոլար ունենայիք, կասեիք. «Ես մեկ միլիարդ դոլար ունեմ»: Բայց փաստն այն է, որ դա ասելիս մեկ միլիարդ դոլարը ձեր գրպանում չէ: Փոխարենը, մեկ միլիարդ դոլար ունեք ինչ-որ հաստատությունում, և այդ հաստատության կողմից սահմանված որոշակի իրավական գործընթացից հետո միայն կարող եք այդ գումարն ունենալ: Աստծո Թագավորությունն էլ նույնն է: Որպես քաղաքացի և որպես Աստծո ընտանիքի անդամ՝ մենք ժառանգներ ենք այն ամենի, ինչ Աստված ունի: Բայց կան օրենքներ և գործընթացներ, որոնց միջոցով կարողանում ենք ձեռք բերել այն, ինչ արդեն իրավական հիմքով մեզ է պատկանում:

Քանի որ շատ մարդիկ չեն հասկանում Աստծո Թագավորությունը և այն գործընթացներն ու օրենքները, որոնց միջոցով այդ Թագավորությունը գործում է, երբ ինչ-որ բան այնպես չի պատահում, ինչպես Աստծո Խոսքն է ասում, նրանք եզրակացնում են, որ սխալը Աստծո կողմից է, և ոչ թե իրենց:

Ահա թե ինչ պարզեցի: Պատկերացնենք, որ դուք որոշել եք ցատկել Էմփայր Սթեյթ Բիլդինգից, առանց օդապարիկի, առանց որևէ բանի, բայց վստահ եք, որ եթե ձեր ձեռքերը ջանասիրաբար թափահարեք, կարող եք ապահով իջնել: Կարծում եմ, գիտեք, թե այդ հիմար հնարքի վերջն ինչ կլինի: Արդյունքը պատկերացնում եք, քանի որ հասկանում եք, թե ինչ է ձգողականության ուժի օրենքը: Երբ իմանում եք, որ ձգողականության ուժի օրենքը որևէ աչառություն կամ նախասիրություն չունի, և ամեն

անգամ նույնկերպ է գործում, դուք հստակ պատկերացնում եք արդյունքը: Նույնկերպ էլ, երբ միացնում եք լույսը, ակնկալում եք, որ լամպը պետք է վառվի, քանի որ հասկանում եք էլեկտրականության օրենքը: Երբ օդանավով ճամփորդում եմ, ակնկալում եմ, որ օդանավը կթռչի, քանի որ հասկանում եմ աերոդինամիկայի օրենքը: Օդանավերն ու լամպերը ամեն անգամ աշխատում են, որովհետև դրանց գործողությունները հիմնված են օրենքների վրա, որոնք կարելի է սովորել և կրկնօրինակել ամեն անգամ նույն արդյունքը և գործողությունը ստանալու համար: Աստծո Թագավորությունն էլ գործում է ճիշտ նույն մակարդակով:

> *«Եվ սա է այն համարձակությունը, որ ունենք Աստծուն մոտենալիս, որ ինչ որ Նրա կամքի պես խնդրում ենք, լսում է մեզ: Եվ եթե գիտենք, թե լսում է մեզ, ինչ էլ որ խնդրենք, գիտենք, որ առնում ենք այն, ինչը խնդրեցինք Նրանից»:*
>
> – Ա Հովհաննես 5.14,15

Սա է մեր վստահությունը: Եթե մի բան խնդրենք Աստծո կամքի համեմատ, գիտենք, որ լսում է մեզ: Եվ եթե գիտենք, որ լսում է մեզ, գիտենք, որ կստանանք այն, ինչ Նրանից խնդրում ենք: Հասկանո՞ւմ եք: Ես կարող եմ համոզված լինել վերջնական արդյունքի համար, քանի որ Թագավորն անձամբ է ստեղծել այդ օրենքը: Ուրեմն հենց Նա էլ կանգնելու է սեփական օրենքի ետևում: Երբ Աստծո Խոսքն ասում է, որ Նա լսում է մեզ, այստեղ չի խոսվում բառերը ականջով լսելու մասին, այլ, ավելի շուտ, ինչպես դատավորն է լսում հայցը՝ արդար վճիռ կայացնելու համար: Դատավորը իր սեփական զգացմունքներով չի դատում, այլ անում է ամեն բան, որ օրենքը կիրառվի ի շահ թագավորության քաղաքացիների:

Դրենդան և ես նկատեցինք, որ մեր կյանքում ուշագրավ բաներ էին տեղի ունենում, երբ կիրառում էինք Թագավորության օրենքները: Երկուսուկես տարի անց մենք լիովին ազատվեցինք

պարտքերից: ՄաքԴոնալդսի «Երջանիկ կերակուրը» (Happy Meal) երեք երեխաների միջև կիսելու վիճակից հասանք այն կետին, որ սկսեցինք կանխիկով վճարել նոր մեքենաների համար և մեր երազանքների տունը կառուցել 4000մ^2 հողակտորի վրա, որի համար արդեն իսկ վճարել էինք: Մենք ընկերություններ հիմնեցինք, որոնք դեռ տարիներ անց հարյուր հազարավոր դոլարների տարեկան շահույթ են ապահովում: Հետո մեր քաղաքում եկեղեցի հիմնեցինք, որպեսզի մարդկանց փոխանցենք այն, ինչ բացահայտել ենք Աստծո Թագավորության մասին: Եվ պարզեցինք, որ շատ ու շատ մարդիկ են ցանկանում իմանալ, թե ինչ ենք բացահայտել, և թե ինչպես կարելի է ապրել այն գեղեցիկ կյանքը, որն Աստծո Թագավորությունն է առաջարկում: Արքայության բարի լուրի շնորհիվ, եկեղեցին աճեց. անդամների թիվը բազմապատկվեց:

Թեև գրեթե ամեն օր Աստծո Թագավորության մասին էի ուսուցանում նրանց, ովքեր ցանկանում էին լսել, բայց փափագում էի այն փոխանցել մարդկանց մի այնպիսի խմբի, ովքեր այս փորձառության մասին երբեք չէին լսել: Ես գիտեի, որ մարդկանց կյանքերում Աստծո Թագավորության մասին պատկերացումները փոխելու և Թագավորության հիմունքները փոխանցելու համար մեկանգամյա հանդիպումները բավական չէին լինի: Ինձ թվում էր, որ մեթոդիստական եկեղեցու իմ փորձառությունից ծնված գաղափարը պետք է որ գործեր:

Երբ երիտասարդ էի, մենք մեկ շաբաթ տևողությամբ արթնության երեկոներ էինք կազմակերպում: Ես երազում էի նաև մեկ շաբաթյա ֆինանսական արթնության երեկոներ կազմակերպելու մասին, եթե կարելի է այդպես ասել: Պատկերացնում էի, որ հինգ օր անընդմեջ հավաքույթներ ենք անցկացնում: Ես երբեք Արքայության մասին տող առ տող չէի սովորեցրել, և չէի էլ պատկերացնում, թե ինչպես պետք է դա գլուխ բերեմ: Բայց ինձ հետաքրքրում էր, թե հինգ հաջորդական ուսուցողական այդ հավաքույթները ինչպիսի ազդեցություն էին ունենալու լսողների

վրա: Ես սկսեցի աղոթել այդպիսի հավաքույթներ անցկացնելու համար և խնդրեցի Աստծուն, որ այն իրագործելու հնարավորություն ստեղծի: Իմ պահանջը միայն այն էր, որ պետք է սովորեցնեի մարդկանց այնպիսի խմբի, ովքեր դրա մասին նախկինում չէին լսել:

Մի օր պատահաբար հանդիպեցի իմ ընկերներից մեկին, ով Ալբանիայում միսիոներ էր: Զրույցի ընթացքում շոշափեցինք եկեղեցուն և ծառայություններին վերաբերող տարբեր հարցեր և, ի վերջո, զրույցն ընթացավ այն ուղղությամբ, ինչ Աստված էր ցույց տվել: Լարին պատրաստվում էր աշնանը Ալբանիայում համազգային համաժողով կազմակերպել և ինձ էլ առաջարկեց լինել քարոզիչներից մեկը: Ես նրան չասացի հինգ հաջորդական հավաքույթներ ունենալու իմ ցանկության մասին, բայց ոգևորվեցի, երբ ասաց, որ այնտեղ կարող եմ երեք հավաքույթ անցկացնել: Նա նաև նշեց, որ պետք է ինքս հոգայի իմ ճամփորդական ծախսերը, նաև մի քանի այլ հովիվների, ովքեր ցանկանում էին մասնակցել, քանի որ Ալբանիան այդ ժամանակ շատ աղքատ էր: Ես համաձայնեցի և սկսեցի ծրագրավորել իմ ճամփորդությունը դեպի Ալբանիա 2005 թվականի աշնանը:

Ի վերջո ուղևորության օրը եկավ, և ես այնքան ուրախ էի, որ կարողանալու եմ Աստծո Թագավորության մասին սովորեցնել մարդկանց այնպիսի մի խմբի, ովքեր դեռ նոր էին սովորում, թե ինչ է նշանակում լինել քրիստոնյա: Երբ հասա Ալբանիա, Լարին դիմավորեց ինձ օդանավակայանում և ասաց, որ քարոզիչներից մեկը հրաժարվել է գալ, և ես պետք է հինգ հավաքույթ վարեմ: Հասկանում էի, որ Սուրբ Հոգին էր հոգ տարել դրա մասին: Ես երեք հավաքույթի համար էի նյութեր պատրաստել, բայց արագ աղոթեցի և մյուս երկուսի համար էլ պատրաստեցի: Ինձ անհանգստացնում էր այն փաստը, թե մարդիկ ինչպես կարձագանքեին, քանի որ աղքատությունը և կոռուպցիան համատարած էր այդ երկրում:

Առաջին հավաքույթի ժամանակ նրանք փոքր-ինչ կաշկանդված էին, բայց երբ շարունակեցի սովորեցնել այն, ինչ Աստված էր ինձ սովորեցրել, մեջբերելով իմ ուսուցանածը փաստող պատմություններ, մարդիկ հետզհետե ոգևորվում էին: Արդեն չորրորդ հավաքույթի ժամանակ նրանք ծիծաղում էին և այնքան ուրախությամբ էին ընդունում լսածը, որ ոմանք նույնիսկ աղաղակում էին: Տարօրինակ էր, բայց ես զգացի, որ Աստված ասում է, որ հինգերորդ հավաքույթի ժամանակ զոհաբերություն հավաքեմ: Ինչո՞ւ եմ ասում «տարօրինակ», որովհետև հավաքույթին մասնակցող շատ մարդկանց համար անձամբ ես էի վճարել, և գիտեի, որ կա՛մ շատ քիչ գումար ունեին, կա՛մ էլ ընդհանրապես չունեին: Բայց ուսուցանելու ընթացքում հասկացա, որ մարդիկ պետք է իրենց լսածը գործի դնեն: Մի փոքր կաշկանդվում էի այդ մասին ասել Լարիին, սակայն, նա վճռականորեն ասաց, որ հենց այդպես էլ անեմ և զոհաբերություն հավաքեմ: Անշուշտ, ես զոհաբերությունը ինձ համար չէի հավաքում. զոհաբերությունը պետք է մնար Ալբանիայում՝ ի շահ ալբանական եկեղեցիների:

Ահա եկավ վերջին հավաքույթի օրը: Ես սովորեցնում էի, թե ինչպես պետք է ազատ արձակել հավատքը՝ ընդգծելով որոշ օրենքներ, որոնց մասին արդեն ուսուցանել էի: Ծառայության վերջում, երբ հավաքեցի զոհաբերությունը, ամեն բան փշրվեց: Մարդիկ սկսեցին աղաղակել ու պարել, քանի որ Աստծո օծությունը տարածվել էր սրահով մեկ: Առջևում չորս մարդ էր կանգնած՝ զամբյուղները ձեռքներին: Նրանք հազիվ էին ոտքի վրա մնում. լացում ու ցնցվում էին Աստծո ներկայությունից, երբ մարդիկ բերում էին իրենց զոհաբերությունները: Ես երբեք նմանատիպ հավաքույթ չէի տեսել, հատկապես գումար հավաքելու ժամանակ:

Հավաքույթից դուրս գալուց հետո ես և Լարին խոսում էինք, թե ի՜նչ հզոր օծություն էր, և թե որքա՛ն զարմանալի էր մարդկանց արձագանքն այդ գիշեր: Երբ տուն հասանք, Լարին անհամբեր ուզում էր հաշվել գումարները, քանի որ մինչ այդ երբեք երկու

պայուսակ լի կանխիկ գումար (որպես զոհաբերություն) չէր հավաքվել: Սովորաբար պայուսակի մեկ քառորդն էր լցվում կիրակնօրյա զոհաբերությունների ժամանակ: Երբ նա պայուսակների պարունակությունը դատարկեց հյուրասենյակի սեղանին, հանկարծ սենյակը լցվեց «կապույտ մշուշով», մեզ այնպիսի մի օծություն պատեց, որի նմանը երբեք չէի զգացել: Մենք գամվել էինք աթոռներին և ոչինչ չէինք կարողանում անել: Երբ նայեցի մեր առջևի սեղանին դրված գումարների կույտին, հենց մեջտեղում նկատեցի մի ամուսնական մատանի: Հասկացա, որ դա տվել է մի մարդ, ով գումար չի ունեցել, բայց իր ունեցածն է տվել: Մատանին տեսնելուն պես Տերը խոսեց.

> *«Ես կանչում եմ քեզ դեպի ազգերը՝ սովորեցնելու ֆինանսական օրհնության Իմ ուխտի մասին, և ուր որ գնաս, Ես կվճարեմ»:*

Ես լիովին կորցրել էի ինձ: Երեք օր չկարողացա քնել: Այդ միջադեպից դեռ մի քանի շաբաթ անց դեռ ինձ վրա զգում էի նույն օծությունը: Եվ երբ մեկ այլ երկրից ինչ որ մեկին էի հանդիպում, այդ օծությունը կրկին զգացվում էր: Զոհաբերությունը մնաց ալբանական եկեղեցիներին, սակայն երբ արդեն տուն հասա, Լարին զանգեց ինձ և ասաց, որ Տերն ասել է իրեն, որ մատանին ինձ ուղարկի: Ես ցնցված էի: Ոչինչ չէի ասել Լարիին մատանին վերցնելու իմ ցանկության մասին, բայց նա լսել էր դա Աստծուց և մատանին ուղարկել էր ինձ: Ես ուզում էի, որ այդ մատանին ամեն ժամանակ հիշեցնի այն, ինչ Տերն ասել էր: Եվ այսօր էլ այն փակցված է իմ պատին:

Երբ վերադարձա տուն՝ Օհայո, Լարիի հովիվ ընկերներից մեկը, ով հովվում էր Յուտա նահանգի եկեղեցիներից մեկը, լսել էր Ալբանիայում կատարվածի մասին և զանգեց ինձ: Նա խնդրում էր, որ այցելեմ իր եկեղեցի: Նա հովվում էր հնդկացիական մի տարածքում և ասաց, որ մարդիկ այնտեղ շատ աղքատ են: Նրա

եկեղեցում ընդամենը 60 մարդ կար, բայց նրան ասացի, որ դա ինձ համար նշանակություն չունի, և ես կգնամ:

Ալբանիայի այն հինգ ուսուցողական հավաքույթներն այնտեղ անցկացրի: Այստեղ «կապույտ մշուշ» չտեսա, բայց օծությունը կրկին հզոր էր:

Այս անգամ զոհաբերությունը իմ սեփական ծառայության համար էր, այդ իսկ պատճառով ես կանխիկի պայուսակը փակեցի և ինձ հետ բերի Օհայո: Երբ հասա գրասենյակ, պայուսակս հանձնեցի քարտուղարուհուս, որ հաշվի և մուտքագրի հաշվիս, իսկ ես գնացի ճաշելու: Ճաշի ժամին, բջջային հեռախոսս զանգեց. քարտուղարուհուս հեռախոսահամարն էր: Երբ պատասխանեցի, մյուս կողմում ոչ ոք չէր խոսում: Արդեն պատրաստվում էի անջատել, ինձ թվաց, որ ինչ-որ մեկը լացում է: «Թրեյսի», - ասացի ես: Թրեյսին պատասխանեց՝ փորձելով կառավարել զգացմունքները: Նա ասաց.

– Հովհ՛իվ, այս գումարների հետ Յուտայում ի՞նչ է կատարվել:
– Ի՞նչ նկատի ունես:
– Երբ բացեցի պայուսակը և պարունակությունը դատարկեցի սեղանին, որ հաշվեմ, հանկարծ Աստծո այնպիսի օծություն իջավ, որ ես ընկա: Մյուս քարտուղարուհին էլ լսեց ընկնելու ձայնը և դուրս եկավ սենյակից, որ տեսնի՝ ինչ է կատարվում: Աստծո զորությունը նույնկերպ իրեն էլ հարվածեց: Հովհ՛իվ, ի՞նչ է կատարվել այս գումարների հետ Յուտայում:

Ես նրան պատմեցի Յուտայում կատարվածը, և թե որքան հզոր օծություն է եղել զոհաբերություն հավաքելու ժամանակ: Բայց դրանից բացի ուրիշ բան տեղի չէր ունեցել: Անկեղծ ասած ինձ շատ հետաքրքրեց կատարվածը, քանի որ ես երբեք նման բան չէի լսել և չէի տեսել: Թեև չէի հասկանում, սակայն ակնհայտ էր, որ հավաքույթի օծությունը գումարների վրա էր: Իսկապե՞ս:

Մենք սկսեցինք, այսպես ասած, ֆինանսական հեղափոխության համաժողովներ անցկացնել երկրով մեկ, մեծ ու փոքր

եկեղեցիներում, ցանկացած վայրում, որտեղ մեզ կլսեին: Թեև «կապույտ մշուշը» որոշ դեպքերում էր հայտնվում, միևնույն է, օծությունը շատ հզոր էր: Ինչպես Ալբանիայի և Յուտայի հնդկական եկեղեցիների ժամանակ էր, օծությունը իջնում էր հենց զոհաբերության վրա: Ես նկատում էի, որ ամեն անգամ հավաքույթից հետո, երբ զոհաբերության գումարները հաշվում էին, երբ ձեռքումդ զոհաբերությունից մի մետաղադրամ էիր պահում, սկսում էիր Սուրբ Հոգու զորությունից ցնցվել: Մեկ ուրիշ հետաքրքրական բան էլ նկատեցինք, որ ամեն թղթադրամը կամ չեկը տարբերվում էր: Ամեն մեկը նույն օծությունը չուներ: Ես հետո հասկացա, որ դրա պատճառը մարդկանց կողմից զոհաբերության վրա տարբեր չափի հավատքի արձակումն էր: Անհավանակա՜ն է:

Հինգ գրքից բաղկացած *«Ձեր ֆինանսական հեղափոխությունը»* գրքաշարը ամփոփ ներկայացնում է առաջին անգամ Ալբանիայում կայացած հինգ հավաքույթները: Անշուշտ, գրքերը մի փոքր ավելի ընդարձակ են, քան առաջին համաժողովը: Ես վստահ եմ, որ երբ իմ ու Դրենդայի նման սկսեք ուսումնասիրել Թագավորությունը, դուք էլ ամեն ինչին այլ կերպ կնայեք, ինչպես մենք էին անում: Այս գիրքը, որը երրորդն է գրքաշարում, սկզբում կոչվում էր *«Հարստություն Սուրբ Հոգուց»:* Ես կարծում եմ, որ այս արտահայտությունը դեռ այսօր էլ ճշմարիտ է: Սուրբ Հոգուց ներշնչված մարտավարությունը ձեզ կտանի բարգավաճման: Հուսով եմ, որ այս գրքի միջոցով կիմանաք, թե ինչպես է Սուրբ Հոգին գործում այս երկրային աշխարհում՝ իրականություն դարձնելով այդ մարտավարությունները:

ԳԼՈՒԽ 1

ԻՆՉ ԵՍ ՈՒԶՈՒՄ, ՈՐ ԱՆԵՆՔ

Երբ առաջին անգամ Ալբանիայից տուն եկա, ամեն ինչ խառնաշփոթի մեջ էր: Այն, ինչ Աստված արել էր մեր կյանքում, միաժամանակ կարգադրելով, որ այս հայտնությունը հասնի տարբեր ազգերի, մի փոքր շփոթեցնող էր: Ազգե՞ր: Երկրնե՞ր: Երբ ես և Դրենդան նոր էինք ամուսնացել, ես նրան ասացի, որ երբեք չեմ ճամփորդելու, և երբեք չեմ ցանկացել այլ երկրներ միսիոներության գնալ: Բայց, անշուշտ, Աստված այլ ծրագրեր ուներ: Ես պետք է գնայի տարբեր երկրներ, բայց ինչպե՞ս: Իմ բիզնեսն այնքան էր մեծացել, որ տարածվել էր գրեթե ամբողջ Միացյալ Նահանգներով: Ես ունեի եկեղեցի, որը պետք է հովվեի, ընտանիք, որի համար պետք է հոգ տանեի, և բազում պատասխանատու գործեր: Ես պարզապես չէի տեսնում, թե ինչպես կարող եմ գնալ այլ երկրներ: Բայց Աստված ծրագիր ուներ: Մի ծրագիր, որն իսկապես ինձնից չէր պահանջում ճամփորդել: Մի ծրագիր, որը նույնիսկ մտքովս չէր անցնում, ոչ էլ կցանկանայի դիտարկել. այդ ծրագիրը հեռուստատեսությունն էր:

Ես և Դրենդան հեռուստատեսությունից բացարձակապես բան չէինք հասկանում: Այդ ժամանակ մեր եկեղեցական հավաքույթները նույնիսկ չէինք էլ տեսագրում: Բայց Աստված մեզ ցույց տվեց, թե ինչ ժամանակներ են գալու, և թե ինչպես պետք

է վարվենք: Եվ կարծես մի բան ստիպում էր մեզ խորամուխ լինել հեռուստատեսության մեջ: Հասկացածս առաջին բանն այն էր, որ հեռուստատեսություն ունենալու համար բավականաչափ գումարներ են անհրաժեշտ: Բոլոր հաշվարկներն անելուց հետո պարզեցինք, որ առաջին տարում հեռուստատեսություն գործարկելու համար 300.000 դոլար է անհրաժեշտ: Ինչ խոսք, կարկամել էի հեռուստատեսության թանկ լինելու գաղափարից: Ամենամեծ խնդիրն այն էր, որ եկեղեցին արդեն իսկ առավելագույնս օգտագործում էր իր ֆինանսական միջոցները, քանի որ սկսել էինք «Նաու Սենթր» կենտրոնի ծառայության ուսումնական մասի շինարարությունը, և հեռուստատեսության համար վճարելու լրացուցիչ գումար չէր մնում: Եվ Տիրոջը հենց այդպես էլ ասացի, որ հիմա հեռուստատեսությունը գործարկելու համար ֆինանսներ չկան: Հիշում եմ, Նա համաձայնեց և ասաց, որ ես և Դրենդան պետք է վճարենք դրա համար:

ԵՍ ԳԻՏԵԻ, ՈՐ ԱՍՏՎԱԾ ՀԱՎԱՏԱՐԻՄ Է ԻՐ ԽՈՍՔԻՆ, ԳԻՏԱԿՑՈՒՄ ԷԻ, ՈՐ ՊԵՏՔ Է ՀԱՎԱՏՔՈՎ ՔԱՅԼ ԱՆԵՄ ՈՒ ՎՍՏԱՀԵՄ ՆՐԱՆ, ՈՐ ԻՄ ԱՆԵԼԻՔԸ ՑՈՒՅՑ ՏԱ ԻՆՁ:

Ասելով, որ մի փոքր շփոթվեցինք, թերագնահատած կլինեմ մեր վիճակը, հատկապես այն պատճառով, որ մենք վեց-յոթ միլիոն դոլար արժողությամբ եկեղեցու շինարարության ծրագրի հենց մեջտեղում էինք: Հավատացեք, «Նաու Սենթրի» ծրագիրը ինքնին մեծ հավատք էր պահանջում և խլում էր բոլոր միջոցները, որ գալիս էին: Ես և Դրենդան խոստացել էինք նաև 250.000 դոլար նվիրաբերել նախագծին, իսկ այդ ժամանակ ամբողջ գումարը դեռ չունեինք: Եվս 300.000 միևնույն տարում, անհնարին էր թվում:

Ես գիտեի, որ այս իրավիճակը Աստծուց էր, և Նրա խոստումը, որ ուր էլ ուղարկի, գումարը Ինքն է մատակարարելու, դեռ արձագանքում էր հոգումս: Բայց, միևնույն ժամանակ, ինչպես էլ

փորձում էի թվերը դասավորել, անհնար էր, որ ես ու Դրենդան կարողանայինք, ի հավելումն մնացածին, 300.000 դոլար վճարել:

Ես գիտեի, որ Աստված հավատարիմ է Իր Խոսքին, գիտակցում էի, որ պետք է հավատքով քայլ անեմ ու վստահեմ Նրան, որ իմ անելիքը ցույց տա ինձ: Երանի՜ թե կարողանայի ասել, որ հարյուր տոկոսով վստահություն ունեի և այս որոշման հետ կապված որևէ անհանգստություն չունեի: Բայց այդպես չէր: Եկեղեցին ծախսում էր գանձարան մուտք գործող ամեն գրոշը: Իմ անձնական գումարներն ուղղվում էին 250.000 դոլարը վճարելուն, որ խոստացել էի, և իմ բիզնեսում էլ շատ բաներ կային, որ այդ տարի ֆինանսավորում էին պահանջում: Պարզապես այլևս գումար չէր մնում հեռուստատեսության 300.000 մեկնարկային ծախսը փակելու համար:

Դրենդան և ես երկու շաբաթով ծրագրել էինք հանգիստ Հավայան կղզիներում և վերադառնալուց անմիջապես հետո պետք է պայմանագրեր ստորագրեինք հեռուստատեսությունը մեկնարկելու համար: Անշուշտ Հավայան կղզիներում հանգիստը վայելք է, բայց դժվար է լիակատար հանգստանալ, երբ գիտես, որ վերադառնալուց հետո որոշում կայացնելու այս բեռը քեզ է սպասում: Դժվար էր դա մտքից հանել: Հեռուստատեսությունն աշխատեցնելու ֆինանսական մասից բացի՝ միանգամայն անպատրաստ էի հեռուստահաղորդումների համար: Ես ամաչում էի տեսախցիկի առջև խոսելուց: Հավաքույթների ժամանակ կարող էի հազարավոր մարդկանց առջև խոսել, բայց հեռուստախցիկի առջև խոսելիս խուճապի էի մատնվում: Այս ամենը անընդմեջ պտտվում էր գլխումս և սրտումս, և ես պայքարում էի այդ որոշումը կայացնելու վախի ոգու դեմ:

Թեև հստակ գիտեի, որ դա Տիրոջից եմ լսել, բայց, միևնույն է, բախվում էի գումար չլինելու փաստին: Իմ բիզնեսն արդեն իսկ այդ տարվա համար ֆինանսապես ծանրաբեռնված էր, և ես պարզապես չէի տեսնում, թե ինչպես կարելի էր սա գլուխ բերել:

Այո՛, դա վախ էր: Այո՛, դա անհավատություն էր: Գիտեմ: Ես հիմա ուղղակի անկեղծ եմ: Գիտեի, որ պետք է կառչեի Խոսքից ու աչքերս կտրելով իմ ունեցածից՝ նայեի մատանուն: Նա ասել էր, որ վճարելու է դրա համար: Այս ժամանակահատվածում, զոհաբերություններից մեկի ժամանակ մի ոսկեդրամ եկավ: Անկեղծ ասած, մինչ այդ ես երբեք ոսկեդրամ չէի տեսել: Երբ ձեռքիս մեջ էի պահել այն, Տերը խոսեց. «Ինչպես Պետրոսին ցույց տվեցի, թե որտեղ է մետաղադրամը՝ հարկերը վճարելու համար, քեզ էլ ցույց կտամ, թե որտեղից գումար գտնես հեռուստատեսության համար»:

Այդ ոսկեդրամն ինձ հետ տարա Հավայան կղզիներ: Ես քայլում էի ծովափով ու աղոթում՝ ձեռքումս պահած այդ ոսկեդրամը, որը հիշեցնում էր, որ Աստված արդեն հոգ է տարել հեռուստատեսության համար: Դեպի ծովափ տանող իմ աղոթքի զբոսանքները հիմնականում այսպես էին ընթանում: Որոշ ժամանակ Սուրբ Հոգով աղոթելուց հետո, ինձ վրա խաղաղություն էր իջնում այդ պայմանագիրը ստորագրելու համար, և ես ետ էի դառնում սենյակ: Բայց ընդամենը 10-20 մետր բլուրն ի վեր բարձրանալուց հետո միտքս կրկին բղավում էր, որ գումարները հայթայթելու բնական ոչ մի ճանապարհ չկար: Փաստն այն էր, որ մենք գումար չունեինք, հեռուստատեսություն աշխատեցնել չգիտեինք, սարքավորումներ չունեինք և այսպես շարունակ: Բայց հոգումս անդադար լսում էի այն, ինչ Տերն ասել էր ինձ Ալբանիայում, որ ուր էլ ուղարկի, Նա է վճարելու: Այս ամենը տեղի էր ունենում մայիս ամսին, իսկ այս գործը սկսելու համար 300.000 գումարն արդեն տարեվերջին պետք է առկա լիներ, և դա ավելի շատ էր լարվածություն ստեղծում:

Վախի հոգին էլ էր ինձ հետ խոսում, անդադար փորձում էր իմ վճռականությունը, թե որքան ամուր եմ կառչած Աստծո ասածից: «Դու ֆինանսական ազատություն ես սովորեցնում, մարդիկ ի՞նչ կասեն, երբ չկարողանաս կատարել քո վճարումները»: Ես պտտվում էի, ետ էի դառնում ծովափ, աղոթում ու նորոգում էի

միտքս Աստծո Խոսքի համեմատ, մինչև որ խաղաղություն էր իջնում վրաս: Հետ ու առաջ էի քայլում, գրեթե մեկ շաբաթ մարտնչում էի մտքով ու հոգով այս պայմանագրի շուրջ, մինչև համոզվեցի, որ ամեն բան լավ է լինելու, և վախն այլևս չէր կարողանում տանջել ինձ բացասական մտքերով: Թե՛ ես, և թե՛ Դրենդան գաղափար չունեինք՝ որտեղի՞ց պետք է գային գումարները, բայց գիտեինք, որ դա Աստծուց ենք լսել: Ուստի, երբ տուն եկանք, ես ստորագրեցի պայմանագիրը, և սկսեցինք ուսումնասիրել, թե ինչպես պետք է աշխատեցնենք հեռուստատեսությունը:

Ինչ վերաբերում է գումարներին, զարմանալիորեն, Հավայան կղզիների հանգիստը ծրագրելուց մի քանի ամիս առաջ, ես մի զանգ ստացա Ատլանտայում բնակվող մի մարդուց: Նա պատմում էր, որ իմ գիրքն իր ձեռքն է ընկել և իրեն դուր է եկել: Այդ ժամանակ գրքիս հրատարակիչը անձամբ ես էի, և բացի իմ քաղաքից ուրիշ ոչ մի տեղ չէր վաճառվել: Բայց այնպես էր պատահել, որ իմ աշխատողներից մեկը արձակուրդի ժամանակ գնացել էր Ատլանտա, օդանավակայանում պատահաբար հանդիպել էր այդ մարդուն, զրույցի էր բռնվել նրա հետ ու պատմել, թե որտեղ է աշխատում: Պատահաբար աշխատողիս մոտ իմ գիրքն է եղել և փոխանցել է նրան:

Այս մարդը պատմեց, որ կարդացել է գիրքը և թեման հետաքրքրել է իրեն, ու պարզապես ցանկացել է զրուցել ինձ հետ: Երկար զրուցեցինք, և նա պատմեց, որ ճանապարհորդող ավետարանիչ է, ու հիմնականում իր գործունեությունը ծավալում է արտասահմանում: Նա հարցրեց, թե կարող ենք արդյոք հանդիպել: Ես ասացի, որ մոտավորապես մեկ ամսից լինելու եմ Ատլանտայի օդանավակայանում, քանի որ այդ քաղաքում հավաքույթ ունեի: Դա պետք է լիներ իմ արձակուրդից հետո: Ես համաձայնեցի հանդիպել: Երբ, ի վերջո, հանդիպումը կայացավ, մենք հիասքանչ զրույց ունեցանք: Ես ուրախությամբ լսում էի հրաշքների մասին իր բոլոր պատմությունները, և թե ինչպիսի վտանգների է հանդիպել ճամփորդությունների ընթացքում:

Բայց ֆինանսների մասին զրույցի ժամանակ էր, որ մենք իսկապես մտերմացանք: Նա տպավորված էր իմ գրքով և պարտքերից ազատվելու իմ պատմությամբ:

Մեր զրույցի ընթացքում պատմեց, որ նոր է վերադարձել Չարլոտից, որտեղ հեռուստահաղորդման հյուր է եղել, և իր կարծիքով ֆինանսների մասին իմ պատմությունը այդ հաղորդման համար շատ հետաքրքիր կլինի: Նա ասաց, որ գիրքս կփոխանցի նրանց և տեղեկություններ կհայտնի իմ մասին: Ես այս ամենից փոքր-ինչ շփոթված էի:

Երբևէ այդ հեռուստահաղորդման անունը չէի լսել, բայց մի քանի շաբաթ անց հաղորդման ռեժիսորից զանգ ստացա, ով հարցնում էր, թե կցանկանայի՞ արդյոք մասնակցել այդ հաղորդմանը: Պահանջներից մեկն այն էր, որ պետք է ունենայի ինչ-որ բան, որը կկարողանային առաջարկել եթերում: Ես ասացի նրանց, որ ֆինանսական հեղափոխության մասին հինգ ձայներիզից բաղկացած ուսուցողական ձայնագրությունների փաթեթ ունեմ: Ասացին, որ գերազանց է, ապա ճշտեցինք ձայներիզների փաթեթը տրամադրելու գինը: Ես ձայներիզների փաթեթը մեծածախ գնով տվեցի նրանց, ու այնպես արեցի, որ որոշակի շահույթ էլ մեր ծառայությանը մնար: Ի զարման ինձ, հաղորդումը բարեհաջող ընթացավ, և մենք ձայնագրությունների հազարավոր փաթեթներ վաճառեցինք: Միայն դա արդեն հազարավոր դոլարների եկամուտ ապահովեց մեր հեռուստատեսության բյուջեին, և այդ ամենը եկավ մի աղբյուրից, որի մասին պայմանագիրը ստորագրելու պահին ես նույնիսկ գաղափար չունեի:

Այնուհետև տեղի ունեցավ մեկ այլ ցնցող բան: Իմ եկեղեցուց մի տղամարդ, ով մի քանի տարի առաջ եկեղեցի էր եկել ֆինանսապես կոտրված վիճակում, նույնիսկ տնից էին վտարել, մոտեցավ ինձ և ցանկություն հայտնեց ֆինանսավորել հեռուստահաղորդումների հեռարձակումը: Նա կիրառել էր այն, ինչ քարոզվել էր Թագավորության մասին. նա այլևս աղքատ չէր: Այդ մարդը 120.000

դոլար տրամադրեց մեր հեռուստատեսային ծառայությանը:

Ձայնագրությունների փաթեթների վաճառքից ստացված գումարները, իմ ընկերոջ նվիրատվությունը և այլ նվիրատվությունները հաշվելուց հետո հասկացանք, որ Դրենդան և ես, առաջին տարում, մեր սեփական գումարներից ընդհանրապես չպետք է ներդնեինք հեռուստատեսության մեջ: Աստված հավատարիմ էր Իր Խոսքին: Նա ասել էր, որ Ինքը կվճարի և հենց այդպես էլ արել էր: Շատ լավ, հարցը կիսով չափ լուծվել էր, բայց կար ևս մեկ խնդիր, որը դեռ պետք է լուծվեր: Ինչպես արդեն ասել էի, ես հեռուստատեսությունից գաղափար չունեի:

Այդ աշնանը Դրենդան մասնակցեց քրիստոնյա կանանց մի մեծ համաժողովի, և նրան հրավիրել էին ետնաբեմի կանաչ սենյակ, որտեղ ընդմիջումներին բոլոր հյուրերն էին հավաքվում: Դա մեծ պատիվ էր Դրենդայի համար, և նա շատ հուզված էր: Հավաքույթներից մեկից հետո, երբ նստել էր ճաշելու, մի անծանոթ կին էր նստել նրա կողքին: Ամեն մեկը իր մասին որոշակի տեղեկություն փոխանցելուց հետո, կինը պատահաբար հարցրել էր. «Իսկ հեռուստատեսային հաղորդում ունե՞ք»: Մի փոքր շփոթված Դրենդան պատասխանել է. «Ո՛չ, բայց մտածում ենք այդ ուղղությամբ»: Եվ կինը շարունակել է. «Եթե հաղորդում անեք, զանգե՛ք այս մարդուն, նա կարող է օգնել Ձեզ»: Դրենդան գրի է առնում հեռախոսահամարը և էլ-փոստի հասցեն ու դնում պայուսակը:

Համաժողովից վերադառնալուց հետո շաբաթներ են անցնում, և Դրենդան իսկապես մոռանում է պայուսակում խցկած այդ մի կտոր թղթի մասին: Մի գիշեր, այն գտնելուց հետո, որոշում է էլեկտրոնային նամակ ուղարկել այդ մարդուն, որ տեսնի, թե ինչ կասի: Նա կարծես հետաքրքրվել էր և խնդրել էր ուղարկել իմ *Ֆինանսական հեղափոխության* ձայներիզի փաթեթը, և մենք ուղարկեցինք: Մոտավորապես մեկ շաբաթ անց նրա օգնականը զանգեց և ասաց, որ այդ մարդը հստակ հետաքրքրված

է և ցանկանում է հանդիպել մեզ կրոնական հեռուստաեթերնե-րի ազգային համաժողովին, որը մեկ-երկու շաբաթ անց պետք է կայանար: Ասացինք, որ անպայման կլինենք այնտեղ:

Դրենդան և ես գնացինք համաժողովին, մի փոքր հուզված էինք նախքան հանդիպումը: Այդ հանդիպման համար մի նոր սև կոստյում էի գնել և իսկապես չգիտեի, թե ինչ ակնկալել: Այդ մարդը խնդրել էր, որ հյուրանոցի սենյակում հանդիպեինք հեռուս-տատեսության մասին խոսելու համար: Հիշում եմ, մենք այնքան հուզված էինք, որ նախքան հյուրանոցի սենյակի դուռը թակելը, մեկ-երկու անգամ հետ ու առաջ քայլեցինք միջանցքով, որպեսզի հուզմունքներս անցնի: Երբ ներս մտանք, զարմացանք: Սենյա-կում մի խումբ մարդիկ էին հավաքվել մեզ հետ խոսելու համար: Աթոռներով կիսաշրջան էին կազմել, և իմ ու Դրենդայի տեղը այդ կիսաշրջանի առջևում էր: Նրանցից ոչ մեկին երբևէ չէինք հանդի-պել, բայց բոլորն էլ շատ պաշտոնական էին հագնված:

Մի փոքր զրույցից հետո լիցքաթափվեցինք, բայց հետո սկսե-ցին հարցեր տալ հեռուստատեսություն սկսելու մեր ցանկության մասին: Ես դեռ հիշում եմ առաջին հարցը. «Իսկ ինչո՞ւ եք ցան-կանում հեռուստատեսություն հիմնել»: Ես այդ ժամանակ չգի-տեի, որ այդ սենյակում հավաքվածները հեռուստատեսության ոլորտում տարբեր բնագավառների ղեկավար անձիք էին: Այն մարդը, ում հետ խոսել էինք, անշուշտ, այնտեղ էր, բայց այնտեղ էին նաև այլ հեռուստաարտադրության, մարքեթինգի ոլորտի մարդիկ, և բոլորն իրենց հերթին բարդ-բարդ հարցեր էին տա-լիս: Ընդհանուր առմամբ, կարծում եմ, հանդիպումը լավ ընթացք ունեցավ: Մենք անկեղծ էինք և չէինք ցանկանում ինչ-որ մեկի վրա տպավորություն թողնել: Պարզապես պատմում էինք մեր պատմությունը, թե ինչ է արել Աստված մեր կյանքում: Բոլորն էլ հավանեցին մեր տեսիլքն ու սրտացավությունը և ասացին, որ մի քանի շաբաթից կզանգեն՝ մանրամասները քննարկելու համար:

Այսպիսով, մի քանի շաբաթից կրկին խոսեցինք: Եվ այս ան-

գամ բոլորս որոշեցինք առաջ անցնել և հեռարձակման գործնական ծրագրավորման հանդիպում կազմակերպել: Այդ ժամանակ մենք մտածել էինք, որ նկարահանումները կկազմակերպենք մեր տանը, ուստի, այն տղամարդը, ում հետ Դրենդան կապ էր հաստատել, խնդրեց, որ հաջորդ հանդիպումը կայանա մեր տանը: Նա ցանկանում էր տեսնել մեր տունը՝ հասկանալու համար հարմա՞ր է, թե՞ ոչ:

Ահա օրը եկավ: Այդ մարդն արդեն մեր տանն էր, և մենք նստեցինք զրուցելու: Մինչև այս հանդիպումը, ես իրականում լիովին անտեղյակ էի հեռուստատեսության իր պատմությունից: Այն կինը, որին Դրենդան հանդիպել էր համաժողովին, մեզ փոխանցել էր միայն նրա հետ հաղորդակցվելու տվյալները: Բայց երբ սկսեցինք զրուցել, նա պատմեց բոլոր այն հեռուստահաղորդումների մասին, որոնք նա պատրաստել էր և ներկայում էլ աշխատում էր: Բոլորն էլ հանրահայտ անուններ էին: Ես ապշած նստել էի. «Աստվա՛ծ իմ, ինչպե՞ս ես այս մարդուն Լոս Անջելեսից բերել ամայի վայրում գտնվող մեր տունը, այն էլ՝ քարքարոտ գյուղական ճանապարհներով»: Նա համաձայնեց հարմար գնով պատրաստել ամբողջական մի հաղորդում, որը ներառելու էր նկարահանումը, մոնտաժը և վերջնական արտադրանքը ներկայացնելը: Բոլորս էլ որոշեցինք, որ սկզբի համար հաղորդումները կնկարահանենք մեր տանը՝ հյուրասենյակում:

«ՁԵԶՆԻՑ ՄԵԿԸ ՆԵՂՈՒԹՅԱՆ ՄԵՋ Է, ԹՈՂ ԱՂՈԹԻ»:

– ՀԱԿՈԲՈՍ 5.13

Ահա եկավ նկարահանման առաջին օրը: Պետք է խոստովանեմ, որ հուզված էի: Ինչպես արդեն ասել եմ, հեռուստատեսության հետ երբևէ որևէ առնչություն չեմ ունեցել: Չգիտեի, թե ինչ կառուցվածք պետք է ունենա հեռուստահաղորդումը, երբևէ միայն տեսախցիկի առջև չէի խոսել: Այս ամենը նոր էր: Ուրախ էի, որ պետք է ներկայացնեի Թագավորության մասին իմ պատ-

մությունը, բայց ինձ համար հեռուստատեսությունը մի նոր բարձունք էր, որը պետք է նվաճեի:

Նկարահանման օրը հոգեցունց մի բան էլ տեղի ունեցավ, որ օրն ավելի լարված դարձրեց: Այն ռեժիսորը, ով եկել էր մեկ շաբաթով՝ նկարահանումները կազմակերպելու համար, գիշերվա կեսին մեկնեց: Նրա որդին ընկել էր հարևանի մեքենայի տակ և մահացել էր: Նրա օգնականը բացատրեց տեղի ունեցածը, և մենք որոշեցինք, որ մինչև նկարահանման ավարտը ոչ մեկին չպատմենք դրա մասին: Ինչ-որ կերպ դա ստացվեց անել: Այդ օրը երեք հաղորդում նկարահանեցինք և արդեն պաշտոնապես հեռարձակում էինք հաղորդումները: Անհավատալի՜ էր:

Երբ սկսեցինք հեռարձակումը, նույնիսկ գաղափար չունեինք, թե ինչպես պետք է վճարեինք հեռարձակման ժամանակի համար: Բայց Աստված սկսեց սովորեցնել մեզ, որ ոչ միայն կապահովի նկարահանման համար անհրաժեշտ 300.000 դոլարը, այլև հեռարձակման ժամանակի համար պահանջվող գումարը նույնպես: Այնքան սովորելու բան ունեինք: Գիտեք, երբեք չէինք դիտարկել, որ գուցե մարդիկ ցանկանան սերմել մեր հեռուստածառայության մեջ: Ահա թե որքան միամիտ էինք:

Հիշում եմ, իմ քարտուղար Թրեյսին հեռարձակումը սկսելուց հետո զանգեց ինձ գրասենյակից: Երբ լսեցի նրա ձայնը, հասկացա, որ ինչ-որ բանից ցնցված էր: Նա դողդոջուն ձայնով ասաց.

– Հովի՛վ, ինչ-որ մեկը, դիտելով մեր հաղորդումը, 500 դոլարի չեկ է ուղարկել: Եվ երբ դա վերցրի, նույն օծությունը, որը դուք բերել էիք հնդկական համայնքի եկեղեցուց, այդ չեկի վրա էր:

– Իսկապե՞ս, - կմկմալով ասացի ես: - Ինչ-որ մեկը մեզ գումա՞ր է ուղարկել:

Մինչ չեկը ստանալը երբեք մտքովս չէր անցնի, որ մարդիկ գումար կփոխանցեն հեռարձակմանը աջակցելու համար: Բայց, Փա՞ռք Աստծուն, նրանք այդ օրվանից շարունակ ուղարկում են:

Ուղարկում են աշխարհի տարբեր վայրերից, տարբեր ժամային գոտիներից: Ծախսերի տարեկան վճարումները հասել էին միլիոնների, բայց Աստված միշտ պահում էր Իր տված խոստումը. վճարումները Նա էր կատարում:

Այս գիրքն այն մասին է, թե ինչպես կարող ենք լսել Սուրբ Հոգուն և կյանքում առաջնորդվել Նրանով: Մեր հեռուստատեսության պատմությունը լավ օրինակ է, թե ինչպես է Սուրբ Հոգին առաջնորդում մարդկանց անելու ավելի մեծ բաներ, քան երբևէ երազել են: Այն, ինչ Աստված արել է մեր կյանքում, չէր գալիս միայն Նրա Թագավորության գործելու սկզբունքների իմացությունից, այլև Աստծո ուղղորդումները, իմաստությունը և մեզ անհրաժեշտ պատասխանները լսելու կարողությունից: Այս պատմությունը երբեք տեղի չէր ունենա, եթե չլսեինք Սուրբ Հոգուն: Լինում են ժամանակներ, երբ բոլորս էլ կանգնում ենք դժվար և անհուսալի իրավիճակների առջև: Բայց Աստված ունի պատասխան:

> *«Ձեզնից մեկը նեղության մե՞ջ է, թող աղոթի...» (Հակոբոս 5.13):*

Ինչո՞ւ աղոթել: Որովհետև կարիք ունենք լսելու, թե որն է պատասխանը, և որն է խնդիրը լուծելու ճանապարհը: Կարիք ունենք, որ Աստված ուղղորդի մեզ: Ինչպես շատ անգամներ ես և Դրենդան ականատես ենք եղել, որ Աստված կարող է անել մեր պատկերացրածից ավելին, երբ կանգնում ենք ինչ-որ խնդրին դեմ հանդիման: Նա կօգնի ձեզ յուրահատուկ և երբեմն էլ տարօրինակ լուծումներով ու մարտավարությամբ, որպեսզի կարողանաք հաղթահարել ձեզ համար անհնարին թվացող իրավիճակները: Շատ անգամներ պատասխանը լսելու ձեր կարողությունը կորոշի, թե որ ճանապարհով գնաք՝ հաղթանակի՞, թե՞ ձախողման, կյանքի՞, թե՞ մահվան: Այս գրքում շատ եմ խոսելու Սուրբ Հոգու ձայնը լսելու մասին, բայց թույլ տվեք մեկ այլ օրինակ բերել, թե ինչպես կարող է Սուրբ Հոգին օգնել դժվարին ժամանակներում:

Երբ մեկնարկեցինք «Նաու Սենթր» ծրագիրը, որի արժողությունը 6.5 միլիոն դոլար էր, մեզ հաջողվեց հենց սկզբում հավաքագրել 2.5 միլիոնը կանխիկով, և որոշ գումար էլ բանկից օգտագործեցինք: Մենք ունեինք նաև գումարներ, որ նախագծի համար հավաքվել էր 18 ամսվա ընթացքում: Դա հսկայական ծրագիր էր 550 հոգուց բաղկացած եկեղեցու համար: Մենք հիմքը փորեցինք 2007 թվականի աշնանը, և մինչև 2008 թվականի գարնանը ամեն բան հրաշալի էր ընթանում: Գուցե հիշեք 2008 թվականի ֆինանսական ճգնաժամը: Մեր շինարարությունը հենց այդ ճգնաժամին էր ընթանում: Ամեն ինչի գները կտրուկ աճեցին: Պողպատյա ամրանների գները 300.000 դոլարով գերազանցեցին նախկին գնառաջարկը: Դա օրինակներից մեկն էր: Ամբողջ շինարարական նախագիծը բյուջեի սահմաններից դուրս էր, քանի որ այդ տարի շինանյութերի գները աստղաբաշխական էին:

2008-ի վերջում, ճգնաժամը խորանալուն զուգընթաց, բանկերը թե՛ մեր նահանգում, և թե՛ երկրով մեկ սահմանափակում էին վարկային գծերը և պահանջում էին վարկերի վաղաժամկետ մարում: Այս օրերին մեր շինարարը եկավ մեզ մոտ ստանալու գումար, որը նախապես անցել էր մեր բանկի կողմից առաջնային հաստատումը: Նա էլ պետք է իր կապալառուներին վճարեր և փակեր որոշ հաշիվ-ապրանքագրեր: Դա մի գումար էր, որը նա արդեն ծախսել էր: Մեկ միլիոն դոլար արժողությամբ չեկը պետք է վճարեինք նախապես հաստատված բանկային ֆինանսավորմամբ, քանի որ մեր կանխիկի պաշարներն այդ պահին արդեն սպառել էինք: Բայց մեկ միլիոն դոլար արժողությամբ չեկը չկար: Ցնցվեցինք, երբ իմացանք, որ բանկը չեղարկել է իր առաջարկը և փակել է վարկային գիծը: Հիշեցնում եմ՝ դա միայն մեր բանկը չէր, քաղաքի բոլոր բանկերն այդ վիճակում էին: Այդ շաբաթ քաղաքային օրաթերթի առաջին էջում մեր բանկն էր: Հենց այդ շաբաթ նրանք 550 աշխատակից էին կրճատել և ամեն գնով փորձում էին գոյատևել ֆինանսական ճգնաժամի հնոցում:

Առկա խնդիրն այն էր, որ մեր շինարարը պետք է վճարեր իր կապալառուներին և վճարեր արդեն իսկ օգտագործված շինանյութի համար: Այս մեկ միլիոն դոլարի չեկը նրան ապագայի համար անհրաժեշտ չէր: Նա արդեն իսկ ծախսել էր այդ մեկ միլիոնը: Այլ ընկերություններ և ընտանիքներ սպասում էին, որ մենք վճարեինք մեր շինարարին, նա էլ՝ նրանց: Ինչպես մենք, նա նույնպես մտածել էր, որ բանկն իր խոստումը կպահի: Ի՞նչ կարող ենք անել: Ի՞նչ եք անում այսպիսի իրավիճակներում: Ես մեկ միլիոն չունեի և չէի էլ պատրաստվում եկեղեցու մարդկանցից փող մուրալ: Բացի դա, հեռուստատեսությունն էլ հետզհետե ավելի ծախսատար էր դառնում, քանի որ հաղորդումները հեռարձակվում էին այլ հեռուստացանցերով ևս: Այժմ եթերաժամանակի վրա ամսական ծախսում էինք 50.000 դոլար: Մենք պետք է անեինք միայն այն, ինչ ասվում է Հակոբոս 5.13-ում. պետք է աղոթեինք:

Այնպես պատահեց, որ այդ ընթացքում իմ բիզնեսով շահեցինք Հավայան կղզիների մեկ այլ ճամփորդություն: Մեկնելուց մի քանի օր առաջ պարզեցի, որ բանկը սառեցրել է վարկային գիծը: Օդանավակայանում, երբ արդեն պատրաստվում էինք Մաուիի թռիչքին, ես դեռ ցնցված էի: Միտքս ժամում աշխատում էր միլիոն մղոն արագությամբ: Երբ քայլում էի օդանավակայանի սպասասրահով, և ինքս ինձ խղճալու մեծ գայթակղություն կար, հանկարծ լսեցի Տիրոջ ձայնը. «Բարձրացրո՛ւ գավազանդ»: Կանգ առա և սկսեցի խորհել, թե ինչ է ասում Տերը: Եվ հանկարծ հասկացա:

Աստված հենց սա ասաց Մովսեսին, երբ Իսրայելը գնալու տեղ չուներ, երբ փարավոնի բանակը Կարմիր ծովի մոտ օղակի մեջ էր առել ժողովրդին: Աստված Մովսեսին ասաց բարձրացրու գավազանդ ծովի վրա: Նա արեց, և ծովը կիսվեց. Իսրայել ժողովրդի համար անցնելու և փախչելու ճանապարհ բացվեց: Մովսեսի գավազանը խորհրդանշում էր այն խոստումները, որ Աստված տվել էր իրեն, ինչպես նաև խորհրդանշում էր իշխանություն, որ կատարի Աստծո գործերը:

Ես գիտեի, թե ինչ էր ուզում ասել Աստված: Ես այս եկեղեցու առաջնորդն էի՝ հովիվը: Այս իրավիճակից դուրս գալու իշխանությունը ինձ էր տրված: Ես պետք է իշխանությունը իմ ձեռքն առնեի, կանգնեի և ճանապարհ գտնեի: Երբ հասանք Հավայան կղզիներ, ես կարողանում էի միայն աղոթել: Գիշերները չէի կարողանում քնել: Հոգիս տակն ու վրա էր լինում: Հասկանում էի, որ հոգում գոտեմարտում եմ ինձ անհրաժեշտ պատասխանը ստանալու համար: Ի վերջո, Դրենդան մի գաղափար հայտնեց, որը, վստահ էր, որ Տիրոջից էր: Շնորհակալ եմ Աստծուն իմ կնոջ համար: Որքա՜ն անգամներ նա կարողացել է գտնել այն ծրագրերը և ուղղորդումը, որն ինձ անհրաժեշտ է եղել տարբեր իրավիճակներում: Չեմ կարող բացատրել, թե որքան թանկ արժե նա ինձ համար, և թե որքան շատ եմ նրան սիրում: Դրենդան երբեք չի հանձնվում:

Նրա ծրագիրը պարզ էր, բայց իմաստուն: Դրական արդյունքի որևէ երաշխիք չկար, բայց մենք անմիջապես սկսեցինք աշխատել դրա վրա: Ծրագիրը հետևյալն էր. կազմել նախագիծ և ներկայացնել մեր շինարարի բանկին, և ոչ թե մեր բանկին: Այդ նախագծում պետք է ներկայացնեինք, թե ով ենք մենք, և ցույց տայինք, թե ինչու էինք կարծում, որ այդ վարկը երկուսիս համար էլ լավագույն լուծումն է: Դա բավականին անհավանական ծրագիր էր, քանի որ, ինչպես արդեն ասել էի, քաղաքի բոլոր բանկերը դադարեցրել էին վարկավորումը: Մենք այսպես էինք կարծում, որ եթե մեր շինարարին չվճարեինք, ուրեմն նա սնանկ էր ճանաչվելու, իսկ դրա հետևանքով իր բանկում ունեցած բոլոր վարկերը վտանգի տակ կհայտնվեին: Վստահ էինք, որ նման իրավիճակը մեծապես կվտանգեր նրա բանկը, մի բան, որ իսկապես չէին ցանկանա: Եվ կրկին, սա մեր բանկը չէր, և նրանք որևէ առնչություն և պատմություն չունեին մեզ հետ:

Այսպիսով, մենք գրասենյակային պատկերակալի վրա ներկայացրինք տարածքի բնակչության թվերը, և թե որքան արագ է այն աճում: Մենք բանկին ներկայացրինք մեր պատմությունը և

ակնկալվող աճը: Տարբեր կերպ ներկայացրինք եկեղեցու ծառայություններից բացի այդ շենքից ակնկալվող եկամուտները, ինչպես օրինակ, թե որքան արագ էին աճում մեր հեռուստատեսային եկամուտները, և շատ այլ բաներ, որ կարծում էինք նրանց համար հետաքրքրական կլիներ: Ուզում էինք վստահեցնել նրանց, որ նույնիսկ այս դժվարին ժամանակներում հավանականություն կար, որ մենք շահութաբեր կլինեինք: Ցանկանում էինք ցույց տալ նաև, որ եթե շինարարին չվարկավորեին, նրանք կանգնելու էին այլ կորուստներ կրելու վտանգի առջև, իսկ այս գործարքով մենք «կօգնեինք նրանց» խուսափել դրանցից: Մենք հանդիպում խնդրեցինք բանկի փոխտնօրենի հետ, ով միաժամանակ առևտրավարկային վարչության ղեկավարն էր: Մենք աղոթում և քայլում էինք նրա գրասենյակում՝ վստահ իմանալով, որ այս ծրագիրը Սուրբ Հոգուց է տրված, և ներկայացրինք մեր հայցը:

Ի զարմանս մեզ, մեր նախագծից հետո այդ պաշտոնյան տեղում իր քարտուղարին խնդրեց 500.000 դոլարի չեկ դուրս գրել եկեղեցու անունով, որ մեզ հետ վերցնեինք: Նա ասաց, որ իր արածը արտասովոր մի բան է, և սովորաբար այդկերպ չեն վարվում: Այդ 500.000-ի համար ոչ ձևաթուղթ լրացրինք, և ոչ էլ պարտավորության տակ ստորագրեցինք: Նա ասաց, որ մնացած 500.000-ը կտրվի համաձայն բնականոն ընթացակարգի, բայց միևնույն ժամանակ վստահեցրեց, որ կլինի, քանի որ ինքն էր որոշում կայացնողը: Այդպես էլ եղավ: Մենք մեր շինարարին վճարեցինք մեկ միլիոն դոլարը, և շենքի շինարարությունն ավարտվեց:

Դժվար է ասել, թե ինչպիսի զգացողություն էր համակել ինձ ու Դրենդային տունդարձի մեկ ժամ տևողությամբ ճանապարհին, երբ մեր գրպանում այդ 500.000 դոլարանոց չեկն էր: Բառերով ոչ մի կերպ չես կարող նկարագրել այն, ինչ զգում էինք այդ պահին, բայց միևնույն ժամանակ երկյուղած էինք Սուրբ Հոգու ներգործությունից: Առաջին մարդը, ում զանգեցինք, մեր շինարարն էր: Ականջներումս դեռ հնչում է նրա ուրախ ձայնը, երբ հայտնեցինք բարի լուրը: «Ինչ եք արել: Նրանք տեղում չեկ են տրամադրել», -

ասաց նա. երկուսս էլ գիտեինք, որ դա Աստծո գործն էր:

Ինչպե՞ս դա պատահեց. Սուրբ Հոգու միջոցով: Աստված գիտի ձեր կարիքի պատասխանը: Եթե մի օր ցանկանում եք օգտվել Աստծո Թագավորության հիասքանչ հնարավորությունից, ուրեմն անհրաժեշտ է սովորել լսել Սուրբ Հոգուն: Եվ այս գիրքը հենց դրա մասին է:

Սուրբ Հոգու հետ տարբեր իրավիճակներով անցնելն ավելի հետաքրքիր է, քան Ջեյմս Բոնդի ցանկացած ֆիլմ: Եվ ինչպես ֆիլմերում է պատահում, գիտենք, թե վերջում ով է հաղթում՝ անկախ դժվարության մակարդակից:

Գլուխ 2

ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Վստահ եմ, լսած կլինեք այն անհեթեթ դատական հայցերի մասին, որոնք ի վերջո մերժվում են դատարանի կողմից:

Կոլորադոյի բանտի բանտարակյալներից մեկը 88 միլիարդ դոլարի (այո՛, *միլիարդ*) դատական հայց է ներկայացնում ընդդեմ Ամերիկյան ֆուտբոլի ազգային լիգայի: Հայցի հիմքում ընկած է Դալլասի Քովբոյներ (Dallas Cowboys) և Գրին Բեյ Փեքերս (Green Bay Packers) խմբերի լրացուցիչ խաղաժամի ընթացքում մրցավարների կողմից կայացրած որոշումը: Դատավորները որոշել են, որ Դեզ Բրայանտի (Dez Bryant) կողմից գնդակը բռնելը թերի է եղել: Բանտարկյալը համաձայն չէ այս ամենին: Նա իր հայցով պնդում է, որ Ամերիկյան ֆուտբոլի ազգային լիգայի պաշտոնյաներն անփութորեն են գործել և խախտել են իրենց հավատարմագրված պարտականությունները: Իսկ ինչո՞ւ է հենց 88 միլիարդի հայց ներկայացրել: Քանի որ Դեզ Բրայանտի մարզաշապիկի վրա 88[1] թիվն է:

Ցնորք է, այնպես չէ՞: Հասկանալի է, որ այս դատական գործին ընթացք չէր տրվելու: Իսկ ի՞նչն է որոշում՝ հայցը վավեր է, թե՝ ոչ: Համաձայն law.com-ի՝ կա դատական գործի մերժման երկու հիմնական պատճառ. առաջինը՝ եթե այն ունի իրավական խնդիր, կամ չկա որևէ իրավական հիմք, որի վրա կարելի է գործը վարել՝ համաձայն օրենքի: Ինչո՞ւ եմ անդրադառնում օրենսդրական խնդիրներին մի գրքում, որտեղ խոսում եմ Սուրբ Հոգու

մասին: Որովհետև եթե ցանկանում եք, որ Սուրբ Հոգին գործի ձեր իրավիճակում, պետք է հստակ իմանաք, թե ինչ է ասում օրենքը: Աստծո Թագավորությունն էլ գործում է հենց նույն սկզբունքով: Դա մի Թագավորություն է, որը գործում է Թագավորության օրենքների շրջանակում: Այս գրքաշարի իմ նախորդ երկու գրքերում՝ *«Ձեր ֆինանսական հեղափոխությունը. համաձայնության զորությունը»* և *«Ձեր ֆինանսական հեղափոխությունը. հանգստի զորությունը»,* ներկայացնում եմ Աստծո Թագավորության գործելու հիմնական սկզբունքները՝ իրավունքի և օրենքի տեսանկյունից: Բայց եթե ցանկանում եք հասկանալ, թե ինչ եմ ասում Սուրբ Հոգու մասին, լավ կլինի, որ մի փոքր ետ գնանք և փորձենք վերհիշել հետևյալ սկզբունքները: Սկսենք մի հարցումից:

> *«Հիսուսն ասաց նրանց. «Մարգարեն անարգված է միայն իր քաղաքում, իր ազգականների և իր սեփական տանը»: Եվ **չկարողացավ** որևէ հրաշք գործել այնտեղ, բայց միայն մի քանի հիվանդների վրա ձեռք դրեց և բժշկեց նրանց: Եվ նրանց անհավատության համար զարմանում էր»:*
>
> – Մարկոս 6.4-6

Կարո՞ղ եք ասել, թե ինչու Հիսուսը չկարողացավ բժշկել մարդկանց: Կարծրացած կրոնական պատասխանը հետևյալն է. «Աստծո կամքը չէր, որ բժշկեր նրանց: Ի վերջո, Աստված ամենից լավ գիտի: Եթե ցանկանար բժշկել, կկարողանար, այնպես չէ՞: Նկատի ունեմ, որ Նա Աստված է»: Կարո՞ղ ենք արդյոք ենթադրել, որ այնտեղ բժշկության կարիք ունեցող մարդիկ կային, բայց չստացան իրենց բժշկությունը: Կարծում եմ՝ այս տեքստում դա պարզ երևում է: Թե ինչու Հիսուսը չկարողացավ բժշկել մարդկանց, կարևոր հարց է, որին անպայման պետք է պատասխանել: Եթե կարդանք այս պատմության եզրափակիչ խոսքը, կտեսնենք, որ Հիսուսն ասում է, որ խոչընդոտը մարդկանց հա-

վատքի բացակայությունն էր: Հիսուսի դիտարկումը և եզրահանգումը հասկանալու համար, թե ինչու մարդիկ չբժշկվեցին, պետք է լավ պատկերացնենք, թե ինչ է հավատքը, և թե ինչու է այն անհրաժեշտ այս երկրային համակարգում, որպեսզի Երկինքը օրինավոր իրավասություն ունենա այստեղ:

Թույլ տվեք ամփոփեմ այս խնդիրը: Ոչ թե զորության բացակայությունն էր, կամ էլ Հիսուսի կողմից դժկամություն էր դրսևորվել, այլ սա իրավասության խնդիր էր: Իրականում, Երկինքը օրինական հիմք չուներ այդ իրավիճակում այնտեղ գտնվող մարդկանցից շատերի համար գործելու: Նախքան այս գիրքը կնետեք սենյակի անկյունը և կասեք, որ չեք հասկանում, թե ինչ եմ ասում, թույլ տվեք բացատրեմ:

Երբ Ադամն ու Եվան երկրի վրա դրվեցին, նրանք կատարյալ և ամբողջական իշխանություն ունեին երկրային թագավորության վրա: Կարծում եմ հետևյալ խոսքը հստակորեն կվավերացնի ասածս.

> *«Մի քիչ ցած արիր նրան հրեշտակներից, փառքով և պատվով պսակեցիր նրան և ամեն բան նրա ոտքերի տակ դրիր: Ամեն բան նրա ոտքերի տակ դնելով՝ Ասպված ոչինչ չթողեց, որ հնազանդ չլինի նրան»:*
>
> – Եբրայեցիների 2.7,8

Ուշադրություն դարձրեք՝ այստեղ ասվում է, որ Ադամը փառքով և պատվով պսակվեց: Պսակվել բառը վկայակոչում է իշխանության այն դիրքը, որտեղից Ադամը ղեկավարում էր, և ոչ թե որ պարտեզում թագ էր կրում: Բայց կարող ենք ենթադրել, որ նրա շուրջը ինչ-որ փայլ կամ լուսապսակ կար: Սա պարզապես միտք է: Ադամն ուներ Աստծո Թագավորության փառքը (Թագավորության օծությունը և վեհությունը) և պատիվը (իշխանության դիրքը): Եվ օգտագործելով այս երկու բաները՝ նա իշխում էր երկրի վրա՝ Աստծո Թագավորության կողմից իրեն փոխանց-

ված իշխանությամբ: Սատանան, ով արդեն երկրի վրա էր, երբ մարդը ստեղծվեց, ատում էր մարդուն և ցանկանում էր խլել նրա իշխանությունը: Իմանալով, որ հենց այնպես չի կարող Ադամից խլել իշխանության պսակը, քանի որ Ադամը կատարյալ իշխանություն ուներ նաև իր վրա, նա պետք է խաբեության մի ծրագիր հորիներ, որպեսզի Ադամը կամավոր ցած դներ պսակը (իշխանությունը):

Այսպիսով, սատանան խաբեց Եվային, և Ադամն էլ հետևեց նրան՝ ապստամբելով Աստծո դեմ: Դրա հետևանքով նրանք կորցրին Աստծո Թագավորության մեջ ունեցած իրենց դիրքը: Հետևելով սատանային՝ նրանք այժմ մտան նրա թագավորության օրենսդրության տակ: Գուցե հարցնեք. «Նախևառաջ, ինչո՞ւ էր Աստված թույլ տվել, որ սատանան պարտեզում լիներ»: Նա պետք է այնտեղ լիներ: Գուցե այս պատասխանը ձեզ համար խիստ զարմանալի թվա, բայց կտեսնեք, որ դա ճշմարիտ է: Միասին կարդանք Ծննդոց 2.8,9 խոսքերը.

> *«Եվ Տեր Աստված արևելքում՝ Եդեմի մեջ, մի պարտեզ տնկեց, և իր ստեղծած մարդուն դրեց այնտեղ: Տեր Աստված այդ հողից ամեն տեսակ ծառ աճեցրեց՝ աչքին հաճելի և ուտելու համար լավ: Այգու մեջտեղում Կյանքի ծառն էր և բարու և չարի գիտության ծառը»:*

Այս հատվածը կարդալով գուցե զարմանալի թվա, թե ինչու էր Աստված բարու և չարի գիտության ծառը դնում հենց այգու մեջտեղում՝ Կյանքի ծառի հարևանությամբ: Իրականում, որպեսզի Աստծո համար սատանայի տարածքը զավթելն օրինավոր լինի, Աստված մարդուն ընտրության հնարավորություն պետք է տար՝ ծառայելու կա՛մ Իրեն, կա՛մ սատանային: Աստված չէր կարող օրինավոր կերպով մուտք գործել սատանայի օրենսդրական դաշտ և մարդուն դներ այնտեղ: Որպեսզի դա օրինավոր լիներ, մարդը պետք է ունենար ընտրության հնարավորություն՝ ում էր ցանկա-

նում հնազանդվել: Եթե մարդն ընտրեր Աստծուն՝ Կյանքի ծառը, նա կիշխեր սատանայի վրա: Ուստի բարու և չարի գիտության ծառը պետք է դրվեր անմիջապես Կյանքի ծառի կողքին:

Ահա մի կարևոր դիտարկում ևս: Մարդն առանց ազատ կամքի չէր կարող դրվել երկրի վրա: Գիտեմ, շատ քրիստոնյաներ ասում են, որ մեզ ազատ կամք է տրված, որպեսզի Աստված տեսնի, թե ով է Իրեն սիրում, և ով չի սիրում: Որոշակի ճշմարտություն կա դրանում: Բայց առանց ընտրության հնարավորության դա անօրինական կլիներ: Եթե մարդուն ազատ կամք չտրվեր, նա չէր կարող այստեղ դրվել: Այս զրույցի ընթացքում դեռ շատ բաների մասին կարելի է խոսել, բայց նախորդ գրքում արդեն իսկ խոսել եմ:

Այսպիսով, Ադամն ընտրում է սատանայի խաբեությունը, կորցնում է Աստծո Թագավորությունը, և Ծննդոց 3.17-19-ում Աստված հակառակ է կանգնում մարդուն:

> *«...Անիծյա՛լ լինի երկիրը քո պատճառով, <u>տանջալի աշխատանքով</u> ուտես նրանից կյանքիդ բոլոր օրերում: Այն քեզ համար փուշ ու տատասկ կբուսցնի, և դու դաշտի բույսերը կուտես: Քո հացը <u>ճակատիդ քրտինքով</u> ես ուտելու, մինչև որ դեպի հողը դառնաս»:*

Այստեղ փաստացի տեսնում ենք, որ Աստված Ադամին ասում է, որ նա է անիծել երկիրը: Քանի որ Ադամը երկրի վրա լիակատար իշխանություն ուներ, նա է բացել դուռը սատանայի իշխանության համար և այդկերպ Աստծուն դուրս շպրտել: Հիմա Աստծո ձեռքերը կապված են, և Ադամը պետք է իր տանջալի աշխատանքով ու քրտինքով գոյատևեր: Բայց մի աննշան, փոքրիկ բան կար, որ սատանան մոռացել էր ասել Եվային, երբ փորձում էր նրան. Աստված արդեն իսկ սատանային դատել ու Երկնքից դուրս էր վռնդել և հռչակել էր, որ նրա հավիտենական տունը մի վայր է լինելու, որը կոչվում է դժոխք: Շատ կարևոր է, որ հասկանաս սա: Շատերն ասում են. «Ինչպե՞ս կարող է սիրող Աստված մարդկանց

գցել մի տեղ, որը կոչվում է դժոխք»: Աստված չի գցում: Ադամն է գցում: Հաջորդ աստվածաշնչյան մեջբերման մեջ տեսնում ենք, որ դժոխքը երբեք էլ մարդու համար ստեղծված չի եղել:

> *«Այն ժամանակ իր ձախ կողմիններին կասի. «Հեռացե՛ք Ինձնից, դուք, որ անիծված եք, հավիտենական կրակի մեջ, որ **պատրաստված է սատանայի և նրա հրեշտակների համար»»**:*
>
> – Մատթեոս 25.41

Երբ Ադամն ու Եվան մտան սատանայի իրավասության տակ, ինքնաբերաբար մտան սատանայի դատաստանի տակ: Ադամի միջոցով ամբողջ մարդկությունը մտավ սատանայի իշխանության տակ: Պատկերացրեք խոշոր եղջերավոր անասունների բուծումը: Երբ ձեր կովերից մեկը հորթ է ծնում, այդ հորթը կրում է ձեր ապրանքանիշի անվանումը, քանի որ այն ձեզ է պատկանում, որովհետև նախիրն ամբողջությամբ ձեզ է պատկանում: Նույն կերպ էլ, Ադամից ծնված ամբողջ մարդկությունը մտավ սատանայի իրավասության տակ: Ստանդարտ կրոնական հասկացողությունը կամ, կարելի է ասել, հասկացողության բացակայությունը, լիովին սխալ է: Այն պնդում է, որ մարդու ճակատագիրը, լինի դժոխքը, թե դրախտը, կախված է մարդու լավ կամ վատ լինելուց: Փաստն այն է, որ նրանց դատաստանն արդեն իսկ կայացված է: Նրանք գնում են դժոխք: Ոչ թե այն պատճառով, որ բոլորը վատ բան են արել, այլ՝ քանի որ Ադամն է վատ բան արել: Բայց քանի որ Աստված սիրում է մարդկանց, Նա փրկագնման մի ծրագիր է ստեղծել և մշակել Հիսուս Քրիստոսի միջոցով, Ում օգնությամբ մարդը կարող է խուսափել դատաստանից և վերադառնալ Աստծո Թագավորության իրավասության տակ:

> *«Որ **փրկեց** մեզ խավարի իշխանությունից և փոխադրեց մեզ Իր սիրելի Որդու արքայության մեջ»* (Կողոսացիների 1.13):

Այստեղ հարկ է նշել, որ Աստված սատանայի իրավասությունից և դատաստանից օրինավոր փախուստի ծրագիր է մշակել: Բայց այս ծրագրից օգտվելու համար յուրաքանչյուր տղամարդ, կին և երեխա պետք է անձամբ օգտվի՝ կանչելով Հիսուսի անունը: Քրիստոնյաներ, մի պահ լսեք ինձ: Փողոցի ծայրում բնակվող այն անուշիկ կինը կհայտնվի դժոխքում, եթե մինչև նրա մահանալը ինչ-որ մեկը նրան չասի, որ կանչի Հիսուսի անունը: Դժոխքում շատ լավ մարդիկ են հայտնվելու: Դա սատանայի սուտն է, որ մարդիկ կարծում են, որ բարի գործեր անելով կարող են խուսափել դժոխքից: Հիսուսի անունը միակ անունն է, որ տրվել է մարդուն փրկություն ստանալու և սատանայի դատաստանից փախչելու համար: Ուզում եմ նաև հստակեցնել, որ երբ Ադամն ընկավ, նա հոգևորապես մահացավ և Աստծուց կտրվեց, բայց միևնույն ժամանակ նրա օրինավոր դիրքը այս երկրի վրա դեռ պահպանվում է: Այդ իսկ պատճառով սատանան օգտագործում է դևերից ոգեշնչվող մարդկանց, իսկ Աստված օգտագործում է Հոգով լցված մարդկանց, որպեսզի մարդկանց թագավորության մեջ գործեր արվեն: Ամփոփելու համար ասենք, որ գիտակցում ենք, որ դրախտ կամ դժոխք գնալը կախված չէ մեր լավ ու վատ լինելուց, այլ այն օրինավոր հաղթանակից, որը Հիսուսը խաչի վրա տարավ ընդդեմ սատանայի: Թեև Հիսուսը լիիրավ ճանապարհ հարթեց մարդու համար, որ վերջինս դուրս գա սատանայի իրավասությունից, բայց այդ արտոնությունից օգտվելու համար ամեն մարդ պետք է կանչի Հիսուսի անունը:

Գիտեմ, որ այս մասին մի քանի պարբերություն առաջ ենք խոսել, բայց վերադառնանք սկզբնական հարցին. «Ինչո՞ւ Մարկոսի 6-րդ գլխում Հիսուսը չկարողացավ բժշկել մարդկանց»: Ես ասացի, որ դա իրավասության հարց է, և այդպես էլ կա: Քանի որ Ադամը սատանային հանձնեց մարդու թագավորության հոգևոր իրավասությունը, Աստված չի կարող ներխուժել այստեղ, երբ կամենա, քանի որ դա անօրինական կլինի: Բայց, խնդրում եմ, ասածս սխալ չընկալեք այն հարցում, թե ում է պատկանում

երկիրը: Աստվածաշնչում հստակ ասվում է, որ երկիրը և իր ամբողջ լիությունը պատկանում է Աստծուն: Բայց ինչ վերաբերում է մարդու թագավորությանը, Աստված որևէ օրինավոր իրավասություն չունի նրանց վրա: Մենք սրա մասին կարող ենք կարդալ Ղուկաս 4.5-7-ում.

> *«Եվ սատանան Նրան մի բարձր սար հանեց և աշխարհի բոլոր թագավորությունները ցույց տվեց մի վայրկյանի մեջ: Եվ սատանան ասաց Նրան. «Նրանց ամբողջ իշխանությունը և փառքը Քեզ կտամ, որովհետև դա ինձ էր տրված: Եվ ում կամենում եմ, նրան տալիս եմ այն: Արդ Դու, եթե իմ առջև ընկած երկրպագություն անես, այս բոլորը Քոնը կլինի»»:*

Այստեղ տեսնում ենք, որ Ադամը սատանային տվել է օրինական իրավասություն աշխարհի թագավորությունների վրա: Այդ իսկ պատճառով այս աշխարհի թագավորությունում բնակվող մարդկանց կյանքերում Աստված չի կարող անել այն, ինչ կամենա: Բայց եթե Աստված գտնի մեկին, ով կհավատա Իրեն և կատարելապես համոզված կլինի երկնային իշխանության հարցում, այդ ժամանակ Աստված կարող է օգտագործել Իր իշխանությունը այդ մարդու միջոցով: Հենց սկզբում սատանան նույնկերպ մուտք գործեց երկրային թագավորություն այն մեկի՝ Ադամի միջոցով, ում տրված էր օրինավոր դիրք այս երկրի վրա: Երբ Աստված կորցրեց Իր մարդուն՝ Ադամին, Նա պետք է այս երկրի վրա մեկ այլ մուտքի հնարավորություն գտներ, մեկ այլ մարդու՝ իր փրկագնման ծրագիրն իրագործելու համար: Այդ մարդու անունը Աբրամ էր:

> *«Եվ Տերն ասաց Աբրամին. «Գնա՛ քո երկրից և քո ազգականներից և քո հոր տնից այն երկիրը, որ Ես քեզ ցույց կտամ: Ես քեզ մեծ ազգ կշինեմ և քեզ կօրհնեմ և քո անունը կմեծացնեմ, և դու օրհնյալ կլինես: Եվ քեզ օրհ-*

նողներին կօրհնեմ և քեզ անիծողներին կանիծեմ, և երկրի բոլոր ազգերը քեզնով կօրհնվեն»»:

– Ծննդոց 12.1-3

Աբրամը կամ Աբրահամը դարձավ հենց այն դուռը, որն Աստված օգտագործեց այս աշխարհի թագավորություն վերադառնալու և մարդկության փրկության Իր ծրագիրը բերելու համար:

Աստված Աբրահամի և Նրա սերունդների հետ ուխտ կնքեց, և այս օրինավոր համաձայնությամբ մուտքի հնարավորություն ստացավ Հիսուս Քրիստոսին այս աշխարհ բերելու համար, բայց միայն Աբրահամի սերնդի առումով: Դրա համար էլ Հիսուսը պետք է լիներ Աբրահամի սերնդի հետնորդներից մեկը, այդ էր պատճառը, որ Իսրայելին թույլ չէր տրվում ամուսնանալ հարևան ազգերի հետ: Դրա համար էլ Նոր կտակարանի առաջին գլուխն ամբողջությամբ ծագումնաբանություն է: Դա ապացուցում է, որ Հիսուսը փաստացի Աբրահամի օրինավոր հետնորդն է, և ապացույց է հանդիսանում սատանայի համար, որ օրինավոր է, որ Հիսուսը գա և վճարի մեղքի գինը:

Քանի որ երկրի վրա իշխելու իրավունքը պատկանում է մարդուն, ուրեմն թե՛ Աստված, և թե՛ սատանան պետք է մարդկանց օգտագործեն ինչ-որ բաներ անելու համար: Պարզ ասած, մարդը միակ օրինավոր մարմինն է այս երկրի վրա: Բայց ինչպես սատանան մուտքի հնարավորություն ստացավ Ադամի և Եվայի միջոցով, երբ նրանք հավատացին իր ասածին, այդպես էլ Աստված պետք է գտնի այնպիսի մարդկանց, ովքեր կհավատան Իր ասածին, որպեսզի այս երկրի վրա դրսևորելու իրավունք ստանա: Եթե մարդն իր սրտում լիովին հավատա այն ամենին, ինչ Երկինքն է ասում, և ոչ թե սատանայի թագավորությունը, դա կկոչվի հավատք, և դա օրինական իրավասություն կտա Երկնքին՝ երկրի վրա այդ մարդու միջոցով գործելու և Աստծո կամքը երկրի վրա բերելու համար՝ այդկերպ պայքարելով սատանայի թագավորության դեմ: Այնքան բան կա ասելու, բայց այս ամենի

մասին մանրամասնորեն խոսել եմ իմ առաջին երկու գրքերում:

Հիմնական բանալին հետևյալն է. քանի որ սատանան երկրի վրա է, նա միշտ պաշտպանում է իր թագավորությունը և փորձում է խափանել Աստծո ծրագրերը: Այդ իսկ պատճառով, Աստված Իր ծրագրերը և մարտավարությունը այս երկրային թագավորությունում իրականացնելու համար գործում է ծածուկ: Եվ երբ իմանաք, թե ինչպես է Աստված ծածուկ գործում, դուք ձեր կյանքի հաջողության և հաղթանակների ամենամեծ բանալին ձեռք բերած կլինեք: Ես դա կոչում եմ մարտավարության զորություն:

Գլուխ 3

ԱՊՇԱԾ

Ես զանգ ստացա մի մարդուց, ում երբեք չէի հանդիպել: Նա ներկայացավ և ասաց, որ իրեն ու ևս մի քանիսին շատ է դուր եկել իմ *«Հավատքի որսորդություն»* գիրքը և Աստծո Թագավորության մասին իմ դասերը: Նա հարցրեց, թե արդյո՞ք կցանկանամ գնալ Մոնտանա և ուրբաթ երեկոյան ու շաբաթ առավոտյան դասավանդեմ շուրջ 70 տղամարդու: Դեռ չպատասխանած՝ նա ավելացրեց. «Շաբաթ առավոտյան դասից հետո կցանկանայինք ձեզ տանել այծքաղի որսի, քանի որ նրանց որսի ժամանակն է»: Երկար ժամանակ չպահանջվեց այդ հարցին պատասխանելու համար: Նա ասաց, որ իմ տղաներն էլ են հրավիրված, եթե իհարկե կցանկանան գալ: Ամռան ամիսներին նրանք օգնեցին ինձ լիցենզիա ստանալ առաջիկա աշնան որսի համար: Տղաս՝ Թիմը, որոշեց ինձ հետ գալ, և ինքն էլ լիցենզիա ստացավ:

Ինչպես հետո իմացա, նրանք «Խոստում պահողներ» խմբից էին, և շատ էին ոգևորվել որսորդական պատմություններից, որոնք պատմել էի իմ դասերի ժամանակ, և թե ինչպես եմ իմ եղնիկին հավատքով որսացել: Նրանք ցանկանում էին ավելին իմանալ, թե ինչպես է ինձ մշտապես հաջողվել 30-40 րոպեի ընթացքում որսալ իմ եղնիկին, և թե ինչպես է Աստված ինձ սովորեցրել հստակ ձևակերպել, թե ինչ տեսակի կենդանի եմ ցանկանում որսալ, ինչ սեռի և ինչ չափի: Հասկանում եմ, ինձ հետ պատահած պատմությունները գրեթե անհավատալի են, և

եթե իրականում դրանք իմ աչքով տեսած չլինեի, նույնչափ հետաքրքրված կլինեի:

Ի վերջո, եկավ Մոնտանա մեկնելու շաբաթը: Թիմը և ես օդանավով մեկնեցինք և հանդիպեցինք տղամարդկանց ծառայության մի քանի առաջնորդների՝ մի խումբ հիասքանչ տղաների, ովքեր անկեղծորեն սիրում էին Տիրոջը: Նրանք մեզ տարան կարմրախայտի որսի, հետո հրաձգարան, որտեղ մեզ համար հրացաններ էին պատրաստել: Ես մեծացել եմ Օհայոյում և սովոր չէի հեռահար հրացաններին: Մեր նահանգի օրենքը թույլ էր տալիս եղնիկների համար ատրճանակ օգտագործել, իսկ հեռավորությունը գրեթե 100 մետրից էլ պակաս էր լինում, երբեմն էլ՝ ավելի քիչ, քան 50 մետրը: Եվ երբ թիրախակետը 200 մետրի վրա դրեցին, դա ինձ համար անսովոր էր: Բայց մի քանի անգամ փորձելուց հետո սկսեցի խփել մետաղյա սկավառակին ու ասացի, որ պատրաստ եմ որսին:

Այդ երեկոյան և հաջորդ առավոտյան նույնպես տեղի դպրոցի դահլիճում դասավանդեցի տղամարդկանց հավաքույթին: Տղաները փափագում էին լսել Աստծո Թագավորության մասին, հատկապես, թե ինչպես էր Աստված ինձ սովորեցրել Արքայության օրենքները որսորդության միջոցով: Ճաշից հետո նրանք ասացին. «Ուրեմն, եկեք գնանք այծքաղի որսի»: Ես երբեք այծքաղ չէի որսացել, և բոլորովին գաղափար չունեի, թե ընթացակարգն ինչպիսին է: Իմ որսորդության փորձառության ժամանակ որսի էինք գնում երկու կամ երեք հոգով: Իսկ այս տղաներն իրենց հետ վերցրին մարդկանցով լեցուն երեք-չորս մեքենա: Հիշում եմ, այդ գիշեր Թիմն ինձ հարցրեց. «Հայրիկ, այծքաղի որսից անհանգիստ չե՞ս: Դու նրանց սովորեցնելու ես, թե ինչպես է Թագավորությունը գործում, և ամեն անգամ վստահաբար պնդում ես, որ Թագավորության օրենքները միշտ գործում են, իսկ եթե հանկարծ քեզ չհաջողվի այծքաղ որսալ, ու բոլորը դրա ականատեսը լինե՞ն»: Նրան ասացի, որ չեմ անհանգստանում: Ես և Դրենդան արդեն մեր սերմը ցանել էինք և այդ այծքաղի համար

համաձայնության էինք եկել, և հաստատ որսը հաջողվելու էր:

Երբ ճանապարհվել էինք դեպի այն ագարակը, որտեղ որսի համար թույլտվություն էինք ստացել, նրանք բացատրում էին, որ այծքաղը Հյուսիսային Ամերիկայի ամենաարագավազ կենդանին է, նաև՝ երկրագնդի երկրորդ արագավազ կենդանին: Նրանից արագավազ միայն վագրակատուն է: Ասում էին, որ նա շատ լավ տեսողություն ունի և պաշտպանության հիմնական ձևը վազելն է: Ու եթե հանկարծ նկատեն քեզ, մեկ ակնթարթում կհեռանան: Ինձ տրված էր արու այծքաղի որսի թույլտվություն, իսկ Թիմին՝ էգի:

Այդ օրվա ծրագիրը հետևյալն էր. մեքենայով հասնել ագարակի բարձր կետին, ապա ոտքով քայլել դեպի գագաթը, այնուհետև վերևից զննել հարթավայրը՝ փորձելով որևէ կենդանի նշմարել: Երբ ոտքով բարձրանում էինք դեպի գագաթը, հեռվից մի խումբ այծքաղների նկատեցինք: Տեղանքը ուսումնասիրելուց հետո հասկացանք, որ կարող ենք ավելի մոտենալ, բայց միևնույն ժամանակ մնալ կիրճի ներքևի մասում: Պետք է գաղտագողի մոտենայինք վերջին բլրակին, հետո դիրքավորվեինք բլրի գագաթին՝ կրակելու համար, եթե իհարկե մինչ այդ այծքաղներն այնտեղ լինեին: Դիրքավորվելուց հետո կարող էինք 200-250 մետրից խփել նրանց:

Թիմը և ես բավականին երկար ժամանակ դանդաղ սողում էինք փորի վրա, մինչև որ հասանք բլրի գագաթին, որը նայում էր դեպի այն հարթավայրը, որտեղ նկատել էինք այծքաղներին: Այսպես էինք պայմանավորվել, որ իմ կրակոցից հետո Թիմը պետք է խփեր էգին: Ես դանդաղ սողացի դեպի բարձունքի ծայրը և զննեցի տարածքը: Բարեբախտաբար մեր ծրագիրը գործել էր, այծքաղների փոքրիկ երամակը չէր նկատել մեզ: Ես հանեցի իմ հրացանը, ինձ համար դժվար էր ուղիղ նշան բռնել այդ հեռավորության վրա, սողեսող գալուց էլ շնչառությունս էր արագացել: Բայց, ի վերջո, երբ արդեն համոզվեցի, որ արուն իմ

նշանակետում է, ձգանը քաշեցի: Վրիպեցի: Երամակը շփոթվեց, ու ես երկրորդ կրակոցն արձակեցի: Կրկին վրիպում: Երամակն արդեն ցրվել էր, երբ երրորդ ու չորրորդ անգամ կրակեցի: Բոլորը վրիպեցին: Հինգերորդ անգամ էլ կրակեցի, բայց միայն ձգանի շխկոցը լսվեց: Փամփուշտներս սպառվել էին:

Այդ իրարանցման մեջ չէի էլ նկատել, որ ամբողջ երամակը դուրս էր եկել հասանելի հեռավորության սահմաններից: Բոլորը, բացի այն արուից, որի վրա նշան էի բռնել: Այն հանդարտ կանգնած էր մի քանի մետր այն կողմ, որտեղ առաջին կրակոցի ժամանակ էր կանգնած: Ես խելահեղորեն Թիմից վերցրի իր հրացանը: Հիմա արդեն կանգնած էի կրակում, և ահա արու այծքաղն ընկավ: Ես թե՛ ուրախ էի, թե՛ հանգստացած: Արուն խփվա՛ծ էր: Շատ զարմացա, երբ ետ նայեցի և տեսա, որ մի խումբ տղաներ գոռում ու ցնծում էին: Ոմանք հեռախոսով նկարում էին, և լսեցի, թե ինչպես էր մեկն ասում. «Այո՛, սա իսկապես նման էր *«Հավատքի որսորդություն»* գրքին, ընդամենը 40 րոպե տևեց, և այդ ժամանակ արուն հանգիստ կանգնած էր, ինչպես որ գրքում էր ասվում»: Նրանք եկել էին տեսնելու, թե ինչպես է Թագավորությունը գործում: Ի վերջո, ժամեր շարունակ սովորեցրել էի նրանց, ու հիմա ցանկանում էին տեսնել, թե ինչպես է այն գործում: Չնայած այն բանին, որ վրիպել էի, բայց, միևնույն է, վերջում խփել էի և դրանով իմ դասավանդածն ավելի արժանահավատ էր դարձել: Կեսօրին Թիմին էլ հաջողվեց մի գերազանց կրակոցով խփել էգ վազող այծքաղին: Երկուսս էլ այնքան հուզված էինք: Մոնտանան այնքա՛ն գեղեցիկ էր: Ես և Թիմը Թագավորության ընտիր փորձառություն ունեցանք: Այծքաղի գլուխը կախեցի գրասենյակիս պատից, որ հիշեցնի ինձ Թագավորության և Աստծո հավատարմության մասին:

ԱՇԽԱՐՀԸ ՓԱՓԱԳՈՒՄ Է ՏԵՍՆԵԼ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ԱՍՏՎԱԾ ԷԼ ՍԻՐՈՒՄ Է ՁԱՐՄԱՑՆԵԼ ՆՐԱՆՑ:

Իսկ ինչո՞ւ եմ այս գրքում պատմում որսորդական այս պատմությունը: Քանի որ Աստված ցանկանում է գործել ձեր միջոցով, որպեսզի ցույց տա Իր թագավորությունը ձեր բոլոր ընկերներին, հարևաններին և բարեկամներին: Բոլորը ցանկանում են տեսնել, թե ինչպես է դա գործում: Աշխարհը փափագում է տեսնել իրականությունը, Աստված էլ սիրում է զարմացնել նրանց: Նրանց զարմացնելու համար դուք պետք է սովորեք, թե ինչպես է գործում Աստծո Թագավորությունը, և թե ինչպես է Սուրբ Հոգին ցույց տալիս ձեզ անհրաժեշտ պատասխանները և հնարավորությունները, որպեսզի զարմացնեք բոլորին, նույնիսկ՝ ձեզ: Ես հետո պարզեցի, որ այդ տղաները, ովքեր տղամարդկանց ծառայության առաջնորդներն էին, հրավիրել էին ինձ, որպեսզի հավատքի կյանքում լճացած տղաներին ցույց տամ Աստծո Թագավորությունը: Իմացա նաև, որ այդ օրվա իմ ուսմունքից հետո շատերն իրենց սրտերը նվիրել էին Տիրոջը: Տերը կօգնի, որ հաջողության ձեր ծրագրերը նույնպես ի կատար ածվեն:

Թույլ տվեք ևս մեկ պատմություն պատմել, բայց սա անմիջապես Աստվածաշնչից է: Այն մեկ անգամ ևս ցույց կտա, թե ինչպես է Աստված ցանկանում զարմացնել ձեզ Իր գերբնական ծրագրերով և մարտավարությամբ, որը կապացուցի ձեզ շրջապատող մարդկանց Աստծո իրական լինելը և մարդկանց հանդեպ Նրա սերը:

«Մի օր Հիսուսը կանգնած էր Գեննեսարեթի ծովակի մոտ: Մինչ Նրա շուրջը մարդիկ էին կիտվում Աստծո Խոսքը լսելու, Նա ծովակի եզերքին երկու նավակ տեսավ, որոնցից ձկնորսները դուրս էին եկել և իրենց ուռկաններն էին լվանում: Նա մտավ նավակներից մեկի մեջ, որը Սիմոնին էր պատկանում, և խնդրեց նրան մի փոքր ափից հեռանալ: Հետո նստեց և սկսեց նավակից սովորեցնել մարդկանց:

Եվ երբ խոսելուց դադարեց, Սիմոնին ասաց. «Նավը դեպի խորքը տար, և ձեր ուռկանները գցեք որսի»: Եվ Սիմոնը

պատասխանեց ու ասաց Նրան. «Վարդապե՛տ, ամբողջ գիշեր աշխատեցինք և ոչինչ չբռնեցինք, բայց Քո խոսքի համար ուռկանը կգցեմ»:

Երբ այդպես արին, ձկների այնպիսի մեծ քանակություն բռնեցին, որ նրանց ուռկանները սկսեցին պատռվել: Նրանք նշան էին անում մյուս նավի մեջ լինող ընկերներին, որ գան ու օգնեն իրենց. նրանք եկան և երկու նավը լցրին՝ մինչև որ խորտակվում էին:

Երբ Սիմոն Պետրոսը սա տեսավ, ընկավ Հիսուսի ծնկների առջև և ասաց. «Ինձնից հեռո՛ւ գնա, Տե՛ր. ես մեղավոր մարդ եմ»: Որովհետև ահ պատեց նրան և նրա հետ եղող ամենքին էլ այն ձկների որսի համար, որ բռնեցին: Այդպես էլ Զեբեդեայի որդիներին՝ Հակոբոսին և Հովհաննեսին, որ Սիմոնի ընկերներն էին»:

– Ղուկաս 5.1-10

Պետրոսը, Հակոբոսը և Հովհաննեսը ամբողջ գիշեր ձուկ էին որսացել, և ոչինչ չէր ընկել իրենց ուռկանը: Նրանք փորձառու ձկնորսներ էին, ովքեր մեծացել էին լճի ջրերի վրա և շատ լավ գիտեին իրենց գործը: Բայց այս անգամ ձեռնունայն էին վերադարձել: Անշուշտ, պատմությունն այսքանով չի ավարտվում: Հիսուսը վերցնում է Պետրոսի նավակը, որ այդտեղից քարոզի, և ապա ասում է, որ ուռկանը խորը ջրերի մեջ գցի, որ ձուկ որսա: Պետրոսը՝ մի փոքր շվարած, ասում է, որ ամբողջ գիշեր որս են արել, բայց որևէ ձուկ չեն գտել, բայց քանի որ Հիսուսն էր դա ասողը, պատրաստ էր ուռկանը գցելու: Երբ Պետրոսը գցում է ուռկանը, Աստվածաշունչն ասում է, որ նա այնքան ձուկ է բռնում, որ ուռկանը քիչ է մնում պատռվի: Ուստի նա իր ընկերներին է օգնության կանչում: Համաձայն Աստվածաշնչի, իր ընկերների ուռկաններն էլ գրեթե պատռվում էին, և երկու նավակներն էլ այնքան լիքն էին ձկներով, որ քիչ էր մնում խորտակվեին: Աստվածաշունչն ասում է, որ այս փորձառու ձկնորսներն այնքան էին ապշել այդքան որ-

սից, որ թողեցին ձկնորսությունը և հետևեցին Հիսուսին:

Սա Սուրբ գրքի իմ ամենասիրելի պատմություններից է, քանի որ այստեղ հստակ երևում է երկու թագավորությունների տարբերությունը՝ խավարի թագավորության և Աստծո Թագավորության: Խավարի թագավորությունը, որը սատանայի տիրապետության տակ է, փչացած, աղքատիկ, ամբողջ գիշեր տանջված և ոչինչ չորսացած համակարգ է և ուղեկցվում է տքնաջան աշխատանքով ու քրտինքով՝ պարզապես գոյատևելու համար: Ես դա անվանում եմ աշխարհի անեծքի համակարգ, որը հայտնվեց Ադամի ըմբոստության պատճառով, ի հակադրություն Աստծո Թագավորության փառավոր պատկերի և դրանից բխող ամեն ինչի: Մտորեք այս երկու ծայրահեղությունների շուրջ և կհամոզվեք, որ Աստված ձեզ համար պատրաստել է երկրորդ դուռը՝ Իր Թագավորությունը:

Հիմա ամեն քրիստոնյա կաղաղակի ու կծափահարի՝ ասելով. «Այո՛, Աստծո Թագավորությունը հզոր է: Տե՛ս, թե որքան ձուկ բռնեցին»: Բայց շատ քչերը կհարցնեն, թե ինչպես Հիսուսը արեց դա: Շատերն էլ անտեղյակ են, որ իրենց տրված է նույն իշխանությունը և կարողությունը՝ վայելելու Աստծո մատակարարման նույն մակարդակը, որն այդ օրը Պետրոսը, Հակոբոսը և Հովհաննեսը վայելեցին: Այն հարցին, թե ինչպես այդ օրը Հիսուսն արեց դա, սովորաբար տրվում է ծեծված բացատրություն, որ Հիսուսը կարողացավ անել դա, քանի որ Նա Հիսուսն էր: Բայց, սպասե՛ք, մենք արդեն տեսանք, որ Մարկոսի 6-րդ գլխում Հիսուսը չկարողացավ բժշկել բոլորին, քանի որ Երկինքն այնտեղ որևէ իրավասություն չուներ: Իսկ ձկնորսության օրը գործում էր Թագավորության հոգևոր օրենքները, որոնք էլ նպաստեցին և ապահովեցին ձկան որսը:

Խնդիրը հետևյալն է: Իմ հանդիպած քրիստոնյաներից շատերի մտքով նույնիսկ չի անցել, որ հնարավոր է անել նույնը, ինչ արեց Հիսուսը: Իսկ եթե մտքներով էլ անցած լինի, գաղափար չունեն, թե ինչպես Հիսուսը արեց դա: Ես մի ասացվածք եմ օգ-

տագործում իմ համաժողովներին, որ «եթե մի բան չես կարող սովորեցնել, ուրեմն չես կարող դրանով ապրել»: Նկատի ունեմ, որ եթե չես կարող սահմանել, թե ինչպես այդ որսը տեղի ունեցավ, դու երբեք չես կարող կրկնօրինակել այն: Իսկ ինչպե՞ս այդքան շատ ձուկ բռնվեց: Կարո՞ղ եք սահմանում տալ: Եթե ցանկանում եք այդքան մեծ հաջողություն ունենալ, ուրեմն պետք է պարզեք, թե որտեղից այդքան ձուկ հայտնվեց: Բայց շատ մարդիկ զարմանում են, երբ սկսում եմ այդպես խոսել: Իսկ ի՞նչ է ասում Հիսուսը.

> *«Ճշմարտությունն եմ ձեզ ասում. Ինձ հավատացողը կանի այն, ինչ Ես եմ անում: Եվ սրանից ավելի մեծ գործեր էլ կանի, քանի որ Ես գնում եմ Հոր մոտ»:*
>
> – Հովհաննես 14.12

Երբ Հիսուսն ասաց, որ մենք կարող ենք Իր գործերը գործել, քանի որ գնում է Հոր մոտ, Նա նկատի ուներ, որ Իր մահից և հարությունից հետո Սուրբ Հոգին պետք է իջներ մեզ վրա: Սա այն Սուրբ Հոգին է, որ Հորդանան գետում իջավ Հիսուսի վրա՝ թույլ տալով, որ Նա Աստծո հզոր գործերն անի, որոնց մասին իմանում ենք Նրա ծառայության ընթացքն ուսումնասիրելով: Եվ քանի որ գիտենք, որ Մարկոսի 6-րդ գլխում մարդկանց անհավատությունը խոչընդոտ հանդիսացավ այս զորությանը, մինչ Ղուկասի 5-րդ գլխում այդ զորությանը ոչինչ չխոչընդոտեց ձկների առումով, մենք պետք է սովորենք Աստծո Թագավորության օրենքները, որպեսզի կարողանանք հասկանալ, թե ինչն է խոչընդոտում և ինչն է նպաստում ցանկացած իրավիճակում Սուրբ Հոգու ազատ հոսքին: Ուրեմն, եկեք դիտարկենք այս պատմությունը և տեսնենք, թե ինչ կարող ենք բացահայտել և սովորել Թագավորության օրենքներից և սկզբունքներից:

Եթե դուք կարդացել եք իմ առաջին գիրքը, ուրեմն գիտեք, թե հոգևորում ինչ կատարվեց, երբ Պետրոսն իր նավը տվեց

Հիսուսին, որ օգտագործի: Պետրոսի նավակը, և իրականում ամբողջ ձկնորսական բիզնեսը, փոխեց թագավորություններ և իրավասություններ: Այո՛, երբ Հիսուսն այդ նավակը վերցրեց Իր ծառայության համար, Պետրոսի նավակն այդ ժամանակ անցավ Աստծո Թագավորության իրավասության ներքո: Հենց այն անցավ Աստծո Թագավորության իրավասության ներքո, Սուրբ Հոգին օրինական իրավասություն ստացավ Հիսուսին գիտության խոսք տալու, թե խորը ջրերում որտեղ է գտնվում ձկների վտառը: Այս հսկայական որսը գերբնական ծրագրի և մարտավարության արդյունք էր, որն այդ օրը Հիսուսի միջոցով Սուրբ Հոգին տվել էր Պետրոսին: Ես դրան անվանում եմ «գաղտնի գիտելիք», և դրա շնորհիվ Պետրոսը, Հակոբոսը և Հովհաննեսը տեսան իրենց կյանքի ամենամեծ որսը: Աստվածաշունչն ասում է, որ այս փորձառու ձկնորսները ապշել էին:

Ես հավատում եմ, որ Հիսուսն ուզում է, որ դուք զարմանալի կյանք ապրեք. մի կյանք, որը կդրսևորի Թագավորությունը, որպեսզի ձեզ շրջապատող մարդիկ, տեսնելով այն, ապշեն և դառնան դեպի Հիսուսը: Իմ համոզմամբ, կրոնի դատարկ նավակները երբեք չեն հրապուրում և առաջնորդում մարդկանց դեպի Աստված: Աստված ցանկանում է, որ մարդիկ տեսնեն Իր թագավորության բարիքները և հավատան, որ Նա բարի է և կամենում է ընդունել բոլորին: Եսային հետևյալ մարգարեությունը հոչակելիս, որը եկեղեցուն է վերաբերում, խոսում է դրա մասին.

> *«...Նրանք (նկատի ունի մեզ) պիտի կոչվեն արդարության բևեկնիներ, որ Տերը տնկել է Իր փառավորությունը ցուցադրելու համար»* (Եսայի 61.3բ):

Ուրեմն, ինչ եմ ցանկանում, որ սովորեք Ղուկասի 5-րդ գլխի ձկնորսության պատմությունից: Այս պատմությունից շատ հոգևոր օրենքներ կարող եք առանձնացնել, բայց եթե այս մի միտքը պահեք ձեր մեջ, այն կփոխի ձեր կյանքը:

Ցանկացած մարդ կարող է ձուկ բռնել, եթե Հիսուսը հստակ ասի, թե որտեղ գցի ուռկանը: Կամ՝ ցանկացած մարդ կարող է ձուկ որսալ, եթե Հիսուսը ասի, թե որտեղ են ձկները, և թե ինչպես բռնել:

Մարդիկ ասում են. «Լավ բան ես ասում, Գա՛րի, բայց Հիսուսն այլևս այստեղ չէ»: Այո՛, այստեղ չէ: Բայց Սուրբ Հոգին, Ով այդ օրը Նրան ասաց, թե որտեղ են ձկները, այսօր այստեղ է և բնակվում է ձեր մեջ, եթե դուք հավատացյալ եք: Տեսեք, թե ինչ ասաց Հիսուսն Իր աշակերտներին, երբ պատրաստվում էր լքել նրանց.

> *«Այս խոսեցի ձեզ հետ, քանի դեռ ձեզ մոտ եմ: Բայց Խորհրդականը՝ Սուրբ Հոգին, որ Հայրը կուղարկի իմ անունով, Նա ամեն բան կսովորեցնի ձեզ և կհիշեցնի ամեն ինչ, որ ձեզ ասացի: Խաղաղություն եմ թողնում ձեզ, իմ խաղաղությունն եմ տալիս ձեզ: Ես այնպես չեմ տալիս, ինչպես աշխարհն է տալիս: Թող ձեր սրտերը չխռովվեն, և մի՛ վախեցեք»:*
>
> – Հովհաննես 14.25-27

Ո՞րն էր Հիսուսի խաղաղությունը. Սուրբ Հոգին էր, Ով ասում էր Նրան, թե ինչպես վարվել ցանկացած իրավիճակում, որին բախվում էր: Հիսուսը Սուրբ Հոգուն Խորհրդական է անվանում: Բարեկա՛մս, այս Խորհրդականն ապրում է ձեր մեջ և երբեք ձեզ չի լքի: Դուք լսո՞ւմ եք Նրան: Դուք պետք է համաձայնեք, որ Աստված հավանաբար ունի պատասխանը ցանկացած իրավիճակի համար, որում կարող եք հայտնվել: Հիսուսն ասում է, որ այս Խորհրդականը կարող է սովորեցնել կամ խորհուրդ տալ ամեն իրավիճակում:

ՀԻՍՈՒՍԸ ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒՆ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ Է ԱՆՎԱՆՈՒՄ: ԲԱՐԵԿԱ՛ՄՍ, ԱՅՍ ԽՈՐՀՐԴԱԿԱՆՆ ԱՊՐՈՒՄ Է ՁԵՐ ՄԵՋ ԵՎ ԵՐԲԵՔ ՁԵԶ ՉԻ ԼՔԻ:

Համաձայն *Սթրոնգի Աստվածաշնչի ընդլայնված համաբարբառի* (3875 բառ)՝ հունարեն բառը, որը թարգմանվում է որպես Խորհրդական, բառացիորեն հետևյալ իմաստն ունի. «Մեկը, ում հրավիրում են կամ հատկապես կանչում են օգնության»: Այն ունի նաև հետևյալ իմաստը. «Մեկը, ով մեկ ուրիշի հայցը ներկայացնում է դատավորի առջև. դատապաշտպան, օրինական օգնական կամ փաստաբան»: Ընդհանրական իմաստով այն նշանակում է օգնական, կամ մեկը, ով օգնություն է հասցնում:

Չգիտեմ՝ դուք ինչպես, բայց ես ցանկանում եմ օգտվել այսպիսի օգնականից: Սուրբ Հոգին Պետրոսի պատասխանն էր, երբ նրանք ամբողջ գիշեր փորձել էին ձուկ որսալ և այդպես էլ ոչինչ չէին բռնել: Եվ Սուրբ Հոգին նաև իմ պատասխանն էր, երբ ես գաղափար չունեի, թե որտեղից գումար գտնեի պարտքերից ազատվելու համար: Ընտանիքիս ֆինանսական այդպիսի քաոսի մեջ գցելուց հետո, երբ ես դիմեցի Աստծուն օգնության համար, Սուրբ Հոգին էր, որ մի օր երազ ցույց տվեց, որ թողնեի այն ընկերությունը, որտեղ աշխատում էի, և զրոյից սկսեի իմ սեփական գործը:

Սուրբ Հոգին էր, Ով ասաց ինձ, որ նոր ընկերության առաքելությունը Աստծո բարության մասին հռչակելն է և մարդկանց օգնելն է, որ ազատվեն պարտքերից, որը այդ ժամանակ ամենախելահեղ միտքն էր, որ երբևէ լսել էի: Ես օգնեմ, որ մարդիկ պարտքերից ազատվե՞ն: Ես ինքս քայլող օրինակ էի, թե ինչ չի կարելի անել գումարների հետ: Իմ կյանքը ֆինանսական մղձավանջի էր վերածվել: Բայց Նա հենց դա ասաց, որ անեմ: Ուստի, հավատքով ես և Դրենդան քայլ արեցինք և մոտավորապես ասացինք միևնույն բանը, ինչ Պետրոսն ասաց. «Տե՛ր, դրանով որևէ բան չի փոխվի, բայց քանի որ Դու ես ասում, կանեմ»: Սուրբ Հոգու խորհրդին հետևելով՝ այդ նոր ընկերությունը հետզհետե ընդլայնվում էր, և այդ գումարներով ես ու Դրենդան կարողացանք լիովին ազատվել պարտքերից: Այդ ընկերությունը մինչև օրս գործում է, և այժմ, 30 տարի անց, այն ամեն տարի հարյուր

հազարավոր դոլարների շահույթ է ապահովում:

Լսե՛ք, ես այդքան էլ խելացի չեմ, դուք՝ նույնպես, բայց Աստված տվել է ձեզ Սուրբ Հոգուն, որպեսզի Նրա օգնությամբ ձեր կարիքների համար օգնություն գտնեք: Բայց ինչպես հետագայում կսովորենք այս գրքում, մենք մեր դերակատարումն ունենք. Սուրբ Հոգու հետ համագործակցելով՝ մենք պետք է իրականացնենք Աստծո կամքը:

Ցավոք, մարդկանց հետ ունեցած իմ փորձառությունից գիտեմ, որ շատ քրիստոնյաներ կյանքում հանդիպած իրենց խնդիրների համար պատասխան չունեն: Նրանք շարունակում են ձուկ որսալ իրենց կարողության սահմաններում, և ամբողջ գիշեր ձուկ որսալու փորձերից հետո, անընդհատ վերադառնում են ձեռնունայն: Նրանք երբեք չեն լսել ու հասկացել, որ Սուրբ Հոգին այդտեղ է՝ օգնելու իրենց ամեն իրավիճակում: Թեև քրիստոնյաներից շատերն ասում են. «Աստված կօգնի, որ այս կամ այն բանն անեմ», նրանք չեն հասկանում, թե ինչպես պետք է Աստված օգնի իրենց, կամ՝ թե ինչպես լսեն այն պատասխանները, որոնց կարիքն ունեն: Նրանցից շատերը չեն հասկանում, որ պետք է համագործակցեն Աստծո հետ, որպեսզի ստանան իրենց կարիքի պատասխանները: Նրանք շարունակ սպասում են Աստծուն, որ իրենց խնդրի համար ինչ-որ բան անի, մինչդեռ պատասխանն արդեն իրենց ներսում է:

Օրինակ, ֆինանսների առնչությամբ մարդիկ ասում են, որ Աստված կօգնի, որ իրենք բարգավաճեն: Ես ասում եմ. «Հիանալի՛ է: Իսկ Աստված ինչպե՞ս պետք է գումարը հասցնի ձեզ»: Սկզբում կարծես վիրավորվում են, որ այսպիսի բան եմ ասում և հարցականի տակ եմ դնում նրանց հավատքը: Բայց ես շարունակում եմ. «Որտեղի՞ց պետք է հայտնվի գումարը: Աստված ինչպե՞ս պետք է այն հասցնի ձեզ»: Երբ նրանց նեղում եմ, որ պատասխանեն, պարզվում է, որ պատասխանը չգիտեն: Բնական է, որ որոշ ժամանակ չես իմանում, բայց, ի վերջո, պետք է իմանաս

պատասխանը: Դու չես կարող հնձել մի բան, ինչը չես տեսնում: Հիշո՞ւմ եք, Հիսուսը շատ հստակ խոսեց, երբ Պետրոսին ասաց, թե որտեղ են ձկները, և նույնիսկ ասաց, թե ինչպես բռնի. «Ուռկանդ գցի՛ր»: Ի վերջո, դուք պետք է իմանաք, թե որտեղ գցեք ուռկանը, եթե ցանկանում եք ձուկ բռնել:

Քանի որ մարդկանց բնորոշ է «փոստարկղային մտածելակերպը» (ես այդպես եմ կոչում), երբ պարզապես մտածում են, որ Աստված մի բան կանի, նրանց ֆինանսական կյանքն այդպես էլ 10 կամ 20 տարի մնում է խառնաշփոթ վիճակում՝ առանց որևէ փոփոխության: Ցավալի է: Ուզո՞ւմ եք իմանալ, թե ինչու են նրանք նույնը մնում: Քանի որ նրանց երբեք չեն սովորեցրել ձուկ որսալ Սուրբ Հոգու մեթոդներով՝ Թագավորության մեթոդներով: Նրանք չգիտեն, թե Սուրբ Հոգին ինչպես է գործում երկրային թագավորությունում, և ինչպես է օգնում հաջողության հասնել: Նրանք չգիտեն, թե որն է իրենց դերը, և որն է Սուրբ Հոգու դերը հաջողության հասնելու գործում, որի կարիքը այդքան օրհասական էր իրենց համար:

Դա նման էր այն մարդուն, ում այսօր հանդիպեցի ճաշի ժամին: Նա հաղթանդամ մի մարդ էր, մոտավորապես 170կգ քաշով: Նրա մի ոտքը պրոթեզավորված էր, և երկու անթացուպով էր քայլում: Նա հազիվ էր տեղաշարժվում: Իր չիզբուրգերն ուտելուց հետո նա մի կտոր էլ գետնանուշի կարագով թխվածք պատվիրեց: Ես ապշեցի, երբ նա թխվածք պատվիրեց: Չգիտեմ, թե ինչ էր մտածում, բայց արդեն բավականաչափ թխվածք էր կերել, որ այդ վիճակին էր հասել: Դա ակնհայտ էր ու սպանում էր նրան: Նա դժվարությամբ կանգնեց և դանդաղ ու տանջանքով դուրս եկավ ռեստորանից: Ես տեսնում եմ, որ քրիստոնյաներն այսօր էլ նույնկերպ են ապրում. նրանք լսում են խոստումները, բայց շարունակում են ուտել թույնը, ապա զարմանում են, թե ինչու իրավիճակը չի փոխվում:

Բարեկա՛մս, դու ունես պատասխանը: Սուրբ Հոգին՝ անձամբ

ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ՝ ԱՆՁԱՄԲ ԱՍՏՎԱԾ, ԲՆԱԿՎՈՒՄ Է ՔՈ ՄԵՋ՝ ՏԱԼՈՒ ՔԵԶ ԱՅՆ ՊԱՏԱՍԽԱՆԸ, ՈՐԻ ԿԱՐԻՔՆ ՈՒՆԵՍ:

Աստված, բնակվում է քո մեջ՝ տալու քեզ այն պատասխանը, որի կարիքն ունես: Մարդիկ հարցնում են ինձ՝ Սյուզնի՞ հետ ամուսնանան, թե՞ Սալիի, մ՚այս գործին անցնեն, թե՞ այն, պետք է մեկնե՞ն, թե՞ մնան այնտեղ, որտեղ կան, իրենց բաժնեմասը վաճառե՞ն, թե՞ նորը գնեն: Սուրբ Հոգին, որ ձեր մեջ է, ունի այդ հարցերի պատասխանը: Կրկին կասեմ. այս գրքի նպատակը հենց սա է. սովորել, թե ինչպես է Սուրբ Հոգին օգնում, և ինչպես է Թագավորությունը գործում Սուրբ Հոգու ձայնը լսելու հարցում: Այսպիսով, ամփոփենք:

Ցանկացած մարդ կարող է ձուկ որսալ, եթե Հիսուսը ասի, թե որտեղ են ձկները, և թե ինչպես բռնեն. դո՛ւ էլ կարող ես:

Այս նամակում Կարոլը պատմում է, թե ինչպես է նրա կյանքը փոխվել.

> *«Անցյալ տարի այս օրը ես Սուրբ Ծննդյան նվերներ էի գնում իմ վարկային քարտով, և մինչև վերջին լուման օգտագործում էի քարտից, քանի որ գումար չունեի դստերս համար նվերներ գնելու, ով դեռ հավատում էր Սանտա Կլաուսին: Ես ապրում էի մշտական տագնապի և տխրության մեջ, և հովիվ Գարիին գրեցի, որ ցանելու սկզբունքը չի գործում, որ ոչինչ էլ տեղի չի ունենում: Նա համբերատարությամբ խնդրեց, որ սպասեմ, քանի որ հունձքի համար որոշ ժամանակ է անհրաժեշտ, և սովորաբար հաջորդ օրը դա տեղի չի ունենում:*
>
> *Այսօր, մեկ տարի անց, ես առձեռն գումարով նվերներ եմ գնում իմ ամբողջ ընտանիքի համար: Ես գնում եմ 300 կամ 400 դոլար արժողությամբ նվերներ: Ես իմ ֆինանսներից պատվում եմ այն մարդկանց, ովքեր օգնում էին ինձ*

դժվար օրերին: Անցյալ տարի ես ապրում էի նկուղային մի հարկում, որտեղ ընկերներիցս մեկը թույլ տվեց մնալ մի քանի ամիս: Ես ո՛չ ուտելիքի փող ունեի, ո՛չ էլ բենզինի: Բայց այսօր ապրում եմ գեղեցիկ և ժամանակակից բնակարանում, և իմ սառնարանը լի է ուտելիքով:

Դեկտեմբերի 3-ին դստերս տարեդարձն էր: Նրան տարանք Փենսիլվանիայի Հերշի պուրակ, հրավիրեցինք իր լավագույն ընկերոջը, մնացինք Հերշի հյուրանոցում և ամեն ինչի համար վճարեցինք առձեռն: Ես ի վիճակի էի նրա համար 400 դոլար արժողությամբ նվեր գնել, մինչդեռ անցյալ տարի, ինչ-որ մեկն էր ինձ 30 դոլար տրամադրել՝ նրա տարեդարձը տոնելու համար:

Այս ամենը չեմ կարողանում գրել առանց արցունքների: Ես այնքա՜ն շնորհակալ եմ հովիվ Գարիին և նրա կնոջը՝ Դրենդային: Այս տարի իմ կյանքի լավագույն տարին էր: Իմ կյանքում Աստծո բոլորը գործերը հրաշալի են: Ես իմ բոլոր պատմություններով կարող եմ մի գիրք գրել: Շնորհակալությո՛ւն, որ ինձ սովորեցրիք, թե ինչպես վերապրեմ Երկինքը երկրի վրա»:

Հաջորդ նամակը Թագավորության մասին իմ լսած ամենահիասքանչ պատմություններից է: Այն գրում է Շարոնը՝ Միչիգանից.

«Հովիվ Գա՛րի, այս նամակը գրում եմ իմ և ամուսնուս անունից: Ես պարզապես ցանկանում եմ շնորհակալություն հայտնել ձեզ և ձեր տիկնոջը՝ մեզ համար ոգևորության աղբյուր հանդիսանալու համար: Առաջին անգամ ձեր մասին լսել եմ երեք թե չորս տարի առաջ՝ Սիդ Ռոթի հաղորդումներից մեկի ընթացքում: Այդ ժամանակ մեզ համար սարսափելի ծանր ժամանակներ էին: 18 տարի աշխատելուց հետո ամուսնուս ազատել էին աշխատանքից, և սա պատահեց

այն ժամանակ, երբ նոր էինք ավարտել 280.000 դոլար արժողությամբ մեր տան շինարարությունը: Մինչև կոկորդը խրված էինք պարտքերի և սթրեսի մեջ:

Մենք պատվիրեցինք ձեր ձայնասկավառակները և դրանց օգնությամբ սկսեցինք առաջ գնալ: Սովորեցինք, թե ինչպես է պարտքը անդամալույծ դարձնում և բացասաբար անդրադառնում առողջության և կյանքի վրա: Մենք որևէ ելք չէինք տեսնում: Թեև չէինք կարողանում վճարել մեր տան համար, բայց այնտեղից դուրս եկանք միայն երկու տարի հետո: Դա իսկապես օրհնություն էր:

Բայց պատմությունս կրճատելու համար ասեմ, որ ամուսինս կարողացավ իր նախկին գործը ստանձնել չորս տարի անց, քանի որ նա ամուր պահեց հավատքը և հավատում էր Աստծո խոստումներին, իսկ դուք և ձեր կինը ձայնասկավառակների միջոցով օգնում էիք մեզ: Ամուսինս վերադարձավ նախկին աշխատանքին, և դա դեռ ամենը չէր. նա ստացավ այդ չորս տարիների չվճարված աշխատավարձը: Այս գործում որևէ փաստաբան կամ իրավաբան չներգրավվեց: Նրան վճարվեց նաև այդ չորս տարիների արձակուրդային վճարները: Երբ նրան կրկին ընդունեցին աշխատանքի, նախևառաջ ուղարկեցին արձակուրդի: Այդ չորս տարիների աշխատավարձից մենք կարողացանք առձեռն գումարով ավելի լավ տուն ձեռք բերել: Շնորհակալությո՛ւն այն ամենի համար, որ անում եք»:

Էնդրյուի նամակը Միսսուրիից.

«Երկու տարի առաջ դժվար կացության մեջ հայտնվեցի: Իմ նախկին աշխատանքից դժգոհ էի և ստանձնեցի նոր պաշտոն արտաքին վաճառքի բաժնում: Վարձահա-

վաքներն անընդհատ զանգում էին, բայց ես ոչ բենզինի գումար ունեի, ոչ էլ ուտելիքի: Ամսվա վերջն էլ՝ տան վարձը վճարելու ժամանակը, այնքան արագ էր մոտենում: Բայց ես մի բան ունեի. Գարիի ձայնասկավառակների մի փաթեթ «Հեղափոխություն 2.0» շարքից: Մի օր ծառայության ժամանակ ուզում էի ցանել իմ ֆինանսական սերմը, բայց հաշվիս միայն 23 դոլար կար, իսկ ավտոմեքենայիս մեջ՝ շատ քիչ բենզին, որը հազիվ այդ շաբաթ բավականացներ: Գործերս լավ չէին: Ես Աստծուն ասացի, որ ուզում եմ ցանել, բայց գումար չունեմ: Ներսիցս մի ձայն լսեցի. «Ես (Աստված) 23 դոլարով ավելի շատ բան կարող եմ անել, քան դու»: Աստծո հետ պայմանավորվեցի, որ ես կցանեմ 20 դոլար և կհավատամ, որ Նա կփոխհատուցի:

Այդ հինգշաբթի ես օգնում էի մեկ ուրիշին՝ իր գործն անելու համար: Ես ցանկանում էի օգնել՝ իմանալով հանդերձ, որ եթե ինչ-որ բան էլ վաճառվի, դրանից ինձ ոչինչ չի մնա: Այդ օրվա ավարտին իմ ղեկավարը շնորհակալություն հայտնեց օգնության համար և ասաց, որ այդ օրվա վաճառքից ստացված ամբողջ հասույթը կարող եմ վերցնել (սովորաբար այդպես չեն անում): Եվ գիտեք ինչ: Այդ օրվա շահույթը կազմում էր 2000 դոլար: Իսկ մեկ շաբաթ հետո, կարճ ժամանակում, 100-ԱՊԱՏԻԿԸ ՎԵՐԱԴԱՐՁՎԵՑ:

Աստված հավատարիմ է. փոքր չափն էլ բավական է, երբ Աստված է ներգրավված: Այդ օրվանից ես պարտաճանաչորեն տալիս եմ իմ տասանորդները և զոհաբերությունները ուրախ սրտով և սպասում եմ, որ դա կբազմապատկվի:

Մի քանի ամիս անց ինձ մի նոր պաշտոն տվեցին, որը հենց այն էր, ինչի համար սերմել էի: Ծայրը ծայրին հասցնելուց հետո երկու տարվա ընթացքում իմ աշխատավարձը քառապատկվեց: Ամբողջ փառքը Նրան է պատկա-

նում: Մեկ այլ փառաբանության առիթ ևս. իմ մեքենան այլևս գրավադրված չէ բանկին, և ես վարում եմ լիովին նոր և ամբողջությամբ ՎՃԱՐՎԱԾ մեքենա»:

Ահա գոհության մի նամակ Կորեայից.

Սիրելի՛ հովիվ Գարի,

«Իմ կյանքը կորցրել էր իր նպատակը: Ես ֆինանսապես այնպիսի վիճակում էի, որ ինձ ոչինչ չէի կարողանում թույլ տալ: Ես ապրում էի մարդկանց կողմից տրվող օգնություններով, իսկ երբ նրանք հոգնում էին ինձ օգնելուց, իմ միակ հույսը մի տուփ թխվածքաբլիթ ու մի շիշ կոլա ձեռք բերելն էր: Ինձ և երկու երեխաներիս համար միայն սա կարող էի գնել: Ո՛չ տան վարձն էի կարողանում վճարել, ո՛չ էլ կոմունալ վճարները: Մինչև հիմա հիշում եմ, երբ առաջին անգամ դիտեցի «Հավատքի կյանք» եկեղեցու ծառայության ուղիղ եթերը: Ես ձեր հովվին բացատրեցի, թե որքան վատ իրավիճակում եմ, իսկ նա ինձ ընդամենն ասաց, որ խնդրեմ Աստծուն ցույց տալ, թե ինչպես և որտեղ է պետք ձուկ որսալ, ինչպես որ Պետրոսին ցույց տվեց հարկ վճարելու ժամանակ: Կարճ ասած, հիմա ես մի աֆրիկյան ռեստորան ունեմ և մի վարսավիրանոց, և այս ամենը հովիվ Գարիի դասերը լսելուց հետո: Ես փա՛ռք եմ տալիս Աստծուն այս ամենի համար»:

Սրանք մի քանի հիասքանչ պատմություններ են, բայց միգուցե ասեք. «Հիասքա՛նչ է, Գա՛րի: Անշուշտ, նման բաներ կարող են տեղի ունենալ ուրիշների հետ, բայց ոչ՝ ինձ հետ»: Ուրեմն, ձեր պատմությունը դեռ ավարտված չէ: Թույլ տվեք հարցնել. հենց հիմա, երբ նստած կարդում եք այս գլուխը, արդյո՞ք վախվորած կառչել եք աթոռից, որ հանկարծ չթռչեք-գնաք: Իհարկե՝ ո՛չ: Ին-

չՙ: Քանի որ հասկանում եք ձգողականության ուժի երևույթը և գիտեք, որ դա բոլորի համար նույնկերպ է գործում: Աստծո Թագավորությունն էլ է նույնկերպ գործում: Դուք կարող եք սովորել օրենքները: Դուք կարող եք սովորել լսել այն յուրօրինակ ռազմավարական ծրագրերը, որոնք ձեր կյանքը կդարձնեն Աստծո զորության մասին պատմող պատմություն: Մենք արդեն արձանագրել ենք այն փաստը, որ Սուրբ Հոգու իմաստությամբ և Նրա օգնությամբ են նման պատմություններն իրականություն դարձել: Ուրեմն, եկեք մեր ճամփորդությունը սկսենք՝ վերանայելով Սուրբ Հոգու հիմունքներից մի քանիսը, իսկ հետո ավելի մանրակրկիտ կանդրադառնանք այն թեմային, թե ինչպես լսենք ու հասկանանք մեզ անհրաժեշտ ռազմավարական քայլերը:

Գլուխ 4

ՀԻՄՆԱԿԱՆ ՆԱԽԱՊԱՅՄԱՆԸ. ՏՆԻՑ ԴՈՒՐՍ ՉԳԱՔ ԱՌԱՆՑ ՍՐԱ

Եթե ցանկանում եք, որ ձեր կյանքը Սուրբ Հոգու ծրագրերով առաջնորդվի և ունենաք Սուրբ Հոգու հաղթանակները, նախևառաջ պետք է վերստին ծնունդ ունենաք, ապա մկրտվեք Սուրբ Հոգով: Այո՛, սրանք երկու տարբեր գործեր են, որ Սուրբ Հոգին է անում: Եթե այս ամենն անծանոթ է ձեզ, խնդիր չէ, ես կառաջնորդեմ: Բայց թույլ տվեք անմիջապես անցնել գործի: Հիսուսն ասաց, որ Սուրբ Հոգով մկրտությունը շատ կարևոր է, և որ առանց դրա տնից չհեռանանք: Դա ես չեմ ասում, այլ՝ Հիսուսը Գործք առաքելոցի 1.4,5-ում.

«Երուսաղեմից չհեռանաք, այլ սպասե՛ք Հոր խոստացած պարգևին, որի մասին Ինձնից լսեցիք: Որովհետև Հովհաննեսը ջրով մկրտեց, բայց մի քանի օրից դուք Սուրբ Հոգով կմկրտվեք»:

– Գործք առաքելոց 1.4բ-5

«Բայց դուք զորություն կառնեք, երբ որ Հոգին ձեզ վրա գա, և Իմ վկաները կլինեք Երուսաղեմում և ամբողջ

Հրեաստանի և Սամարիայի մեջ՝ մինչև երկրի ծայրերը»:

– Գործք առաքելոց 1.8

Ուշադրություն դարձրեք, Հիսուսն ասաց. «Տնից առանց սրա դուրս չգաք, սա խիստ կարևոր է»: Իրականում, Նա կարծես հետևյալն ասեր. «Դուք այս զորության կարիքն ունեք, որպեսզի Աստծո գործերը գործեք և Թագավորության վկաները լինեք»: Մինչ այսօր կան բազմաթիվ քրիստոնյաներ, ովքեր դեռ պետք է լսեն Սուրբ Հոգով մկրտության մասին: Բազմաթիվ քրիստոնյաներ կան, ովքեր մեծացել են եկեղեցում, բայց երբեք չեն լսել Սուրբ Հոգով մկրտվելու անհրաժեշտության մասին: Նրանք մեծացել են եկեղեցում, ու նրանց ասել են, որ մկրտությունը մեր օրերի համար չէ, և որ այդ հրաշքների ժամանակներն անցել են:

Նմանատիպ մի եկեղեցում էլ ես եմ մեծացել և երբեք չեմ լսել Սուրբ Հոգով մկրտության մասին: Ես այնքան շատ էլեկտրոնային նամակներ եմ ստանում աշխարհի տարբեր ծայրերից, որոնց հեղինակները նույնպես պետք է լսեն այս հզոր ճշմարտությունը: Կան նամակներ, որ հարցականի տակ են դնում այս պարգևի արդիականությունը, և այդ պատճառով էլ որոշեցի ժամանակ հատկացնել և թղթին հանձնել Սուրբ Հոգով մկրտվելու մասին ճշմարտությունը:

Կարծում եմ, Աստվածաշունչը շատ հստակ է խոսում այս թեմայով, և ուզում եմ, որ Աստվածաշունչն իր փոխարեն խոսի: Այն կպատասխանի ձեր բոլոր հարցերին: Բայց, նախևառաջ, ցանկանում եմ պատմել, թե ինչպես պատահեց, որ բացահայտեցի Սուրբ Հոգով մկրտվելու մասին ճշմարտությունը:

Երբ ավելի երիտասարդ էի, ծարավ էի Աստծուն (հիմա նույնպես ծարավ եմ, թեև արդեն մեծացել եմ) և հաճախում էի մի հարանվանական եկեղեցի: Կիրակի առավոտները կատարում էինք սովորական կրոնական ծիսակարգը: Գուցե դուք էլ նման փորձառություն ունեք: Հիշում եմ, մի քանի օրիներգ էինք երգում,

որին հաջորդում էր լռության մի պահ: Մենք միշտ Տերունական աղոթքն էինք ասում, ու հետո հովիվը քարոզում էր: Վերջում էլի մի ավարտական օրհներգ էինք երգում: Ապա հովիվը օրհնում էր մեզ: Ամեն կիրակնօրյա հավաքույթ արվում էր նույն ընթացակարգով:

Եկեղեցու մարդիկ հիասքանչ էին, նրանք իսկապես սիրում էին Աստծուն: Բայց ես երբեք չտեսա Ավետարանի իրական լինելը: Ես չտեսա, որ մարդկանց կյանքերը կտրուկ փոխվեն, կամ՝ որ մարդիկ բժշկվեն Աստծո զորությամբ: Կարծում եմ՝ կարող եմ հանգիստ ասել, որ Աստծո Թագավորության դրսևորում շատ չեմ տեսել:

Այսպիսով, ես 18 տարեկան էի և ծարավ էի Աստծուն: Այդ ժամանակ աշխատում էի հորս պիցցայի սրահում: Մի օր մի տղա եկավ մեր պիցցայի սրահ և հրավիրեց ինձ արթնության հավաքույթի: Այն մեր քաղաքի մի փոքրիկ մեթոդիստական եկեղեցում էր կազմակերպվում, և քարոզիչը մի ավետարանիչ էր, ով ասում էր, որ Հիսուսն այսօր էլ անում է այն, ինչ անում էր Աստվածաշնչում:

Դա գրավեց իմ ուշադրությունը, քանի որ ուզում էի տեսնել դա: Իմ ընկերներից մի քանիսը հաճախում էին այդ եկեղեցի, և ես որոշեցի մասնակցել այդ արթնության հավաքույթին: Թեև այդ գիշեր ես Սուրբ Հոգով մկրտվելու մասին ոչինչ չլսեցի, սակայն Աստծո ներկայությունը ծառայության ընթացքում պարուրեց ինձ: Ընկերներս, որ այդ եկեղեցուց էին, քաջալերեցին, որ կիրակի օրն էլ գամ: Եվ այդպես էլ արեցի: Ես սիրահարվեցի այդ եկեղեցուն, և այն դարձավ իմ նոր եկեղեցական ընտանիքը:

Արթնության հավաքույթից մի քանի ամիս անց ես հանդիպեցի մի խումբ կանանց, ովքեր եկեղեցի էին գալիս և զուգահեռ ամեն շաբաթ մասնակցում էին Աստվածաշնչի սերտողության դասերի: Նրանք խոսում էին Սուրբ Հոգով մկրտության, Հոգու պարգևների և շատ այլ բաներից, որոնց մասին նախկինում չէի

լսել: Ես այնքան էի փափագում լսել իրենց պատմած զորության մասին, որ խնդրեցի նրանց թույլ տալ ինձ մասնակցել կանանց աստվածաշնչյան սերտողություններին: Նրանց սերտողություններն առավոտյան էին, և քանի որ ես պիցցայի սրահում գիշերներն էի աշխատում, որոշեցի մասնակցել:

Երբ գնացի, պարզվեց, որ ես իրոք միակ տղան էի, այն էլ 18 տարեկան, բայց դա ինձ համար բոլորովին կարևոր չէր: Ես հաճախում էի այդ սերտողություններին, քանի որ ծարավ էի Աստծուն: Ես այնքա՜ն շատ հարցեր էի տալիս:

Կանայք շատ համբերատար էին իմ հանդեպ և Սուրբ գրքով առաջնորդում ու *իմ սեփական* Աստվածաշնչում ցույց էին տալիս, որ Սուրբ Հոգով մկրտությունն այսօրվա համար է, և որ Աստծո զորությունն այսօր հասանելի է ճիշտ այնպես, ինչպես այն ժամանակ էր, երբ Հիսուսը քայլում էր այս երկրի վրա: Լավագույն բանը, որ ասացին, այն էր, որ դա *բոլոր* հավատացյալների համար է և տրվում է նրանց, ովքեր խնդրում են:

Մի քանի շաբաթ աստվածաշնչյան սերտողություններին մասնակցելուց հետո նրանք ասացին, որ մի համազգային ծառայություն կա, որը կոչվում է «Կանանց հուր», և որն էլ մեր քաղաքում հավաքույթ է կազմակերպելու: Սա մի կազմակերպություն է, որ շարունակ սովորեցնում է Սուրբ Հոգով մկրտության մասին: Մեր եկեղեցու այդ կանայք էլ պատրաստվում էին մասնակցել այդ ծառայությանը և ինձ էլ հրավիրեցին: Այդ օրերին տարբեր հարանվանություններից մարդիկ հավաքվում էին լսելու և վերապրելու այդ մկրտությունը, որի մասին այդ ժամանակ հիմնականում միայն հոգեգալստական եկեղեցիներում էր խոսվում: Շատերն այդ ժամանակները կոչում են «խարիզմատիկ նորոգման» ժամանակներ, երբ Սուրբ Հոգով մկրտության ուսմունքն անցնում էր բոլոր հարանվանական սահմաններով:

Երբ գնացի «Կանանց հուր» հավաքույթին, տեսա, որ հարյուրավոր տիկնայք էին հավաքվել: Որպես տղամարդ կրկին

փոքրամասնության մեջ էի, բայց այդ սենյակում Աստծո շոշափելի ներկայություն կար:

Ես հիացած լսում էի, թե ինչպես են մարդիկ պատմում իրենց բժշկության մասին, և զարմացած նայում էի, թե ինչպես էին ոմանք ընկնում, երբ աղոթում էին նրանց համար: Սա մի բան էր, որը երբեք նախկինում չէի տեսել: Դա ինձ շատ հետաքրքրեց և շփոթեցրեց: Իմացա, որ այնտեղի մարդիկ դա կոչում էին Հոգու մեջ ընկնել: Թեև բնական միջավայրում դա ինձ համար փոքրինչ տարօրինակ էր, այն մարդիկ, ովքեր անցնում էին դրանով, կարծես զվարթացած էին ոտքի կանգնում, և ակնհայտ էր, որ Աստված հպվել էր նրանց: Հետո այդ կանայք բացատրում էին ինձ, որ մեր մարմինները Աստծո զորությունը չեն կարող կրել և երբեմն կարող է չդիմանան «օծությանը»:

Նրանք ինձ ցույց տվին, թե Հիսուսի ծառայության ժամանակ երբ նմանատիպ բան տեղի ունեցավ: Հովհաննես 18.4բ-6-ում, երբ զինվորները եկան Հիսուսին ձերբակալելու, Նա հարցրեց.

> *««Ո՞ւմ եք ուզում»: Պատասխանեցին Նրան. «Հիսուս Նազովրեցուն»: Հիսուսը նրանց ասաց. «Ես եմ»: ... Երբ որ ասաց նրանց, թե Ես եմ, նրանք ետ-ետ գնացին և գետնի վրա ընկան»:*

Փառաբանության ժամանակ ինձ շրջապատող կանայք այնքան ոգևորված էին: Շուրջս լսում էի, որ մարդիկ աղոթում ու Աստծուն այլ լեզուներով էին փառաբանում: Այս ամենն այնքան նոր էր ինձ համար, որ գրեթե ամբողջ հավաքույթին այլայլված կանգնած էի: Թեև հավաքույթի ընթացքում շատ բաներ կային, որ ինձ համար տարօրինակ էին, սակայն Աստծո խելահեղ և շոշափելի ներկայությունը հերքել չեմ կարող: Ես այնքան ուրախ էի տեսնելու, որ Ավետարանն իրական է, և Աստծո զորությունը շարունակում է գործել երկրի վրա՝ ինչպես Հիսուսի օրերում:

Հավաքույթի ավարտին քարոզիչը կոչ արեց, որ ովքեր ցան-

կանում են Սուրբ Հոգու պարգևը ստանալ, կարող են առաջ գալ, որպեսզի աղոթեն իրենց համար: Այսպիսով, ես առաջ գնացի, որ կանայք աղոթեն ինձ համար: Երբ նրանք աղոթում էին, ես զգացի, որ այլևս չեմ կարողանում դիմանալ, քանի որ Աստծո ներկայությունն ավելի ու ավելի էր թանձրանում: Երբ տրվեցի Նրա ներկայությանը, ի զարման ինձ, լսեցի Սուրբ Հոգով աղոթքս, ես բարձրաձայն անհասկանալի բառեր էի ասում: Այդ գիշեր բավականին երկար ժամանակ լեզուներով աղոթեցի: Այնքան էի ոգևորվել, որ ցանկանում էի բոլորին պատմել ինձ հետ կատարվածը: Բայց երբ եկեղեցում ընկերներիս ասացի իմ փորձառության մասին, նրանք այդքան էլ չոգևորվեցին: Նրանք սովորաբար ասում էին, որ լեզուները սատանայից են, կամ՝ որ դրա ժամանակներն արդեն անցել են: Նրանք ինձ զգուշացրին, որ այդ «սուրբ ցնդածներից» հեռու մնամ:

Այդ օրերին եկեղեցիները բաց չէին Հոգու պարգևների համար, և հիմնականում այս ուսմունքն էր գերիշխում, որ հրաշքները առաքյալների հետ անցել-գնացել էին: Բայց ես արդեն հասկացել էի, որ Աստծո զորությունը բոլորովին էլ չի անցել-գնացել:

Նախքան «Կանանց հուր» կազմակերպության հավաքույթին մասնակցելը, ինձ պատասխանատու էին կարգել այդ փոքր մեթոդիստական եկեղեցու երիտասարդների խմբի վրա: Շատ բան չէր պահանջվում. պետք է հետևեի, որ ամեն կիրակի երեկոյան երիտասարդների հետ հավաքույթ կազմակերպվեր եկեղեցու նկուղում: Մենք սովորաբար խաղեր էինք խաղում, քաղցրավենիք էինք ուտում և աստվածաշնչյան կարճ սերտողություն էինք անում:

Խմբում սովորաբար 15 երեխա էր լինում, և «Կանանց հուր» հավաքույթից հետո ցանկանում էի նրանց պատմել Սուրբ Հոգով մկրտության մասին, որ վերապրել էի: Ես հասկացա, որ ինչպես ես, այնպես էլ նրանցից շատերը այս երևույթի մասին չէին էլ լսել: Եվ վստահ էի, որ հենց այդ եկեղեցում կիրակնօրյա հավաքույթների ժամանակ սրա մասին չեն էլ լսելու:

Նախքան առաջ անցնելը, կարծում եմ՝ պետք է արագ ներկայացնեմ, թե այդ ժամանակ ինչ մտածելակերպ ունեի: Երիտասարդների հետ սրա մասին խոսելու համար իմ հովվից թույլտվություն չունեի (հիմա եմ հասկանում, որ պետք է ունենայի): Ես նրան չէի էլ պատմել ինձ հետ կատարվածի մասին:

Ես չէի փորձում ապստամբել իմ եկեղեցու դեմ և չէի ցանկանում շրջանցել իմ հովվին: Պարզապես խիստ ոգևորված էի: Այդ ժամանակ չէի էլ հասկանում, թե այս թեմայի շուրջ որքան տարակարծություններ կարող էին լինել, և չէի էլ պատկերացնում, որ հովիվը կարող է դեմ լինել դրան:

Սուրբ Հոգով մկրտվելուն հաջորդող կիրակի երեկոյան ծրագրել էի ինձ հետ կատարվածը պատմել երիտասարդներին և Գործք առաքելոցից մի քանի տեղ ցույց տալ, որոնք խոսում էին դրա մասին: Մենք եկեղեցու նկուղում շրջանաձև նստել էինք հատակին, և ես սկսեցի պատմել իմ փորձառությունից, և մի քանի աստվածաշնչյան խոսքեր կարդացինք, որոնք հաստատում էին այդ վերապրումը:

Այս հավաքույթին եկել էր նաև հովիվը և նստել էր իմ ձախ կողմում, մինչ ես պատմում էի իմ պատմությունը: Հովվիս ներկայությունից բոլորովին չէի կաշկանդվում, քանի որ համոզված էի, որ այն, ինչ պատրաստվում էի պատմել, նա արդեն գիտեր:

Եվ ես նրանց պատմեցի այն հավաքույթի մասին, որին մասնակցել էի, և այն ամենի մասին, որ տեսել էի: Ես շատ մանրամասներ չպատմեցի լեզուներով խոսելու մասին: Փոխարենը, իմ ուշադրությունը կենտրոնացրել էի Գործք առաքելոցի 1.9-ի վրա, որտեղ ասվում է, որ մենք *զորություն* կստանանք, երբ Սուրբ Հոգին իջնի մեզ վրա՝ Աստծո վկաները լինելու համար: Հավաքույթի վերջում չգիտեի, թե ինչպես ավարտեմ իմ դասը, ուստի հարցրի երեխաներին՝ արդյո՞ք ցանկանում են մկրտվել Սուրբ Հոգով:

Այդ պահին չգիտեի ինչ անել: Բացի «Կանանց հուր» կոչվող հավաքույթից ես ոչ մի այլ տեղ չէի տեսել, թե ինչպես են ծառա-

յում այն մարդկանց, ովքեր ցանկանում են Սուրբ Հոգով մկրտվել: Կարծում եմ, այդ ժամանակ ես ընդամենը երկու կամ երեք աստվածաշնչյան Խոսք գիտեի, որ առնչվում էր մկրտությանը:

Ուստի, պարզապես ասացի. «Այժմ, եթե կամենում եք ստանալ Սուրբ Հոգու ձրի պարգևը, ձեռք բարձրացրե՛ք, և եկեք խոնարհեցնենք մեր գլուխներն ու աղոթենք»: Ընդամենը սա ասացի: Ես չձեռնադրեցի, ո՛չ էլ սովորեցրի, թե ինչպես կարող են ստանալ Սուրբ Հոգին: Մենք խոնարհեցրինք մեր գլուխները: Եվ, իհարկե, որպես «լավ» հարանվանական քրիստոնյաներ, աղոթելու ժամանակ աչքերներս էլ փակեցինք:

Երբ «ամե՛ն» ասացի, լսեցի, որ երեխաների մեջ ինչ-որ իրարանցում է: Աչքերս բացեցի և տեսա, որ երեխաներից մի քանիսը լացում էին, ոմանք ցնցվում էին, և յոթ երեխա էլ լեզուներով էր խոսում: Երբ նրանք սկսեցին խոսել լեզուներով, նրանց երեսին արտասովոր փայլ նկատեցի: Նրանցից լույս էր ճառագում. ես ցնցված էի:

Իմ հովիվը, ով մինչև այդ պահը ոչինչ չէր ասել, արագ թփթփացրեց ուսիս և ասաց, որ ուզում է անմիջապես խոսել ինձ հետ: Մենք մտանք կողքի սենյակը, և նա աչքերիս մեջ նայելով՝ ասաց. «Սա սատանայից է: Դու այլևս չես կարող այստեղ երիտասարդականի ավագ լինել: Մենք չենք կարող հանդուրժել սա»:

Ես մտածեցի. *«Ինչպե՞ս կարող ես ասել, որ սա սատանայից է: Նայե՛ք այս երեխաներին: Նրանք փայլում են»:* Օծությունը ֆիզիկապես երևում էր նրանց վրա: Իհարկե, այն ժամանակ ես նույնիսկ չգիտեի, թե ինչ է նշանակում *օծություն* բառը: Ես միայն այն գիտեի, որ նրանք ճառագում էին: Ես նրանց չէի դիպել, ո՛չ էլ սովորեցրել էի, թե ինչ անեն: Ինձ համար բավականին հուսահատեցնող և շփոթեցնող էր, որ իմ հովիվը նման կերպ հանդիմանեց ինձ, և ես չգիտեի ինչ անել:

Հաջորդ կիրակի գնացի եկեղեցի, բայց փոխարենը եկեղեցու բեմին մոտ նստելը, որտեղ և միշտ նստում էի, ես նստեցի հետևում:

Գիտակցում էի, որ իմ հովվի հետ որոշակի լարվածություն կա երիտասարդական հավաքույթի հետ կապված, դրա համար մտածեցի, որ ավելի լավ է աչքի չընկնեմ, մինչև հասկանամ իրավիճակը:

Ահա եկավ կիրակնօրյա ծառայության մտորման լուռ պահը: Սա աղոթքի շատ ակնածալի և լուռ մի պահ էր մեր եկեղեցում: Բոլորը խոնարհում էին գլուխները, և եկեղեցում ոչ մի ձայն չէր լսվում: Ասեղի ընկնելու ձայնն էլ լսելի էր: Այդ պահին էր, երբ զգացի ինչ-որ մեկի հպումը ուսիս: Ես շարքի վերջում էի նստած, և ակնհայտ էր, որ մեկը կանգնած էր շարքերի միջև ընկած միջանցքում և թփթփացնում էր ուսիս:

Սկզբում վրդովվեցի, որ ինչ-որ մեկն այս լուռ և փափագելի աղոթքի պահին քայլում է: Երբ վեր նայեցի, զարմացած տեսա, որ թփթփացնողը այն երեխաներից մեկն էր, ով անցյալ շաբաթ երիտասարդական հավաքույթին էր մասնակցել: Հիշում էի նաև, որ նա այն յոթ հոգուց մեկն էր, որ այդ գիշեր Սուրբ Հոգով մկրտվեց: Նա նայեց ինձ և ասաց. «Արի գնանք»: Մտածեցի. *«Արի գնա՞նք: Իսկ ո՞ւր գնանք»:*

Զարմանալիորեն նա ճառագում էր ճիշտ այնպես, ինչպես այն գիշեր, երբ ընդունեց Սուրբ Հոգուն: Հասկացա, որ Աստված ինչ-որ բան է անում: Բայց վստահ չէի, որ ճիշտ պահն ու տեղն էր ինչ-որ մի բան անելու, քանի որ հովվի հետ արդեն անախորժության մեջ էի: Գիտեի նաև, որ եկեղեցում, կիրակի օրերին չէինք կարող անել՝ ինչ ցանկանայինք: Այդ ժամանակ էր, երբ նա ասաց. «Ես ուզում եմ գնալ ու մայրիկիս համար աղոթել»:

Հիմա հասկացա, թե ինչ էր կատարվում: Ես ճանաչում էի նրա մորը: Նա փոքրամարմին, նիհար կին էր, և երկար ժամանակ հիվանդ էր: Նրա ողնաշարի հինգ ողերը մաշվել էին, և բժիշկների միակ հույսն այն էր, որ պետք է դրանք ամրակցեին: Սա շատ լուրջ վիրահատություն էր, և իմ այս ընկերը նրա միակ զավակն էր: Անշուշտ նա մտատանջվում էր իր մոր համար:

Սուրբ Հոգով մկրտվելուց հետո նա վստահ էր, որ Հիսուսը

բժշկելու է իր մորը: Եվ երբ ասաց, որ գնանք, ես կարծեցի, որ գնալու է մոր մոտ, ձեռքերը դնի նրա վրա և լուռ աղոթի: Բայց նա այդպես չարեց, այլ մոտեցավ մորը, բարձրացրեց նստարանից և տարավ եկեղեցու սրահի առջև:

Նա նստեցրեց մորը և սկսեց հնարավորինս բարձր ձայնով աղոթել լեզուներով: Հիշո՞ւմ եք, այս ամենը տեղի էր ունենում մտորման «լռության» պահին, որտեղ այլևս լռություն չէր: Ես ցնցված էի: Ապա դարձավ դեպի ինձ և ասաց. «Դո՛ւք բացատրեք, թե ինչ է տեղի ունենում»:

Հիմա հասկացա, թե ինչու էր ինձ իր հետ տարել: Նա մտածել էր, որ եթե ես եմ Նրան ասել Սուրբ Հոգով մկրտության մասին, ուրեմն ես էլ պետք է եկեղեցու ժողովրդին պատմեմ դրա մասին, երբ լսեին, թե ինչպես է նա լեզուներով աղոթում իր մոր համար:

Ահա, ես կանգնած էի եկեղեցու առջև՝ որպես խոսնակ, և նա լեզուներով աղոթում էր մոր համար: Ես իրականում չգիտեի ինչ ասել, հատկապես երբ իմ հովիվն աչքերն ինձ վրա էր հառել: Ես պարզապես ասացի, որ նրա մայրը հիվանդ է, և նա աղոթում է լեզուներով, որի մասին գրված է Աստվածաշնչում: Բայց գիտե՞ք ինչ. հենց այդ առավոտ նա ակնթարթորեն բժշկվեց եկեղեցում:

Դա որդու կողմից հավատքի դրսևորում էր, ում համար բոլորովին նշանակություն չուներ, թե ինչ կմտածեին իր մասին: Նա համոզված էր, որ Սուրբ Հոգին կենդանի է և կարող է բժշկել իր մորը:

Թեև այդ կինն ակնթարթորեն բժշկվեց, սակայն եկեղեցին դա չընդունեց: Շատերը վերջում մոտեցան ինձ և ասացին. «Դեմ չեմ, որ նա իր մոր համար աղոթի, բայց այդ լեզուները... մենք չենք ընդունում այդ լեզուներով աղոթքը»: Ես հարյուր տոկոսով համոզված եմ, որ սատանան էլ է ատում լեզուները, և հուսով եմ, որ մինչև այս գրքի ավարտը կկարողանամ օգնել ձեզ հասկանալ, թե ինչու է նա ատում լեզուները:

Գուցե դուք մեծացել եք մի եկեղեցում, որտեղ լեզուները և Սուրբ Հոգու պարգևները չեն կիրառվել: Կամ գուցե ձեզ սովորեց-

«ԱՅՆ ԲԱՆԸ, ՈՐ ԵՍ ԽՈՍՈՒՄ ԵՄ ՁԵԶ ՀԵՏ, ԻՄ ԱՆՁԻՑ ՉԵՄ ԽՈՍՈՒՄ, ԱՅԼ՝ ՀԱՅՐՆ Է, ՈՐ ԲՆԱԿՎՈՒՄ Է ԻՄ ՄԵՋ, ՆԱ Է ԳՈՐԾՈՒՄ ԱՅԴ ԳՈՐԾԵՐԸ»:

– ՀՈՎՀԱՆՆԵՍ 14.10Բ

րել են, որ լեզուներն այսօրվա համար չեն, կամ դրանց ժամանակը սպառվել է: Այս հարցերին դժվար չէ պատասխանել: Աստվածաշունչը շատ հստակ է խոսում այս թեմայի մասին: Ուրեմն, ուշադրությամբ քննենք Խոսքը և բացահայտենք Սուրբ Հոգով մկրտության ճշմարտությունը: Վերադառնանք այն խոսքերին, որոնք կարդացել էինք այս գլխի սկզբում:

«Երուսաղեմից չհեռանաք, այլ սպասեք Հոր խոստացած պարգևին, որի մասին Ինձնից լսեցիք: Որովհետև Հովհաննեսը ջրով մկրտեց, բայց մի քանի օրից դուք Սուրբ Հոգով կմկրտվեք»:

– Գործք առաքելոց 1.4բ-5

Այս խոսքում տեսնում ենք մի քանի կարևոր բան.

1. Սուրբ Հոգով մկրտությունը տարբեր է ջրով մկրտությունից:

2. Հիսուսն ասաց, որ այն խիստ կարևոր է: Իրականում, Նա հասկացրեց, որ առանց դրա ոչինչ անել չենք կարող:

Հիշեք, Հիսուսը հենց նոր էր աշակերտներին ասել, որ գնան և Ավետարանը քարոզեն բոլոր ազգերի մեջ: Բայց առանց այս մկրտության նրանք չէին կարող ներկայացնել կամ հաստատել, որ երկնային Թագավորությունն իրական է: Դրա համար էլ Նա ասում է. «Մնացեք, մինչև որ զորությունը կստանաք»:

«Բայց դուք զորություն կառնեք, երբ որ Հոգին ձեզ վրա գա, և Իմ վկաները կլինեք Երուսաղեմում և ամբողջ Հրեաստանի և Սամարիայի մեջ՝ մինչև երկրի ծայրերը»:

– Գործք առաքելոց 1.8

Զորություն: Հունարենում *«զորություն»* բառի համար օգտագործված է *«դունամիս»* բառը, որտեղից էլ ծագում է մեզ ծանոթ «դինամիտ» բառը: Այսպիսով, տեսնում ենք, որ Աստծո զորությունն իջնում է մեզ վրա Իր գործերն անելու համար: Հիսուսի ծառայության սկզբում Նա նշել էր, որ այն զորությունը կամ այն օծությունը, որի ներքո Նա գործում է, գալիս է Իր Հորից:

> *«Այն բանը, որ Ես խոսում եմ ձեզ հետ, Իմ անձից չեմ խոսում, այլ՝ Հայրն է, որ բնակվում է Իմ մեջ, Նա է գործում այդ գործերը»* (Հովհաննես 14.10բ):

> *«Ճշմարտությունն եմ ասում ձեզ. Որդին Իրենից ոչինչ չի կարող անել»* (Հովհաննես 5.19):

Տեսնո՞ւմ եք, Հիսուսն Ինքը Աստծո Հոգու զորության կարիքն ուներ: *Օծություն* բառը նշանակում է «արտաքուստ ծածկել»: Հիսուսն այդ օծությունը ստացավ Հորդանան գետում Իր Հորից, երբ Սուրբ Հոգին իջավ Նրա վրա աղավնու տեսքով:

Միայն այդ օծությունը ստանալուց հետո Նա կարողացավ Թագավորության գործերն անել: Եթե *Հիսուսը* դրա կարիքն ուներ, ուրեմն մենք նույնպես ունենք: Այդ զորությունը վկայություն կհանդիսանա նրանց համար, ովքեր չեն ճանաչում Իրեն և չգիտեն, որ Աստված իրական է:

Աստվածաշունչն ասում է, որ դուք զորություն կստանաք, երբ Սուրբ Հոգին **ԳԱ ՁԵՋ ՎՐԱ**, ոչ թե՝ երբ գա ձեր *մեջ*, ինչը վերստին ծնվելու ժամանակ է կատարվում:

Շատերն են շփոթության մեջ ընկնում, երբ խոսում ենք Սուրբ Հոգով մկրտվելու մասին, և կարծում են, թե արդեն ստացել են Սուրբ Հոգին, երբ ընդունել են Հիսուսին: Ճշմարտությունն այն է, որ *այո՛*, նրանք ստացել են Սուրբ Հոգին, երբ ընդունել են Հի-

սուսին: Սուրբ Հոգին կենդանացրել է նրանց հոգիները Աստծո համար և Աստծո հետ մեկ է դարձրել:

Մենք Աստծո համար կենդանի ենք դարձել Սուրբ Հոգու զորությամբ, որը մեր մեջ է գալիս, երբ վերստին ծնվում ենք: Բայց ուշադրություն դարձնենք աստվածաշնչյան խոսքին, որտեղ ասվում է, որ Սուրբ Հոգին կիջնի Ձեզ վրա: Սա շատ կարևոր փաստ է, որի մասին հետո կխոսենք. լինել վերստին ծնված և լինել օծված կամ մկրտված Սուրբ Հոգով, տարբեր են: Մենք ավելի լավ պատկերացում կկազմենք սրա մասին, եթե կարդանք Հովհաննես 20.21,22 խոսքերը.

> *«Հիսուսը դարձյալ ասաց նրանց. «Խաղաղությո՛ւն ձեզ: Ինչպես Իմ Հայրն Ինձ ուղարկեց, Ես էլ ձեզ եմ ուղարկում»: Եվ սա ասելով՝ փչեց նրանց վրա և ասաց. «Առե՛ք Սուրբ Հոգին»»:*

Մենք տեսնում ենք, որ այստեղ Հիսուսն այցելում է Իր աշակերտներին հարությունից հետո, ողջունում է նրանց, փչում է նրանց վրա և ասում, որ վերցնեն Սուրբ Հոգին: Այս ժամանակ է, որ նրանք վերստին ծնվում են, և ներսում իրենց հոգիները կենդանանում են Աստծո համար: Բայց, միևնույն ժամանակ, նրանց ասում է, որ սպասեն Սուրբ Հոգով մկրտությանը, որը նրանց վրա մի փոքր ուշ կգա:

Եթե նրանք ընդունել էին ամբողջական Սուրբ Հոգուն, երբ Հիսուսը փչել էր նրանց վրա, ապա ինչո՞ւ Նա ասաց, որ Երուսաղեմում սպասեին, մինչև որ Սուրբ Հոգին առնեին, որը խոստացվել էր, որ կիջնի նրանց վրա: Դարձյալ, սրանք երկու տարբեր երևույթներ են և երկու տարբեր գործառույթներ, բայց՝ նույն Հոգին: Միևնույն ժամանակ, ուզում եմ նշել, որ Հիսուսը պետք է նաև մկրտվեր Սուրբ Հոգով, որ մտներ Իր ծառայության մեջ և արդյունավետ գործեր: Մինչև Հիսուսի Սուրբ Հոգով մկրտվելը որևէ բան գրված չէ, որ Նա գեթ մեկ հրաշք գործած լինի: Արդ-

յո՞ք Նա պատանի հասակում բազմապատկել է ընթրիքի հացը: Արդյո՞ք հրաշքներ է գործել երեխա ժամանակ: Արդյո՞ք քաղցած ժամանակ բազմացրել է իր մանկական կերակուրը, երբ այն գրեթե սպառվել է: Իհարկե՝ ո՛չ: Իսկ ինչո՞ւ չի արել: Պարզ և ազնիվ պատասխանը հետևյալն է՝ *չի կարողացել:*

Նախքան Հորդանան գետում Սուրբ Հոգով մկրտվելը որևէ բան տեղի չէր ունենում: Տեսնում ենք, որ Հիսուսը եկավ որպես մարդ: Նա չեկավ որպես Աստծո Որդի՝ Նրա զորությամբ և փառքով: Որպես մարդ՝ Նա սահմանափակ էր նույն չափով, որ չափով սովորական մարդն է սահմանափակ: Նա չէր կարող բժշկել կամ հրաշքներ գործել, ինչպես որ ես և դուք ինքնուրույն չենք կարող որևէ հրաշք գործել:

Բայց, ի տարբերություն մեզ, Հիսուսի Հոգին Աստծո համար մահացած չէր, երբ Նա ծնվեց որպես մի մանուկ: Նրա Հոգին Աստծո համար միշտ կենդանի էր: Նա մեզ նման վերստին ծնվելու կարիք չուներ: Այնուամենայնիվ, թեև Նրա Հոգին կենդանի էր, որպես Որդի Նա կարիք ուներ մկրտվելու Սուրբ Հոգով՝ Իր ծառայությունը սկսելուց առաջ, ինչպես և մենք:

> *«Եվ մկրտվելուց հետո Հիսուսը շուտով դուրս եկավ ջրից: Այդ պահին երկինքը բացվեց, և Նա տեսավ Աստծո Հոգուն, որ վայր էր իջնում աղավնու պես և փայլում Նրա վրա: Եվ երկնքից մի ձայն ասաց. «Դա՛ է Իմ սիրելի Որդին, Որին Ես հավանեցի»:*
>
> – Մատթեոս 3.16,17

Հիշե՛ք, մենք Հիսուսին պատկերացնում ենք որպես Արքա՝ արքաների, և Տեր՝ տերերի, բայց Նա այդ դիրքից չծառայեց: Հրաշքները սկսվեցին միայն այն բանից հետո, երբ Հորդանան գետում Սուրբ Հոգին իջավ Նրա վրա:

Ձեր ծառայությունը (քանի որ *յուրաքանչյուր* հավատացյալ կանչված է Հիսուսի գործերն անելու) չի կարող սկսվել, եթե

չմկրտվեք Սուրբ Հոգով: Նրա գործերն անելու համար ձեզ Սուրբ Հոգու զորությունն է անհրաժեշտ: Եվ ձեզ անհրաժեշտ է Հոգով աղոթելու կարողությունը, որպեսզի իմանաք, թե ինչպես անեք այդ գործերը: Հետագայում մենք կքննարկենք դա:

Անշուշտ, դուք կարող եք խոսել վերստին ծնունդի վերապրումի մասին՝ պատմելով ուրիշներին, թե ինչ է ասում Աստվածաշունչը փրկության մասին: Շատ քրիստոնյաներ, ովքեր մկրտված չեն Սուրբ Հոգով, ակտիվորեն փոխանցում են ուրիշներին Ավետարանի Բարի լուրը, բայց նրանք չունեն այն զորությունը, որ Հիսուսի նման ցույց տան Թագավորությունը: Սրա արդյունքում քարոզները դառնում են թույլ ու անօգտակար:

Երբ Հիսուսը հանդիպեց Փարիսեցիների չարախոսությանը, որով հանդիմանում էին իրենց անհավատությունը, Հիսուսը մեջբերեց այն հրաշքները, որ անում էր.

> *«Հավատացեք Ինձ, որ Ես Հոր մեջ եմ, և Հայրն էլ՝ Իմ մեջ: Ապա թե ոչ, առնվազն հենց գործերի համար հավատացեք Ինձ...»* (Հովհաննես 14.11,12ա):

Հիսուսն այստեղ կարծես ասում է, որ Թագավորության գործերը վերջակետ են դնում բոլոր վիճաբանություններին: Հարցը լուծված է: Հիմա, իհարկե, ցանկացած հավատացյալ օրինական իրավունք ունի օգտվելու այն ամենից, ինչի համար Հիսուսը վճարել է, այդ թվում նաև բժշկությունից: Յուրաքանչյուր հավատացյալ կարող է ընդունել Աստծո ցանկացած խոստում հավատքի միջոցով (համաձայնություն Երկնքի հետ), և կարիք չկա մկրտվել Սուրբ Հոգով՝ դրանք Աստծուց ստանալու համար:

Բայց որպեսզի այդ զորությունը ձեր միջով հոսի դեպի ուրիշները, և որպեսզի ձեր մեջ առատ գործեն Սուրբ Հոգու պարգևները, և որպեսզի վայելեք ձեր ընթացքը երկնային հրաշքների ուղեկցությամբ՝ լեզուներով աղոթքի միջոցով, դուք պետք է ունենաք այդ օծության զորությունը: Գուցե չհասկանաք, թե ինչ նկա-

տի ունեմ լեզուներով աղոթք ասելով, բայց դա թող չվախեցնի ձեզ: Այդ մասին կխոսեմ ավելի ուշ:

Իմ դուստրը՝ Էմին, փառաբանության ավագ է մեր՝ «Հավատքի կյանք» եկեղեցում, որը գտնվում է Նոր Ալբանիայում, Օհայո նահանգում: Մի քանի տարի շարունակ նրա առողջական վիճակը մեզ շփոթության մեջ էր գցել. նրա որովայնը կամաց-կամաց մեծանում ու ցցվում էր: Թեև շատ բժիշկների էինք այցելել, ոչ ոք չէր կարողանում բացատրել պատճառը: Բոլորն ասում էին, որ իր մարմինն այդպես է ստեղծված:

Այս ամենն այնքան շարունակվեց, մինչև որ վեց ամսեկան հղի կնոջ տեսք ստացավ: Այդ ժամանակ Էմին ռենտգենյան հետազոտություն անցավ, և միայն այդ ժամանակ կարողացանք տեսնել, որ նրա որովայնում մի հսկայական գոյացություն կա: Ռենտգենյան հետազոտության արդյունքները տեսնելով՝ Էմին գիտեր, թե որն էր բժշկության կողմից առաջարկվող լուծումը: Իհարկե՝ վիրահատություն: Քանի որ նա նոր էր ամուսնացել, պարզ գիտակցում էր, որ ցանկացած վիրահատություն, ամենայն հավանականությամբ, զրկելու էր նրան մայրանալու բերկրանքից: Վիրահատությունը ընդունելի տարբերակ չէր Էմիի համար: Նա ամբողջ կյանքում երազել էր մայր դառնալու մասին: Այդ ռենտգենյան հետազոտության վրա նույնիսկ մենք էինք տեսնում, որ այդ հսկայական գոյացությունը տեղաշարժել էր նրա օրգանները, որի հետևանքով Էմին մարսողության և երիկամների լուրջ խնդիրներ ուներ: Նա որոշեց իսկապես լուրջ վերաբերվել Աստծո Խոսքին և ժամանակ հատկացնել ուսումնասիրելու այն հատվածները, որտեղ Աստվածաշունչը սովորեցնում է բժշկության մասին: Հենց այդ մի քանի շաբաթների ընթացքում «Հավատքի կյանք» եկեղեցում ես սովորեցնում էի բժշկության մասին: Այդ դասաշարի վերջում Էմին խնդրեց ավագներին, որ ձեռքերը դնեն և աղոթեն իր բժշկության համար՝ համաձայն Հակոբոս 5.14,15-ի, ինչպես և արեցինք:

«Ձեզնից մեկը հիվանդ է. թող եկեղեցու երեցներին կան-

չի, որ նրա համար աղոթք անեն, նրան յուղով օծեն Տիրոջ անունով: Եվ հավատքով մատուցված աղոթքը կապաքինի այն հիվանդին, և Տերը վեր կկացնի նրան: Եվ եթե մեղք գործած լինի, կներվի նրան»:

– Հակոբոս 5.14,15

Էմին, կատարելապես վստահելով Աստծո Խոսքին, *պահանջեց* իր բժշկությունը, երբ մեր ձեռքերը դրինք նրա վրա: Թեև բժշկության ֆիզիկական որևէ դրսևորում չեղավ այդ պահին, երբ աղոթեցինք նրա համար, սակայն նա վստահ էր, որ բժշկվել է:

Երկու շաբաթ անց նա սովորականի պես գնաց քնելու կրկին առանց որևէ ֆիզիկական ապացույցի, որ բժշկվել է, բայց առավոտյան ցնցված արթնացավ: Նա մեկ գիշերվա մեջ կորցրել էր մոտավորապես 6 կգ, իսկ գոտկատեղի շրջագիծը փոքրացել էր 23 սանտիմետրով: Նրա ծռմռված և կծկված մեջքն էլ այժմ լիովին ուղղված էր. նա ակնթարթորեն բժշկվել էր:

ԱՌԱՋ ՀԵՏՈ



Այս նկարներում կարող ենք տեսնել հրաշագործ բժշկության ապացույցը: Ձախ կողմի նկարը ցույց է տալիս, թե ինչ վիճակում նա պառկեց քնելու: Իսկ աջ կողմի նկարը ցույց է տալիս, թե ինչպիսին էր իր վիճակը, երբ արթնացավ:

Ռենտգենյան հետազոտության այս նկարներից ձախում տեսնում ենք նրա ողնաշարը նախքան բժշկվելը, իսկ աջ կողմում այն նկարն է, որն արվել է բժշկությունից մեկ շաբաթ անց: Տեսնո՞ւմ եք ինչ անհավատալի փոփոխություն է տեղի ունեցել ողնաշարում:

Այդ ժամանակ և հիմա էլ Էմին «Հավատքի կյանք» եկեղեցում փառաբանության ավագն է: Պատկերացնո՞ւմ եք ինչ տեղի ունեցավ, երբ հաջորդ կիրակի նա գնաց եկեղեցի: Մարդիկ ապշահար նրան էին նայում: Նրանք կանգնել էին նախամուտքում՝ լիովին ապշած, և հարցնում էին. «Ի՞նչ է կատարվել քեզ հետ: Դու նոր մարմի՞ն ունես»: Այդ կիրակի ամբողջ եկեղեցին ցնցված էր, երբ Էմին առաջնորդում էր փառաբանությունը: Եվ Աստծո

Թագավորության այս դրսևորման շնորհիվ շատերն ընդունեցին Աստծուն, շատերն էլ բժշկվեցին:

Համաձայն եք, որ մարդիկ պետք է տեսնեն Աստծո Թագավորությունը գործնականում: Գործք 1.8-ում տեսնում ենք, որ օծությունը՝ Սուրբ Հոգով մկրտվելը, խիստ էական էր:

> *«Բայց դուք զորություն կառնեք, երբ որ Հոգին ձեզ վրա գա, և Իմ վկաները կլինեք Երուսաղեմում և ամբողջ Հրեաստանի և Սամարիայի մեջ՝ մինչև երկրի ծայրերը»:*
>
> – Գործք առաքելոց 1.8

Եվ, համաձայն Հիսուսի, դա խիստ *կարևոր* էր Աստծո Թագավորության դրսևորման համար:

> *«Նրանց էլ, որ հավատացին, այս նշանները կհետևեն. Իմ անունով դևեր կհանեն, նոր լեզուներով կխոսեն, օձեր վեր կառնեն, և եթե մի մահադեղ խմեն, նրանց վնաս չի տա. հիվանդների վրա ձեռք կդնեն, և նրանք կառողջանան»:*
>
> – Մարկոս 16.17,18

Օձեր վեր բարձրացնելն ու մահադեղ խմելը վերաբերում է սատանայի թագավորությանը և ուղիղ փոխկապակցված է վախի հետ: Սատանայի թագավորությունը պարտվել է: Հիսուսը չի առաջարկում, որ վտանգավոր օձեր վեր բարձրացնենք կամ թույն խմենք, այլ այս արտահայտությունն օգտագործում է, որպեսզի ցույց տա, թե ինչ զորություն է մեզ տրված թշնամու դեմ: Մենք պետք է վերցնենք այդ իշխանությունն ու Աստծո զորությունը և կիրառենք ընդդեմ սատանայի թագավորության և մարդկանց ազատ արձակենք:

Ուշադրություն դարձրեք, որ Հիսուսն ասում է՝ **«<u>այս նշանները</u>»** կհետևեն նրանց, ովքեր կհավատան: Երբ մարդիկ տեսնեն այս Թագավորության *նշանները* (դրսևորումները), կհարցնեն, թե

ինչպես են դրանք կատարվում: Նշանը ինչ-որ բան է մատնանշում: Ինքն իրենով այն պատասխան չէ, բայց այն մատնացույց է անում Հիսուսին, Ով անձամբ պատասխան է հանդիսանում:

Այս բոլոր նշանները վերջ են դնում քննարկումներին՝ արդյոք Հիսուսը Տե՞ր է, թե՞ ոչ: ՆԱ ՏԵՐ Է: Եվ երբ մարդիկ տեսնում են, որ Նա Տեր է, ապաշխարում են և Աստծուն են դառնում: Դրա համար էլ ինձ և քեզ անհրաժեշտ է Սուրբ Հոգով մկրտությունը, և առանց դրա մենք, իրականում, արդյունավետ լինել չենք կարող:

Այսպիսով, երբ արդեն մի փոքր հիմքային աշխատանքներ կատարեցինք՝ թե ինչու է ձեզ անհրաժեշտ Սուրբ Հոգով մկրտությունը, եկեք ուսումնասիրենք աստվածաշնչյան այն գրվածքները, որոնք խոսում են այս օծության մասին:

ԳԼՈՒԽ 5

ՍՈՒՐԲԳՐԱՅԻՆ ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐ

Սուրբ Հոգով մկրտվելու մասին գաղափար կազմելու լավագույն ձևերից մեկը Պենտեկոստեի օրը այն ստացողներին ուսումնասիրելն է, որի մասին գրված է Գործք առաքելոց գրքում: Ամեն խոսքն ուսումնասիրելիս ձեր հավատքն ու վստահությունը կավելանա, և կհամոզվեք, որ այս մկրտությունը նաև ձեզ համար է:

«Եվ երբ Պենտեկոստեի օրը եկավ, բոլորը միասին մեկտեղ էին: Եվ հանկարծ երկնքից մի ձայն եկավ՝ սաստիկ փչող քամու պես, և լցրեց ամբողջ տունը, որտեղ նստած էին: Եվ նրանք տեսան մի բան, որ կրակի լեզուների էր նման, որոնք բաժանվեցին և նստեցին նրանցից ամեն մեկի վրա: Եվ բոլորը Սուրբ Հոգով լցվեցին և սկսեցին ուրիշ լեզուներով խոսել, ինչպես որ Հոգին նրանց խոսել էր տալիս:

Եվ Երուսաղեմում բնակվում էին աստվածավախ հրեաներ՝ երկնքի տակի ամեն ազգերից: Եվ երբ այս ձայնը լսեցին, մի բազմություն հավաքվեց՝ զարմացած, որովհետև ամեն մեկը լսում էր նրանց, որ իր լեզվով էին խոսում:

Եվ ամենքը զարմացած իրար ասում էին. «Չէ՞ որ այս բոլոր մարդիկ, որ խոսում են, գալիլեացի են: Այդ դեպքում, ինչպե՞ս

ենք մենք ամեն մեկս մեր մայրենի լեզուն լսում: Պարթևներ և մարեր և եղամացիներ, Միջագետքի, Հրեաստանի և Կապադովկիայի, Պոնտոսի և Ասիայի, Փռյուգիայի և Պամփյուլիայի, Եգիպտոսի և Լիբիայի կողմերի Կյուրենեի բնակիչներ և նորեկ հռոմեացիներ, հրեաներ և նորահավատներ, կրետացիներ և արաբներ. մենք լսում ենք, որ նրանք մեր լեզուներով Աստծո մեծամեծ բաներն են խոսում»:

Եվ հիանում էին ամենքը և զարմանում և մեկը մյուսին ասում էին. «Սա ի՞նչ է նշանակում»: Իսկ ոմանք էլ, նրանց ծաղրելով, ասում էին՝ գինով արբած են»:

– Գործք առաքելոց 2.1-13

Նախևառաջ, ցանկանում եմ, որ տեսնեք, թե ինչ է ասում Աստվածաշունչը, որ *բոլորը* լցվեցին Սուրբ Հոգով: Երկրորդը՝ *բոլորը* խոսեցին լեզուներով: Գուցե լսել եք, թե մարդիկ ինչպես են նկարագրում Պենտեկոստեի օրը, և թե ինչպես են բացատրում այդ երևույթը, թե ինչու բոլորը սկսեցին լեզուներով խոսել: Ոմանք պնդում են, որ դա մեկանգամյա փորձառություն էր եկեղեցու համար, քանի որ այնտեղ հավաքված եկեղեցին տարբեր երկրներից էր եկել, ուստի, լեզուներն անհրաժեշտ էին, որ Ավետարանը քարոզվեր տարբեր լեզուներ կրող մարդկանց: Բայց եթե կարդանք Աստվածաշունչը, կտեսնենք, որ վերնատանը հավաքված 120 հոգին խոսում էին Աստծո հրաշալի գործերի մասին: Նրանք Ավետարան չէին քարոզում, նրանք պարզապես փառաբանում էին Աստծուն:

««...Մենք լսում ենք, որ նրանք մեր լեզուներով Աստծո մեծամեծ բաներն են խոսում (հրաշքներն են հռչակում)»: Եվ հիանում էին ամենքը և զարմանում և մեկը մյուսին ասում էին. «Սա ի՞նչ է նշանակում»»:

– Գործք առաքելոց 2.11բ-12

Մոտակայքում կանգնած մարդիկ լսում էին, թե ինչպես էին նրանք փառավորում Աստծուն իրենց մայրենի լեզվով, և բոլորը զարմացել ու ապշել էին: Հետո Պետրոսը կանգնեց և փրկության պատգամ քարոզեց, և այդ օրը 3000 հոգի ավելացավ եկեղեցու մեջ: Եթե աշակերտները լեզուներով *քարոզում էին*, այդ դեպքում Պետրոսը չէր կանգնի ու չէր քարոզի: Բայց մինչև Պետրոսի քարոզելը, նրանք չէին հասկանում, թե իրենց լսածն ինչ է նշանակում: Այդ ժամանակ լեզուները չէին օգտագործվում Ավետարանը քարոզելու համար, հիմա նույնպես չեն օգտագործվում Ավետարանը քարոզելու համար: Հաջորդ գլխում կխոսենք, թե ինչ օգուտ կարող է ստանալ հավատացյալը լեզուներով աղոթքից, բայց այժմ կխոսենք մի տարածված կարծիքի մասին, որը լսել եմ:

Դարձյալ ուզում եմ ձեր ուշադրությունը հրավիրել այն փաստի վրա, որ Աստվածաշունչն ասում է, որ *բոլորն* ընդունեցին, և *բոլորը* խոսեցին լեզուներով: Եթե Աստվածաշունչը մեզ հենց այստեղ էլ թողնի, մենք կկասկածենք, որ լեզուներն ամբողջ եկեղեցու համար է: Բայց Աստվածաշունչն այդպես չի անում: Փոխարենը, տեսնում ենք, որ այս երևույթը Պենտեկոստեից հետո շարունակվում և կրկնվում է *բոլոր այն անհատների* համար, ովքեր ընդունում են Սուրբ Հոգու մկրտությունը:

Թույլ տվեք խոսել տղամարդկանցից մեկի մասին, ով ներկա էր Պենտեկոստեի օրը: Նրա անունը Փիլիպպոս էր:

> *«Իսկ ցրվածները ման էին գալիս՝ Խոսքն ավետարանելով: Եվ Փիլիպպոսն իջավ Սամարիայի մի քաղաք և Քրիստոսի մասին էր քարոզում այնտեղ: Ժողովուրդներն էլ միաբան ականջ էին դնում Փիլիպպոսի խոսածներին՝ լսելով և տեսնելով այն նշանները, որ անում էր»:*
>
> – Գործք առաքելոց 8.4-6

Այստեղ տեսնում ենք, որ Փիլիպպոսը ներկայացնում էր Թագավորությունը, և մարդիկ լսում էին: Այսօր էլ այդպես պետք է

լինի: Երբ մարդիկ *տեսնեն* նշանները, երբ նրանք *տեսնեն* Թագավորության *ապացույցները,* ավելի ուշադրություն կդարձնեն ձեր ասածներին:

> *«Որովհետև շատերից պիղծ ոգիներ էին դուրս գալիս մեծաձայն աղաղակելով, և շատ անդամալույծներ և կաղեր էին բժշկվում: Եվ մեծ ուրախություն եղավ այդ քաղաքում...»:*
>
> – Գործք առաքելոց 8.7-9

Ուշադրություն դարձնենք, որ Փիլիպպոսը քայլում էր զորության մեջ, որը նոր էր ստացել, երբ Երուսաղեմում էր: Նրան հետևում էին նշաններ, քանի որ Աստծո զորությունը բոլորին էր երևում: Նա ստացել էր *դունամիսը* («զորություն» բառի հունարեն տարբերակը), այժմ նա պատրաստ էր՝ լինելու Աստծո Թագավորության վկան:

> *«Երբ Երուսաղեմի առաքյալները լսեցին, որ Սամարիան Աստծո Խոսքն է ընդունել, Պետրոսին և Հովհաննեսին ուղարկեցին նրանց մոտ: Երբ նրանք ժամանեցին, աղոթեցին նրանց համար, որ Սուրբ Հոգին առնեն, որովհետև նրանցից ոչ մեկի վրա դեռ Սուրբ Հոգին չէր իջել: Նրանք միայն Տեր Հիսուսի անունով էին մկրտվել: Այն ժամանակ Պետրոսն ու Հովհաննեսը ձեռքերը դրին նրանց վրա, և նրանք ընդունեցին Սուրբ Հոգին»:*
>
> – Գործք առաքելոց 8.14-17

*Երբ Երուսաղեմի առաքյալները լսեցին, որ Սամարիան ընդունել է Աստծո Խոսքը, Պետրոսին և Հովհաննեսին ուղարկեցին նրանց մոտ: Երբ նրանք ժամանեցին, աղոթեցին նրանց համար, որ Սուրբ Հոգին առնեն, որ*ովհետև նրանցից ոչ մեկի վրա Սուրբ Հոգին դեռ չէր իջել: Բայց Աստվածաշնչում տեսնում ենք, որ դևերը դուրս էին գալիս, մարդիկ բժշկվում էին, և Աստծո մեծամեծ գործերն էին կատարվում, և մարդիկ հավատում էին Հիսուսին ու մկրտվում էին ջրով: Բայց այն ասում է նաև, որ Սուրբ Հոգին

դեռ նրանցից ոչ մեկի ՎՐԱ ՉԷՐ ԻՋԵԼ:

Տեսնո՞ւմ եք, Փիլիպպոսը փրկություն է քարոզում, և բոլորն ընդունում են դա, բայց Սուրբ Հոգով մկրտությունը դեռ չէին ընդունել: Նրանք վերստին ծնվել էին, բայց ուշադրություն դարձրեք բառերին. Սուրբ Հոգին դեռ «ՈՉ ՄԵԿԻ ՎՐԱ ՉԷՐ ԻՋԵԼ»: Ահա այստեղ կրկին տեսնում ենք այն տարբերությունը. Սուրբ Հոգին մեր մեջ է (վերստին ծնունդ), Սուրբ Հոգին իջնում է մեզ *վրա* և զորություն ներգործում:

Աստվածաշունչը չի ասում, թե ինչու Փիլիպպոսն ինքը չքարոզեց Սուրբ Հոգով մկրտվելու մասին: Գուցե նա Երուսաղեմից դուրս էր եկել անմիջապես Սուրբ Հոգով մկրտվելուց հետո, այդ ժամանակ չգիտեր, որ այն բոլորի համար է: Ինչ էլ լինի պատճառը, ակնհայտ է, որ մարդիկ հավատացել էին Ավետարանին, ջրով մկրտվել էին, և ուրեմն նրանք վերստին ծնվել էին: Բայց ուշադրություն դարձրեք, որ առաքյալների համար որքան կարևոր էր, որ Սամարիայի մարդիկ իրենց նման Սուրբ Հոգով մկրտվեին անմիջապես:

Առաջին բանը, որ նրանց ասացին, այն չէր, թե ինչպես հագնվեն կամ չհագնվեն: Նրանք չասացին. «Եկեք ասենք, թե ինչպես պետք է պարկեշտ հագնվել, կամ եկեղեցական հավաքույթները երբ կարող են անցկացնել»: Նրանց չէր անհանգստացնում աստվածաբանական օրենքները: Ի՞նչն էր նրանց անհանգստացնում ամենից առավել. Սուրբ Հոգով մկրտությունը: Ուստի նրանք գործի անցան և անմիջապես ուղևորվեցին այնտեղ՝ այդ մարդկանց պատմելու Սուրբ Հոգով մկրտության մասին:

Պետրոսը և Հովհաննեսը ձեռքերը դրին նրանց վրա, և նրանք ընդունեցին Սուրբ Հոգին: Ո՞րն էր դրա ապացույցը: Կարծում եմ, ինչպես բոլորի մոտ, լեզուներով աղոթելն էր:

> *«Երբ Սիմոնը տեսավ, որ Սուրբ Հոգին տրվում է առաքյալների ձեռք դնելով, փող բերեց նրանց և ասաց. «Ինձ էլ*

այս կարողությունից փվեք, որ ում վրա ձեռք դնեմ, Սուրբ Հոգին ստանա»:

Պետրոսը պատասխանեց. «Քո արծաթը քեզ հետ կորչի, որովհետև դու կարծեցիր, թե փողով կարող ես Աստծո պարգևը գնել: Դու բաժին և մաս չունես այս ծառայության մեջ, որովհետև քո սիրտը ուղիղ չէ Աստծո առջև: Ապաշխարի՛ր քո այդ չարությունից և Աստծուն աղոթի՛ր: Թերևս Նա ների քեզ սրտումդ այդպիսի չար խորհուրդ ունենալու համար: Որովհետև տեսնում եմ քեզ, որ լի ես դառնությամբ և մեղքի կապանքի մեջ ես»:

Սիմոնն էլ պատասխանեց. «Դո՛ւք ինձ համար աղոթեք Տիրոջը, որ ձեր ասածներից ոչ մի բան ինձ հետ չպատահի»»:

– Գործք առաքելոց 8.18-24

Երբ Սիմոնը տեսավ, որ Հոգին ձեռք դնելով է տրվում, գումար առաջարկեց առաքյալներին՝ իրեն այդպիսի զորություն տալու համար: Պետք է որ Սիմոնը ինչ-որ բան, ինչ-որ ապացույց տեսած լիներ, որ կատարվում էր, երբ մարդիկ ստանում էին Սուրբ Հոգին: Նա էլ էր ուզում այդ զորությունը:

Հենց այստեղ չի ասում, որ մարդիկ լեզուներով էին խոսում, բայց ակնհայտ էր, որ ինչ-որ ակնառու մի բան էր տեղի ունեցել, որը նրանք տեսել էին իրենց աչքերով: Սիմոնը մի զորավոր բան էր տեսել և ցանկանում էր այդ կարողությունն ինքն էլ ունենա, որ փոխանցի ուրիշներին: Կարծում եմ, նրա ակնարկները ցույց են տալիս, որ նրանք էլ բոլորի նման մկրտվել էին և խոսում էին լեզուներով: Դարձյալ ուզում եմ ընդգծել, թե որքան կարևոր էր Սուրբ Հոգով մկրտությունը Երուսաղեմի եկեղեցու համար. այն կենսական էր:

Երբ Պողոսը դարձի եկավ Դամասկոսի ճանապարհին, Անանիա անունով մի մարդ ուղարկվեց Պողոսի մոտ, որ նրա համար աղոթի:

«...Անանիան ասաց. «Սավո՛ւղ եղբայր, Տերը՝ այն Հիսուսը, որ երևաց քեզ ճանապարհին, ուղարկեց ինձ, որ նորից տեսնես և Սուրբ Հոգով լցվես»»:

– Գործք առաքելոց 9.17բ

Աստվածաշունչը չի ասում, որ Պողոսը սկսեց լեզուներով խոսել, երբ մկրտվեց Սուրբ Հոգով, բայց մենք գիտենք, որ նա խոսում էր լեզուներով, և կարծում եմ նա էլ մկրտվեց ճիշտ այնպես, ինչպես ուրիշները: Դուք կարող եք հարցնել, թե ինչու եմ այդպես կարծում: Պատասխանը պարզ է: Քանի որ Պողոսն անձամբ գրում է Ա Կորնթացիների 14.18-ում.

«Գոհանում եմ Աստծուց, որ բոլորիցդ ավելի շատ լեզուներով եմ խոսում» (Ա Կորնթացիների 14.18):

Այսպիսով, կարող ենք եզրակացնել, որ Պողոսն էլ է սկսել լեզուներով խոսել, երբ մկրտվել է Սուրբ Հոգով: Երբ կարդում ենք Գործք առաքելոցի գլուխները, տեսնում ենք, որ այս մկրտություններն օրեցօր տեղի էին ունենում եկեղեցում: Այն տեղի չունեցավ միայն Պենտեկոստեի օրը:

Հետագայում Գործք առաքելոցի 10-րդ գլխում կարդում ենք, որ Պետրոսին ուղարկեցին հեթանոսների տուն, որ քարոզի Ավետարանը: Պատկերացնո՞ւմ եք, թե որքան արտասովոր էր Պետրոսի համար, ով հրեա էր, գնալ հեթանոսի տուն: Նա գնաց այնտեղ միայն այն պատճառով, քանի որ Սուրբ Հոգին էր տեսիլքի միջոցով իրեն այնտեղ առաջնորդում: «Մինչ Պետրոսը դեռ այս բաներն էր խոսում, Սուրբ Հոգին իջավ նրանց վրա, ովքեր լսում էին Խոսքը: Պետրոսի հետ եկող թլփատված հավատացյալները զարմացան, որ Սուրբ Հոգու պարգևը թափվում էր նաև հեթանոսների վրա: Որովհետև լսում էին, որ նրանք

լեզուներով խոսում և Աստծուն փառավորում էին:

Այն ժամանակ Պետրոսն ասաց. «Միթե մեկը կարող է արգելել այս մարդկանց, որ ջրով մկրտվեն: Նրանք Սուրբ Հոգին ընդունեցին այնպես, ինչպես և մենք»: Ուստի, նրանց հրամայեց, որ Հիսուս Քրիստոսի անունով մկրտվեն: Այն ժամանակ խնդրեցին Պետրոսին, որ մի քանի օր իրենց մոտ մնա»:

– Գործք առաքելոց 10.44-48

Մինչ Պետրոսը Քրիստոսի Ավետարանն էր քարոզում այս հեթանոս ընտանիքին, Սուրբ Հոգին իջավ նրանց վրա, ովքեր լսում էին Խոսքը: Աստծո Հոգուն չես կարող տեսնել, ուրեմն ինչպե՞ս իմացան, որ Սուրբ Հոգին իջավ նրանց վրա: Հետո գրվածքում ասվում է, որ Պետրոսի հետ եկած թլփատված հավատացյալները ապշել էին, որ Սուրբ Հոգու պարգևը թափվել էր նաև հեթանոսների վրա, <u>որովհետև լսեցին, որ խոսում էին լեզուներով և փառավորում էին Աստծուն</u>:

Այսպիսով, ո՞րն էր ապացույցը, որ Սուրբ Հոգին այնտեղ էր: Պետրոսը պետք է ընդուներ այն, ինչ ակնհայտ էր իր համար, որ Աստված ընդունել էր այս մարդկանց: Այն փաստը, որ նրանք լեզուներով էին խոսում այն պարագայում, երբ Սուրբ Հոգով մկրտվելու մասին նրանց ոչինչ չէր ասվել, հենց այն ապացույցն էր, որի կարիքը նա ուներ: Պետրոսը *գիտեր*, որ նրանք մկրտվել են, քանի որ ստացել էին Սուրբ Հոգին այնպես, ինչպես ինքն էր ստացել. նրանք աղոթում էին լեզուներով:

Այսօր կարող ենք ահռելի տարբերություն նկատել այն ամենի մեջ, ինչն այսօրվա եկեղեցին է կարևորում, և ինչը կարևորում էր աստվածաշնչյան ժամանակների եկեղեցին: Իմ սիրելի աստվածաշնչյան խոսքերից մեկը, որը հստակ ասում է, որ բոլորը պետք է մկրտվեն Սուրբ Հոգով, և որը առանց որևէ կասկածի հաստատում է, որ վերստին ծննունդից անկախ դա Սուրբ

Հոգու ներգործությունն է, գրված է Գործք առաքելոց 19.1,2-ում:

> *«Մինչ Ապողոսը Կորնթոսում էր, Պողոսը վերին կողմերում ման էր գալիս և եկավ Եփեսոս: Այնտեղ նա մի քանի աշակերտների գտավ և հարցրեց. «Սուրբ Հոգին ընդունեցիք, երբ հավատացիք»: Նրանք պատասխանեցին. «Ո՛չ, մենք չենք էլ լսել, թե Սուրբ Հոգի կա»»:*
>
> – Գործք առաքելոց 19.1,2

Երբ Պողոսը մտավ Եփեսոս, նա մի քանի աշակերտների գտավ և հարցրեց. «Դուք ընդունեցիք Սուրբ Հոգին, երբ հավատացիք»: Սա առաջին մտահոգությունն էր, որը Պետրոսն արտահայտեց այս հավատացյալներին հանդիպելուն պես:

Պողոսը հասկացել էր, որ վերստին ծնված լինելը լիովին տարբերվում է Սուրբ Հոգով մկրտված լինելուց՝ որի ապացույցը լեզուներով խոսելն էր:

Ինչո՞ւ Պողոսը առաջինը հենց սա հարցրեց նրանց: Քանի որ դա հենց նույն բանն էր, ինչ Հիսուսն ասաց Գործք առաքելոցի 1.4-ում: Նա իրականում ասաց. «Առանց սրա քաղաքից դուրս չգնաք»: Ի՞նչ արեցին Երուսաղեմում գտնվող առաքյալները, երբ իմացան որ Սամարիայում մարդիկ ընդունել էին Աստծո Խոսքը: Նրանք ասացին. «Տղանե՛ր, հենց հիմա վե՛ր կացեք ու գնացե՛ք այնտեղ: Մենք պետք է վստահ լինենք, որ ամեն բան ճիշտ է ընթանում: Գնացե՛ք և այնպես արեք, որ նրանք մկրտվեն Սուրբ Հոգով»: Երբ Պողոսն անցնում էր Եփեսոսով, նա մի քանի աշակերտների գտավ, և առաջին բանը, որ հարցրեց, հետևյալն էր. «Ընդունեցի՞ք Սուրբ Հոգին, երբ հավատացիք»:

Երբ նրանք պատասխանում են, որ չեն էլ լսել, որ Սուրբ Հոգի կա, Պողոսը հարցնում է, թե ինչ մկրտություն են ստացել: Նրանք էլ, թե՝ «Հովհաննեսի մկրտությունը»: Պողոսը բացատրում է նրանց, որ Հովհաննեսի մկրտությունը ապաշխարության մկրտություն է, իսկ Հովհաննեսն ասում էր, որ հավատային

Նրան, Ով իրենից հետո պետք է գար: Այսինքն՝ պետք է հավատային Հիսուսին:

Սա լսելուց հետո, նրանք մկրտվեցին Տեր Հիսուսի անունով (ջրի մկրտությամբ): Դրանից հետո, երբ Պողոսն իր ձեռքերը դրեց նրանց վրա, Սուրբ Հոգին իջավ նրանց վրա և սկսեցին խոսել լեզուներով: Ուշադրություն դարձրեք, երբ Պողոսը հարցրեց, նա ենթադրում էր, որ նրանք Հիսուսին էին հավատում: Այդ իսկ պատճառով հարցրեց. «Ընդունեցի՞ք Սուրբ Հոգին, երբ հավատացիք»: Նա հասկանում էր, որ Սուրբ Հոգով մկրտությունը լիովին տարբերվում է վերստին ծնված լինելուց:

ԿԱՐԾՈՒՄ ԵՄ, ՍԱ ՈՐՈՇ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒՄ ՀԱԿԱՍԱԿԱՆ ԹԵՄԱ Է՝ ՈՉ ԹԵ ԱՅՆ ՊԱՏՃԱՌՈՎ, ՈՐ ՍՐԱ ՄԱՍԻՆ ԳՐՎԱԾ ՉԷ ԱՍՏՎԱԾԱՇՆՉՈՒՄ, ԱՅԼ՝ ՈՐ ՍԱՏԱՆԱՆ ԱՏՈՒՄ Է ԱՅՍ ԵՐԵՎՈՒՅԹԸ:

Կարծում եմ, սա որոշ եկեղեցիներում հակասական թեմա է՝ ոչ թե այն պատճառով, որ սրա մասին գրված չէ Աստվածաշնչում, այլ՝ որ սատանան ատում է այս երևույթը:

Եթե սա է զորությունը, եթե սա է դուռը դեպի կյանքեր փոխող կարողությունը և այս զորությամբ եք աշխարհին վկա լինում, ուրեմն դուք հակառակվում եք այս աշխարհի աստծուն, իսկ մենք գիտենք, թե այդ հարցում որն է նրա կարծիքը: Սուրբ Հոգով մկրտությունը մեզ տալիս է զորության պաշար՝ Աստծո զորությունը, որպեսզի գործենք Հիսուսի գործերը Աստծուն փառավորելու համար:

Գլուխ 6

ԱՐԴՅՈ՞Ք ԲՈԼՈՐՆ ԵՆ ԱՂՈԹՈՒՄ ԼԵԶՈՒՆԵՐՈՎ

Գուցե լսած լինեք, որ մարդիկ ասում են, որ իրենք լեզուներով չեն խոսում և չեն հավատում, որ բոլորը կարող են խոսել և պետք է խոսեն լեզուներով: Այնուհետև մեջբերում են Ա Կորնթացիների 12.27-30 խոսքերը՝ իրենց կարծիքը հիմնավորելու համար: Նրանք հատուկ ընդգծում են, որ Պողոսն անձամբ ասել է, որ բոլորը չեն խոսում լեզուներով: Ուրեմն, այս գրվածքն ուսումնասիրենք և տեսնենք՝ արդյո՞ք Պողոսը հենց դա նկատի ունի:

«Արդ, դուք Քրիստոսի մարմինն եք, և ձեզնից յուրաքանչյուրը՝ նրա անդամները: Եկեղեցու մեջ Ասփված առաջինը դրեց առաքյալներին, երկրորդը՝ մարգարեներին, երրորդը՝ ուսուցիչներին, հետո հրաշքներ գործողներին, նաև նրանց, ովքեր բժշկելու պարգևներ ունեն, ովքեր կարող են օգնել ուրիշներին, ովքեր կառավարելու կարողություն ունեն, և ովքեր զանազան լեզուներով են խոսում: Միթե բոլորը առաքյալներ են: Միթե բոլորը մարգարեներ են: Միթե բոլորը ուսուցիչներ են: Միթե բոլորը հրաշքներ են գործում: Միթե բոլորը բժշկությունների պարգևներ ունեն: Միթե բոլորը լեզուներով են խոսում: Միթե բոլորը թարգմանում են»:

Այս նամակում Պողոսը Կորնթոսի եկեղեցուն ասում է, թե ինչպես պետք է կարգ ու կանոն հաստատել, որպեսզի եկեղեցական հավաքույթների ժամանակ հնարավոր լինի բոլորին ծառայություն մատուցել: Այդ ժամանակ նրանք փորձում էին իրենց հոգևոր պարգևներով առաջ անցնել միմյանցից և սիրված քարոզիչներից: Պողոսը նրանց սովորեցնում է, թե որպես մարմին ինչպես գործեն միաբանության և սիրո մեջ: Եկեք մեր ուշադրությունն ավելի կենտրոնացնենք Ա Կորնթացիների 12.27,28-ի վրա.

> *«Արդ, դուք Քրիստոսի մարմինն եք, և ձեզնից յուրաքանչյուրը՝ նրա անդամները: Եկեղեցու մեջ (խորհուրդ եմ տալիս ընդգծել այս բառը) Աստված առաջինը կարգեց առաքյալներին, երկրորդը՝ մարգարեներին, երրորդը՝ ուսուցիչներին, հետո հրաշքներ գործողներին, նաև նրանց, ովքեր բժշկելու պարգևներ ունեն, ովքեր կարող են օգնել ուրիշներին, ովքեր կառավարելու կարողություն ունեն, և ովքեր զանազան լեզուներով են խոսում»:*

Պողոսն այստեղ շարունակում է, բայց ցանկանում եմ, որ կանգ առնենք, քանի որ ուզում եմ մի փոքր խոսել «եկեղեցու մեջ» արտահայտության մասին: Նա այստեղ խոսում է իրական եկեղեցական հավաքույթի մասին: Մենք դա կարող ենք կրկին ստուգել Ա Կորնթացիների 14.18,19-ում, որտեղ Պողոսը կրկին օգտագործում է նույն արտահայտությունը:

> *«Գոհանում եմ Աստծուց, որ բոլորիցդ ավելի շատ լեզուներով եմ խոսում: Բայց ԵԿԵՂԵՑՈՒ ՄԵՋ կամենում եմ հինգ խոսք իմ մտքով խոսել, որ ուրիշներին էլ բան սովորեցնեմ, քան թե բյուրավոր խոսքեր՝ լեզուներով»:*
>
> – Ա Կորնթացիների 14.18,19

Պողոսն ասում է. «Գոհանում եմ Աստծուց, որ բոլորիցդ *ավելի շատ լեզուներով եմ խոսում,* բայց **եկեղեցու մեջ...»**: Կրկին այս

արտահայտությունը, և այս անգամ պարզ է, որ Պողոսը խոսում է իրական եկեղեցական հավաքույթի և ոչ թե Քրիստոսի տիեզերական մարմնի մասին: Բոլորս էլ կհամաձայնենք, որ Պողոսը Քրիստոսի ամբողջական մարմնի՝ «եկեղեցու» մի մասն է: Անշուշտ, այդպես է: Եվ նա ասում է, որ ուրախ է, որ Կորնթոսի բոլոր հավատացյալներից ավելի շատ է լեզուներով խոսում: Սա ասում է, քանի որ այնտեղի եկեղեցին հրճվում էր լեզուներով խոսելու իր կարողության վրա, և ամեն կարգ խախտվել էր, ու շփոթություն էր առաջացել:

Նա իրականում ասում է. «Հեյ, ժողովուրդ, ես բոլորիցդ ավելի շատ եմ լեզուներով խոսում, բայց դա անելու ձև կա «եկեղեցում», որն արվում է կարգ ու կանոնով և շփոթություն չի առաջացնում»: Հետո շարունակում է, որ եկեղեցում (հավատացյալների հավաքույթում) ավելի լավ է հասկացողությամբ խոսի (սովորական լեզվով), որպեսզի ուրիշներն էլ շինվեն:

Եկեղեցական ծառայության ընթացքում որոշ մարդիկ օգտագործում են լեզուների պարգևը և թարգմանությունը, ինչպես գրված է Ա Կորնթացիների 12-րդ գլխում, բայց բոլորը չպետք է օգտագործեն այդ պարգևը ամբողջ մարմնին խրատելու և ուսուցանելու համար: Պողոսը նույնիսկ սահմանաչափ է դնում, թե քանի մարդ պետք է լեզուներով խոսի և թարգմանի ծառայության ժամանակ, և դա առավելագույնը պետք է լինի երեք հոգի:

> *«Եթե մեկը լեզվով խոսի, թող երկու կամ առավելագույնը երեք հոգի խոսեն. մեկը մյուսից հետո, և մեկը թող թարգմանի»* (Ա Կորնթացիների 14.27):

Ուրեմն, երբ Պողոսն ասում է, որ բոլորը լեզուներով չեն խոսում, նա նկատի ունի «եկեղեցու մեջ» կամ եկեղեցական հավաքույթի ժամանակ:

Դուք պետք է հասկանաք, որ ամեն հավատացյալ կարող է ունենալ լեզուներով աղոթելու կարողությունը, բայց ամեն մեկն

այդ օծությունը չունի, որ եկեղեցական հավաքույթի ժամանակ լեզուների և թարգմանության պարգևով առաջնորդի: Եթե դուք իսկապես ունեք ծառայության ընթացքում այդ պարգևով առաջնորդելու օծությունը, Աստվածաշունչն ասում է՝ աղոթե՛ք, որ թարգմանեք էլ:

> *«Լեզվով խոսողը, թող աղոթի, որ թարգմանի էլ»* (Ա Կորնթացիների 14.13):

«ՆՈՒՅՆԿԵՐՊ ԷԼ ՀՈԳԻՆ ՕԳՆՈՒՄ Է ՄԵԶ ՄԵՐ ՏԿԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ: ՄԵՆՔ ՉԳԻՏԵՆՔ, ԹԵ ԻՆՉ ԲԱՆԻ ՀԱՄԱՐ ՊԻՏԻ ԱՂՈԹԵՆՔ...»:

– ՀՌՈՄԵԱՑԻՆԵՐԻ 8.26ա

Կարծում եմ, որ լեզուներով խոսող անձը լավագույն թեկնածուն է ծառայության ընթացքում այն թարգմանելու համար, քանի որ պատգամն արդեն դուրս է հորդում նրանից:

Իսկ ինչո՞ւ է պետք աղոթել լեզուներով: Սատանան ատում է այն հավատացյալներին, ովքեր գիտեն աղոթել Հոգով (լեզուներով), և ցանկանում եմ, որ հստակ հասկանաք, թե ինչու:

Երբ Պողոսն ասում է, որ ուրախ է, որ բոլորից ավելի շատ է աղոթում լեզուներով, ուրեմն ինչ-որ պատճառ կար: Պողոսը Կորնթացիների Առաջին թղթի 14-րդ գլխում մի ակնարկ է անում.

> *«Լեզվով խոսողը իր անձն է **շինում**, իսկ մարգարեացողը եկեղեցին է **շինում»*** (Ա Կորնթացիների 14.4):

Եկեք ավելի խորը գնանք: Ի՞նչ է նշանակում «շինել»: «Շինել» բառը նշանակում է «խրատել կամ օգուտ տալ բարոյապես կամ հոգևորապես. բարձրացնել, ոգևորել»[2]:

Խոստովանենք, որ հաճախ կարիք ենք ունենում ուղղորդ-

ման, թե որ կողմ գնանք, ինչպես հասկանանք իրավիճակը, կամ՝ ինչպես ճիշտ որոշում կայացնենք: Լեզուներով աղոթքը կարող է օգնել ձեզ այս ամենի մեջ՝ ձեր անձը շինելու կամ ձեր կյանքում ուղղորդելու հարցում: Պողոսը սրա մասին ավելի հստակ խոսում է Հռոմեացիների 8.26,27-ում:

> *«Նույնկերպ էլ Հոգին օգնում է մեզ մեր տկարությունների ժամանակ: Մենք չգիտենք, թե ինչ բանի համար պիտի աղոթենք, բայց Ինքը՝ Հոգին, բարեխոսում է անբարբառ հառաչանքով, որը բառերը չեն կարող արտահայտել: Եվ սրտերը Քննողը գիտի, թե ինչ է Հոգու միտքը, քանի որ Հոգին բարեխոսում է սուրբերի համար Աստծուն վայելած կերպով»:*

Պողոսն ասում է, որ մենք խնդիրներ ու տկարություններ ունենք. «Մենք չգիտենք, թե ինչ բանի համար պիտի աղոթենք»: Գուցե հարց ծագի, թե ինչու է Պողոսը սրան տկարություն անվանում: Կարդալով Ա Հովհաննես 5.14,15 խոսքերը՝ կհասկանանք.

> *«Եվ սա է այն վստահությունը, որ ունենք Աստծուն մոտենալու համար, որ եթե Նրա կամքի պես ինչ-որ բան խնդրենք, Նա լսում է մեզ: Եվ եթե գիտենք, որ լսում է մեզ, ինչ էլ որ խնդրենք, գիտենք, որ առնում ենք այն, ինչ խնդրեցինք Նրանից»:*

Առանց Աստծո կամքը իմանալու կամ առանց վստահություն ունենալու, մենք չենք կարող հավատքով գործել (Աստծո հետ համաձայնության մեջ լինել), իսկ եթե չենք կարող հավատքով գործել, ուրեմն տկար իրավիճակում ենք, քանի որ առանց հավատքի չենք կարող օգտվել Աստծո շնորհքից կամ զորությունից: Այսպիսով, Պողոսն ասում է, որ եթե չգիտես, թե ինչպես աղոթես, ուրեմն թույլ իրավիճակում ես, որին կարող է օգնել լեզուներով աղոթքը: Այս գրվածքը ևս մեկ անգամ կարդանք.

«Նույնկերպ էլ Հոգին օգնում է մեզ մեր տկարությունների ժամանակ: Մենք չգիտենք, թե ինչ բանի համար պիտի աղոթենք...»:

– Հռոմեացիների 8.26ա

Մեր տկարությունն այն է, որ մենք չգիտենք, թե ինչպես է պետք աղոթել: Աստվածաշնչում գրված չէ, թե ում հետ կարող ես ամուսնանալ, որտեղ կարող ես ապրել, կամ որ աշխատանքին անցնել: Իսկ եթե չգիտենք, թե որն է Աստծո կամքը տվյալ իրավիճակում, ուրեմն չենք կարող վստահ լինել և հավատալ, որ Աստծուց կառնենք այն, ինչի համար աղոթում ենք: Կրկնում եմ, սա մի ահռելի տկարություն է: Մենք չենք կարող վստահություն ունենալ առ Աստված, եթե չգիտենք Նրա կամքը: Բայց կա մի միջոց, որով կարող ենք կյանքի ցանկացած իրավիճակում զանազանել Աստծո կամքը: Կա մի միջոց, որով կարող ենք համոզված լինել, թե որն է Աստծո կամքը, որի համեմատ էլ կարող ենք գործել հավատքով և վստահությամբ:

Պողոսը հենց այս բանի մասին է խոսում: Շինել ասելով՝ նա նկատի ունի օգտվելու հնարավորություն ունենալ այդպիսի գիտելիքից. գիտելիք, որը գալիս է Աստծո Հոգու միջոցով: Իսկ մենք Սուրբ Հոգուց կարողանում ենք լսել Հոգով աղոթքի կամ լեզուներով աղոթքի միջոցով: Եթե հետևենք Պողոսի խորհրդին, որը գրված է Հռոմեացիների 8.26,27 խոսքերում, ապա կտեսնենք հետևյալը.

«Բայց Ինքը՝ Հոգին, բարեխոսում է անբարբառ հառաչանքով, որը բառերը չեն կարող արտահայտել: Եվ սրտերը Քննողը գիտի, թե ինչ է Հոգու միտքը, քանի որ Հոգին բարեխոսում է սուրբերի համար Աստծուն վայելած կերպով»:

Այստեղ Պողոսը չի ասում, որ երբ աղոթում ենք Հոգով,

հառաչում ենք, այլ՝ մեջբերում է նախորդ խոսքը.

> *«Գիտենք, որ բոլոր ստեղծվածները մինչև հիմա ծննդաբերության ցավի նման հառաչում են: Եվ ոչ միայն նրանք, այլև ինքներս էլ, որ Հոգու առաջին պտուղն ունենք, մենք էլ մեր անձերում հառաչում ենք՝ որդեգրությանը սպասելով, այսինքն՝ մեր մարմնի ազատությանը: Որովհետև այս հույսով փրկվեցինք. բայց հույսը, որ տեսնվում է, հույս չէ: Ո՞վ է հույս տածում մի բանի համար, որն արդեն ունի: Բայց եթե հույս ունենք մի բանի համար, որ դեռ չունենք, ապա համբերությամբ սպասում ենք:*
>
> *Նույնկերպ էլ Հոգին օգնում է մեզ մեր տկարությունների ժամանակ: Մենք չգիտենք, թե ինչ բանի համար պիտի աղոթենք, բայց Ինքը՝ Հոգին, բարեխոսում է անբարբառ հառաչանքով, որը բառերը չեն կարող արտահայտել: Եվ սրտերը Քննողը գիտի, թե ինչ է Հոգու միտքը, քանի որ Հոգին բարեխոսում է սուրբերի համար Աստծուն վայելած կերպով»:*
>
> – Հռոմեացիների 8.22-27

Պողոսն այստեղ օգտագործում է հառաչել բառը, որպես նկարագրում կամ նմանեցում այն բանի, թե ինչ է կատարվում մեր ներսում: Մենք հառաչում ենք ներսում՝ մեր անձերում, ինչպես ծննդաբերող կինը: Այսինքն, մեր ներսում ծնում ենք մի բան, որն Աստծո Հոգուց է, մի նոր բան ենք ստանում, որը երբեք նախկինում գոյություն չուներ, կամ ասում ես մի բան, որը քեզնից չէ: Այսպիսով, մենք ծնունդ ենք տալիս ինչ-որ նոր բանի, այն գիտությանը, որը չգիտեինք: Հոգով աղոթելու միջոցով մեր հոգիներից ինչ-որ նոր բան է ծնվում: Աստվածաշունչն ասում է, որ Աստծո Հոգին Աստծո կատարյալ կամքն է աղոթում մեր հոգիների միջոցով ցանկացած իրավիճակում: Այն ասում է, որ Աստված Ինքն է մեզ համար աղոթում մեր մարդկային հոգու միջոցով այն-

պիսի հառաչանքներով, որոնք հնարավոր չէ արտաբերել (արտասանել հասկանալի բառերով):

Այսպիսով, ինչ ենք տեսնում այստեղ: Տեսնում ենք, որ Սուրբ Հոգին մեզ համար բարեխոսում է հառաչանքներով (ծնունդ է տալիս)՝ օգտագործելով ոչ արտաբերելի բառեր. բառեր (կամ՝ լեզուներ), որոնք չենք հասկանում: Եվ Նա, Ով քննում է մեր սրտերը, գիտի Հոգու միտքը, քանի որ Հոգին (Աստծո Հոգին) բարեխոսում է սուրբերի համար Աստծո կատարյալ կամքի համեմատ: Աստծո Հոգին աղոթում է Աստծո կատարյալ կամքը ցանկացած իրավիճակում՝ **քո հոգու միջոցով, երբ դու աղոթում ես լեզուներով**:

Այսպիսով, մենք տկար ենք, եթե չգիտենք Աստծո կամքը: Մենք չենք կարող հավատք գործածել, եթե չգիտենք, թե որն է Աստծո կամքը: Պողոսն ասում է, որ եթե մենք աղոթում ենք Հոգով, ցանկացած իրավիճակում անձամբ Աստծո Հոգին Իր կատարյալ կամքն է աղոթում մեր միջոցով:

Երբ Աստծո Հոգին աղոթում է լեզուներով մեր միջոցով, այդ դեպքում ինչպե՞ս է այն շինում ու նորոգում մեզ, եթե չգիտենք, թե ինչ ենք աղոթում: Պատասխանը Պողոսի մեկ այլ նամակի մեջ է.

> *«Աչք չտեսավ, և ականջ չլսեց, և ոչ մի միտք չպատկերացրեց այն, ինչ պատրաստեց Աստված Իրեն սիրողների համար: Բայց Աստված հայտնեց այն մեզ Իր Հոգով:*
>
> *Որովհետև Հոգին ամեն բան քննում է, նույնիսկ Աստծո խորին բաները: Որովհետև մարդկանցից ո՞վ գիտի մարդու մտքերը, եթե ոչ՝ մարդու հոգին, որ նրանում է: Այդպես էլ Աստծո մտքերը ոչ ոք չգիտի, այլ՝ միայն Աստծո Հոգին: Եվ մենք ոչ թե այս աշխարհի հոգին առանք, այլ այն Հոգին, որն Աստծուց է, որ հասկանանք, թե ինչ է Աստված մեզ ձրի տվել: Եվ սա ենք մենք խոսում, ոչ թե մարդկային իմաստությամբ մեզ սովորեցրած խոսքերով, այլ Սուրբ*

Հոգու սովորեցրած խոսքերով՝ արտահայտելով հոգևոր ճշմարտությունները հոգևոր բառերով»:

– Ա Կորնթացիների 2.9-13

Նախևառաջ, Պողոսն ասում է, որ այժմ մենք այնպիսի բաներից օգտվելու հնարավորություն ունենք, որի մասին ո՛չ լսել ենք, ո՛չ տեսել կամ մտածել, ինչպես արդեն ասացի: Այնուհետև նա շարունակում է, թե ինչպես է այն գործում.

«Որովհետև մարդկանցից ո՞վ գիտի մարդու մտքերը, եթե ոչ՝ մարդու հոգին, որ նրանում է: Այդպես էլ Աստծո մտքերը ոչ ոք չգիտի, այլ՝ միայն Աստծո Հոգին»:

– Ա Կորնթացիների 2.11

Նախքան Սուրբ գրքի այս հատվածին անդրադառնալը, նախևառաջ, պետք է ունենանք այն հիմնավոր գիտելիքը, թե ինչից ենք կազմված: Համաձայն Ա Թեսաղոնիկեցիների 5.23-ի՝ մենք երեք մասից ենք բաղկացած՝ հոգի, շունչ և մարմին:

«Եվ Ինքը՝ խաղաղության Աստվածը, ձեզ ամբողջությամբ սրբացնի: Եվ ձեր ամբողջ հոգին, շունչը և մարմինը անարատ պահվի մինչև մեր Տեր Հիսուս Քրիստոսի գալը»:

– Ա Թեսաղոնիկեցիների 5.23

Մեր հոգին՝ Աստծո մասնիկն է մեր մեջ, մեր շունչը՝ մեր միտքն է, կամքը և զգացմունքները, իսկ մարմինը՝ մեր մարմինն է: Պողոսն ասում է, որ մեր շունչն ու հոգին այնքան կապված են, որ մեր հոգին գիտի, թե ինչ մտքեր ունենք:

Հակառակը նույնպես ճիշտ է: Մեր մտքերը կարող են միտք վերցնել մեր հոգուց: Պողոսն ասում է, որ Աստծո Հոգին գիտի Աստծո մտքերը. մենք Աստծո Հոգին ենք ստացել, որ **իմանանք** թե ինչ է Աստված ձրի տվել մեզ:

«Եվ մենք ոչ թե այս աշխարհի հոգին առանք, այլ այն Հոգին, որն Աստծուց է, որ հասկանանք, թե ինչ է Աստված ձրի տվել մեզ: Եվ սա ենք մենք խոսում, ոչ թե մարդկային իմաստությամբ մեզ սովորեցրած խոսքերով, այլ Սուրբ Հոգու սովորեցրած խոսքերով՝ արտահայտելով հոգևոր ճշմարտություններ հոգևոր բառերով»:

– Ա Կորնթացիների 2.12,13

Պողոսը շարունակում է և ասում, որ այս անծանոթ գիտությունը, որը մենք չգիտեինք, բայց մեզ հայտնվեց Աստծո Հոգու միջոցով, հենց այն է, ինչ խոսում ենք բառերով, որոնք մեզ Սուրբ Հոգին է սովորեցնում: Սրանք այն բառերը չեն, որոնք խոսում ենք մեր բնական հասկացողությամբ կամ լեզվով, այլ հոգևոր բառեր են, քանի որ նա հենց այս սահմանումն օգտագործեց նկարագրելու համար Ա Կորնթացիների 14.14,15-ում ասված լեզուներով խոսելը:

«Քանի որ եթե ես աղոթեմ օտար լեզվով, իմ հոգին է աղոթում, բայց միտքս անպտուղ է: Ուրեմն, ի՞նչ անեմ. կաղոթեմ հոգով, բայց կաղոթեմ նաև մտքով: Կերգեմ հոգով, բայց կերգեմ նաև մտքով»:

Պողոսն այստեղ օգտագործում է «հոգով աղոթել» արտահայտությունը, քանի որ դա վերաբերում է լեզուներով աղոթքին: Մենք կարող ենք ենթադրել, որ Պողոսը նկատի ունի հենց այն նույն լեզուներով խոսելը, երբ ասում է, որ մենք խոսում ենք բառեր, որ Հոգին է մեզ սովորեցնում:

«Որովհետև լեզուներով խոսողը մարդկանց հետ չի խոսում, այլ՝ Աստծո: Իսկապես, նրան ոչ ոք չի հասկանում. <u>նա իր հոգով խորհուրդներ է արտաբերում»</u>:

– Ա Կորնթացիների 14.2

ՍՈՒՐԲ ՀՈԳՈՎ ՄԿՐՏՈՒԹՅՈՒՆԸ ԱՍՏԾՈ ԳԱՂՏՆԻ ՁԵՆՔՆ Է: ԱՅՆ ԿԱՐՈՂ Է ՆԵՐԲԵՌՆԵԼ ԱՍՏԾՈ ԿԱՄՔԸ ԱՅՍ ԱՇԽԱՐՀԻ ՄԵՋ՝ ԱՌԱՆՑ ՍԱՏԱՆԱՅԻ ԻՄԱՑՈՒԹՅԱՆ:

Այստեղ Պողոսը դարձյալ խոսում է մի հոգու մասին, որը կարողություն ունի խոսելու բաներ, որ երբեք չենք տեսել, չենք լսել և չենք իմացել, կամ, ինչպես Պողոսն է ասում, «խորհուրդներ» ենք խոսում: Ուշադրություն դարձրեք նաև, որ Պողոսն ասում է, որ խորհուրդներ ենք ասում մեր հոգով և ոչ թե Աստծո Հոգով: Հնարավո՞ր է արդյոք, որ մի բան մտնի մեր հոգու մեջ, որը մենք չգիտենք: Այս հարցի պատասխանը հեշտ է գտնել. Աստծո Հոգու միջոցով, Ով հիմա մեկ է մեր հոգու հետ:

> *«Որովհետև մարդկանցից ո՞վ գիտի մարդու մտքերը, եթե ոչ՝ մարդու հոգին, որ նրանում է: Այդպես էլ Աստծո մտքերը ոչ ոք չգիտի, այլ՝ միայն Աստծո Հոգին»:*
>
> – Ա Կորնթացիների 2.11

Երբ մեր հոգին ընկալում է Աստծո մտքերը, մեր միտքն էլ է սկսում ընկալել դրանք: Այդ երևույթին մենք անվանում ենք «հայտնություն ստանալ», «լուսավորվել», կամ, ինչպես Պողոսն է ասում, «շինվել», «նորոգվել»: Հիմա արդեն գիտեք, թե ինչու էր Պողոսն ասում, որ ուրախ է, որ բոլորից շատ է աղոթում. նա ամեն իրավիճակում օգտվում էր Աստծո կամքը իմանալու հնարավորությունից:

Այդ իսկ պատճառով, Պողոսը Ա Կորնթացիների 2.15,16-ում գրում է.

> *«Բայց հոգևոր մարդը ամեն բան քննում է, և ինքը ոչ մեկի կողմից չի քննվում: Որովհետև ո՞վ է իմացել Տիրոջ միտքը,*

որ բան սովորեցնի նրան: Բայց մենք Քրիստոսի միտքն ունենք»:

Մենք սահմանափակված չենք միայն մարդկային պարզ դատողությամբ, այլ կարող ենք ամեն բանի շուրջ դատողություններ անել Աստծո օգնությամբ: Սա հիասքանչ նորություն է: Մենք ունենք այդ կարողությունը՝ աղոթելով Հոգով (լեզուներով), որպեսզի կարող լինենք խորհուրդներ խորհել, բաներ, որ չգիտենք: Եվ այդ գիտությամբ կարող ենք ճիշտ դատողություններ անել կամ ամեն հարցում ճիշտ որոշումներ կայացնել:

Սուրբ Հոգով մկրտությունը Աստծո գաղտնի զենքն է: Այն կարող է ներբեռնել Աստծո կամքը այս աշխարհի մեջ՝ առանց սատանայի իմացության: Ի դեպ, Հոգով աղոթելու մասին նշված է Եփեսացիների 6.18-ում՝ մեր հոգևոր սպառազինության շարքում.

«Ամեն աղոթքով և խնդրվածքով աղոթք արեք Հոգով բոլոր հանգամանքներում»:

Հոգով աղոթելը հնարավորություն է տալիս բացահայտելու այն ռազմավարական հնարքները, որոնց միջոցով կարող ենք խուսափել թշնամուց, կամ յուրահատուկ և արտասովոր գործելակերպով առաջանանք:

Հոգով աղոթքի կիրառական օգուտն այն է, որ մենք կարող ենք կյանքում ճիշտ որոշումներ կայացնել՝ օգտվելով Քրիստոսի մտքից: Կարծում եմ, կհամաձայնեք, որ սա շատ կարևոր բան է: Ինձ համար այդպես է եղել:

Որպես օրինակ, հիշում եմ, երբ մի անգամ պետք է մեծ որոշում կայացնեի իմ բիզնեսի համար: Վաճառքի այն գործակալը, ով իմ ընկերության արտադրանքի վաճառքով զբաղվող գործակալության ներկայացուցիչն էր, սպառնում էր դատի տալ իմ ընկերությանը, եթե ես կրկին չհամագործակցեի իր նոր գործակալության միջոցով: Նա ցանկանում էր, որ շարունակեի համա-

գործակցել նրա հետ, այն դեպքում, երբ նա դուրս էր եկել այն գործակալությունից, որի հետ մշտապես աշխատել եմ: Ինձ դուր էր գալիս իմ վաճառքի գործակալը, բայց զգում էի, որ ես ավելի հավատարիմ եմ այն ընկերությանը, որտեղ նա աշխատում էր, քան՝ անձամբ իրեն: Սակայն, իրականում, իր ներկայիս ընկերությունն ասել էր, որ կարող է բոլոր իր հաճախորդներին տեղափոխել իր նոր ընկերություն: Ուրեմն, ես որևէ վատ բան արած չէի լինի, եթե նրա հետ գնայի, բայց միևնույն ժամանակ, լավ չէի զգում, որ ստիպում էին ինձ գնալ իր հետ: Նրա ներկայիս ընկերությունն ինձ հետ մշտապես շատ արդար էր վարվել:

Այդ մարդը սպառնում էր դատական գործ հարուցել, քանի որ մի քանի ամիս առաջ նա տեղեկացրել էր, որ նոր ընկերություն է տեղափոխվում, և հարցրել էր, թե արդյոք կգնամ իր հետ: Առանց երկար-բարակ մտածելու՝ համաձայնել էի: Նա ասաց, որ իր հաշվարկի մեջ եղել է նաև իմ ընկերությունը, երբ նա կայացրել է ընկերությունը փոխելու իր որոշումը: Բայց վերջին օրը, երբ մոտեցավ, ինչ-որ անհանգիստ զգացողություն էր պատել ինձ: Ես մի քանի օր Հոգով աղոթում էի, բայց դեռ չէի լսում այն պատասխանը, որի կարիքն ունեի:

Դրենդան և ես հաճախ ենք մեր երեխաներին տանում զվարճանքների պուրակ՝ Սեդար Փոյնթ, որը մեր տնից մի քանի ժամվա ճանապարհ է: Իրականում, Միացյալ Նահանգների ամենամեծ բլուրներն այս այգում են, և սովորաբար, տարին մեկ-երկու անգամ գնում ենք այնտեղ: Ուրբաթ երեկո էր, իսկ երկուշաբթի առավոտյան արդեն պատասխան պետք է տայի: Մտածում էի, որ ավելի լավ կլինի, որ մինչև երկուշաբթի առավոտ միտքս մեկ այլ բանով զբաղեցնեմ, և որոշեցի այդ երեկո Դրենդայի հետ գնալ այդ զվարճանքների այգին: Երբ կանգնած սպասում էի իմ հերթին ու չէի էլ մտածում, թե մինչ երկուշաբթի առավոտ ինչ որոշում պետք է կայացնեի, ես հստակ հասկացա, թե ինչ պետք է անեմ: Դա լույսի պես պարզ էր: Սուրբ Հոգին խոսեց ինձ հետ, և ես մնացի իմ մայր ընկերության հետ: Վաճառքի գործակալի նոր

ընկերությունը մի քանի ամսից ինչ-ինչ պատճառներով փակվեց:

Այսպիսով, հաջողության ամենամեծ բանալին աղոթքն է: Հաճա՛խ աղոթեք Հոգով, որ ձեզ հետ ամեն բան լավ ընթանա, որ ճիշտ որոշումներ կայացնեք, ինչպես նաև հասկանաք հաղթելու համար ձեզ անհրաժեշտ մարտավարության խորհուրդները:

«Անդադար աղոթք արեք» (Ա Թեսաղոնիկեցիների 5.17):

Գլուխ 7

ԳԱՆՁԵՐԻ ՍՆԴՈՒԿԸ

Հիշում եմ այն օրը, երբ առաջին անգամ եկեղեցում հանդիպեցի Դենին: Նա կանգնած էր վերջին շարքում, իմ մորեղբոր դստեր՝ Ջենիֆերի հետ: Հետո պարզեցի, որ նրանք ժամադրվում էին: Բայց Դենի դեմքի արտահայտությունից պարզ երևում էր, որ ինչ-որ բան այնպես չէր ընթանում: Նա կարծես անհարմարավետություն էր զգում: Մեր եկեղեցին մի փոքր տարբերվում էր այն հարանվանական եկեղեցուց, որտեղ նա հաճախում էր: Սակայն, լսելով Թագավորության մասին, նա խաղաղվեց և, ի վերջո, ամուսնացավ մորաքրոջս դստեր հետ:

Այդ ժամանակ Դենը Կենտրոնական Օհայոյում 600 հեկտար հող էր մշակում, և նրա գործերը լավ չէին ընթանում: Իրականում, նա շահույթ չէր ունենում, և դա անհանգստացնում էր նրան: Բայց շարունակ լսելով Թագավորության մասին, նաև՝ թե ինչպես կարող է Սուրբ Հոգին օգնել, մի օր գալիս է Ջենիֆերի մոտ և ասում. «Ես ուզում եմ կրկնապատկել մեր զոհաբերությունը»: Ջենիֆերը զարմանում է, բայց, միևնույն ժամանակ, շատ է ուրախանում: Նրանք հենց այդպես էլ անում են:

Այդ տարի հենց այդ 600 հեկտարից 128 տոկոսով ավելի շատ բերք ստացվեց, քան նախորդ տարի: Բերքն այնքան առատ էր, որ նրանք կարողացան կանխիկով մեքենա գնել, ևս մեկ ագարակ, այսինքն, ավելի շատ հեկտար հող, որտեղ կարող էին ցանել նաև հաջորդ տարի: Դենն այնքան էր ոգևորվել: Նա ասաց,

որ իր հորից տասը տարի կպահանջվեր այդ նոր հողակտորը գնելու համար, իսկ նա դրա համար կանխիկով էր վճարել: Ես հարցրի, թե ինչպես դա պատահեց, և խնդրեցի, որ պատմի այդ մասին:

Այն բանից հետո, երբ Դենն ու Ջենիֆերը որոշում են կրկնապատկել իրենց զոհաբերությունը, նրանք աղոթում և խնդրում են Աստծուն, որ ցույց տա, թե ինչ անեն: Դենը պատմում է, որ մի օր, երբ աչքի է անցկացնում ամենօրյա փոստային թերթերը, որոնք մեծ մասամբ գյուղատնտեսներին ուղղված մարքեթինգային գովազդներ էին, աղբարկղ է նետում մի քարտ, ու հանկարծ անհանգստություն զգալով՝ ետ է վերցնում: Այդ քարտի վրա որևէ արտասովոր բան չկար, գյուղատնտեսական սարքավորման մի գովազդ էր, որտեղ ագարակատերերին հրավիրում էին հանդիպման՝ խոսելու այդ սարքավորման մասին:

Դենին մի արտասովոր զգացողություն է համակում, որ անպայման պետք է մասնակցի այդ հավաքույթին: Եվ ահա, հավաքույթին մասնակցելուց հետո նա ձեռք է բերում այդ գործիքը: Այն նորույթ էր շուկայում, որի միջոցով սերմը դրվում էր հողի մեջ՝ սկզբնապես նախապատրաստելով հողը: Նա փորձում էր գիտական հիմնավորումներով բացատրել, թե ինչպես էր այն անդրադառնում բերքատվության վրա, բայց խոսքի կեսից զգաց, որ գլուխ չեմ հանում իր բացատրություններից: Բայց կարևորն այն էր, որ ինքն էր գլուխ հանում: Դենն ինձ ասաց, որ այդ ժամանակ նա Օհայոյում երկրորդ ագարակատերն էր, ով գնել էր այդ գործիքը: Այդ փոքրիկ գործիքն արել էր իր գործը, և ահա, արդյունքում ստացել էր 128 տոկոսով ավելի բարձր բերք: Նա ավելի շատ հողատարածք ձեռք բերեց: Այսօր նրա հողատարածքները հազարավոր հեկտարների են հասնում: Այժմ նա շատ պատմություններ ունի, թե ինչպես է Սուրբ Հոգին օգնել իրեն որոշում կայացնել, իսկ դրա շնորհիվ այնպիսի առաջընթաց է ունեցել, որ երբևէ չէր կարող երազել:

Այսպիսով, ինչպե՞ս Դենին հաջողվեց իր անհաջողակ գյուղատնտեսությունից ստանալ մեծամեծ շահույթներ: Նա հետևեց իր Խորհրդականի՝ Սուրբ Հոգու խորհուրդներին: Ցավալի է, երբ շատ քրիստոնյաներ, լսելով այս պատմությունը, նույնիսկ գաղափար չունեն, թե ինչպես է դա պատահել: Եվ դա էր պատճառը, որ կարևոր համարեցի գրել այս գիրքը: Լսելով այս պատմությունը՝ շատ քրիստոնյաներ կգովերգեն Աստծո մեծափառությունը, կընդունեն, որ Աստված է միջամտել, բայց չեն իմանա, թե ինչպես վերարտադրեն դա իրենց կյանքում: Լինում են քրիստոնյաներ, ովքեր հիասթափվում են Աստծուց, և հաճախ եմ լսում, որ իրենց խնդիրների համար մեղադրում են Նրան. «Որտե՞ղ է Աստված»: «Չգիտեմ, թե ինչու Աստված չօգնեց ինձ»:

Հուսով եմ՝ դուք արդեն հասկացել եք, որ Թագավորությունը օրենքներով է գործում, և ոչ թե բարեհաճությամբ: Աստված չի ընտրում, թե ում օրհնի և ում չօրհնի: Դենը Աստծո ընտրյալը չէր և Աստծո առջև ձեզնից ոչ մեկից առավել չէր: Դուք Թագավորության մեջ ունեք միևնույն իրավական հիմքերը, ինչ ունի Դենը: Ինչպես ցանկացած մարդ իրավունք ունի սերմ ցանելու և բերք աճեցնելու, Աստծո Թագավորությունն էլ գործում է նրանց համար, ովքեր գիտեն, թե ինչպես պետք է օգտագործել Թագավորության օրենքները: Դուք Աստծո ընտանիքի մի անդամն եք, Նրա հզոր Թագավորության քաղաքացին և կարող եք օգտվել Նրա ունեցածից:

Հիմա թույլ տվեք խոսել, թե ինչու Աստծո ժողովրդից շատերը կյանքում հաջողություն չունեն. նրանք չգիտեն, թե ինչպես է գործում Աստծո Թագավորությունը, և թե ինչպես կարող են լսել Սուրբ Հոգուն:

*«Այսպես է ասում Տերը, **քո** Փրկիչը, Իսրայելի Սուրբը. «Ես եմ **քո** Տեր Աստվածը, Ով **քեզ սովորեցնում է** օգուտ քաղել, Ով **քեզ** առաջնորդում է **քո** գնալու ճանապարհում»»:*

– Եսայի 48.17

Դենի հաջողությունը իր մտածած ծրագրի արդյունքը չէր: Դենը կարողացել էր զանազանել Սուրբ Հոգու յուրօրինակ մարտավարությունը, քանի որ կիրառել էր Աստծո Թագավորության օրենքները: Նա և կինը ականջ էին դրել Սուրբ Հոգու ասածներին, Ով օգնել էր նրանց ծրագիր կազմել: Ուզում եմ, որ սա գրի առնեք:

ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ՈՒՆԻ ԾՐԱԳԻՐ

Ծրագիր ունենալուց ավելի հզոր բան չկա: Առանց ծրագրի պատկերը երազանք է մնում, բայց ծրագրով երազանքը կարելի է իրագործել:

Մի ընտանիք կարող է երազել մեծ տուն ունենալու մասին՝ շատ ննջարաններով, ընդարձակ հյուրասենյակով, ժամանակակից խոհանոցով և գեղեցիկ դիզայնով: Բայց դա միայն երազանքի պատկեր է: Այդ նկարը պետք է գծագրել և կազմել մակետը՝ նախագիծը: Հենց որ շինարարը ձեռքի տակ ունեցավ նախագիծը, նա կարող է սկսել շինարարությունը: Ինչ-ինչ պատճառներով քրիստոնյաների մեծ մասին բնորոշ է «փոստարկղային մտածելակերպը» (ես դա այդպես եմ կոչում): Նրանք աղոթում են և Աստծուց խնդրում են իրենց անհրաժեշտ գումարը, ինչպես որ Դենն էր անում, ու սպասում են, որ այն կհայտնվի իրենց փոստարկղում, կամ ակնկալում են, որ ինչ-որ մեկը կգա և այդ գումարն իրենց կտա: Իսկ ընթացքի մասին ընդհանրապես գաղափար չունեն:

Այո՛, առաջինը պետք է պատկերը լինի: Բայց այն իրականություն դարձնելու համար ընթացք կա: Դա ծրագիրն է կամ մարտավարությունը, որի միջոցով հնարավոր է իրականացնել երազանքը: Թույլ տվեք մի օրինակ բերել: Եթե ձեզ ասեմ, որ ձեր ֆինանսական խնդիրները շատ արագ կարող եմ լուծել, և ասեմ, որ թուղթ ու գրիչ պատրաստեք, որովհետև ասելու եմ ձեր անելիքները, դուք անմիջապես թուղթ ու գրիչը կվերցնեք և ուշադիր կլսեք

պատասխանը: Նշեմ նաև, որ այն մարդիկ, ովքեր կկարդան այս գիրքը ու կհետևեն ասածներիս, ամենայն հավանականությամբ, մեկ տարվա ընթացքում կազատվեն ֆինանսական սթրեսից և պարտքերից: Կարծում եմ, հիմա ավելի ամուր եք բռնել գրիչը և ամբողջությամբ կենտրոնացրել եք ձեր ուշադրությունը, որ իմ ասածներից նույնիսկ մեկ բան բաց չթողնեք, այնպես չէ՞:

Պատասխանն իրոք շատ պարզ է: Պարզապես ապահովեք 10 միլիոն դոլարի մաքուր շահույթ և վերջ: Գուցե զարմացած նայեք ինձ ու ծիծաղեք: Ես հետո ձեր ծիծաղից կհասկանամ, որ 10 միլիոն դոլարը բավական չէ, և կավելացնեմ՝ ասելով. «Եթե դա բավական չէ, ուրեմն՝ 25 միլիոն դոլար»: Եվ այս խոսքիս համար ոչ միայն կծիծաղեք, այլև բարձրաձայն կքրքջաք: Որոշ մարդկանց համար 10 միլիոն դոլարն իսկապես կազատի պարտքերից, բայց նրանք ծիծաղում են, քանի որ չեն պատկերացնում, որ մեկ տարում 10 միլիոն դոլար կաշխատեն: Իսկ 25 միլիոն դոլարի մասին խոսք լինել չի կարող, քանի որ այն այնքա՜ն հեռու է իրենց պատկերացումներից:

Պատկերացնենք, որ ես ունեմ արտահանման ընկերություն, և ձեզ առաջարկում եմ վճարել 1000 դոլար ամեն գնդակը տուփի մեջ դնելու, տուփը սոսնձաժապավենով փակելու և այն փոստով առաքման նախապատրաստելու համար: Պատկերացնենք, որ դուք օրական կարող եք պատրաստել մոտավորապես 500 այդպիսի տուփ: Եվ ձեզ հետ կնքում եմ պայմանագիր 12 ամսով: Ես դիտավորյալ եմ չափազանցնում, որ ավելի շոշափելի ներկայացնեմ, բայց հուսով եմ, որ այսկերպ ասածս տեղ կհասնի:

Հիմա պատկերացնենք, որ այդ պայմանագիրն արդեն կնքվել է, և ես ասում եմ միևնույն բանը, որ ասել եմ նախկինում. ձեր ֆինանսական խնդիրների պատասխանը հաջորդ տարվա ընթացքում

ԹՈՒՅԼ ՏՎԵՔ ԿՐԿՆԵԼ, ԿԱՐԾՈՒՄ ԵՄ ԿԱՐԻՔ ՈՒՆԵՔ, ՈՐ ԵՎՍ ՄԵԿ ԱՆԳԱՄ ԼՍԵՔ ՍԱ. ԱՍՏՎԱԾ ԾՐԱԳԻՐ ՈՒՆԻ ՁԵԶ ՀԱՄԱՐ:

10 միլիոն դոլարի մաքուր շահույթ ունենալն է: Ինչպիսի՞ն կլինի ձեր արձագանքը: Հիմա այլևս չեք ծիծաղի: Ընդհակառակը, ուրախության ու հրճվանքի ճիչեր կարձակեք: Ինչո՞ւ: Որովհետև այդ պայմանագրով 10 միլիոն դոլար աշխատելը հեշտ կլինի, և հարյուր միլիոն դոլարն էլ հեշտությամբ հնարավոր է աշխատել: Իսկ ի՞նչը փոխվեց: Միայն մեկ բան. հիմա դուք ծրագիր ունեք: Ինչպես ավելի վաղ նշել էի, ցանկացած մարդ կարող է ձուկ բռնել, եթե Հիսուսը ցույց տա, թե որտեղ և ինչպես այն բռնի: Նույնը ձեզ է վերաբերում: Հենց որ ծրագիր ունենաք, որը կարող եք իրագործել, ձեր խնդիրը կլուծվի:

> *«Որովհետև Ես գիտեմ այն ծրագրերը, որ ունեմ ձեզ համար, - ասում է Տերը, - ձեզ բարգավաճ դարձնելու և ոչ թե վնասելու ծրագրեր, ձեզ հույս և ապագա տալու ծրագրեր»* (Երեմիա 29.11):

Թույլ տվեք կրկնել, կարծում եմ կարիք ունեք, որ ևս մեկ անգամ լսեք սա. Աստված ծրագիր ունի **ՁԵՁ** համար:

Մի քանի ամիս առաջ առիթ ունեցա սեմինարներից մեկի ժամանակ հանդիպել իմ գործընկերներից մեկին: Ծառայության վերջում նա մոտեցավ մեկ հարցով, կամ ավելի ճիշտ, մեկ հայտարարությամբ: «Այն չգործեց: Ես իմ ֆինանսական սերմը ցանեցի, ամուսնուս հետ համաձայնության եկա արու եղնիկ որսալու համար, և չստացվեց»: Նա պատմեց, թե ինչպես է կոնկրետ մի եղնիկի՝ արու եղնիկի համար ֆինանսներով սերմ ցանել, որ կարողանար որսալ: Ես սկսեցի նրան ավելի շատ հարցեր տալ, և ի վերջո հարցրի՝ արդյո՞ք որսի օրը արու եղնիկ տեսել է: Նա պատասխանեց. «Այո՛, հենց այն եղնիկի տեսակը, որի համար սերմել էի, եկավ ու կանգնեց իմ առջև՝ կրակելու համար հարմար հեռավորության վրա»:

Մի փոքր շփոթվեցի, ապա հարցրի, թե հետո ինչ պատահեց: Նա իդեալական նշան է բռնում ու կրակում է, բայց դրանից

առաջ հրացանը ընկերոջն է տալիս, որ կարգավորի, և առանց ստուգելու՝ կրակում է ու չի դիպչում նշանակետին: Այս ամենը շատ պարզ էր ինձ համար, բայց՝ ոչ իր համար:

Կարծում եմ, շատ հավատացյալներ նման իրավիճակում են: Ինչ-ինչ պատճառներով նրանք չեն հասկանում ընթացքը, և թե որն է իրենց դերը վերջնական արդյունքի համար: Ես նրան բացատրեցի, որ Աստված արել էր Իր մասը, բայց ինքը՝ ոչ: Աստված կարող է տալ ձեզ ծրագիրը, բայց որպեսզի այդ ծրագիրն իրականություն դառնա, դուք պետք է ձեր մասն անեք: Դա ձեր և Աստծո գործն է:

> *«Երկնքի արքայությունը նման է մի արտի մեջ* ***ԹԱՔՑՎԱԾ*** *գանձի: Երբ մի մարդ գտավ այն,* նորից թաքցրեց *և ուրախությունից գնաց և ամեն ունեցածը ծախեց և այդ արտը գնեց»:*
>
> – Մատթեոս 13.44

Այս խոսքի մեջ այնքա՛ն ճշմարտություն կա Թագավորության մասին: Նախևառաջ, սահմանենք, թե ինչ է գանձը: Ըստ բառարանների՝ գանձը ցանկացած տեսակի արժեքավոր կամ թանկարժեք ունեցվածքն է: Պարտադիր չէ, որ գանձը մի կտոր ոսկի լինի: Դա կարող է լինել ցանկացած բան, որի կարիքը այդ պահին ունեք: Այսպիսով, այս խոսքում ասվում է, որ Երկնքի թագավորությունը նման է գանձի, կամ, կարելի է ասել, որ ձեր կյանքում անհրաժեշտ ամեն բան Թագավորությունում կա: Իսկ որտե՞ղ է թագավորությունը: Այս խոսքում Հիսուսն ասում է, որ այն պահված է արտում: Կցանկանայի՞ք իմանալ, թե որտեղ է այդ արտը: Բարի լուրն այն է, որ Հիսուսը մեզ ասել է, թե որտեղ է արտը, և թե ինչպես գտնել այնտեղ թաքցված գանձը:

Եթե կարդանք Մարկոսի 4-րդ գլխում սերմնացանի առակը, ապա կտեսնենք, թե ինչպես է մարդու սրտում հավատք ձևավորվում: Այստեղ Հիսուսը մարդու հոգին նմանեցնում է հողի,

իսկ Աստծո Խոսքը՝ հողի մեջ ցանված սերմի: Օգտագործելով նույն համեմատությունը՝ կարող եմ ենթադրել, որ Մատթեոսի 13-րդ գլխում նշված հողը նույն սահմանումն ունի, այսինքն, մարդու սիրտը: Թույլ տվեք որոշ ժամանակ հատկացնել հիշեցնելու ձեզ, թե ինչ սովորեցինք 6-րդ գլխում. երբ վերստին ծնվում ենք, մեր մարդկային հոգին մեկ է դառնում Աստծո Հոգու հետ, և այդկերպ կարողանում ենք օգտվել Աստծո մտքերից: Ուրեմն, արտում գտնվող գանձը մեր մտքում եղածով չի սահմանափակվում, այլ՝ այն ներառում է ամեն բան, ինչ Աստված ունի, քանի որ մենք Նրա հետ մեկ ենք Հոգով:

> *«Ինչ որ աչք չտեսավ, և ականջ չլսեց, և ոչ մի միտք չպատկերացրեց այն, ինչ պատրաստեց Աստված Իրեն սիրողների համար: Բայց Աստված այն հայտնեց մեզ Իր Հոգով: Որովհետև Հոգին բոլոր բաները քննում է, նույնիսկ Աստծո խորը բաները: Որովհետև մարդկանցից ո՞վ գիտի մարդու մտքերը, եթե ոչ մարդու հոգին, որ նրանում է: Այդպես էլ Աստծո մտքերը ոչ ոք չգիտի, այլ միայն Աստծո Հոգին: Եվ մենք ոչ թե այս աշխարհի հոգին առանք, այլ այն Հոգին, որն Աստծուց է, որ հասկանանք, թե ինչ է Աստված մեզ ձրի տվել»:*
>
> – Ա Կորնթացիների 2.9-12

Իսկ հետո Ա Կորնթացիների 2.16-ն ավելացնում է, որ *մենք Քրիստոսի միտքն ունենք:* Հիսուսը Ղուկաս 27.20,21-ում հաստատում է, թե որտեղ է այդ գանձը.

> *«...Աստծո արքայությունը տեսանելի նշաններով չի գալու... Որովհետև ահա Աստծո արքայությունը հենց <u>ձեր ներսում է</u>»:*
>
> – Ղուկաս 17.20,21

«Չգիտե՞ք, որ ձեր մարմինները Սուրբ Հոգու տաճար են, որ ձեզանում է, և որ Աստծուց ընդունեցիք: Դուք ձեզ չեք պատկանում. դուք մեծ գնով գնվեցիք: Ուստի, փառավորե՛ք Աստծուն ձեր մարմնով»:

– Ա Կորնթացիների 6.19,20

Այսպիսով, թույլ տվեք ամփոփել այն, ինչ փորձում եմ բացատրել:

ՁԵՐ ՆԵՐՍՈՒՄ ԳԱՆՁ ԿԱ

Իսկ որքա՞ն գանձ կա: Այդ գանձը ձեր ամենավայրի երազանքից էլ գերազանց է: Անհամրելի ու անչափելի է այդ գանձը:

«Բայց Նրան, որ կարող է մեր խնդրածից և պատկերացրածից անհամեմատ շատ անել, այն զորության չափով, որը ներգործում է մեր մեջ»:

– Եփեսացիների 3.20

ԲԱՐԵԿԱ՛ՄՍ, ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆ ԱՐԴԵՆ ԼԻՈՎԻՆ ՔՈՆՆ Է: ԱՍՏՎԱԾ ԱՅԼ ԲԱՆ ՉԻ ԿԱՐՈՂ ԱՎԵԼԱՑՆԵԼ ԱՅՆ ԱՄԵՆԻՆ, ԻՆՉ ԱՐԴԵՆ ՏՎԵԼ Է:

Ահա այստեղ է, որ մեզ պետք է այլ կերպ մարզենք: Այս գանձը մեր պատկերացումից վեր է: Իրականում, երբ մեզ ինչ-որ բան է անհրաժեշտ կամ մենք օգնության կարիք ունենք, պատասխանը մեկ այլ տեղ ենք փնտրում՝ ոչ մեր ներսում: Բայց հիմա Սուրբ Հոգին՝ Աստված, մեր մեջ է բնակվում և մեր օգնականն է: Մենք արդեն քննարկել ենք, թե ինչպես է Հոգով կամ լեզուներով աղոթքը ուղղորդում և խորհուրդներ բացահայտում: Բայց շատ մարդիկ դժվարանում են հասկանալ, թե նման օգնությունը որքան արժեքավոր կարող է լինել, կամ՝ որ Աստված ցանկանում է լինել

նրանց պատասխանը կյանքի ցանկացած իրավիճակում:

Բայց երբ դուք վերստին ծնվեցիք, դարձաք Աստծո ընտանիքի անդամ, Նրա հզոր Թագավորության քաղաքացին: Նա արդեն իսկ տվել է ձեզ այն, ինչ Ինքն ունի: Իրականում, Ղուկաս 12.32-ն ասում է, որ վախենալու կամ սարսափելու որևէ պատճառ չկա, քանի որ Հայրը հաճեցել է Թագավորությունը ձեզ տալ: Ի՞նչ Թագավորություն: Իր Թագավորությունը:

> *«Մի՛ վախեցիր, փոքր հոտ, որովհետև ձեր Հայրը հաճեց, որ Արքայությունը տա ձեզ» (Ղուկաս 12.32):*

Բարեկա՛մս, Թագավորությունն արդեն լիովին քոնն է: Աստված այլ բան չի կարող ավելացնել այն ամենին, ինչ արդեն տվել է: Դու արդեն ամբողջն ունես: Շատերին թվում է, որ եթե ներգրավեն Աստծուն իրենց առօրյայում, Նրան անհանգստացրած կլինեն: Բայց սա անտեղյակության հետևանք է: Պատկերացրեք՝ ձեզ ասում եմ, որ դուք Ամերիկայի Միացյալ Նահանգների քաղաքացի եք, իսկ դուք էլ ձեր հերթին ասում եք. «Չգիտեմ: Եթե այստեղ խանութ բացեմ, վախենում եմ, որ ինչ-որ մեկին նեղություն կպատճառեմ: Վախենում եմ օգտվել այս երկրի օրենքներից, որոնք թույլ են տալիս ինձ այստեղ գործ սկսել»: Որպես քաղաքացի, դուք արդեն կարող եք օգտվել բոլոր օրենքներից և արտոնություններից, որ այս երկիրն առաջարկում է: Այդ ամենը ձերն է: Մի՛ վարանեք: Օգտվե՛ք բոլոր այն առավելություններից, որոնք օրինավոր կերպով ձեզ են պատկանում:

Ինչո՞ւ է Աստծո Թագավորությունը համեմատվում գանձի հետ:

Որովհետև, եթե դուք ունենաք Երկնքի գիտությունը, կիմանաք, թե ինչպես պետք է վարվեք ցանկացած իրավիճակում՝ օգտագործելով յուրօրինակ, արտասովոր և աստվածատուր մարտավարություններ: Թույլ տվեք մեկ այլ օրինակ բերել ցույց տալու համար, թե ինչպես է սա գործում:

Երբ Դրենդան և ես սկսեցինք սովորել Թագավորության մասին, մեր կյանքերը կտրուկ փոխվեցին: Պարտքերից լիովին ազատվելը նման էր մաքուր օդ շնչելուն, և կյանքը նոր բուրմունք ստացավ: Քսաներկու հեկտար հող կանխիկով գնելը երազանքի պես մի բան էր, բայց մենք դրա վրա ցանկանում էինք տուն կառուցել: Մենք տուն կառուցելու մասին որևէ պատկերացում չունեինք, իրականում, չգիտեինք, թե որտեղից պետք է սկսենք: Բայց աղոթեցինք՝ հասկանալու համար, թե ԻՆՉՊԵՍ այդ հողակտորի վրա կառուցենք մեզ անհրաժեշտ տունը: Մենք լիովին վստահեցինք Սուրբ Հոգուն, որ օգնի մեզ:

Ցանկանալով ազատվել պարտքերից՝ սկսեցինք հետազոտել տուն կառուցելու ոչ ավանդական ձևերը: Դրանցից մեկը մոդուլային տունն էր, որը խոստանում էր շքեղ տուն՝ ցածր գներով: Մոդուլային տունը կցորդ-տնակ չէ: Այն գործարանում պատրաստվող տարբեր հատվածներից կառուցվող տուն է, որը բերում և հավաքում են քո հողի վրա: Այս տներն ունեին փայտե տների որակը, բայց գները ցածր էին, քանի որ ավելի արդյունավետ շինարարական մեթոդներ էին օգտագործվում: Այսպիսով, դիմեցինք երկու-երեք մոդուլային տներ կառուցող ընկերությունների և սկսեցինք ուսումնասիրել նրանց առաջարկած մոդելները: Մոդուլային տները հետազոտելուց և անձամբ տեսնելուց հետո, զգում էինք, որ այս ճանապարհով պետք է գնայինք: Մենք ընտրեցինք ընկերությանը և այն մոդելը, որը կարծում էինք, որ ամենից հարմարը կլիներ մեր հողակտորի համար: Միևնույն ժամանակահատվածում մեզ հրավիրեցին Վիրջինիա՝ ուսուցանելու տնային դպրոցի համագումարի շրջանակներում, և այնտեղից վերադառնալուն պես պետք է ստորագրեինք պայմանագիրը: Որոշեցինք մեզ հետ վերցնել նախագծերը, որ պատահաբար որևէ դետալ բաց չթողնենք՝ համոզված լինելով, որ սա հենց մեր ուզած տունն է՝ նախքան պայմանագիրը ստորագրելը:

Չեմ հիշում, թե ինչպես պատահեց, որ մեզ հրավիրեցին ուսուցանելու Վիրջինիայի այդ համագումարին, բայց մեզ առա-

ջարկեցին մնալ տնային ուսուցում իրականացնող ընտանիքներից մեկի տանը: Երբ ժամանեցինք նրանց գեղեցիկ տունը և հանդիպեցինք մեր նոր ընկերներին, մենք հիացած ասացինք, թե որքան գեղեցիկ է նրանց տունը: Զրույցի ժամանակ իմացանք, որ այդ տունը իրենց ձեռքով էին կառուցել: Սկզբում ես ապշեցի. «Դուք շինարա՞ր եք», - հարցրի նրանց: «Ո՛չ», - պատասխանեցին: Ընտանիքի հայրը տեղեկացրեց, որ ինքը տեղական մի մեծ ընկերությունում հաշվապահ է աշխատում: «Իսկ ինչպե՞ս կարողացաք կառուցել այս տունը»,- հարցրի ես:

Նրանք տարբեր բաներ պատմեցին, և հենց զրույցի ընթացքում ասացինք, որ մենք էլ ենք պատրաստվում տուն կառուցել և վերադառնալուն պես պետք է պայմանագիր ստորագրենք: Նրանք ուրախացան և սկսեցին հարցեր տալ մեր նոր տան վերաբերյալ: Մենք պատմեցինք նրանց Թագավորության մասին, և թե ինչպես է մեր կյանքերը փոխվել: Պատմեցինք, թե ինչպես ենք կարողացել 22 հեկտար հողակտորի համար կանխիկով վճարել, և որքան ուրախ էինք մեր տունը կառուցելու համար:

Զրույցի ընթացքում ասել էինք, որ իրական նախագծերը մեզ մոտ են, և նրանք խնդրեցին ցույց տալ: Մենք շատ ուրախ էինք, որ նրանք կարող էին իրենց ներդրումն ունենալ: Բերեցինք նախագծերը և իրենց խոհանոցի սեղանի վրա տարածեցինք: Քիչ անց ընտանիքի մայրն ասաց. «Ո՛չ, այս տարածքը շատ փոքր է, ձեզ ավելի մեծ խոհանոց է անհրաժեշտ, իսկ դիտարկե՛լ եք, որ ձեր երեխաները մեծանալու են: Որպես հովիվներ, ձեզ իսկապես անհրաժեշտ է ավելի մեծ հյուրընկալության տարածք»: Կարճ ասած, նրանք ցույց տվեցին, թե ինչու պետք չէր նման տուն կառուցել, և ստիպված էինք համաձայնել նրանց յուրաքանչյուր դիտարկման հետ: «Իսկ ինչպե՞ս կառուցենք ավելի մեծ տուն մեր ունեցած գումարով»: «Շատ հեշտ, - ասացին նրանք, - ինքնե՛րդ կառուցեք»: Երբ դա լսեցի, հազիվ կարողացա զսպել ծիծաղս: «Ես կառուցեմ իմ սեփական տունը»: Ինչպես արդեն նշել եմ, տներից գաղափար չունեմ: Բայց նրանք քաջալերեցին

մեզ՝ ասելով, որ այդքան էլ դժվար չէ: Նրանք պատմեցին մեզ մի գրքի մասին՝ *«Խնայի՛ր 50.000 դոլար կամ ավելին՝ դառնալով քո գլխավոր կապալառուն. ինչպես նախագծել, նախահաշվարկել և կառուցել քո երազանքի տունը»,* հեղինակ՝ Վորեն Վ. Ջեգեր:

Երբ տուն եկանք, որոշեցինք, որ մոդուլային տուն կառուցելու պայմանագիրը չենք ստորագրելու: Պատվիրեցինք այդ գիրքը և սկսեցինք կարդալ ու խորհել յուրաքանչյուր գլխի շուրջ: Մենք սկսեցինք սովորական տների նախագծեր էլ նայել: Վերջապես գտանք մի նախագիծ, որը մեզ շատ դուր եկավ, և սկսեցինք այն քայլ առ քայլ գծագրել: Խորհրդակցեցինք Վիրջինիայի մեր ընկերների և մի քանի այլ մարդկանց հետ, ովքեր տուն էին կառուցել: Ի վերջո, որոշեցինք, որ մենք կարող ենք: Մենք նայեցինք շինարարական նախագծերին և ինքներս մեզ հարցրինք. «Ի՞նչ կարող ենք անել, որ այս տան շինարարությունը տեղավորվի մեր բյուջեի մեջ»: Անհավանական է, բայց որոշեցի, որ ամբողջ տան էլեկտրական լարերն ինքս եմ մոնտաժելու, թեև երբևէ էլեկտրական լարի կապոց ձեռքս չէի վերցրել: Ընկերներիցս մեկը, որ էլեկտրականությունից գլուխ էր հանում, ասաց, որ հեշտ է և կսովորեցնի ինձ:

Քանի որ ես զբաղված էի իմ բիզնեսով, Դրենդան որոշեց ստանձնել գլխավոր կապալառուի գործը ու պետք է աշխատեր ենթակապալառուների հետ: Մենք տան կմախքը կառուցելու համար մի կապալառուի վարձեցինք, իսկ մնացած գործը պետք է անեինք ինքներս: Դրան հաջորդեցին մեր կյանքի ամենալարված, բայց ամենաուրախ օրերը: Կարճ ասած, մենք ավարտեցինք տան կառուցումը: Այս տան բնակելի մակերեսը կրկնակի մեծ էր առաջարկվող մոդուլային տան մակերեսից. ամուր փայտե դռներ, փայտե հատակ, փայտե քանդակազարդ քիվեր, գեղեցիկ ու ժամանակակից խոհանոցային պահարաններ, որտեղ տեղադրեցինք չժանգոտվող պողպատից սարքավորումներ: Վերջում հաշվարկեցինք, որ տունը մեր ձեռքով կառուցելու արդյունքում խնայել էինք մոտավորապես 200.000 դոլար:

ԵՍ ՀԱՃԱԽ ԵՄ ԿՐԿՆՈՒՄ, ՈՐ ԱՍՏԾՈ ԳԱՂՏՆԻՔՆԵՐԸ ՊԱՀՎԱԾ ԵՆ ՁԵԶ ՀԱՄԱՐ, ԵՎ ՈՉ ԹԵ ՁԵԶՆԻՑ: ՍԱՏԱՆԱՆ ԱՊՐՈՒՄ Է ԽԱՎԱՐՈՒՄ, և ՆՐԱՆ ՀԱՅՏՆԻ ՉԵՆ ԱՍՏԾՈ ԾՐԱԳՐԵՐԸ:

Այսօր ես այնքան ուրախ եմ, որ Սուրբ Հոգուն խնդրեցի, որ ծրագիր տա մեզ: Դրա արդյունքները միշտ էլ մեր երազանքներից բարձր են եղել և կան: Մինչև հիմա զարմանում եմ, թե ինչպես Աստված կազմակերպեց Վիրջինիայի մեր ճանապարհորդությունը և առաջնորդեց մեզ այդ զույգի տուն, ովքեր վերջերս էին ավարտել իրենց տան շինարարությունը: Վստահ եմ, եթե այդպես չլիներ, գուցե և մոդուլային տուն կառուցեինք: Մոդուլային տունը միգուցե բավարարեր մեր կարիքները որոշ ժամանակ, բայց շուտով դուրս էինք գալու դրա սահմաններից: Մեր տան կառուցումն ինձ համար դեռ վկայություն է, թե ինչպես Սուրբ Հոգին կարող է օգնել քեզ ամեն իրավիճակում՝ տալով ակնկալիքներդ գերազանցող ծրագիր և ուղղորդում:

Թո՛ւյլ տվեք ևս մեկ անգամ ասել...

Աստված ունի ՔՈ ծրագիրը:

Գուցե ասեք. «Այո՛, այս ամենը լավ է, բայց Մատթեոս 13.44-ն ասում է, որ ծրագիրը թաքցված է»: Դուք իրավացի եք, և դա էլ ձեր արտոնությունն է: Ահա՛ թե ինչ է ասում Հիսուսը Մատթեոս 13.10,11-ում.

> *«Աշակերտները մոտ գալով՝ ասացին Նրան. «Ինչո՞ւ ես նրանց հետ առակներով խոսում»: Նա էլ պատասխանեց. «Որովհետև Երկնքի արքայության գաղտնիքների գիտությունը [այն բաները, որ թաքցված են] **ձեզ է տրված**, և ոչ թե նրանց»»:*
>
> – Մատթեոս 13.10,11

«Այս գաղտնի գիտելիքը ձեզ համար է, և ոչ թե սատանայի կամ չար մարդկանց, ովքեր սխալ կօգտագործեն և խոչընդոտ կհանդիսանան, որ Աստծո ծրագրերը չիմանաք: Աստվածաշունչն ասում է, որ սատանան կփոխի իր մարտավարությունը, եթե հասկանա, թե ինչ է Աստված ցանկանում անել:

«Ո՛չ, մենք Աստծո ծածուկ իմաստությունն ենք խոսում, իմաստություն, որը թաքցվել է, և Աստված հավիտենից առաջ սահմանել է այն մեր փառքի համար: Այս աշխարհի իշխաններից ոչ ոք չհասկացավ այն, <u>քանի որ եթե հասկանային՝ փառքի Տիրոջը չէին խաչի»»:</u>

– Ա Կորնթացիների 2.7,8

Ես հաճախ եմ կրկնում, որ Աստծո գաղտնիքները պահված են ձեզ համար, և ոչ թե ձեզնից: Սատանան ապրում է խավարում, և նրան հայտնի չեն Աստծո ծրագրերը: Նա կարող է միայն Աստծո արածի վրա ուշադրություն դարձնել: Բայց երբ գլխի է ընկնում, թե ինչ է կատարվում, բավականին ուշ է լինում: Ուստի, հաջորդ անգամ երբ փոքր-ինչ նյարդայնացած լինեք, քանի որ կեսգիշերը մոտենում է, իսկ դուք դեռ չունեք ձեր խնդրի պատասխանը, իմացե՛ք, որ Աստված երբեք չի ուշանում: Այն, ինչ ձեզ համար ուշացում կթվա, հենց դա էլ գործում է ձեր օգտին, որ պատասխանը թաքնված մնա, մինչև կգա դրա բացահայտման ճիշտ ժամը:

*«Դարձյալ նման է Երկնքի արքայությունը մի արտի մեջ **ԹԱՔՑՎԱԾ** գանձի: Երբ մի մարդ գտավ այն, **<u>նորից թաքցրեց</u>** և ուրախությունից գնաց, ամեն ունեցածը ծախեց և այդ արտը գնեց»:*

– Մատթեոս 13.44

Մենք արդեն խոսեցինք, թե ինչ է արտը, և որտեղ է այն գտնվում, և ինչու է գանձը թաքցված: Խոսեցինք նաև, թե ինչ-

պես լսենք ու հասկանանք Աստծո Թագավորության այդ թաքցված բաները՝ Հոգով աղոթելով և Սուրբ Հոգու ձայնը լսելով: Սակայն կա ևս մեկ շատ կարևոր սկզբունք այս ընթացքի մեջ, որ գրված է Խոսքում, և որը պետք է անպայման իմանաք: Շատերը տանուլ են տվել ընտիր և վեհ ծրագրեր, և ավերիչ կործանում են բերել իրենց կյանքերում, քանի որ չեն հետևել այդ սկզբունքին: Միգուցե այս խոսքի մեջ նկատել եք, որ այս մարդը լսում է գանձի, գաղափարի, ուղղորդման և Աստծո ծրագրի մասին, և գրված է, որ նա կրկին թաքցնում է այն: ՆԱ ԱՆՄԻՋԱՊԵՍ ՉԻ ԳՈՐԾՈՒՄ ԴՐԱ ՀԱՄԵՄԱՏ: Նա չի պատմում իր բոլոր ընկերներին ու հարևաններին, թե ինչ է լսել Տիրոջից, կամ թե ինչ նոր և հիասքանչ ծրագրեր ունի: Առայժմ այդպես չի անում: Աստվածաշունչն ասում է, որ նա դա կրկին թաքցնում է, վաճառում է իր ամբողջ ունեցածը և ապա գնում է արտը: Եթե ավելի պարզ ասենք, նա չի ցանկանում բացահայտել իր գանձի տեղը, քանի դեռ դա չի դարձել իր սեփականությունը: Մինչև դրա ձեռք բերելը, նա հոգ է տանում ապահովության համար, որ ոչ ոք չխլի այն իրենից:

Աստվածաշունչն ասում է նաև, որ առաջին անգամ, երբ գտնում է գանձը, նա իրականում ի վիճակի չի լինում վճարել այդ գանձի համար: Նա պետք է նախապատրաստական մի ընթացք անցներ, որից հետո կկարողանար գնել: Այս սկզբունքը չի վերաբերում միայն փողին և ինչ-որ բան ձեռք բերելուն: Այն սովորեցնում է մեզ կյանքի կարևոր սկզբունքները, և եթե ցանկանում եք հաջողել, ուրեմն պետք է իմանաք, թե ինչպես վարվեք այն ամենի հետ, ինչ ցույց է տալիս Սուրբ Հոգին:

Աստվածաշունչն ասում է, երբ որևէ գաղափար կամ ուղղորդում է ձեզ տրվում, պետք չէ անմիջապես դրա համեմատ գործել, քանի դեռ չունեք դրան տիրելու կարողություն: Բոլորս շատ լավ կարող ենք պատկերացնել, թե գումարի առումով ինչպես է դա գործում: Եթե բավականաչափ գումար չունեք հողը գնելու համար, հաստատ մեկ ուրիշին չեք ասի, որ հողի վրա գանձ

կա: Եթե հանկարծ այդ լուրը տարածվի, որ հողի վրա գանձ կա, վստահ եղեք, ինչ-որ մեկը ձեզնից շուտ կգնի այն: Փոխարենը, կգնաք և ամեն բան կանեք, որ փողը հայթայթեք ու հողը գնեք, իսկ այդ ամբողջ ժամանակ թաքցված գանձի մասին ճշմարտությունը միայն դուք կիմանաք:

Այս սկզբունքը ճշմարիտ է նաև ցանկացած ուղղորդման կամ կարգադրության համար, որ Աստված տալիս է ձեզ: Շատ անգամներ քրիստոնյաները շփոթում են սկիզբը վերջի հետ: Շատ անգամներ Սուրբ Հոգին ինչ-որ գաղափար է հայտնում ոչ թե այն բանի համար, որ հենց այդ պահին գործի անցնենք, այլ թույլ է տալիս, որ պատրաստվենք, որ իրականում կարողանանք առիթը ճիշտ օգտագործել: Ցանկացած գործողության նախապատրաստական մասը ընթացքի ամենակարևոր մասն է: Մարզաձևի խաղերի մեջ հաղթանակը կամ պարտությունը կախված է այն բանից, թե որքան լավ են պատրաստվել թիմերը փորձերի ժամանակ, երբ ոչ ոք նրանց չի նայել: Բայց կհամաձայնեք, որ մարզումները հաճելի բան չեն. դրանք քեզ ուժասպառ են անում: Իսկ մյուս կողմից էլ, բոլորին դուր է գալիս խաղի ոգևորությունը, մարդկանց ամբոխները, լույսերը և հաղթանակին հասնելու թրթիռը:

Ավա՜ղ, բոլոր այդ երազանքները վերածվում են ցավի ու դառնության, երբ նախապատրաստական փուլին պատշաճ ուշադրություն չի դարձվում: Չեմ կարող թվել, թե որքան մարդու եմ տեսել, որոնք կործանել են կյանքերը, քանի որ չեն իմացել այս սկզբունքը: Տեսել եմ մարդկանց, ովքեր իսկապես կանչված և օծված են եղել Աստծո կողմից, սակայն առանց զգացմունքայնորեն և ֆինանսապես պատրաստ լինելու՝ եկեղեցի են հիմնել, իսկ վերջում իրենց պատկերացրած երազանքին հասնելու փոխարեն հասել են աղետալի մի վիճակի: Տեսել եմ մարդկանց, ում Աստված բիզնեսի գաղափար է տվել, և համոզված լինելով, որ հաջողելու են, դուրս են եկել իրենց մշտական աշխատանքից, և առանց համապատասխան ջանքի կամ նախապատրաստության՝ սնանկացել են: Ամենատխուր պահն այս պատմութ-

յուններում այն է, որ մեղադրանքն Աստծուն է բաժին հասնում, և մարդիկ ոչ միայն իրենցից են հիասթափվում, այլ նաև Աստծուց: Չգիտեմ, թե ինչու է շատերին թվում, որ հաջողությունը մեկ գիշերվա մեջ է գալիս: Բայց մարդկանց պետք է սովորեցնել հաջողության ընթացքը, որն այս պարզ խոսքի մեջ է ամփոփված:

Մարդիկ մոտենում են ինձ և ասում. «Լսի՛ր, հովի՛վ, Աստված ասել է, որ սա է իմ եկեղեցին»: Եվ նրանց այլևս չեմ տեսնում: «Հովի՛վ, Աստված ինձ այս հզոր բիզնեսի գաղափարն է տվել»: Իսկ հաջորդ նորությունն այն է լինում, որ նրանց տունը դրված է հարկադիր աճուրդի, իսկ ավտոմեքենան արդեն բռնագրավվել է: Սա այն ՉԷ, ինչ Աստված պատրաստել է քեզ համար:

Երբ Սուրբ Հոգուց ինչ-որ գաղափար ենք լսում, չի նշանակում, որ հենց այդ վայրկյանին պետք է ոտքի ելնենք ու գործենք: Շատ հաճախ Աստված առաջնորդում է, որ այդ երազանքը թաքցնենք և պատրաստվենք այն ձեռք բերելու համար: Սովորաբար, այս տեսիլքը հաջողությամբ իրականացնելու համար ամեն անհրաժեշտ բան չէ, որ ունենում ենք: Նախապատրաստությունը կարող է մեկ շաբաթ տևել, կարող է և տարիներ տևել, կախված այն բանից, թե ինչ է ցույց տվել քեզ Աստված: Դուք պետք է հասկանաք, որ նախապատրաստումը և ճիշտ ժամանակը նույնքան կամ գուցե ավելի կարևոր են, քան հենց գաղափարը:

Փորձառությունիցս գիտեմ: Երբ 19 տարեկան էի, ինձ հրավիրեցին Ավետարանը քարոզելու: Ես պարզ տեսիլք էի տեսել, որտեղ կանգնած էի՝ Աստվածաշունչը ձեռքիս, և Տերը երեք անգամ ասաց. «Ես քեզ կանչում եմ քարոզելու Իմ Խոսքը»: Դա շատ իրական և հզոր վերապրում էր: Բայց Աստված չասաց ինձ, որ գնամ ու հենց այդ վայրկյանից սկսեմ քարոզել: Ընդհակառակը, ասաց, որ քոլեջ ընդունվեմ: Իսկ ես, իրականում, գրեթե ձախողվել էի ավագ դպրոցում, որտեղ միջին գնահատականս 1.3 էր: Չափազանց ամաչկոտ էի և փորձում էի մարդկանցից հե-

ռու մնալ: Ավելի պարզ ասեմ: Ես բոլորովին հասուն չէի մարդկանց հովվելու համար: Ընդունվեցի քոլեջ, և դա դժվար էր, շատ դժվար, բայց համառեցի ու ավարտեցի իմ քառամյա ուսուցումը:

Քոլեջն ավարտելուց հետո ինձ հետաքրքրում էր՝ արդյո՞ք հիմա է քարոզելու ժամանակը: Բայց Աստված ասաց, որ աշխատանքի անցնեմ տեղական մի ֆինանսական ընկերությունում՝ ապահովագրություն և անվտանգության երաշխիքներ վաճառելու համար: Թեև ոչ մի կերպ դա ինձ հետ կապ չուներ, բայց գիտեի, որ ես Աստծո ձայնն եմ լսում, և գնացի այդ գործին: Այդ գործը քոլեջից ավելի դժվար էր: Ես ամեն օր պետք է զանգեր կատարեի և սովորեի հաղթահարել մարդկանց հանդեպ իմ վախը: Վաճառքից ստացված տոկոսներով ապրելն էլ դժվար էր, և անկեղծ ասեմ, ամեն օր ուզում էի թողնել գործը, բայց գիտեի, որ չեմ կարող: Ի վերջո, մի քանի տարի անց, ես հմտացա իմ գործում: Իրականում, Դրենդան և ես երկրով մեկ սփռված 5000 գրասենյակներից առաջինը հիմնել ենք այն ընկերության հետ, որտեղ աշխատել ենք:

Այդ ժամանակ էր, որ Աստված ասաց, որ ժամանակն է՝ եկեղեցի հիմնեմ: Այդ ժամանակ արդեն 40 տարեկան էի: 21 տարի պահանջվեց, որ Աստված նախապատրաստի ինձ այն տեսիլքի համար, որը ցույց էր տվել 19 տարեկանում: Երբ սկսեցի հովվական գործը, հասկացա, թե ինչու էր ինձ այդքան երկար նախապատրաստում: Հովվությունը բավականին բարդ գործ էր, քան պատկերացնում էի: Բայց քանի որ մարզվել էի մարդկանց հետ շփվելու հարցում, և բիզնեսում էլ սովորել էի, թե ինչպես վարվել մերժումների դեպքում, ես կարողացա հավատարիմ մնալ իմ կյանքի համար Աստծո կոչմանը: Ամեն հանձնարարություն չէ, որ 21 տարի կպահանջի, բայց նախապատրաստության սկզբունքը նույնն է:

Նախապատրաստության սկզբունքը դիտարկելիս՝ սիրում եմ վերաձևակերպել Մատթեոս 13.44-ը.

«Քո մեջ գտնվող Երկնքի արքայությունը քեզ տալիս է գիտություն կամ գաղտնի գիտությունից օգտվելու հնարավորություն, կամ տալիս է այն թաքնված բաները, որոնք միայն Աստված գիտի: Այս գիտությունը հասանելի է միայն Աստծո Հոգու միջոցով: Նրա միջոցով, Ով արդեն քո մեջ է: Երբ մարդը գտնում կամ լսում է այդ գաղտնի գիտությունը, որն իր համար գանձ է, որն իր համար պատասխան է, նա նորից թաքցնում է դա իր սրտում և մտքում: Իսկ հետո ուրախությունից գնում է, ամբողջ ուժով ձգտում է, ամենայն մանրամասնությամբ նախապատրաստվում է իրեն տրված այն ուղղորդման կամ կարգադրության համեմատ՝ ամուր բռնելով իր պատասխանը»:

Գլուխ 8

ԱՌԱՋԽԱՂԱՑՄԱՆ ԴԺՎԱՐ ԿԵՏԸ

Իմ ընկերը՝ հովիվ Փիթերը, նրա կինը՝ Բեվը, ովքեր Նոր Զելանդիայում մի հզոր եկեղեցու հովիվներ են, կարճաժամկետ այցով եկել էին Միացյալ Նահանգներ: Սուրբ Ծննդյան շրջանն էր, և մի քանի օր մնալու էինք Կոլորադո Սփրինգսի Բրոդմուր հյուրանոցում՝ հանգստանալու և վայելելու Սուրբ Ծննդյան տեսարանները: Եթե Բրոդմուրում չեք եղել, ասեմ, որ դա Ամերիկայի հրաշագեղ հանգստյան տներից մեկն է և նայում է ուղիղ Քարքարոտ լեռներին: Դրանք հայտնի են նաև Սուրբ Ծննդյան իրենց ձևավորումներով: Հովիվ Փիթերը զանգեց և տեղեկացրեց, որ այնտեղ են լինելու, և հարցրեց՝ կցանկանայի՞նք արդյոք միանալ նրանց: Մենք շատ ոգևորվեցինք, անմիջապես մեկնեցինք և երեք հրաշալի օր այնտեղ անցկացրինք:

Երբ հովիվ Փիթերի հետ եմ լինում, ժամանակի մեծ մասը խոսում ենք ծառայությունից, քանի որ նա իմ խորհրդի անդամներից մեկն է, և այս այցի նպատակն էլ հենց դա էր: Երկուսս էլ խոսում էինք հաջորդ տարվա մեր ծրագրերից և տարբեր գաղափարներ էինք առաջ քաշում: Ի վերջո, հրաժեշտի պահը եկավ, որը միշտ էլ տխուր է, քանի որ լավ ընկերներից բաժանվելը դժվար է: Դրենդան և ես սովորաբար տարին մեկ անգամ կամ երկու տարին մեկ այցելում ենք նրանց՝ Նոր Զելանդիա: Բայց այս անգամ

ես արդեն այնքան զբաղված էի, և այցի համար իմ ծրագրերում տեղ չէր մնացել:

Այսպիսով, մենք եկանք տուն մեծ սպասումներով դիմավորելու Ամանորը: Զարմանալի էր, բայց հունվարի 9-ին ես երազ տեսա այն մասին, որ հովիվ Փիթերը փետրվարին ինձ հրավիրելու է իր եկեղեցում քարոզելու: Հիշում եմ, որ անդադար մտածում էի, որ խիստ անսովոր մի բան էր, քանի որ ես նրա հետ վերջերս էի հանդիպել, և ինձ ոչինչ չէր ասել: Մի քանի շաբաթից արդեն փետրվարն էր: Երբ խոհանոցում պատրաստվում էինք նախաճաշել, Դրենդային ասացի, թե ինչ էր ասել Տերն ինձ այդ գիշեր:

Համակարգիչս դրված էր խոհանոցի սեղանին, և ես անփութորեն միացրի այն: Այնտեղ նստած սուրճ էի խմում և նկատեցի, որ հովիվ Փիթերից մի հաղորդագրություն է եկել: Երբ բացեցի նամակը, զարմացա. հովիվ Փիթերը հրավիրում էր ինձ քարոզելու իր տարեկան ֆինանսական համաժողովին, որը պետք է տեղի ունենար երեք շաբաթից: Անշուշտ զարմացա, բայց քանի որ երազումս արդեն տեսել էի, անակնկալի չեկա: Արագորեն աչքի անցկացրի այդ օրերի իմ օրակարգը՝ տեսնելու համար՝ հնարավո՞ր է, թե՞ ոչ, քանի որ այդ ամիս ծրագրված շատ ճամփորդություններ ունեի գրեթե նույն ժամանակահատվածում, որ Փիթերն էր հրավիրում: Դրենդան և ես արդեն իսկ ծրագրել էինք թռչել Բուենոս Այրես՝ Արգենտինա, ապա մի քանի օր հետո պետք է լինեինք Օքլենդում: Միակ հնարավոր տարբերակը Բուենոս Այրեսից անմիջապես Սիդնեյ՝ Ավստրալիա թռչելն էր, իսկ հետո Օքլենդ՝ Նոր Զելանդիա: Ես երբեք այդպիսի ճամփորդություն չէի ծրագրի, բայց քանի որ Տերը նախապես հայտնել էր, գիտեի, որ պետք է գնանք:

Արգենտինայի մեր ճամփորդությունը կորպորատիվ այց էր, որի հովանավորը վաճառքով զբաղվող այն գործակալություններից մեկն էր, որի հետ մեր ընկերությունը համագործակցում է: Դա լավ ճամփորդություն էր և լավ առիթ՝ շփվելու այն ընկերների հետ, որոնց սովորաբար տարին մեկ ես հանդիպում: Այդ ժամանակ

«ՈՎՔԵՐ ԱՍՏԾՈ ՀՈԳՈՎ ԵՆ ՎԱՐՎՈՒՄ, ՆՐԱՆՔ ԱՍՏԾՈ ՈՐԴԻՆԵՐ ԵՆ»:

– ՀՌՈՄԵԱՑԻՆԵՐԻ 8.14

Արգենտինան բավականին լուրջ ֆինանսական խնդիրներ ուներ, և քաղաքում միտինգներ էին ընթանում, բայց ընդհանուր առմամբ դա լավ ճամփորդություն էր: Ես երբեք այնտեղ չէի եղել: Սիդնեյի թռիչքը բավականին երկար էր՝ գրեթե 16 ժամ օդում էինք: Դա մեր ամենաերկար թռիչքն էր: Մենք պետք է անցնեինք հարավային բևեռի վրայով, և ես ուրախ էի վերևից տեսնելու երկրագնդի այդ մասը:

Թռիչքի ժամանակ անդադար նայում էի պատուհանից, բայց ներքևում սառույցից ու ձյունից բացի ուրիշ բան չկար: Եվ հենց այդ ժամանակ հանկարծ գլխի ընկա, որ մենք արգենտինական ավիաուղիներով ենք թռչում, որը նույնպես ֆինանսական խնդիրներ ուներ ֆինանսական ճգնաժամում գտնվող այդ երկրում: Հանկարծ մտքովս անցավ, որ եթե այս ավիաընկերությունն իր օդանավերի տեխնիկական սպասարկման վրա խնայողություններ արած լինի, և մենք ստիպված լինենք վայրէջք կատարել աշխարհի այդ մասում, լավ բան չի ստացվի: Բայց գիտեի, որ շատ ապահով ձեռքերում եմ, քանի որ Տերն էր առաջնորդել ինձ մեկնելու Նոր Զելանդիա:

Սիդնեյ ժամանելուց հետո մենք զանգեցինք հովիվ Փիթերին և Բեվին ու ցնցվեցինք այն լուրից, որ հովիվ Փիթերը սրտի կաթված է ստացել և գտնվում է հիվանդանոցում: Նա ընդհանրապես ի վիճակի չէր լինելու քարոզել երկու օր տևողությամբ այդ մեծ ֆինանսական համաժողովին և խնդրեց ինձ ուսուցանել ամբողջ համաժողովի ընթացքում: Հիմա հասկացա, թե ինչու էր Տերն առաջնորդել ինձ Նոր Զելանդիա: Ես ապշել էի, թե ինչպես էր Սուրբ Հոգին քայլ առ քայլ ուղղորդում մեզ: Սա հիշեցնում է Հռոմեացիների 8.14ը.

> *«Ովքեր Աստծո Հոգով են վարվում, նրանք Աստծո որդիներ են» (Հռոմեացիների 8.14):*

Մենք դարձյալ խոսում ենք ուղղորդող ձայնը, Սուրբ Հոգուց տրված գաղափարը և հասկացողությունները լսելու կարողության մասին: Իմ հաջորդ դասը նկարագրելու համար աստվածաշնչյան լավագույն օրինակը Դանիելի պատմությունն է: Այս դասը կսովորեցնի, թե ինչպես լսել Սուրբ Հոգուն, Ով տալիս է ձեր խնդիրների պատասխանները: Կարդանք այս պատմությունը՝ Դանիել 2.1-6.

«Եվ Նաբուգոդոնոսորի թագավորության երկրորդ տարում Նաբուգոդոնոսորը երազներ տեսավ, և նրա միտքը խռովվեց, և չէր կարողանում քնել: Ուստի թագավորը հավաքեց մոգերին, հմայողներին, կախարդներին ու աստղագետներին, որ պատմեն իրեն, թե ինչ երազներ է տեսել: Երբ նրանք եկան ու կանգնեցին թագավորի առջև, թագավորը նրանց ասաց. «Ես մի երազ տեսա, որն անհանգստացնում է ինձ, և ուզում եմ իմանալ, թե ինչ է այն նշանակում»:

Եվ աստղագետները թագավորին արամեերենով պատասխանեցին. «Թագավո՛ր, հավիտյան կա՛ց: Պատմի՛ր քո երազը քո ծառաներին, և մենք կտանք մեկնությունը»:

Թագավորը պատասխանեց աստղագետներին. «Ես այսպես եմ որոշել. եթե ինձ չպատմեք իմ երազը և չտաք մեկնությունը, ես ձեզ կտոր-կտոր անել կտամ, և ձեր տները աղբանոց պիտի դառնան: Բայց եթե երազը պատմեք և բացատրեք այն, ինձնից պարգևներ, նվերներ ու մեծ պատիվ կստանաք: Ուրեմն, պատմե՛ք ինձ երազը ու տվե՛ք մեկնությունը»»:

– Դանիել 2.1-6

«Աստղագետները պատասխանեցին թագավորին. «Երկրի վրա մարդ չկա, որ կարողանա թագավորի ուզածն

անել: Ոչ մի թագավոր՝ մեծ և զորավոր սրա նման որևէ բան չի պահանջել ոչ մի մոգից, հմայողից և աստղագետից: Թագավորի պահանջածը խիստ դժվար է: Եվ ոչ ոք չի կարող այն հայտնել թագավորին, բացի աստվածներից, իսկ նրանք էլ մարդկանց մեջ չեն բնակվում»:

Սա բարկացրեց ու բորբոքեց թագավորին, այնպես որ նա հրամայեց կոտորել Բաբելոնի բոլոր իմաստուններին: Եվ իմաստուն մարդկանց սպանելու հրամանը դուրս եկավ, և իմաստունները կոտորվում էին: Եվ մարդկանց ուղարկեցին Դանիելին և նրա ընկերներին փնտրելու, որ սպանեն»:

– Դանիել 2.10-13

«Հետո Դանիելը վերադարձավ տուն և եղելությունը իր ընկերներին՝ Անանիային, Միսայելին և Ազարիային պատմեց: Նա խնդրեց նրանց, որ ողորմություն խնդրեն Երկնքի Աստծուց այս գաղտնիքի համար, որպեսզի ինքը և իր ընկերները Բաբելոնի մնացած իմաստունների հետ չսպանվեն: Գիշերը տեսիլքում Դանիելին հայտնվեց այդ գաղտնիքը: Եվ Դանիելը օրհնեց Երկնքի Աստծուն և ասաց. «Օրհնյա՛լ լինի Աստծո անունը հավիտենից մինչև հավիտյան, իմաստությունը և զորությունը Նրանն է: Նա է ժամանակները և եղանակները փոխողը, Նա է թագավորներ դնողը և իջեցնողը: Նա է տալիս իմաստություն իմաստուններին, և գիտություն՝ խորաթափանցներին: Նա հայտնում է խորը և ծածուկ բաները, Նա գիտի, թե խավարում ինչ կա, և լույսը Նրա հետ է բնակվում»»:

– Դանիել 2.17-22

Դանիելը կանգնած է կյանքի և մահվան ընտրության առջև՝ վտանգավոր մի կետում: Բայց քո առաջխաղացման գլխավոր բանալին հենց այստեղ է: Աստված այն օգտագործեց Դանիելին առաջ տանելու և ոչ թե ցած իջեցնելու համար: Սուրբ Հոգու

գաղտնի գիտության միջոցով Դանիելը կարողանում է Նաբուգոդոնոսոր թագավորին հայտնել երազը և մեկնությունը: Թագավորը ապշում է, քանի որ հաջորդ խոսքում կարդում ենք.

> *««Այդ ժամանակ Նաբուգոդոնոսոր թագավորը ընկավ իր երեսի վրա Դանիելի առջև և պատվեց նրան և ընծաներ ու անուշահոտ բաներ հրամայեց, որ մատուցեն նրան: Թագավորը Դանիելին ասաց. «Հիրավի, որ ձեր Աստվածն է աստվածների Աստվածը և թագավորների Տերը և գաղտնիքներ հայտնողը, որովհետև դու կարողացար հայտնել այս գաղտնիքը»:*
>
> ***<u>Այդ ժամանակ թագավորը բարձր դիրք տվեց Դանիելին և շատ մեծ պարգևներ տվեց և նրան իշխան դրեց Բաբելոնի ամբողջ գավառի վրա և բոլոր իմաստունների վերակացու կարգեց նրան</u>**: Եվ դեռ ավելին, Դանիելի խնդրանքով թագավորը Սեդրաքին, Միսաքին և Աբեդնագովին նշանակեց Բաբելոնի գավառը կառավարողներ, մինչ Դանիելն անձամբ մնաց թագավորական պալատում»:*
>
> – Դանիել 2.46-49

Ինչ եղավ, երբ Դանիելը կարողացավ լսել Աստծո ձայնը. առաջխաղացում և հարստություն:

Աստվածաշնչյան մեկ այլ պատմության մեջ տեսնում ենք նույն արդյունքը: Դա Հովսեփի պատմությունն է: Նմանատիպ իրավիճակի առջև էլ կանգնած էր Հովսեփը: Եվ նրան առիթ է ընձեռվում մեկնելու Փարավոնի երազը: Երազը հաջող մեկնելուց, այնուհետև վերահաս երաշտից Եգիպտոսի փրկության համար գործնական ծրագիր տալուց հետո, Ծննդոց 41.39,40-ում կարդում ենք Փարավոնի պատասխանը.

> *«Եվ Փարավոնն ասաց Հովսեփին. «Քանի որ Աստված այս ամենը քեզ հայտնեց, քեզ պես խորաթափանց և*

իմաստուն չկա: Դու իմ տան վրա կհսկես, իմ ամբողջ ժողովուրդը քո հրամաններին կհնազանդվի. ես միայն աթոռով քեզնից մեծ կլինեմ»»:

– Ծննդոց 41.39,40

Երկու պատմություններում էլ սկզբում հիասթափությունը կարծես անխուսափելի լիներ, բայց արդյունքում երկուսն էլ բարձրացան և մեծ ունեցվածք ձեռք բերեցին: Կարճ ասած, աշխարհը մեծ գումար է վճարում այն մարդկանց, ովքեր մեծ խնդիրներ են լուծում: Ձեր մեջ բնակվող Սուրբ Հոգին սիրում է ձեզ դնել մեծ խնդիրների մեջ: Մի՛ վախեցեք, երբ նման բան է պատահում, այլ փառաբանե՛ք Տիրոջը, քանի որ Նա կօգնի ձեզ, ինչպես որ օգնեց Դանիելին և Հովսեփին: Ես միշտ ասում եմ՝ Աստված ստանում է ամբողջ փառքը, իսկ ես ստանում եմ ամբողջ վճարման չեկը: Ինձ դուր է գալիս, թե ինչ է ասում Դանիելը Տիրոջ մասին. «**Նա հայտնում է խորը և ծածուկ բաները, Նա գիտի, թե ինչ կա խավարում, և լույսը Նրա հետ է բնակվում»**: Դանիելն ասում է, որ լույսը բնակվում է Նրա հետ: Ինչպես գիշերվա ամենամթին ժամին քայլելիս, երբ լույս ես վառում, տեսնում ես, թե ուր ես գնում: Լույսը հաղթում է վախին, և իմանում ես, թե որտեղ ոտքդ դնես: Հետևյալ խոսքում Պողոսն ասում է, որ Աստված խոսում է և օգնում է մեզ, երբ ինչ-որ խնդրի մեջ ենք:

*«Դուք գիտեք, որ երբ հեթանոս էիք, ձեզ վրա ինչ-որ կերպով ազդում էին և մոլորեցնելով առաջնորդում էին **համր** կուռքերի մոտ»* (Ա Կորնթացիների 12.2):

Պողոսն ասում է, որ կուռքերը չեն խոսում, իսկ Աստված խոսում է:

Գուցե ձեզ հետաքրքրի, թե ինչու եմ այս գլուխն անվանել «Առաջխաղացման դժվար կետը»: Որովհետև դժվար կետում է, որ քո մեջ բնակվող Սուրբ Հոգին ունի պատասխանները: Դժ-

վար կետն է, որ կատարյալ հնարավորություն է տալիս լուծումը գտնելու: Դժվար կետը լավագույն դիրքն է հաջորդ առաջխաղացման համար: Ցավոք, շատ հավատացյալներ թաքնվում են դժվար իրավիճակներից: Շատերին թվում է, որ եթե հայտնվեն դժվար իրավիճակում, ուրեմն կորցրել են Աստծուն:

Հիշում եմ, երբ առաջին անգամ սկսեցինք մեր հեռուստահաղորդումները: Այդ ժամանակ ամսական վարձավճարը կազմում էր 9.000 դոլար: Ինձ թվում էր, որ դա ահռելի գումար է, բայց հետո վարձավճարները հասան ամսական 20.000 դոլարի, ապա՝ 50.000 դոլարի: Մի օր, երբ բոլորս աղոթում էինք, Էմին՝ դուստրս, սկսեց խոսել մարգարեական պարգևով.

> *«Հունձքը շատ մեծ է ձեզ համար: Ես ձեզ ձգում-լայնացնում եմ: Միայն Իմ Հոգով կարող եք հասկանալ, թե ինչ է կատարվելու: Արդյո՞ք կարող եք մի կողմ քաշվել ու թույլ տալ, որ Ես առաջնորդեմ ձեզ դժվար իրավիճակներով, որոնք վեր են ձեր հասկացողությունից, և առաջնորդեմ ձեզ անհնարինի միջով»:*

Մինչ կպատմեմ իմ պատմությունը, կարո՞ղ եք ասել՝ ինչպես եք հասկանում «ԱՌԱՋԽԱՂԱՑՈՒՄ» երևույթը: Ես ուրախ եմ, որ Աստված ինձ ընտրության հնարավորություն էր տվել: Նա հարցնում էր՝ արդյո՞ք պատրաստ եմ Իր հետ ճանապարհ անցնել: Նա ուզում էր ստանալ իմ համաձայնությունն ու պատրաստակամությունը: Համոզված եմ, եթե ես մերժեի, Նա կգնար մեկ ուրիշի մոտ: Բայց ավելի լավ էր, որ առաջխաղացումը ես ունենայի, այնպես չէ՞:

Եվ ասացի. «Այո՛, Տե՛ր, գիտես, որ կանեմ»: Մի քանի շաբաթ անց «Դեյսթար» ցանցը մեզ ամենօրյա եթերաժամ առաջարկեց, իսկ մինչ այդ մենք շաբաթը մեկ անգամ էինք եթեր դուրս գալիս: Այդ առաջարկն ընդունելու դեպքում մեր հեռուստատեսային վարձավճարները հասնելու էին ամսական 200.000 դոլարի:

Բայց այդ մարգարեական խոսքի վրա հիմնվելով և Սուրբ Հոգու ներքին առաջնորդությանը վստահելով՝ ես համաձայնեցի: Բոլորն ասում էին, որ մի քանի ամսից չեմ կարողանալու եթերաժամի գումարները վճարել: Եվ հենց այդպես էլ եղավ, բայց գուցե մի փոքր ավելի դաժան, քան պատկերացնում էինք: Հինգ ամսում մեր հեռուստաեթերի վարձավճարներից 500.000 դոլար չէր վճարվել: Իրականում, մեր եթերաժամանակը գնողը մի էլեկտրոնային նամակ ուղարկեց, ասելով, որ իր իրավաբանը փոքր-ինչ անհանգստանում է վճարումների ուշացման համար:

Ես սկսեցի պայքարել Աստծո հետ, քանի որ իմ հաղորդումը կոչվում էր *«Ֆինանսների կարգավորում»:* Փոքր-ինչ հուսալքվել էի և Դրենդային ասացի, որ գուցե հեռուստատեսության ծախսերը մի փոքր կրճատենք: Բայց նա պատասխանեց. «Ինչ ասաց Աստված: Նա ասաց, որ կվճարի դրա համար, այնպես չէ՞»: Մի քանի օր շարունակ նա միայն դա էր կրկնում, երբ ուզում էի խոսել դրա մասին: Մենք աղոթում էինք, բայց որևէ պատասխան չունեինք, սակայն ես Աստծո խաղաղությունն էի զգում: Այդ շաբաթ մի երազ տեսա՝ բանկային չեկերի կապոցներ: Բայց այս երազի տարօրինակ կողմն այն էր, որ ես ոչ միայն տեսա չեկերը, այլև դրանց վրա գրված գումարները և բանկային չեկ դուրս գրողի անունը: Երբ արթնացա, հասկացա, որ հեռուստատեսության վարձավճարները վճարված են, և խաղաղվեցի: Եվ հենց այդ շաբաթվա հանգստյան օրերին 500.000 դոլարն ունեցա այնպես, ինչպես երազում էի տեսել. այն գումարները և անունը, որ տեսել էի, նույնությամբ գրված էին չեկերի վրա:

Տեսնո՞ւմ եք, դժվար իրավիճակները վատ բան չեն: Բարեկա՛մս, դրանք առաջխաղացման համար պարարտ հող են: Մարդիկ ասում են, որ դժվարանում են անբարենպաստ իրավիճակներում քայլ անել, քանի որ վախենում են սխալվելուց: Բայց Սուրբ Հոգին կարող է զգուշացնել ձեզ խուսափել հնարավոր սխալից, եթե լսեք Նրան:

ԴՈՒՔ ԿԱՐՈՂ ԵՔ ՎՍՏԱՀԵԼ ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒՆ, ՈՐ ՕԳՆԻ ԵՎ ԱՌԱՋՆՈՐԴԻ ՁԵԶ ԲՈԼՈՐ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ:

Հիշում եմ, երբ մի քանի տարի առաջ անշարժ գույքի գործակալություն էի աշխատեցնում, հաճախորդներից մեկը ցանկանում էր իր տան գրավադրմամբ վարկ ստանալ և այդ գումարը ներդնել մի ընկերության մեջ: Այդ ամենը ինձ դուր չէր գալիս: Այսօրվա պես հիշում եմ, որ բարձրանում էի մեր գրասենյակի աստիճաններով, և գործակալներիցս մեկն ասաց ինձ այդ մասին: Ես ասացի նրան. «Դու կարող ես կնքել գործարքը, բայց հաճախորդը պետք է մի նամակ ստորագրի, ու դա անպայման մտնի վարկային փաթեթի մեջ: Այդ նամակում պետք է ասվի, որ մենք ներդրումային ընկերության մաս չենք, այլ պարզապես ձևակերպում ենք վարկը հաճախորդի խնդրանքով»: Հետո նշեցինք, որ որևէ պատասխանատվություն չենք կրում նշված ներդրումային գործարքի առնչությամբ, նույնպես և չենք առաջարկում, որ հաճախորդը այդ ընկերության մեջ ներդրում անի: Եվ ի՞նչ եղավ: Վեց ամիս անց ամեն բան ձախողվեց: Ներդրումային ընկերությունը կորցրեց հաճախորդի գումարները: Դատական գործ հարուցվեց վերջինիս, ինչպես նաև իմ ընկերության նկատմամբ: Սակայն երբ նրանց իրավաբանը տեսավ այդ նամակը, որը հաճախորդը ստորագրել էր մեր պնդմամբ, մենք հանվեցինք դատական գործից:

Սուրբ Հոգու առաջնորդությամբ էր, որ այդ օրը աստիճանների վրա իմ գործակալին ասացի, որ այդ նամակը ավարտական փաթեթի մեջ մտցնի: Դուք կարող եք վստահել Սուրբ Հոգուն, որ օգնի և առաջնորդի ձեզ բոլոր իրավիճակներում: Ինչպես Հիսուսն է ասում. «Մի՛ վախեցեք»:

Ես այս պատմությունը պատմել եմ նաև իմ նախորդ գրքերից մեկում, բայց արժե այս քննարկման ժամանակ կրկին անդրադառնալ: Մի օր, ընտանիքով մեկնում էինք եռօրյա հանգստի:

Բոլորն արդեն մեր փոքրիկ ավտոբուսի մեջ էին, և ես գնացի շարժիչը միացնելու: Հանկարծ Սուրբ Հոգին ասաց, որ մեքենան տեղափոխեմ: Մեր ավտոբուսի կողքին կանգնած էր մեր մեքենաներից մեկ ուրիշը: Եվ Սուրբ Հոգին ասաց, որ մեքենան տեղափոխեմ խոտերի վրա: Տարօրինակ էր: Ես մտածում էի. «Տեսնես ինչո՞ւ է Սուրբ Հոգին ասում, որ մեքենան փողոցից տեղափոխեմ բակ՝ խոտերի վրա»: Նույնիսկ գաղափար չունեի, բայց ներգործությունը շատ ուժեղ էր: Դրենդային ասացի, թե ինչ եմ պատրաստվում անել: Դուրս եկա մեքենայից, փողոցի հատվածից այն բերեցի բակ՝ խոտերի վրա: Եվ այդ մասին չմտածեցի մինչև վերադառնալը: Կիրակի երեկոյան վերադարձանք տուն: Եվ գիտե՞ք ինչ. ճանապարհի վրա, հենց մեքենայի կանգնած տեղում մի հսկայական թխկի էր ընկել, բայց խոտերի վրա կանգնած մեքենային ոչինչ չէր եղել, քանի որ ծառը դրան չէր հասել: Եթե մեքենան այնտեղ կանգնած լիներ, հաստատ հողին էր հավասարեցվելու:

Դրենդան և ես, անշուշտ, վառ և վատ օրինակ էինք, թե ինչ չի կարելի անել ֆինանսների հետ: Բայց մեզ ընդամենը որոշ մարտավարություն և գաղտնի իմաստություն էր պետք այդ իրավիճակից դուրս գալու համար: Հիմա ես պետք է ժպտամ, քանի որ մեր հեռուստատեսային հաղորդումը, որը դիտում են աշխարհով մեկ, կոչվում է *«Ֆինանսների կարգավորում»:*

Բարեկա՛մս, այսօր քո ճակատագիրը քո ձեռքերում է:

> *«Որոնց փկարությունները զորության վերածվեցին, ովքեր պատերազմի մեջ զորավոր եղան և օտարների բանակները փախուստի մատնեցին»* (Եբրայեցիների 11.34բ):

Բարդ և անհնարին տեղերը բոլորովին էլ բարդ և անհնարին չեն, երբ դու գիտես պատասխանը:

Գլուխ 9

ՀԱՆԴԱՐՏ, ՄԵՂՄ ՁԱՅՆԸ

Երբ սկսում եմ սովորեցնել Սուրբ Հոգու ձայնը լսելու մասին, լինում են մարդիկ, ովքեր ասում են, որ երբեք Աստծո ձայնը չեն լսել: Բայց ես միշտ ասում եմ. «Դուք լսել եք Աստծո ձայնը»: Եթե ձեզ նույնպես թվում է, որ երբեք Աստծո ձայնը չեք լսել, ուրեմն կարդանք Գ Թագավորաց 19.11,12 խոսքերը:

«Եվ Տերն ասաց. «Դուրս եկ և կանգնիր սարի վրա՝ Տիրոջ ներկայության մեջ, որովհետև Տերը անցնելու է»:

Եվ մի մեծ և հզոր քամի պատռեց սարերը և կոտրատեց ապառաժները Տիրոջ առջև, բայց Տերը քամու մեջ չէր: Եվ քամուց հետո երկրաշարժ եղավ, բայց Տերը երկրաշարժի մեջ չէր: Եվ երկրաշարժից հետո կրակ եղավ, բայց Տերը կրակի մեջ չէր: Եվ կրակից հետո մի մեղմ շշնջոց եղավ»:

– Գ Թագավորաց 19.11,12

Թեև ես Սուրբ Հոգու ձայնը լսել եմ ուժգնության տարբեր աստիճաններով, սակայն Նրա ամենաբնական ձայնը մեղմ շշնջոցն է: Դա մեղմ ու հանդարտ մի ձայն է: Ինչպես արդեն ասել եմ այս գրքում, հիմնականում, Աստծո ձայնը նման է մի մտքի, որը յուրահատուկ երանգ ունի: Ինչպես որ կարողանում եք ամբոխի մեջ զանազանել ձեր երեխայի ձայնը, այնպես էլ կարող եք լավ

ճանաչել Սուրբ Հոգուն, որ երբ խոսի, անմիջապես ճանաչեք Նրա ձայնը: Բայց այս գլխում ցանկանում եմ խոսել Աստծո այն ձայնի մասին, որը բոլորը լսել են, բայց երբեք գլխի չեն ընկել:

Երբ սովորում էի Օրալ Ռոբերտսի համալսարանում, ես մի քանի աստվածաբանական դասընթացներ էի վերցրել, քանի որ իմ գիտական աստիճանը Հին կտակարանից պետք է ստանայի: Այնքան շատ տեղեկություն կար, որը նախկինում երբեք չէի սովորել: Քանի որ ավագ դպրոցում անընդհատ դասերից փախչել էի, ես դաս անելու սովորություն չունեի, դրա հետևանքով ինձ համար սաստիկ դժվար էր դասերը հասցնել, հատկապես քննական շաբաթներին: Մասնավորապես այս դասին ես պետք է կուրսային աշխատանք գրեի Հին կտակարանի որոշ թեմաներից, որոնցից այսօր գրեթե ոչինչ չեմ հիշում: Կուրսային աշխատանքներն ինձ սարսափեցնում էին: Իրականում քոլեջի ուսումնառության առաջին տարում ես գրեցի իմ առաջին կուրսային աշխատանքը, և երբ այն ետ ստացա, վրան կարմիր թանաքով մի մեծ F էր դրված (F-ը ամերիկյան համակարգում ամենացածր գնահատականն է, որը համապատասխանում է 2 գնահատականին) ու տակն էլ գրված էր. «Դու երբևէ ավագ դպրոց հաճախե՞լ ես»: Իմ անգլերենն ու քերականությունը այնքան սարսափելի էին, որ ուսուցիչս զարմացել էր, թե ինչպես եմ կարողացել Օրալ Ռոբերտսի համալսարան ընդունվել: Ինչ-որ մեկը պետք է օգներ ինձ անգլերենում, որպեսզի առաջին տարին ավարտեի:

Քննական շաբաթվա լարվածությանը զուգահեռ մոտենում էր մեկ այլ կուրսային աշխատանքի վերջնաժամկետը: Օ՜, որքան էի սարսափում այդ աշխատանքից: Ես պատրաստ էի նստել ու գրել այդ աշխատանքը, բայց ինձ երբեք չէին սովորեցրել, թե ինչպես պետք է կուրսային աշխատանք գրել: Ուստի, որոշ բաներ էի փնտրում, բառերը արտագրում էի մի փոքր փոփոխելով այնպես, որ ոչ ոք գլխի չընկնի, որ իմ աշխատանքը տարբեր աղբյուրներից եմ վերցրել: Սիրտս հանգիստ էր, քանի որ որևէ վատ բան արածիս մեջ չէի տեսնում, որովհետև այն, ինչ կարդում էի, հետո

ձևափոխում էի իմ բառերով: Բայց խնդիրն այն էր, որ ես չգիտեի ինչպես գրել:

Այս անգամ ընդհանրապես ժամանակ չունեի: Ընկերներիցս մեկն էլ, ով ապրում էր հենց իմ հարկում, ընտրել էր իմ առարկան, միայն թե տարբեր օրերի էինք դասի գնում: Ամբողջ խումբը պետք է գրեր նույն թեմայով, ուստի խնդրեցի ընկերոջս ցույց տալ, թե ինչպես է կազմել իր կուրսային աշխատանքը: Չգիտեմ՝ ինչու, հենց իր աշխատանքը ձեռքս առա, հասկացա, որ նրա նման լավ չեմ կարող գրել ու որոշեցի արտագրել: Գիտեմ, որ դուք հիմա զարմացած եք: Հիշեք, որ այդ ժամանակ ես մանուկ քրիստոնյա էի: Ամբողջ իր աշխատանքը չարտագրեցի, այլ՝ կեսը: Այդ քննական շաբաթվա ավարտին այդ աշխատանքը հանձնեցի դասախոսին ու հանգստացա, որ այլևս գրելու բան չունեմ: Բայց դրանից հետո ինչ-որ բան պատահեց, որն ինձ մի արժեքավոր դաս տվեց Աստծո ձայնը լսելու մասին:

Երբ այդ օրը պառկեցի քնելու, ոչ մի կերպ քունս չէր տանում: Խիղճս այնքան բարձր էր խոսում, որ չէի կարողանում քնել: Հասկացա, որ արածս սխալ էր, որ ես, նախ, գողություն էի արել, իսկ հետո էլ ստել էի: Նաև անհարգալից էի վարվել իմ ընկերոջ հանդեպ: Ես թշվառ վիճակում էի: Գիշերը 3:30-ին գնացի ընկերոջս սենյակ և արթնացրի՝ ասելով, թե ինչ եմ արել, և ներողություն խնդրեցի: Նա քնատ աչքերով նայեց ինձ և ասաց. «Գնա՛ քնիր, Գա՛րի»: Նա շուռ եկավ ու նորից քնեց:

Հաջորդ օրը մոտեցա իմ դասախոսին և խոստովանեցի արածս: Անշուշտ, նա ինձ պետք է F (2) գնահատեր, բայց ժպտալով ասաց, որ շնորհակալ է, որ տեղյակ պահեցի իրեն: Այնուհետև ասաց, որ քանի որ դիմել եմ իրեն, ինձ B կնշանակի (B-ն համապատասխանում է 4 գնահատականին 5 բալանի համակարգում) այդ տարվա համար: Ինչ հանգստություն, և որքան լավ էի զգում, քանի որ լռեցրել էի այդ մեղադրող ձայնը: Ես ազատ էի և խաղաղություն էի գտել:

Թույլ տվեք հարցնել. «Ինչպե՞ս իմ ընկերը կարողացավ շրջվել և նորից քնել, երբ իմ ներսը տակնուվրա էր լինում»: Ինչո՞ւ նա էլ ինձ նման մտատանջության մեջ չէր: Ինչո՞ւ ես չէի կարողանում քնել, և ինչո՞ւ էի այդքան թշվառ: Ամեն անգամ, երբ փորձում էի քնել, մի ձայն էր ինձ հետ խոսում: Այն դատապարտում էր ինձ. դա իմ խիղճն էր: Խիղճ բառն այսպես է սահմանվում. ճշտի և սխալի բնազդային իմացություն: Անգլերենում “Conscience” բառը, որը հայերենում «գիտակցություն, խիղճ» բառն է, նշանակում է իմանալ, ինչ-որ բանից գիտելիք ունենալ:

ԽԻՂՃՆ ԱՍՏԾՈ ՁԱՅՆՆ Է ԱՄԵՆ ՄԱՐԴՈՒ ՄԵՋ, ԱՐԱՐՉԻ ԴՐՈՇՄԸ ԵՎ ՆՐԱ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ՝ ԱՊՐԵԼՈՒ ԱՅՆ ԿՅԱՆՔԸ, ՈՐԻ ՀԱՄԱՐ ՍՏԵՂԾՎԵԼ ԵՆՔ:

Այն նման է մոմի, որի լույսը լուսավորում և բացահայտում է խավարը: Այն գրանցում է յուրաքանչյուր միտք, երբևէ արված ցանկացած արարք: Այն նման է դատարան բերված վկայի, ով ցուցմունք է տալիս այնպիսի բաների մասին, որոնք հիմնականում քողարկված են: Այն խոսում և հիշեցնում է քեզ անել ճիշտը և խուսափել սխալից: Խիղճը Աստծո ներքին ձայնն է յուրաքանչյուր անձի ներսում: Խիղճը մարդուն իր գործողությունների համար պատասխանատվության է կանչում: Ինչպես դատական սրահում, խիղճը յուրաքանչյուր մարդու հրավիրում է Աստծո առջև պատասխան տալու: Ինչպես վկային են կանչում ցուցմունք տալու, այնպես էլ մեր խիղճը խոսում է մեր փոխարեն (պաշտպանում է մեզ) կամ մեղադրում է մեզ (դատապարտում է):

«Մեդիքալ Էքսպրես» ամսագրում տպագրված մի ուսումնասիրություն փաստում է հետևյալը.

«Մարդու զարգացման ներկայիս տարածված կարծիքն այն է, որ մարդ-արարածն իր կյանքը սկսում է «բարոյապես մաքուր վիճակից», բայց նոր հետազոտությունները հակասում են այս

տեսանկյունին: Հետազոտողները պարզել են, որ վեց ամսեկան երեխան արդեն բարոյական դատողություն է անում: Այդ հետազոտողները կարծում են, որ միգուցե երբ ծնվում ենք, բարոյական կոդեքսն արդեն իսկ ամուր դաջված է լինում մեր ուղեղին»[3]:

> *«Եվ սրանով ենք ճանաչում, որ ճշմարտությանն ենք պատկանում, որ Նրա ներկայության մեջ ի ցույց ենք դնում մեր սրտերը, երբ որ մեր սիրտը մեղադրում է մեզ: Որովհետև Աստված մեր սրտից ավելի մեծ է, և Նա ամեն բան գիտի: Սիրելինե՛ր, եթե մեր սրտերը չմեղադրեն մեզ, համարձակություն ունենք Աստծո առջև, և ինչ որ խնդրենք, կստանանք Նրանից, որովհետև Նրա պատվիրանները պահում ենք, և անում ենք այն, ինչ հաճեցնում է Նրան»:*
>
> – Ա Հովհաննես 3.19-22

Խիղճն Աստծո ձայնն է ամեն մարդու մեջ, Արարչի դրոշմը և Նրա պայմանները՝ ապրելու այն կյանքը, որի համար ստեղծվել ենք: Ոչ ոք չի կարող փախչել իր խղճից: Ես միշտ զարմացել եմ, որ ինչ-որ մեկը մարդ է սպանում կամ բանկ է թալանում ու փախուստի դիմում, բայց հանկարծ հետո անձամբ ներկայանում է ոստիկանություն: Բայց հիմա գիտեմ, որ սրանից ավելի վատ տանջանք չկա, երբ խիղճդ քեզ մեղադրում է: Երկրորդ Կորնթացիների 1.12-ում Պողոսն ասում է, որ խիղճը վկայում է. այն խոսում է:

> *«Հիմա մեր պարծանքը սա է. մեր խիղճը վկայում է, որ մենք այս աշխարհում և հատկապես ձեզ հետ փոխհարաբերություններում սրբությամբ և անկեղծությամբ ենք վարվել, որոնք Աստծուց են: Եվ սա արել ենք ոչ թե աշխարհիկ իմաստությամբ, այլ Աստծո շնորհքով»:*
>
> Բ Կորնթացիների 1.12

Գուցե ասեք. «Իսկ ի՞նչ իրավունքով է խիղճը խոսում: Ինչո՞ւ իր

վկայությունը պետք է լսվի օրենքի հոգևոր դատարանում»: Քանի որ դա Աստծո ձայնն է: Պողոսը Հռոմեացիների 2.14,15-ում դարձյալ ասում է, որ խիղճը հաճախակի է մեզ հետ խոսում:

> *«Իսկապես, երբ հեթանոսները, ովքեր օրենք չունեն, բնությամբ օրենքի գործերն են անում, նրանք իրենք իրենց համար օրենք են, թեև օրենք չունեն, քանի որ ցույց են տալիս, որ օրենքի պահանջները իրենց սրտերի վրա է գրված: Նրանց խիղճն էլ է վկայում, իրենց մտքերն էլ են հանդիմանում իրենց, հիմա նույնիսկ պաշտպանում են իրենց»:*
>
> – Հռոմեացիների 2.14,15

Ամեն մեկը խիղճ ունի: Գուցե չհամաձայնեք: Գուցե ճանաչում եք այնպիսի մարդկանց, ովքեր կարծես որևէ զգացմունք չունեն: Բայց վստահեցնում եմ, նրանք այդպիսին չեն եղել: Եթե մարդը շարունակում է ընդդիմանալ իր խղճի ձայնին, այդ ձայնն ավելի ու ավելի կլռի:

> *«Այսպիսի վարդապետությունները գալիս են կեղծավոր ստախոսներից, որոնց խիղճը տաք երկաթով է խանձված» (Ա Տիմոթեոս 4.2):*

Պողոսն ասում է, որ այս մարդիկ իրենց խիղճը խանձել են, կամ այլևս ի վիճակի չեն զգալու կամ լսելու իրենց խղճի ձայնը՝ բթացնելով սրտերը այդ ձայնի նկատմամբ: Պատկերացրեք ձեր մաշկը: Եթե դուք այն տաք երկաթով խանձեք, այսինքն՝ վառեք, դուք ի վիճակի չեք լինի զգալու, մինչև որ նոր մաշկ ունենաք, և հին, չորացած վերքը անցնի: Նույնը վերաբերում է գիտակցությանը: Խիղճդ քեզ ոչինչ չի անում: Այն միայն խոսում է: Դու կարող ես անտեսել կամ հակառակվել դրան: Բայց Պողոսը զգուշացնում է, որ եթե անտեսես քո խղճի ձայնը, մեծ խնդիրների մեջ կարող ես ընկնել կամ նավաբեկության կենթարկես կյանքդ:

«Տիմոթե՛ոս, որդյա՛կս, կարգադրում եմ, որ քեզ վրա եղած բոլոր մարգարեությունները պահես, և դրանց հետևելով՝ պատերազմես բարի պատերազմը՝ ամուր բռնելով հավատքը և բարի խղճմտանքը: Ոմանք մերժեցին սրանք և իրենց կյանքերը ***նավաբեկության*** *ենթարկեցին»:*

– Ա Տիմոթեոս 1.18,19

Հիմնականում, այն մարդիկ, ովքեր խստացնում են իրենց սրտերը խղճի ձայնի նկատմամբ, կորցնում են իրենց կյանքերը ղեկավարելու կարողությունը: Նրանց կողմնացույցը խափանվում է: Նրանք չեն կողմնորոշվում, թե որ ուղղությամբ գնան: Պողոսն ասում է, որ մենք պետք է պահենք բարի խղճմտանքը, այսինքն՝ այն խիղճը, որը մաքուր է, որպեսզի վստահ լինենք, որ ճիշտ ուղղությամբ ենք գնում: Քանի որ մենք կարող ենք խստացնել մեր սրտերը և վնասել ճիշտն ու սխալը զանազանելու կարողությունը: Պողոսն ասում է, որ կարևոր է հետևել օրենքին և անել այն, ինչ ճիշտ է.

«Դրա համար էլ պետք է հնազանդվել իշխանություններին, ոչ միայն հնարավոր պատժի համար, այլ նաև խղճմտանքի համար» (Հռոմեացիների 13.5):

Եթե դուք օրենքին անհնազանդ լինեք, ձեր խղճմտանքը կմեղադրի ձեզ: Դրա համար էլ Պողոսն ասում է, որ հնազանդվենք օրենքին, որ անենք այն, ինչ ճիշտ է, որպեսզի մեր խիղճը նուրբ ու զգայուն մնա և կարողանա գործել այնպես, ինչպես որ Աստված է նախատեսել, որպեսզի այն պահպանի մեզ վտանգից:

Խղճի հետ կապված մեկ այլ անմիտ թվացող պատմություն կա, որ կնկարագրի այս սկզբունքը: Այս դեպքը պատահել է այն ժամանակ, երբ ես դեռ հովիվ չէի: Այս պատմությունը լսելով՝ կհասկանաք, թե ինչու Աստված ինձ թույլ չէր տալիս հովվություն անել: Այս պատմության գլխավոր հերոսը իմ մեքենան էր՝

«Պեժո 505 Կուպե» մակնիշի, որը շատ էի սիրում: Մի օր, երբ մեքենայով կանգնած էի լուսացույցի տակ, ինչ-որ մեկը հարվածեց մեքենայի ետնամասին: Բեռնախցիկը կոտրվեց, մեքենայի ետնամասը ծռվեց, նաև վնասվեցին մեքենայի տարբեր մասեր: Այդ տղայի ապահովագրության գործակալը եկավ մեր տուն՝ մեր մեքենան տեսնելու և փոխհատուցման արժեքն ասելու:

Մինչև շարունակելը, թե ինչ պատահեց նրա գալուց հետո, պետք է պատմեմ, որ այս վթարից մի քանի օր առաջ, մեքենայի խլացուցիչն ընկել էր, իսկ գործակալի գալուց մի քանի շաբաթ առաջ առաստաղամուտի շարժիչն էր խափանվել: Երբ ապահովագրական գործակալն եկավ մեքենան զննելու, հարցրեց, թե արդյո՞ք այն ձայնախլացուցիչը, որը դրված էր մեքենայի կողքին (ես դիտավորյալ այդտեղ էի դրել, որ նա տեսներ), նույնպես վթարի հետևանքով էր պոկվել: Մի փոքր մեղքի խայթոց զգալով՝ ասացի. «Այո՛, պարո՛ն»: Նա հարցրեց՝ արդյո՞ք արևային ապակու շարժիչն էլ վթարի հետևանքով չի աշխատում: Պատասխանս կրկին «այո» էր:

Ներսումս խիղճս աղաղակում էր. «Գա՛րի, այդ ի՞նչ ես անում: Դու ստում ես»: Հիմա տեսեք, թե ինչպես ինքս ինձ խաբեցի: Ես ստիպում էի ինձ անտեսել այդ ձայնը և վստահ էի, որ այն կհեռանա: Այսօր հավատս չի գալիս, որ այդ ժամանակ այդպես էի մտածում: Մի՞թե ուրախալի չէ, որ այդ ժամանակ դեռ հովվություն չէի անում: Բայց Աստված էր հովվություն անում:

Ինչևէ, մեքենան տարան արհեստանոց և մեկ շաբաթ անց ինձ կանչեցին այն վերցնելու: Երբ արհեստանոցում տեսա մեքենան, շատ ուրախացա: Այն կատարյալ վիճակում էր: Տուն վերադառնալիս այնքան ուրախ էի, քանի որ մեքենան նորոգվել էր: Մեկ-երկու շաբաթ անց որոշեցի ճաշել Դրենդայի և երեխաների հետ: Իմ գրասենյակը, որը վարձել էի ֆինանսական ընկերության համար, մեր տնից ընդամենը հինգ կիլոմետր էր հեռու: Ես մտա դեպի բակ տանող փողոցը և կանգնեցրի մեքենան մեր

առջևի դռան մոտ, տուն մտա և մի լավ ճաշեցինք:

Երբ արդեն ուզում էի գնալ, դուրս եկա տան մուտքից և տեսա, որ մեքենան այնտեղ չէ: Շփոթվեցի: Որտեղ էր այն: Շուրջս նայեցի ու տեսա այն: Մեր տունը բլրի գագաթին էր, իսկ ես հավանաբար մոռացել էի քաշել ձեռքի արգելակը: Թեև երբեք նման բան չէի արել, բայց, ամենայն հավանականությամբ, այդ անգամ արել էի, քանի որ մեքենան ետ-ետ էր գլորվել փողոցով և հարվածել ծառին: Երբ հասա մեքենային, ապշեցի: Բեռնախցիկը սեղմված էր, և մեքենան գրեթե նույն չափով էր վնասվել, ինչ այն ժամանակ, երբ հարվածել էին: Ետնամասը կրկին ծռվել էր, խլացուցիչն ընկել էր, և առաստաղամուտի շարժիչը կրկին չէր աշխատում: Մեքենան ճիշտ այն վիճակում էր, ինչ նախքան արհեստանոց տանելը:

Այնտեղ կանգնած հանկարծ հասկացա, թե ինչ է կատարվել, ու սկսեցի ծիծաղել. Աստված ինձ դաս էր տալիս, մի դաս, որ այս քարոզիչ տղան պետք է սովորեր նախքան մարդկանց առաջնորդելը: Ես այդպես էլ չնորոգեցի այդ մեքենան և որպես պահեստամաս վաճառեցի:

Մի պատմություն էլ եմ հիշում, երբ խիղճս գոռում էր, որ կանգ առնեմ: Ես դա կոչում եմ հեծանվային պատմություն:

Հուսով եմ, սա ինչ-որ կերպ օգնում է ձեզ: Գիտեմ, երբեք չէիք մտածի, որ ես կարող էի այդ աստիճան նվաստանալ, որ ընդունակ լինեի նման բաների: Ես ուրախ եմ որ փրկվել եմ, քանի որ այնպիսի զգացողություն ունեմ, որ եթե չփրկվեի, կյանքս լիովին այլ ընթացք կունենար:

Հեծանվի պատմությունը տեղի է ունեցել այս պատմությունից մի քանի տարի հետո: Այո՛, այդ ժամանակ նոր էի սկսել հովվել մեր նոր եկեղեցին: Շաբաթ օրը գնացել էի հորս տուն ու արդեն ուզում էի վերադառնալ: Ես մեր արծաթագույն «Դոջ Քարավանը» հետընթացով դուրս էի բերում դեպի գլխավոր երկկողմանի ճանապարհ: Հորս տունը փոքրիկ բլրակի ներքևում էր, և ներբա-

կային ճանապարհի երկու կողմում էլ նրա սեփականությունն էր: Ինչ-ինչ պատճառով ես չէի նկատել բլրակից ցած իջնող հեծանվորդին: Դանդաղ հետընթացով դուրս էի գալիս: Այդ ժամանակ նա իմ ետևում չէր, բայց նրա հեծանիվը բլրակի թեքության վրա թափ է հավաքում ու հենց այն ժամանակ, երբ ես արդեն պատրաստվում էի առաջ վարել, հանկարծ հայտնվում է մեքենայիս մոտ:

Ամբողջ ընթացքում ես նրան չէի տեսել, բայց հանկարծ մեքենայի կողային հատվածից ձայն լսեցի: Հայելիով ետ նայեցի, մեքենայի ետևում մի հեծանվորդ էր՝ ղեկը բաց թողած, երկու ձեռքով էլ մատ էր թափ տալիս ու բարձր հայհոյում: Ես հանկարծակիի եկա ու վրդովվեցի, որ այդ հեծանվորդը նման կերպ էր վարվում: Վստահ էի, որ հանգիստ կարող էր դանդաղեցնել արագությունը, քանի որ նա բլուրն ի վար էր իջնում ու տեսել էր, որ հետընթացով դուրս եմ գալիս: Եթե շատ ցանկանար, նույն արագությամբ կարող էր շրջանցել ինձ, բայց փոխարենը որոշել էր հասկացնել:

Ես ապշած էի, որ այդ տղայի մտքով կարող էր անցնել վիճել մեքենայի հետ: Մտածեցի, որ այս տաքարյուն երիտասարդին մեկը պետք է դաս տա: Ես դանդաղեցրի իմ ընթացքը ու սպասեցի, որ նա ավելի մոտենա մեքենային, ու կտրուկ արգելակեցի: Ինչ-որ բավարարվածություն զգացի՝ տեսնելով, թե ինչպես է նա խառնված ձեռքը գցում արգելակիչներին ու փորձում խուսափել, որ չհարվածի մեքենայիս ետնամասին: Այդ ամենից ավելի կատաղած՝ սկսեց այնպիսի հայհոյանքներ տալ, որ երբևէ չէի լսել:

Ես դանդաղորեն իջա այդ ճանապարհով և մեքենայի ետնամասը մտցրի մի ներբակային ճանապարհի մեջ այնպես, որ մեքենայի առջևի մասը նայեր ճանապարհին: Այն անկյունային դիրքից ուղղված էր դեպի հեծանվորդը, ով իջնում էր իմ ուղղությամբ: Երբ տեսավ, որ իրեն եմ սպասում, և իմ մեքենայով էլ իր վրա եմ նշան բռնել, հանկարծ լռեց: Կարծում եմ, ի վերջո հաս-

կացավ, որ հեծանվով է, և որ մեքենաները հեծանիվներից շատ ավելի մեծ են: Ես լուսամուտի ապակին իջեցրի ու սպասեցի, որ մոտենա: Երբ մոտեցավ ինձ, բղավեցի վրան, որ եթե մեկ անգամ էլ նրան տեսնեմ այդ ճանապարհին, մեքենայի տակ կգցեմ: Անմիջապես սեղմեցի գազի ոտնակը: Հենց այդ ժամանակ մեքենան 5 մետր հեռավորությամբ ուղղված էր ուղիղ հեծանվորդի վրա: Քիչ էր մնացել մեքենան հարվածեր հեծանվին, բայց ընդամենը վնասել էր: Այնպիսի զգացողություն էր, որ կարծես արդարությունն էի պաշտպանել: Մտածեցի. *«Հաստատ մի լավ դաս տվեցի սրան»,* բայց դա երկար չտևեց:

Հոգուս խորքից լսեցի Սուրբ Հոգու ուժեղ և խիստ ձայնը. «Գա՛րի, այդ ի՞նչ ես անում»: Անհնար է նկարագրել, թե ինչպես այս խոսքերն ազդեցին ինձ վրա: Հանկարծ հասկացա, որ կարող էի սպանել այդ մարդուն: Հայելիով ետ նայեցի. նա դեռ այնտեղ էր, շատ դանդաղ էր քայլում, գլուխը՝ կախ: Կա՛մ վիրավոր էր, կա՛մ էլ զարմացած, որ դեռ կենդանի է: Ես շարունակեցի ճանապարհս, բայց խիղճս ինձ հանգիստ չէր տալիս: Որպես նոր հովիվ, հասկանում էի, թե ինչ կարող էր պատահել: Արդեն պատկերացնում էի, թե ինչ էին գրելու թերթերը. ««Հավատքի կյանք» եկեղեցու հովիվը վրաերթի է ենթարկել հեծանվորդին վիճաբանության հետևանքով»: Սուրբ Հոգին հիշեցրեց, որ այդ համայնքում ինձ կանչել էր եկեղեցի հիմնելու հենց այդպիսի մարդկանց համար: Ինքս իմ արարքից ապշած էի և արցունքներով ապաշխարեցի Տիրոջ առջև:

Այսպիսով, համաձայնեք, որ իրականում Աստծո ձայնը լսել եք: Բայց պետք է այդ խղճի ձայնի հանդեպ միշտ զգայուն լինեք և թույլ չտաք, որ ձեր սիրտը խստանա, որպեսզի միշտ լսեք Աստծուն: Աստվածաշունչն ասում է, որ Իսրայելի մարդիկ խստացրին իրենց սրտերը Աստծո հանդեպ և այդպես էլ չկարողացան մտնել Խոստմունքի երկիր: Եբրայեցիների թղթի հեղինակը Նոր կտակարանի հավատացյալներին զգուշացնում է, որ չհետևենք նրանց օրինակին:

«Այսպիսով, ինչպես Սուրբ Հոգին է ասում. «Այսօր, եթե Նրա ձայնը լսեք, ձեր սրտերը մի՛ խստացրեք, ինչպես ձեր ըմբոստության ժամանակ՝ փորձության օրը անապատի մեջ»»:

– Եբրայեցիների 3.7,8

Երրորդ և չորրորդ գլուխներում այս զգուշացումը առնվազն երեք անգամ կրկնվում է: Ինչո՞ւ է սրա մասին զգուշացվում: Քանի որ Աստված ցանկանում է օրհնել ձեզ և ցանկանում է, որ դուք ունենաք այն ամենը, ինչի համար Հիսուսն արդեն վճարել է:

Երբ խոսում են խստասրտության մասին, հիշում եմ այն ժամանակները, երբ դեռ փոքր տղա էի, ու մի պոնի (կարճահասակ ձի) ունեինք: Նա իմ կյանքում հանդիպած ամենանենգ, միևնույն ժամանակ ամենախելացի կենդանին էր: Միայն ես էի կարողանում նրան հեծնել, կամ, ճիշտ կլինի ասել, միայն ես էի համարձակվում նրան հեծնել: Հիշում եմ, ընկերներիցս մեկը պնդում էր, որ շատ է սիրում ձիեր և կարող է ցանկացած ձիու հեծնել: Մի օր համառեց, որ ուզում է Թոնիին հեծնել (պոնիին այդպես էինք կանչում): Որոշ ժամանակ անց նրան հաջողվեց համոզել ինձ, որ թույլ տամ փորձի, ու Թոնիին թամբեցի: Այդ տղայի անունը Ջեքի էր: Երբեք չեմ մոռանա, թե ինչ պատահեց, երբ նա նստեց թամբին: Հենց որ Թոնիին հեծնեց, ձին տեղից պոկվեց: Առանց վայրկյան կանգ առնելու Թոնին շարժվեց դեպի լճակը, որը տնից հիսուն մետր հեռավորության վրա էր գտնվում: Ջեքին ամբողջ ուժով ձգում էր սանձը ու գոռում, որ Թոնին կանգնի, բայց Թոնին ոչ մի ուշադրություն չէր դարձ-

«ԱՅՍՊԻՍՈՎ, ԻՆՉՊԵՍ ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ Է ԱՍՈՒՄ. «ԱՅՍՕՐ, ԵԹԵ ՆՐԱ ՁԱՅՆԸ ԼՍԵՔ, ՁԵՐ ՍՐՏԵՐԸ ՄԻ՛ ԽՍՏԱՑՐԵՔ, ԻՆՉՊԵՍ ՁԵՐ ԸՄԲՈՍՏՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ՝ ՓՈՐՁՈՒԹՅԱՆ ՕՐԸ ԱՆԱՊԱՏԻ ՄԵՋ»»:

– ԵԲՐԱՅԵՑԻՆԵՐԻ 3.7,8

նում նրան: Փոխարենը, Թոնին ամբողջ ուժով սլանում էր դեպի լճակը, ու հանկարծ գամվեց տեղում ու գլուխն իջեցրեց դեպի ջուրը: Իհարկե, Ջեքին պոնիի գլխի վրայով մի պտույտ գործեց ու ընկավ լճակը: Թոնին շրջվեց ու սկսեց հանգիստ խոտ արածել, կարծես՝ ոչինչ էլ չէր պատահել:

Հասկանո՞ւմ եք, Թոնիի սանձերն այնքան էին ձգել, որ սանձի սայրն այլևս չէր ցավեցնում բերանը: Նրա բերանը կարծրացել ու անզգայացել էր, դրա համար էլ ոչ մի ուշադրություն չէր դարձնում դրան: Որպես ձի, Թոնին անպետքի մեկն էր, ու բացի ինձնից, ուրիշ ոչ մեկին չէր ենթարկվում: Իսկ ինչո՞ւ էր միայն ինձ լսում: Որովհետև խելացի էր: Չէ՞ որ ես էի նրան կերակրում: Հասկացել էր, որ եթե ուզում է այդ ախոռից մաքուր օդի դուրս գալ ու արածել այն կանաչ խոտը, որի համար խելքն իրենը չէր, ուրեմն պիտի թողներ, որ հեծնեի: Բայց աչքս վրան պիտի պահեի: Երբ հեծնում էի նրան, ու նա քայլում էր, գլուխը միշտ մի կողմի էր պահում, որ աչքի պոչով տեսներ ինձ: Նա սպասում էր, որ գլուխս հակառակ կողմ թեքեի: Այդ ժամանակ գլուխն ավելի ետ էր բերում ու ոտքս կծում էր: Ասեմ, որ ձիու կծածը շատ ցավոտ է, ու դրա համար աչքս միշտ վրան էի պահում: Բայց ինչ վերաբերում է օգուտ տալուն, նրանից օգուտ չկար:

Այսպիսով, եթե թույլ տանք, որ մեր սրտերը կարծրանան, մենք Աստծո համար անպիտան ենք դառնում, ինչպես որ այդ պոնին էր: Մի օր Թոնիին երկաթյա շղթայով կապեցինք դրսում: Երբ հայրս շրջվեց, որ տուն գնա, Թոնին վրա հասավ ու հետույքը կծեց: Հայրս այդ ժամանակ փրկված չէր և շատ բարկացկոտ էր: Ջրի դույլի կողքը մի քարաղի կտոր կար, հայրս վերցրեց ու ամբողջ ուժով շպրտեց Թոնիի վրա: Թոնիին ոչինչ չպատահեց: Իսկ ես այդ ամենից հետո Թոնիին կվստահեի՞: Երբե՛ք:

Այդպես էլ մարդկանց կյանքերում է: Նրանց թվում է, թե ոչինչ չեն անում. պարզապես չեն հնազանդվում, այս անգամ էլ իրենց խղճին հակառակ են գնում՝ չհասկանալով, որ ամեն անգամ այդ-

պես վարվելով՝ հյուսվածքները սպիանում են: Մի օր նրանք դառնում են Թոնիի նման և ո՛չ ցավ են զգում, ո՛չ էլ խղճի խայթ, քանի որ այլևս չեն հնազանդվում Աստծուն: Սրա լուծումը հետևյալն է. երբ գիտակցում ես, որ քո խղճին հակառակ ես գնացել, պետք է ապաշխարես:

Սաղմոս 51-ը Դավիթ թագավորը գրել է Բերսաբեեի հետ մեղք գործելուց հետո: Սա ապաշխարության սաղմոս է:

> *«Ողորմի՛ր ինձ, Աստվա՛ծ, Քո անսպառ սիրո համեմատ, և Քո մեծ ողորմության համեմատ ջնջի՛ր իմ անօրենությունները: Լվա՛ իմ բոլոր անարդարությունները և սրբի՛ր ինձ իմ մեղքից: Որովհետև ես ճանաչում եմ իմ անօրենությունները, և իմ մեղքն ամեն ժամանակ իմ առջև է: Քեզ դեմ, միմիայն Քեզ դեմ մեղանչեցի և չարը Քո աչքի առջև գործեցի, որ Դու արդար լինես, երբ խոսում ես, և մաքուր, երբ դատում ես: Ահա ես ծնվելիս՝ անօրեն էի և մեղավոր, այն ժամանակից, որ մայրս հղիացավ ինձանով: Ահա Դու սիրում ես, որ ճշմարտություն լինի ներքին մասերում, և ծածուկ տեղը իմաստություն ես սովորեցնում ինձ: Սրբի՛ր ինձ զոպայով, և ես մաքուր կլինեմ, լվա՛ ինձ, և ձյունից սպիտակ կլինեմ: Թո՛ւյլ տուր, որ ցնծություն և ուրախություն լսեմ. թող ցնծան այն ոսկորները, որ կոտրատեցիր: Երեսդ թաքցրո՛ւ իմ մեղքերից և իմ բոլոր անօրենությունները ջնջիր: **Մաքուր սի՛րտ ստեղծիր իմ մեջ**, ո՛վ Աստված, և ուղիղ հոգի նորոգիր իմ ներսում: Դեն մի՛ գցիր ինձ Քո ներկայությունից կամ Քո Սուրբ Հոգին ինձնից մի՛ վերցրու: Քո փրկության ուրախությունը վերականգնի՛ր ինձ համար, և կամեցող հոգի՛ տուր, որ ինձ պահի»:*
>
> – Սաղմոս 51.1-12

> *«Որովհետև պատարագը Քեզ չի ուրախացնում, այլապես ես կմատուցեի, և ողջակեզները Քեզ հաճելի չեն: Աստ-*

ծուն հաճելի զոհը կոտրված հոգին է. կոտրված ու զղջացող սիրտը Դու չես անտեսում, ո՛վ Աստված»:

– Սաղմոս 51.16,17

Դավիթը աղաղակում է Աստծուն, որ մաքուր սիրտ ստեղծի իր մեջ, կոտրված հոգի ու ապաշխարող սիրտ: Իրականում, Դավիթն այստեղ ասում է, որ ուզում է մի սիրտ ունենալ, որը նորից կզգա: Բայց Դավիթը երբեք այդ փորձանքի մեջ չէր ընկնի, եթե լսեր իր խղճին: Ուրեմն, հիշե՛ք, եթե անտեսեք ձեր խղճի ձայնը, դուք կկարծրացնեք ձեր սիրտը, և հաջորդ անգամ ավելի հեշտ կարող եք անել նույն բանը, հետո կրկին կանեք, և այդպես շարունակ, մինչև որ ընդհանրապես չեք լսի Աստծուն:

Խիղճը՝ Աստծո ձայնը լսելու ձևերից մեկն է: Անշուշտ, Սուրբ Հոգին մեզ հետ ուղիղ խոսում է խրատներով և ուղղորդումներով: Եվ ինչպես արդեն ասել եմ, ես լսել եմ, թե ինչպես է Սուրբ Հոգին ուղղում ինձ թե՛ բարձր և հրամայական ձայնով, թե՛ ցածր և մեղմ ձայնով: Նա ինձ հետ խոսել է նաև երազների ու տեսիլքների միջոցով, որոնց մասին կխոսենք հաջորդ գլխում: Այս գլխում սովորեցինք, որ եթե ցանկանում ենք լսել Աստծո ձայնը, պետք է մաքուր պահենք մեր խիղճը ամեն տեսակ մեղադրանքներից, և արագ ապաշխարենք, որպեսզի այն նուրբ ու զգայուն մնա, ու կարողանանք լսել:

Գլուխ 10

ՏԵՍԻԼՔՆԵՐ ԵՎ ԵՐԱԶՆԵՐ

Մի օր վեր թռա անկողնուցս ու Դրենդային ասացի. «Դու հղի ես, և երեխան էլ աղջիկ է»:

Մեր ընտանիքում առաջին անգամ էր, որ Աստված երեխայի սեռը հայտնեց մեզ: Փոլին մեր չորրորդ զավակն է: Կարծում եմ՝ Աստված դա հայտնել էր, որ վստահ լինեինք, քանի որ երբ Դրենդան Փոլիով հղի էր, վեցերորդ ամսում մենք ավտովթարի ենթարկվեցինք: Մենք ընթանում էինք երկկողմանի մի ճանապարհով՝ 80կմ/ժ արագությամբ, և հանկարծ մեր առջև մի մեքենա հայտնվեց: Չհասցրինք արգելակել ու հարվածեցինք նրա մեքենային: Ոչ ոք լուրջ վնասվածք չէր ստացել, բայց բոլորս էլ գնացինք հիվանդանոց: Դրենդան, հղի վիճակում, ամրագոտուց կապտուկ էր ստացել և ստամոքսն էր մի փոքր ցավեցրել: Նա անհանգստանում էր Փոլիի համար: Բայց քանի որ Աստված մեզ արդեն ասել էր Փոլիի մասին, մենք խաղաղություն ունեինք և գիտեինք, որ նրա հետ ամեն բան լավ է լինելու, և այդպես էլ եղավ:

Հիշում եմ մի դեպք, երբ Փոլին արդեն ամուսնացած էր ու հղի էր իր առաջին զավակով: Դրենդան և ես պետք է երկրից դուրս գայինք՝ մեկնում էինք գործուղման: Ցավոք, Փոլիի ծննդաբերության օրերը այդ գործուղման ժամանակահատվածում էին: Եթե ճանաչում եք իմ կնոջը՝ Դրենդային, ուրեմն գիտեք, որ նա ոչ մի դեպքում իր աղջիկների ծննդաբերությունը բաց չի թողնում: Մենք մտածում էինք՝ չեղարկե՞լ այդ ճամփորդությունը, թե՞

ոչ: Որոշ ժամանակ աղոթեցի, և Սուրբ Հոգին ասաց, որ վերջնաժամկետը սխալ են ասել, և որ երեխան ծնվելու է մեր վերադարձի հաջորդ օրը: Դրենդային ասացի, թե ինչ է ասել Տերը երեխայի ծնվելու օրվա մասին, և մենք մեկնեցինք ճամփորդության: Երբ տուն հասանք, Փոլիի ցավերը սկսվեցին հենց այն օրը, որ Տերն ասել էր: Այվրին՝ մեր նոր թոռնուհին, ծնվեց ճիշտ ժամանակին:

Սրանք օրինակներ են, թե ինչպես է Սուրբ Հոգին խոսում մեզ հետ կյանքի խնդիրների մասին, երբ Սուրբ Հոգուց բխող բառերը դուրս են գալիս մեր հոգիներից: Բայց Սուրբ Հոգին շատ այլ ձևերով էլ է խոսում, որոնց մասին պետք է տեղյակ լինենք:

> *«Եվ պիտի լինի սրանից հետո, որ Իմ Հոգին պիտի թափեմ ամեն մարդու վրա: Ձեր որդիներն ու դուստրերը պիտի մարգարեանան, ձեր ծերերը երազներ պիտի տեսնեն, ձեր երիտասարդները տեսիլքներ պիտի տեսնեն: Նույնիսկ իմ ծառաների վրա՝ թե՛ կին, թե՛ տղամարդ, այն օրերում պիտի թափեմ Իմ Հոգին»:*
>
> – Հովել 2.28,29

Հովել մարգարեն ասում է, որ գալիս է այն օրը, երբ Աստված Իր Հոգին թափելու է մարդկության վրա: Մենք հիմա այդ օրերում ենք ապրում: Պենտեկոստեի օրը Սուրբ Հոգին իջավ նրանց վրա, ովքեր վերնատանը սպասում էին: Ամբոխն էլ, տեսնելով վերնատանը եղողներին լեզուներով խոսելիս և Աստծուն փառաբանելիս, կարծեց թե արբած են, և հարցրեց. «Սա ի՞նչ է»: Պետրոսն էլ կանգնեց և դիմեց ամբոխին:

> *«Եվ Պետրոսը վեր կացավ այն տասնմեկի հետ, իր ձայնը բարձրացրեց և դիմեց ամբոխին. «Ո՛վ հրեա հայրենակիցներ և ամենքդ, որ Երուսաղեմում եք բնակվում, թո՛ւյլ տվեք բացատրեմ ձեզ և ուշադի՛ր լսեք, թե ինչ եմ ձեզ ասում: Այս մարդիկ արբած չեն, ինչպես որ կարծում եք: Առավոտյան*

դեռ ժամը ինն է: Այլ սա այն է, ինչի մասին ասել է Հովել մարգարեն»: «Եվ պիտի լինի վերջին օրերում,- ասում է Աստված,- որ Իմ Հոգին պիտի թափեմ ամեն մարդու վրա: Ձեր որդիներն ու դուստրերը պիտի մարգարեանան, ձեր ծերերը երազներ պիտի տեսնեն, ձեր երիտասարդները տեսիլքներ պիտի տեսնեն: Նույնիսկ իմ ծառաների վրա՝ թե՛ կին, թե՛ տղամարդ, այն օրերում պիտի թափեմ Իմ Հոգին»»:

– Գործք առաքելոց 2.14-18

Սուրբ Հոգին հաճախ է մեզ հետ խոսում երազների և տեսիլքների միջոցով: Չգիտեմ, թե ինչու է Սուրբ Հոգին երբեմն խոսում մեղմ ու ցածր ձայնով, երբեմն էլ երազի միջոցով: Գուցե պատճառներից մեկն այն է, որ մենք շատ զբաղված ենք: Երբ լուռ ենք, Նա կարողանում է մեր ուշադրությունը որսալ: Կամ, գուցե, այնպիսի շփոթության կամ լարված իրավիճակում ենք, որ մեզ համար դժվար է լսել այդ մեղմ ու ցածր ձայնը: Սուրբ Հոգին պարզապես ցանկանում է Խոսքը տեղ հասցնել: Ի վերջո, մի նկարը հազար բառ արժե: Ինչ էլ լինի պատճառը, ես շնորհակալ եմ Աստծուն երազների և տեսիլքների համար: Երազներն ու տեսիլքները նման են: Երկուսի դեպքում էլ պատկեր ենք տեսնում, տարբերությունն այն է, որ տեսիլքները տեսնում ենք արթուն ժամանակ, իսկ երազները՝ քնած ժամանակ:

Ինչ վերաբերում է տեսիլքներին, ես ընդամենը մեկ-երկու տեսիլք եմ տեսել, որ կարող եմ անվանել բաց տեսիլք: Սրանք այն տեսիլքներն են, որի ժամանակ դու արթուն ես և տեսիլքը իրականության պես ես տեսնում: Իմ տեսած ամենաիմաստալից տեսիլքը 19 տարեկանում եմ տեսել, երբ Աստված կանչեց քարոզելու: Մեկ ամիս կլիներ, ինչ մկրտվել էի Սուրբ Հոգով: Անշուշտ այս ամենը լիովին նոր էր ինձ համար, քանի որ այն հարանվանական եկեղեցին, որտեղ հաճախում էի, շատ բան չէր սովորեցնում Սուրբ Հոգու մասին:

Բայց այդ օրը իմ տարեդարձն էր, ընկերներս հրավիրել էին գեղեցիկ ընթրիքի: Երբ նստեցինք ընթրելու, գոհացանք ուտելիքի համար, և հանկարծ զգացի, որ Սուրբ Հոգին հզոր ձևով իջավ ինձ վրա: Կրկնում եմ, որ այս ամենը նոր էր ինձ համար, բայց Սուրբ Հոգով մկրտվելու փորձառությունից արդեն գիտեի, թե ինչ ես զգում, երբ Սուրբ Հոգին իջնում է քեզ վրա: Այդ պահին չգիտեի ինչ անել: Ուստի, ներողություն խնդրեցի սեղանակիցներից և դուրս եկա:

Երբ դուրս գնացի, Աստծո ներկայությունն ավելի ուժգնացավ, և ես մի բաց տեսիլք տեսա, այսինքն, իրականում տեսա բաներ այնպես, ինչպես այսօր բնականում շուրջբոլորս եմ տեսնում: Ես կանգնած էի մի ամբիոնի ետևում և խոսում էի մի սենյակում, որտեղ մոտավորապես 35-40 մարդ կար, բոլորը նստած էին ծալովի աթոռների վրա: Կարող եմ ասել, որ գիշեր էր: Հետո մի ձայն ինձ հետ խոսեց. «Ես կանչում եմ քեզ քարոզելու Իմ Խոսքը»: Սա երեք անգամ կրկնվեց, հետո պատկերն անհետացավ, և օծությունը հեռացավ: Երբ տուն գնացի, ընկերներս հարցրին, թե ինչ է պատահել, իսկ ես պատասխանեցի. «Կարծում եմ, ես կանչվեցի քարոզելու»:

Հիշում եմ, այդ գիշեր տուն գնացի և հորս պատմեցի պատահածը: Նա ասաց, որ քարոզիչները շատ գումար չեն վաստակում: Ընդամենը այդքանը: Նա այդ ժամանակ դեռ քրիստոնյա չէր, բայց փա՛ռք Աստծուն, նա ընդունեց Հիսուսին, երբ 80 տարեկան էր, և հիմա Երկնքում է:

Կարծում եմ, որ Սուրբ Հոգին ինձ հետ այս անգամ բաց տեսիլքով խոսեց, նախևառաջ այն պատճառով, որ ես երիտասարդ էի: Նա գիտեր, որ ընտանիքում ես մեծ հալածանքի էի հանդիպելու Աստծուն ծառայելու համար, այդ իսկ պատճառով, առջևում իմ ճանապարհի համար ինձ մի խարիսխ էր անհրաժեշտ: Եվ իրոք, այդ տեսիլքը բոլոր տարիների ընթացքում շարունակ խոսել է ինձ հետ:

Հաջորդ բաց տեսիլքը, որը տեսել եմ, մեր հին ագարակի

տանն էր, որտեղ ապրում էինք: Մենք այդ հին, քանդված տանը ապրել ենք մոտավորապես ինը տարի, հիմնականում սոսկալի աղքատության մեջ: Բայց հենց սովորեցինք, թե ինչպես է գործում Աստծո Թագավորությունը, սկսեցինք բարգավաճել և ամբողջությամբ ազատվեցինք պարտքերից:

Այս ժամանակահատվածում էր, որ Աստված իրականացրեց իմ 19 տարեկանի տեսիլքը, երբ կանչեց ինձ քարոզելու: Քարոզելու կանչից 21 տարի անց միայն Աստված ասաց, որ եկեղեցի հիմնեմ: Մինչ այդ ես քոլեջում էի սովորում և 21 տարի աշխատում էի ֆինանսական ոլորտում: Բայց ահա, 40 տարեկանում Աստված ասում է, որ առաջ գնամ և իմ եկեղեցին հիմնեմ:

Մենք մեր եկեղեցին սկսեցինք քրիստոնեական ռադիոյի ստուդիայի նկուղում, և մեր առաջին հավաքույթը ճիշտ այն տեսիլքի նման էր, որն Աստված տվել էր 21 տարի առաջ: Այդ առաջին հավաքույթին մարդիկ նստել էին ծալովի աթոռների վրա: Գիշեր էր: Այդ փոքրիկ բեմն էլ տեսա:

Դրենդան և ես հիմնեցինք մեր եկեղեցին և այնքան ոգևորված էինք Թագավորությամբ, որ այլևս կարևոր չէր, թե որտեղ էինք ապրում: Գիտեինք, որ մեր ագարակի տնից պետք է դուրս գայինք, քանի որ ընտանիքում արդեն հինգ երեխա կար, և այլևս տանը չէինք տեղավորվում: Բայց մենք այնքան զբաղված էինք մեր ծաղկող բիզնեսով և եկեղեցով, որ երջանիկ էինք, ու մեզ այլևս ոչինչ չէր հետաքրքրում:

Մի օր եկեղեցուց տուն եկա ու նստեցի հյուրասենյակի բազմոցին: Նստելուն պես իմ շուրջը գտնվող սենյակն անհետացավ, ես նույն սենյակն էի տեսնում, որտեղ հենց նոր նստեցի, բայց առանց որևէ կահույքի: Այն դուռը, որով հենց նոր ներս էի մտել, բացվեց դեպի ճաշասենյակ, և այն բազմոցը, որի վրա նստած էի, պտտվեց դեպի դուռը: Հյուրասենյակում նստածս տեղից կարողանում էի տեսնել ճաշասենյակը: Ոչ միայն հյուրասենյակն էր լրիվ դատարկ, այլ նաև ճաշասենյակը: Տեսիլքն ընդամենը հինգ

վայրկյան տևեց, և սա տեսնելուն պես հասկացա, որ ագարակի տնից գնալու ժամանակն է: Երբ տեսիլքն ավարտվեց, ես անմիջապես պատմեցի Դրենդային կատարվածը և ասացի, որ այդ տնից դուրս գալու ժամանակն է:

Կարծում եմ՝ այս դեպքում էլ Աստված տեսիլքն օգտագործեց, որպեսզի Իր ծրագիրը պարզ ձևով փոխանցի մեզ: Մենք զբաղված էինք և շատ հեշտությամբ կարող էինք դա հետաձգել: Բայց տեսիլքը հրատապություն ուներ իր մեջ. «Գնալու ժամանակն է»: Միայն հետո հասկացանք այդ հրատապության պատճառը: Ինը տարիների ընթացքում մենք վարձակալում էինք այդ ագարակի տունը, և գիտեինք, որ պետք է լքեինք այն, հենց որ այդ տարածքում նախատեսված քաղաքաշինության ծրագիրը գործի դրվեր, բայց ոչ ոք հստակ չգիտեր, թե երբ է դա տեղի ունենալու:

Կարճ ասած, Աստված մեզ առաջնորդեց դեպի մի գեղեցիկ հողակտոր, որտեղ կառուցեցինք մեր նոր տունը: Մենք ծրագրում էինք հանգիստ կառուցել մեր տունը, քանի որ դրա վրա աշխատելու ժամանակ ունեինք, գուցե մեկ կամ երկու տարի: Բայց վեց ամիս մեր տան վրա աշխատելուց հետո տանտիրոջից զանգ ստացանք, ով ասում էր, որ մեկ ամսվա ընթացքում պետք է ազատեինք այդ փոքրիկ տունը: Մենք նրան ասացինք, որ նոր տուն ենք կառուցում և խնդրեցինք մեզ երկու կամ երեք ամիս ժամանակ տալ: Նա համաձայնեց, բայց ասաց, որ դրանից հետո այլևս որևէ ընդառաջում չի լինելու:

Մենք թափ հաղորդեցինք շինարարությանը և ժամանակին ավարտեցինք մեր տան կառուցումը: Եթե Աստված չտեղեկացներ մեզ տեղափոխվելու մասին, մենք ստիպված էինք լինելու մի քանի անգամ տնից տուն տեղափոխվել այդ ընթացքում, և հաշվի առնելով մեր զբաղվածությունը, դա խնդիր էր առաջացնելու:

Անշուշտ, այն «կապույտ մշուշը», որի մասին պատմել էի գրքի սկզբում, որը կյանք փոխող իրադարձություն էր, նույնպես բաց տեսիլք էր: Դա մի փոքր տարբեր էր, քանի որ ես չէի տեսնում

իմ ապագայի պատկերը, այլ այդ «կապույտ մշուշի» մեջ նստած՝ լսում էի Սուրբ Հոգու ձայնը, Ով կանչում էր ինձ ազգերի մեջ:

Վստահ եմ մի քանի այլ բաց տեսիլքներ էլ եմ տեսել, բայց երազները գերակշռել են: Երբ գնում էի Ալբանիա, մեկ շաբաթ առաջ գալիք ճամփորդության վերաբերյալ մի երազ տեսա: Այդ ժամանակ ես ընդհանրապես չէի ճամփորդել, ու նախքան Աստծո խոսելը, ես բոլորովին հետաքրքրված չէի ճամփորդությամբ:

Բայց մեկնելուցս մեկ շաբաթ առաջ այս երազը տեսա: Երազում բժշկի սենյակում պառկած էի հետազոտության սեղանի վրա, և մի բուժքույր նես մտավ ու ասաց, որ պետք է արյուն վերցնի: Նա բռնեց ձեռքս, միջնամատս վեր պահեց, որ ծակի: Ինձ համար դա տարօրինակ էր: Բայց գիտեք, թե երազներն ինչպիսին են լինում: Կան բաներ, որ միայն երազներում ես տեսնում:

Այս երազում հասկացա, որ մոլորակը լքելուց առաջ իմ բոլոր մատները պետք է ծակեն, որ արյուն վերցնեն: Այս տեսարանը խոսեց ինձ հետ, քանի որ աստվածաշնչյան դպրոցում մեզ սովորեցրել էին, որ ձեռքի օգնությամբ կարող էինք հիշել եկեղեցու հինգ պարգևները. բութ մատը՝ առաքյալն էր, ցուցամատը՝ մարգարեն, միջնամատը՝ ավետարանիչը, մատնեմատը հովիվը, և ճկույթը՝ ուսուցիչը, ով գործում է հովվի հետ միասին:

Այսպիսով, ես հասկացա, թե բուժքույրն ինձ ինչ էր ասում: Հասկացա, որ իմ կյանքի ընթացքում, առնվազն որոշակի հատվածներում, ես պետք է եկեղեցու բոլոր պարգևներով ծառայեմ: Անշուշտ, ես հովիվ եմ և ուսուցիչ, բայց գիտեմ նաև, որ եկեղեցու համար մարգարեական խոսք ունեմ Աստծո Թագավորության և ֆինանսների առնչությամբ: Հիսուսը հենց սրա համար էր ինձ կանչել, որ լինեմ Ալբանիայում: Երազում բուժքույրը իմ միջնամատը ծակեց, ու հասկացա, որ Աստված ինձ Ալբանիա է ուղարկում որպես ավետարանիչ՝ տանելու Ավետարանի Բարի լուրը: Հիմա ես նոր եմ սկսում գործել և քայլ անել իմ կյանքի առաքելական ծառայության մեջ:

Ինչևէ, այդ երազում, երբ նա ծակեց իմ միջնամատը, իր երկու ձեռքերն իրար միացրեց այնպես, ինչպես երեխաներն են անում աղոթելուց, նայեց ինձ ու շուրթերը շարժելով, բայց առանց ձայնի, ասաց «աղոթիր» բառը: Նա դա բարձրաձայն չասաց, այլ պարզապես բերանը բաց ու խուփ արեց: Մենք նման բան անում ենք, երբ գտնվում ենք մի վայրում, որտեղ չի կարելի խոսել: Այդ երազից հասկացա, որ ես ուղարկվում եմ Ալբանիա որպես ավետարանիչ և պետք է աղոթեմ այդ ճամփորդության համար:

Ես շատ այլ երազներ էլ եմ տեսել: Դրանք անհնար է հաշվել կամ այստեղ ներկայացնել, բայց երազները Սուրբ Հոգու ձայնն են: Ես հանդիպել եմ մարդկանց, ովքեր ամեն օր երազ են տեսնում և ամեն բան այնքան «հոգևոր» է իրենց համար: Կարծում եմ, դուք պետք է զանազանեք երազները: Կան մարդիկ, ովքեր ցանկանում են հոգևոր երևալ ու փքվում են հոգևոր հպարտությամբ և բաներ են տեսնում, որոնք Աստծուց չեն: Բայց ես այդքան էլ հաճախ երազ չեմ տեսում: Տարվա ընթացքում չորսից տասը երազ եմ տեսնում, որոնք, վստահ եմ, որ Աստծուց են, և որոնք ինձ ինչ-որ կարևոր բան են հաղորդում: Անշուշտ այդ թիվը կարող է թե՛ ավելի մեծ լինել, թե՛ ավելի փոքր: Կարծում եմ, բոլորովին էական չէ, թե որքան երազ ես տեսնում, այլ՝ թե ինչ ես սովորում դրանցից:

Մի երազ տեսա, որն իրապես փոխեց կյանքս: Այդ երազում Աստված ասաց, որ թողնեմ իմ ութ տարվա ֆինանսական ընկերությունը և հիմնեմ իմ սեփական ընկերությունը, որ օգնեմ մարդկանց դուրս գալ պարտքերից: Դա հաստատ կարևոր է:

Այնուհետև եղան նախազգուշացնող երազներ: Մի երազ եմ հիշում, որն իսկապես տարօրինակ էր: Դա պատահեց այն ժամանակ, երբ ծառայությունը ֆինանսների կարիք ուներ, և ֆինանսական ճնշում կար: Երազումս տեսա, որ պառկած եմ անկողնում ու փորձում եմ քնել: Ննջարանի դուռը բաց էր, և մի թեթև աղմուկ լսեցի միջանցքում (այս ամենը երազում եմ տեսնում) և նայեցի

դեպի դուռը: Այնտեղ մի փոքրիկ դև տեսա, հասակը մոտավորապես մեկ մետրի չափ, նա իր հետևից մի պարկ գումար էր տանում: Այդ պարկը նման էր Սանտա Կլաուսի պարկին: Պարկն այնքան լիքն էր, որ նա հազիվ էր քարշ տալիս: Նա դուրս չեկավ տնից, այլ շրջվեց և բարձրացավ երրորդ հարկ: Երբ արթնացա և սկսեցի խորհել երազի շուրջ, հասկացա, որ Տերը ինձ ցույց էր տալիս, որ ֆինանսները կա՛մ գողացվում էին, կա՛մ կորչում էին:

Զարմանալի էր, բայց երազում գիտեի, թե պարկում որքան գումար կար: Հիշում եմ, որ մտքումս 25.000 թիվն էր: Ես հասկանում էի նաև, որ քանի որ դևը դուրս չէր եկել տնից, այլ պարզապես գումարը վերևի հարկ էր բարձրացրել, ուրեմն այն մարդը կամ մարդիկ, ովքեր գողանում էին կամ թույլ էին տալիս, որ գումարները սխալ օգտագործվեին, կազմում էին տան մի մասը, և տուն ասելով, գիտեի, որ դա ծառայությունն է: Հաջորդ առավոտյան առաջինը զանգեցի մեր գլխավոր ավագին և խնդրեցի, որ ֆինանսական վարչությունում ստուգի մեր հաշիվները. մենք բացահայտեցինք շատ ոչ տեղին արված ծախսեր, որոնք անտեսված էին: Երբ այդ անկարևոր ծախսերի ամսական ֆինանսները գումարեցինք, ստացանք ամսական 25.000 դոլար գումար: Մենք վճռեցինք, որ ոչ ոք չէր գողանում, այլ անտարբերության պատճառով այդ գումարները կորչում էին: Կային նաև ծախսեր, որ կարող էինք կրճատել և գումար խնայել, բայց չէինք արել: Այդ գումարը այդ ժամանակաշրջանում շատ անհրաժեշտ էր, քանի որ իրավիճակը սուղ էր:

Աստված երազների միջոցով կարող է տալ քեզ նաև մարտավարություն: Անցյալ տարի՝ 2018 թվականին, մի պարզ երազ տեսա, որ միայն այս խոսքերն էի լսում. «հավաքի՛ր նավերը»: Գրի առա, բայց բան չհասկացա: Շարունակ հարցնում էի Տիրոջն այդ մասին, և բացի Դրենդայից այլևս ոչ ոքի

ԱՍՏՎԱԾ ԵՐԱԶՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ԿԱՐՈՂ Է ՏԱԼ ՔԵԶ ՆԱԵՎ ՄԱՐՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ:

չասացի: Հունվար ամիսն էր, և տղամարդկանց հավաքույթին ներկայացնելու էի մեկ տարվա անելիքները: Դրանցից մեկը համազգային փոքր խմբի ծրագիրն էր, որի մասին մի քանի տարի մտածում էի, բայց զգացի, որ հենց այս տարի պետք է անեմ: Հավաքույթից հետո տղաներից մեկը մոտեցավ ինձ և ասաց, որ մի փոքր անմիտ թվացող մարդու պես է զգում այն բանի համար, ինչ պետք է ասի, նա ասաց. «Տերն ասաց, որ դու նման ես Տրոյայի Հեղինեին»: Ես գաղափար չունեի, թե ինչի մասին է խոսում, ուստի նա բացատրեց, թե ինչ է դա նշանակում: Խնդրեցի, որ ինձ մի էլեկտրոնային նամակ ուղարկի՝ կրկնելով այն, ինչ ասել էր դեմ առ դեմ: Ահա նրա նամակը.

«Սպարտայի թագավորը՝ Մենելայոսը, հրամայեց պատրաստել 1000 նավ և տրոյացիների ձեռքից փրկել կնոջը՝ Հեղինեին: «Այն չքնաղ դեմքը, որը 1000 նավ ոտքի հանեց»: Հայտնի գրական խոսքը հենց վերաբերում է Տրոյայի Հեղինեին:

Չորեքշաբթի օրը, 2019 թվականի հունվարի 30-ին, երբ հովիվը խոսում էր Ապեքս տղամարդկանց հավաքույթի ժամանակ, Տերն ասաց, որ նա նման է Տրոյայի Հեղինեին, երբ թագավորը 1000 նավ է պատրաստում կորցրածը փրկելու համար. փրկելու այն, ինչ կորցրել են հավատքում, ընտանիքում և ֆինանսներում»:

Տիրոջ ծառա՝ Ահարոն

Այդ օրը նա ևս մեկ նամակ գրեց ինձ.

«Ես ուզում եմ ներկայացնել Տրոյայի Հեղինեի պատմառազմական ակնարկը: Շատերի համար դա մի պատմություն է, երբ մի թագավոր 1000 նավով հարձակվում է տրոյացիների ձեռքից իր կնոջը փրկելու: Բայց զինվո-

րական մտածելակերպով մարդու համար սա մի ռազմական գործողություն էր, որը կոչվեց «Տրոյայի Հեղինեի օպերացիա»: Ամեն ռազմական լայնածավալ գործողության տրվում է մի անվանում: Օրինակ՝ «SEAL 6-րդ թիմի օպերացիա» (SEAL Team Six), Օսամա Բեն Լադենի վրա հարձակման օպերացիան կոչվում էր «Նեպտունի նիզակ օպերացիա»: Ես մասնակցել եմ այնպիսի գործողությունների, որոնք գույնզգույն անուններ ունեին, օրինակ՝ «Մայք Ֆորվարդի օպերացիա», «Էլվիս Մարշալի օպերացիա» կամ «Սանտա Կլաուսի օպերացիա»:

Դրանց տրվում է ռազմական օպերացիաների անուններ, որպեսզի հեշտ տարբերակելի լինեն, կամ՝ որ հստակ լինի, թե ինչպիսի գործողություն է դա, ով է իրականացնում կամ կատարում այդ օպերացիան: Երբ Տերն ասաց, որ դուք նման եք Տրոյայի Հեղինեին, իմ զինվորական միտքն այսպես վերծանեց այն. «Հովիվ Գարին իրականացնում է Տրոյայի Հեղինեի օպերացիան. 1000 նավերի օգնությամբ փրկել կորածին, հավատքից ընկածին, ընտանիքը և ֆինանսները կորցրածին»:

Առավել ևս, երբ լսում եմ 1000 նավ գործարկելու մասին, մտածում եմ մարտիկների, աջակցող անձնակազմի, դասընթացների, լոգիստիկայի և ադմինիստրատիվ այն գործընթացների մասին, որոնք անհրաժեշտ են մեկ նավ գործարկելու համար: Չկա մեկը, ով ձեզնից ավելի լավ կարողանա ստանձնել այս ուժի հրամանատարությունը և Աստծո Թագավորության բանակի առաջխաղացումը: Դուք տարիներ շարունակ մարզել եք մեզ այս պահի համար: Վստահ եմ՝ թե՛ իմ ընտանիքը, թե՛ Քրիստոսի մարմնի մյուս անդամները ուրախ են գործի անցնել»:

Տիրոջ ծառա՝ Ահարոն

Ահարոնը ծառայել է SEAL ուժերի նավատորմում: Ծառայության 21 տարիների ընթացքում մասնակցել է ինը գործողությունների: Նրա կտրուկ փոխակերպման հիասքանչ պատմությունը վկայում է խաչի զորության մասին: Նա նույնիսկ գաղափար չուներ, թե Աստված երազումս ինչ է ասել. «հավաքիր նավերը»: Բայց նրա «գիտության խոսքը» հաստատություն էր ինձ համար, որ ես ճիշտ եմ լսել, և դա օգնեց ինձ, որ շարժվեմ այն ճանապարհով, որն Աստված պատրաստել էր ինձ համար: Մեր նպատակն էր՝ ամբողջ երկրով բարձրացնել 1000 փոքր խմբեր, որոնք կտարածեին Բարի լուրը: Եթե դուք նույնպես ցանկանում եք լինել այդ բանակի մի մասը, կարող եք կապ հաստատել ինձ հետ իմ կայքի միջոցով՝ Garykeesee.com:

Կարծում եմ, հասկանում եք, թե ինչ եմ ուզում ասել: Երազը այն հզոր ձևերից մեկն է, որի միջոցով Աստված խոսում է իր ժողովրդի հետ՝ տալով ուղղություն, մարտավարություն, զգուշացում և մխիթարություն:

Նախքան այս գլխի ավարտը, կցանկանայի խոսել ևս մեկ ձևի մասին, որն Աստված օգտագործում է ռազմավարական ուղղորդում տալու համար, և դա մարգարեական պարգևն է: Ահարոնը գիտության խոսք էր ստացել նոր նախաձեռնության իրագործման առնչությամբ: Գիտության խոսքը հենց գիտության խոսք է: Այս գիտությունը տրվում է Աստծո Հոգուց, մի բան, որ ինքդ իմանալ չէիր կարող: Գիտության խոսքի մասին խոսվում է Ա Կորնթացիների 12-րդ գլխում՝ որպես Սուրբ Հոգու ինը պարգևներից մեկը: Չեմ ցանկանում այս գրքում հպանցիկ խոսել բոլոր պարգևների մասին, բայց դրանցից մեկի վրա ուզում եմ կանգ առնել: Դա մարգարեական խոսքն է:

«ԱՄԵՆ ՄԵԿԸ, ՈՎ ՄԱՐԳԱՐԵԱՆՈՒՄ Է, ՄԱՐԴԿԱՆՑ ՀԵՏ Է ԽՈՍՈՒՄ՝ ՆՐԱՆՑ ԶՈՐԱՑՆԵԼՈՒ, ՔԱՋԱԼԵՐԵԼՈՒ ԵՎ ՄԽԻԹԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ»:

– Ա ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐԻ 14.3

Այնքա՜ն մարդու կյանք է քաոսի վերածվել այս պարգևի սխալ ընկալման պատճառով, որ անպայման ուզում եմ խոսել այս մասին: Երբ մարդիկ խոսում են մարգարեության մասին, պատկերացնում են, որ ինչ-որ մարգարե կանչում է նրանց, ցուցամատը պարզում է դեմքներին և ասում. «Դու պետք է գնաս Աֆրիկա», կամ՝ «Դու կանչված ես հովիվ լինելու համար»: Երկու արտահայտություններն էլ կարող են ճշմարիտ մարգարեություն լինել, բայց նույնպես և կարող են սխալ լինել: Բայց եթե դրանք հաստատություն լինելու համար են, կարող են ճիշտ լինել: Պողոսը բացատրում է, թե որն է մարգարեության նպատակը:

> *«Ամեն մեկը, ով մարգարեանում է, մարդկանց հետ է խոսում՝ նրանց զորացնելու, քաջալերելու և մխիթարելու համար»* (Ա Կորնթացիների 14.3):

Ահա, ինչպես տեսնում եք, այստեղ նույնիսկ խոսք չի գնում մարգարեության միջոցով ուղղություն գտնելու մասին, բայց շատերը մարգարեություն ասելով հենց դա են հասկանում: Համաձայն Պողոսի, մարգարեությունը ուղղությունը հաստատելու և ոչ թե ուղղություն ցույց տալու համար է: Հասկանո՞ւմ եք, երբ դուք վերստին ծնվում եք, Սուրբ Հոգին ձեր ներսում դառնում է Մեկը, Ով ասում է, թե ինչ պետք է անեք: Կարիք չկա, որ ինչ-որ մեկը ասի ձեզ, թե ինչ պետք է անեք Հիսուսի համար: Բայց մարգարեական խոսքը կարող է հաստատել այն, ինչ արդեն գիտեք:

Դիտարկենք նույն օրինակը. «Դու պետք է գնաս Աֆրիկա»: Ես նշեցի, որ դա կարող է լինել ճշմարիտ մարգարեական խոսք, եթե Սուրբ Հոգին արդեն իսկ ասել է ձեզ այդ մասին, և այդ խոսքի միջոցով էլ հաստատում է: Բայց եթե Աֆրիկա գնալու համար դուք որևէ մտադրություն չունեք և այդ մասին առաջին անգամ եք լսում, ուրեմն դա Նոր կտակարանի եկեղեցու մարգարեական խոսքի ճիշտ օրինակ չէ:

Մարդիկ երբեմն այնպիսի անմիտ բաներ են ասում: Կան

քրիստոնյաներ, որոնք մոտենում են ինձ և ասում. «Աստված հավաքույթի ժամանակ ասաց ինձ, որ պետք է բարգավաճեմ»: Կարիք չկա, որ ինչ-որ մեկը խոսք ստանա ձեզ համար ու ասի, որ դուք պետք է բարգավաճեք: Աստվածաշունչն արդեն այդպես է ասում: Տեսել եմ, թե ինչպես են մարդիկ սրան-նրան մոտենում ու հարցնում, թե արդյոք որևէ խոսք ունեն իրենց համար: Կարիք չկա, որ մեկը ձեզ խոսք ասի: Սուրբ Հոգին, որ ձեր մեջ է, կխոսի ձեզ հետ: Այո՛, Աստված գուցե հաստատող խոսք ուղարկի, որպեսզի քաջալերի ձեզ, բայց ոչ թե առաջնորդի:

Ամենավառ օրինակը իմ կյանքում եղել է այն ժամանակ, երբ ես և Դրենդան ընկերություն էինք անում: Ես պատրաստվում էի գնալ Ջորջիա նահանգ՝ հանդիպելու իր ընտանիքին և նրա ձեռքը խնդրելու: Ջորջիայում գտնվելու ժամանակ Դրենդայի հետ պետք է գնայի իրենց եկեղեցի: Այդ ժամանակ ինձ աշխատանք էր առաջարկվել ֆինանսական ծառայությունների ոլորտում: Ես չգիտեի ինչ անել: Տասնինը տարեկանում լսել էի Աստծո կանչը, որ պետք է քարոզեմ, և հենց նոր էի ավարտել քոլեջը՝ Հին կտակարանի ուսումնասիրության գծով: Եվ կարծես ստիպված էի այս գործին անցնել:

Եկեղեցու կիրակնօրյա հավաքույթից հետո մի կին, որին Դրենդան ճանաչում էր, իսկ ես՝ ոչ, մոտեցավ ինձ և ասաց, որ Աստծուց խոսք ունի ինձ համար: Նա ասաց. «Դուք մի աշխատանքի առաջարկ եք դիտարկում: Աշխատանքը ներառում է հետևյալ պարտականությունները», - և նա մեկ առ մեկ թվարկեց բոլոր այն բաները, որ ես պետք է անեի, ապա շարունակեց. «Դուք պետք է համաձայնեք այդ աշխատանքին: Դա Տիրոջից է»: Ես արդեն զգում էի, որ պետք է անցնեմ այդ աշխատանքին, բայց միևնույն ժամանակ չէի հասկանում, թե ինչու եմ այդպես զգում: Նրա մարգարեական խոսքն ինձ հանգստություն և ոգևորություն բերեց և հաստատեց, թե որ ճանապարհով պետք է գնամ. Սուրբ Հոգին կառաջնորդի ձեզ և կլինի ձեր Խորհրդականը:

Գլուխ 11

ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ԿԱՐԾԵՍ ԻՄ ՂԵԿԱՎԱՐԸ ԼԻՆԻ

Իմ եկեղեցում մի փոքր ընտանիք կար, որն աշխատանքի կարիք ուներ: Անուշիկ մի ընտանիք էր, որը միշտ պատրաստակամ էր օգնել եկեղեցու զանազան գործերում: Բայց կարծես մշտապես ֆինանսական խնդիրների մեջ էին: Մի անգամ, երբ ընտանիքի հայրը կորցրել էր աշխատանքը, որոշեցի օգնել նրանց: Այդ ժամանակ ես իմ տունն էի կառուցում և էլեկտրական լարերն ինքս էի քաշում: Իմացա, որ նա որոշ չափով հասկանում է էլեկտրականությունից և առաջարկեցի, որ օրվա կեսը նա աշխատի, և ես վճարեմ դրա դիմաց, քանի որ իր ընտանիքն արդեն սնունդ հայթայթելու խնդիր ուներ: Նա եկավ և կատարեց հանձնարարված գործը:

Այս ամենի մասին ես արդեն մոռացել էի, բայց մոտավորապես մեկ ամիս անց այդ տղայից զանգ ստացա: Նա ասաց, որ մի քանի հոգով աղոթել են ինձ համար: Հարցրի՝ ինչո՞ւ: Նա ասաց, որ եկեղեցում նկատել են որոշ բաներ, որ պետք է փոխվեն: Նաև ասաց, որ 10 կետից բաղկացած մի ցանկ են կազմել և քննարկել են: Կետերից մեկն այն էր, որ իմ տունը շատ մեծ է: Նա հարցրեց, թե որքան է եկեղեցին վճարում ինձ, որ ես կարողանում եմ այդպիսի տան մեջ բնակվել: Արագորեն պատասխանեցի, որ եկեղեցին նույնիսկ մեկ լումա չի վճարում, և որ ես եկեղեցուց աշխատավարձ չեմ ստանում: Եվ երբ ասացի դա, մի քանի վայրկյան

լռություն տիրեց, ապա նա ասաց. «Եկեղեցին ձեզ աշխատավարձ չի՞ տրամադրում»: «Ո՛չ, չի՛ տրամադրում», - պատասխանեցի ես: Կրկին լռություն տիրեց, և ի վերջո ասաց. «Կարծում եմ, պե՛տք է տրամադրի»: Այս խոսքերով ավարտվեց մեր զրույցը:

Մեկ կամ երկու շաբաթ հետո աչքովս թափուր աշխատանքի մի հայտարարություն ընկավ, որը կարծեցի, թե կհետաքրքրեր այդ տղային, ու դրա մասին հայտնեցի նրան: Նա գնաց, դիմեց և անցավ գործի: Նկատի ունեցեք, որ նրա ընտանիքին արդեն դուրս էին հանում իրենց տնից, քանի որ տունը պետք է բռնագանձեին: Եվ երբ աշխատանքի ընդունվելուց մեկ շաբաթ անց նա եկավ եկեղեցի ու ասաց, որ դուրս է եկել աշխատանքից, ես ապշեցի: «Դո՞ւրս ես եկել»: «Ինչո՞ւ»: Նա ասաց, որ ուրբաթ կեսօրին նրան ասել են, որ շաբաթվա գործը հասցնելու համար նա պետք է մաքրի հատակը: Պատճառներից մեկը աշխատանքից դուրս գալու այն է եղել, որ իր պարտականությունների մեջ չի եղել հատակը մաքրելը: Ականջներիս չէի հավատում: Հասկանում էի, որ այս երիտասարդը, եթե ցանկանում է կյանքում հաջողության հասնել, ուրեմն պետք է մի լավ դաստիարակվի: Ես միշտ խղճում էի այդ տղայի կնոջը: Կարճ ժամանակ անց նրանք հեռացան եկեղեցուց, և ես այլևս լուր չունեցա նրանցից: Բայց թույլ տվեք կռահել: Իր ամբարտավան վերաբերմունքի և աշխատել չկամենալու պատճառով, ենթադրում եմ, որ իր կենսագրության թերթիկի մեջ աշխատանքային փորձը փաստող մի քանի նոր տողեր են ավելացել, որոշները կարճաժամկետ բնույթի: Նրա բարգավաճման մակարդակը ավելի շատ նման է գոյատևման պայքարի: Ինձ սխալ մի՛ հասկացեք: Մարդիկ փոխվում են, և հուսով եմ, որ այդ տղան էլ է փոխվել: Բայց մի բան հստակ գիտեմ, որ այն ժամանակ, երբ շփվում էի նրա հետ, նա սխալ ուղղությամբ էր գնում. նա անտեսում էր Աստծո ձայնը:

Գուցե հարցնեք. «Աստծո ո՞ր ձայնի մասին եք խոսում»: Վստահ եմ, եթե այդ ժամանակ նրան էլ հարցնեիք, նա էլ էր ասելու. «Ի՞նչ Աստծո ձայն»: Բայց նա անտեսում էր դաստիարա-

կության և կյանքի նպատակին հասնելու նախապատրաստական փուլը, որը կոչվում է «սովորել հնազանդվել»: Գիտեմ, գուցե այս գլխի վերնագիրը փոքր-ինչ շփոթեցրել է ձեզ: Ի՞նչ կապ ունի իմ ղեկավարը Սուրբ Հոգու հետ: Այս գլխում կհասկանաք, որ ձեր ղեկավարը շատ լավ կապ ունի Սուրբ Հոգու հետ:

Ցանկանում եմ մեր սերտողությունը սկսել Մատթեոս 8.5-10-ի խիստ կարևոր թեմայից.

> *«Երբ Հիսուսը մտավ Կափառնայում, մի հարյուրապետ եկավ Նրա մոտ և օգնություն խնդրեց՝ ասելով. «Տե՛ր, իմ ծառան անդամալույծ պառկած է տանը և չարաչար տանջվում է»:*
>
> *Հիսուսն ասաց. «Ես կգամ և կբժշկեմ նրան»:*
>
> *Հարյուրապետը պատասխանելով՝ ասաց. «Տե՛ր, ես արժանի չեմ, որ իմ հարկի տակ մտնես, այլ միայն խոսք ասա, և իմ ծառան կբժշկվի: Որովհետև ես էլ իշխանության տակ լինող մարդ եմ և իմ ձեռքի տակ էլ զինվորներ ունեմ: Մեկին ասում եմ՝ գնա՛, և գնում է, և ուրիշին՝ ե՛կ, և գալիս է: Ծառային՝ այս բանն արա՛, և անում է»:*
>
> *Եվ երբ Հիսուսը լսեց, զարմացավ և ասաց Իր ետևից եկողներին. «Ճշմարի՛տ եմ ասում ձեզ, Իսրայելի մեջ այսպիսի մեծ հավատքով մեկին չգտա»»:*
>
> – Մատթեոս 8.5-10

Ինչո՞ւ այս մարդն այդքան հեշտությամբ հավատաց, որ Հիսուսը կարող է բժշկել իր ծառային: Այդ հարցին հենց ինքն էլ պատասխանում է. *«Որովհետև ես էլ իշխանության տակ լինող մարդ եմ և իմ ձեռքի տակ էլ զինվորներ ունեմ: Մեկին ասում եմ՝ գնա՛, և գնում է, և ուրիշին՝ ե՛կ, և գալիս է: Ծառային՝ այս բանն արա՛, և անում է»:* Նա

գիտեր, թե իշխանությունն ինչպես է գործում: Ինչպես որ ինքն էր մեկի իշխանության տակ, այնպես էլ իր մարդիկ իր իշխանության տակ էին: Նա գիտեր, որ իր ղեկավարի ձայնը կայսրի ձայնի պես է հնչում: Նա գիտեր նաև, որ իր ձայնն էլ իր ծառաների համար կայսրի ձայնի նման է հնչում: Իշխանությունն այդպես է գործում: Ուրեմն, քանի որ նա գիտեր, թե իշխանությունն ինչպես է գործում, ապա հասկացել էր, թե ինչպես Հիսուսը կարող էր Իր իշխանությունն այդ իրավիճակի վրա բանեցներ՝ պարզապես խոսք խոսելով: Ինքն էլ այդկերպ էր վարվում: Եթե իր ծառային ինչ-որ բան էր ասում, որ պետք է անի, նրանք անում էին: Ահա մի ճշմարտություն, որը պետք է սովորեք:

ԴՈՒ ԿԱՐՈՂ ԵՍ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ ԲԱՆԵՑՆԵԼ, ԵԹԵ ԻՆՔԴ ՀՆԱԶԱՆԴՎՈՒՄ ԵՍ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆԸ:

Եթե սատանան կարողանար իսպառ վերացնել իշխանության հանդեպ հարգանքը և բոլորին համոզել, որ կարող են անել՝ ինչ կամենում են, և երբ կամենում են, այդ ժամանակ աշխարհը փուլ կգար և կավերվեր: Եդեմի պարտեզում նա Եվային հենց դրան էր մղում. «Իրո՞ք Աստված ասել է...»: Լսե՛ք, այս երկրագնդի վրա գտնվող ցանկացած մարդ մի իշխանության կամ մի քանի իշխանության տակ է: Եթե գիտես, թե ում իշխանության տակ ես, ապա դա կօգնի քեզ հասկանալ, թե ում պետք է լսես, և ում չլսես: Բայց այսօր բոլորը ցանկանում են իշխանություն բանեցնել առանց որևէ մեկի իշխանության տակ լինելու: Դա անհնարին է:

Վերջերս զրուցում էի մի կապալառուի հետ, ով պատմում էր, թե ինչպես է իր աշխատողներին կանխիկով վճարում, որպեսզի խուսափի աշխատակիցների հարկերը և աշխատակիցների փոխհատուցման գումարները վճարելուց: Բայց ես արդեն գիտեմ, թե ինչով է դա ավարտվելու: Մի օր աշխատակիցներից մեկը խնդիր

է ունենալու և դիմում է ներկայացնելու աշխատակիցների շահերի պաշտպանության կոմիտե, և պարզվելու է, որ իր ղեկավարը երբեք որևէ գումար չի փոխանցել աշխատակիցների փոխհատուցման ծրագրին, և նա դատի է տալու գործատուին, քանի որ օրենքի պահանջով աշխատակիցների փոխհատուցման գումարները պետք է վճարվեն: Նման մի պատմություն տեղի է ունեցել իմ եկեղեցու մի քանի կապալառուի հետ:

Անցյալ շաբաթ մի կնոջ հետ էի խոսում, ով ասաց, որ ինքը հովվի կարիք չունի. ինքն ու իր Սուրբ Հոգին: Իրո՞ք: Ավելի լավ է, որ գնա ու դրա մասին Հիսուսի հետ խոսի, որովհետև Նա է հովիվներ նշանակել և եկեղեցու կարգը հաստատել Եփեսացիներին ուղղված նամակի 4-րդ գլխում: Եթե նա հնազանդվեր Հիսուսին, ապա կհետևեր Հիսուսի կողմից կարգված իշխանությանը: Փաստը մնում է փաստ, որ նա չի ուզում հնազանդվել Հիսուսին և ցանկանում է իր ուզածն անել: Ամենայն հավանականությամբ, դրա պատճառով մի օր նա մոլորության և խնդիրների մեջ կհայտնվի:

Վերջերս վաճառքով զբաղվող մի անձնավորության հետ էի խոսում, ով ցանկանում էր հիմնել իր սեփական առևտրային ընկերությունը և իր հաճախորդներին տանել իր ընկերություն, թեև նրանք հատուկ ստորագրել էին դա չանելու համար: Ինչ եք կարծում՝ նրանք կբարգավաճե՞ն դրանով: Դա պարզապես գողություն է:

Գիտեմ, գուցե այս գլուխը ձեզ այդքան էլ դուր չգա, որքան նախորդները, որտեղ խոսում եմ գերբնական ու հիասքանչ բաների մասին, որ Սուրբ Հոգին անում է, բայց եթե ճիշտ չընմբռնեք այս գլուխը, դուք կմոռանաք բոլորը, քանի որ առաջ տանողը Աստված է:

Հիշում եմ, մի անգամ, աղոթքի ծառայության ժամանակ մի կին մոտեցավ ինձ և արցունքն աչքերին հարցրեց, թե ինչու երբեք չեմ դիմում իրեն՝ աղոթքը վարելու հարցով: Ես ապշեցի: Աղոթքը վարել-չվարելը այդքան մեծ խնդիր չէր առաջացնի, եթե իր դրդապատճառներն այլ չլինեին. նա փափագում էր, որ մարդիկ տեսնեին իրեն:

ԵԹԵ ԳԻՏԵՍ, ԹԵ ՈՒՄ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՏԱԿ ԵՍ, ԱՊԱ ԴԱ ԿՕԳՆԻ ՔԵԶ ՀԱՍԿԱՆԱԼ, ԹԵ ՈՒՄ ՊԵՏՔ Է ԼՍԵՍ, ԵՎ ՈՒՄ ՉԼՍԵՍ:

Անշուշտ, ես նրան կասեի, թե ինչու չեմ դիմում, որ աղոթքը վարի, եթե նա որևէ մեկին լսելու կարողություն ունենար: Այս կինը չէր հարգում իր ամուսնուն և ամեն անգամ բամբասանքի սեանսների ժամանակ նրա թերի հոգևոր լինելու թեման բուռն քննարկման առարկա էր դարձնում: Այդ էր պատճառը, որ չէի դիմում: Փաստն այն էր, որ նա արցունքախառը մոտեցավ ինձ, որովհետև մարդիկ չէին տեսնում, թե իր կարծիքով՝ որքան հոգևոր կին է, ու շուտափույթ ուզում էր շտկել այդ վիճակը, քանի դեռ չէր բացահայտվել, որ նա չի հարգում իշխանությանը, և դրանով իսկ վտանգավոր կին է:

Այսպիսով, թույլ տվեք հարցնել: Արդյոք ունե՞ք այն որակական հատկանիշները, որ գնաք այնտեղ, որտեղ կամենում եք, կամ՝ որտեղ ձեր երազներն են առաջնորդում: Եթե ձեր հովվին կամ ձեր ղեկավարին հարցնեմ, թե ինչ կարծիք ունեն ձեր մասին, ի՞նչ կպատասխանեն. դուք չեք կարող իշխանություն ձեռք բերել, քանի դեռ հնազանդության քննությունը չեք անցել: Սա Հիսուսն է ասում, ոչ թե՝ ես:

> *«Այն մարդը, ում կարելի է քիչ բան վստահել, նրան կարելի է շատն էլ վստահել: Ով քիչ բանի մեջ անհավատարիմ է, շատ բանի մեջ էլ է անհավատարիմ: Եթե աշխարհիկ հարստության հետ վարվեցողությունում հավատարիմ չես համարվել, ճշմարիտ հարստությունն ո՞վ կտա քեզ: Եթե մեկ ուրիշի ունեցվածքի հանդեպ հավատարիմ չես եղել, քո ունեցվածքը քեզ ո՞վ կտա»:*
>
> – Ղուկաս 16.10-12

Արդյո՞ք կարելի է իշխանություն վստահել քեզ. ապացույցը քո հնազանդության մեջ է:

Եկեք Աստվածաշնչից մի պատմություն դիտարկենք, որը կարող է քո կյանքում հաջողության հասնելու գրավականը լինել:

«Փղշտացիները ժողովվեցին Իսրայելի դեմ պատերազմ անելու. երեք հազար կառք և վեց հազար ձիավոր, և զինվորները ծովեզերքի ավազի չափ շատ էին: Նրանք վեր գնացին և Բեթավանի արևելյան կողմում Մաքմասի մեջ բանակ տվին: Երբ իսրայելցիները տեսան, որ օրհասական վիճակի մեջ են, և որ իրենց բանակը խիստ ճնշված է, թաքնվեցին այրերում, թփուտներում, ժայռերի արանքներում, խորշերում և փոսերում: Որոշ եբրայեցիներ Հորդանանն անցան ու գնացին դեպի Գադի ու Գաղաադի երկիրը:

Բայց Սավուղը մնաց Գաղգաղայում, և նրա հետ եղող ամբողջ զորքը վախից դողում էր: Նա Սամուելի որոշած ժամանակի չափ յոթ օր սպասեց, բայց Սամուելը Գաղգաղա չեկավ, և ժողովուրդը Սավուղի մոտից սկսեց ցրվել: Եվ Սավուղն ասաց. «Ողջակեզը և խաղաղության զոհը ինձ մոտ բերեք»: Եվ Սավուղը մատուցեց ողջակեզը»:

– Ա Թագավորաց 13.5-9

*«Եվ Սամուելն ասաց Սավուղին. «Դու հիմարություն արեցիր, չպահեցիր քո Տեր Աստծո պատվիրանները, որ քեզ պատվիրել է. եթե պահեիր, Տերը քո թագավորությունը Իսրայելի վրա ընդմիշտ կհաստատեր: Բայց հիմա քո թագավորությունը հաստատ չի լինելու: **Տերն Իր սրտի համեմատ մի մարդ է գտել և նրան իշխան է նշանակել իր ժողովրդի վրա**, որովհետև դու չպահեցիր Տիրոջ պատվիրանը»»:*

– Ա Թագավորաց 13.13,14

Սավուղը որակազրկվեց, քանի որ չինազանդվեց իշխանությանը: Այսպիսով, տեսնում ենք, որ եթե չեք կարողանում հնազանդվել իշխանությանը, ուրեմն չեք էլ կարող իշխանություն

ունենալ: Ուզում եմ շատ կարևոր մի բան ընդգծել: Աստված Իր սրտի համեմատ մարդ էր փնտրում: Իսկ ի՞նչ է նշանակում «Իր սրտի համեմատ»:

> *«Եվ նրան փոխելով՝ Դավթին նրանց համար թագավոր դարձրեց, որ նրա համար էլ վկայություն տվեց և ասաց. «Հեսսեի որդի Դավթին գտա Իմ սրտի պես մարդ, **որ նա անի ամեն բան, ինչ կամենում եմ, որ անի»»**:*
>
> – Գործք առաքելոց 13.22

Ինչպե՞ս է Աստված նկարագրում մեկին, ով Իր սիրտն ունի: Դա մեկն է, ով ատում է այն, ինչ Աստված է ատում, և սիրում է այն, ինչ Աստված է սիրում: Մեկն է, ով կանի այն, ինչ Աստված կաներ, եթե այդտեղ լիներ: Այլ խոսքերով, եթե Աստված ատում է մեղքը, նրանք էլ են ատում մեղքը: Եթե Աստված ցանկանում է, որ մի բան արվի, նրանք անմիջապես անում են դա: Մեր օրերում մենք կարծում ենք, որ Աստծո սրտի համեմատ մարդը նա է, ով ամենաշատ հոգևոր պարգևներն ունի: Հոգևոր լինել ասելով պատկերացնում ենք մեղմ հոգևոր երկրպագության երաժշտություն: Սակայն Աստված հստակ ասում է, որ հոգևոր երկրպագությունը հնազանդ լինելն է:

> *«Բայց Սամուելը պատասխանեց. «Մի՞թե Տերը հավանում է ողջակեզների և զոհերի այնպես, ինչպես Տիրոջ ձայնին հնազանդվելուն: Հնազանդությունը զոհից լավ է, և ականջ դնելը՝ խոյերի ճարպից: Որովհետև ապստամբությունը կախարդության մեղքի պես, և անհնազանդությունը կռապաշտության պես է: Որովհետև դու Տիրոջ Խոսքը մերժեցիր, Նա էլ քեզ մերժեց, որ թագավոր չլինես»»:*
>
> – Ա Թագավորաց 15.22,23

Թույլ տվեք կրկնել, որ Աստծո ձայնը նման է ձեր ղեկավարի ձայնին: Աստված թույլ է տալիս, որ ձեզ վրա դրված իշխանությունների հանդեպ ձեր արձագանքը քննվի այն

ԹՈՒՅԼ ՏՎԵՔ ԿՐԿՆԵԼ, ՈՐ ԱՍՏԾՈ ՁԱՅՆԸ ՆՄԱՆ Է ՁԵՐ ՂԵԿԱՎԱՐԻ ՁԱՅՆԻՆ:

ժամանակ, երբ ձեր անունը դեռ ոչ ոք չգիտի: Շատերը չգիտեն, թե այս ամենը ինչպես է գործում: Նրանք իրենց կես դրույքով աշխատանքը անկարևոր են համարում, ու կարծում են, թե դա լուրջ բան չէ: Բայց նրանք չեն հասկանում, որ այդկերպ իրենց մարզում են հնազանդության մեջ, սովորում են դատել իրենց իսկ չափանիշներով, եթե ինչ-որ մի բան արժան է հնազանդության և համապատասխանում է իրենց ցանկություններին ու նպատակներին: Մարդիկ չեն հասկանում, որ այն վայրկյանից, երբ նրանք պատասխանատվություն են վերցնում այդ փոքրիկ կես դրույքով աշխատանքն անելու համար, նրանք համաձայնում են աշխատել այնպես, կարծես դա իրենց սեփական բիզնեսն է: Շատերը աշխատանքին այդպես չեն նայում: Նրանք ավելի մեծ նպատակներ են դնում իրենց առջև: Ի վերջո, սա ընդամենը կես դրույքով աշխատանք է մի որոշ լրացուցիչ գումար վաստակելու համար: Մի մեծ բան չէ, պարզապես ճիշտ չէ:

Անկարևոր աշխատանք գոյություն չունի: Փոքր հանձնարարություններ գոյություն չունեն: Դավիթն ուներ փոքր, անկարևոր գործ. ոչխար էր պահում: Բայց դա իր համար անկարևոր չէր, այդ ոչխարներին պահպանելու համար նա առնվազն երկու անգամ իր կյանքը վտանգի է ենթարկել: Եթե փորձեմ այլ կերպ ձևակերպել, իրեն հանձնված վստահությունը շատ լուրջ էր ընդունել: Թեև ոչ ոք չգիտեր, թե ով է ինքը, բայց Աստված գիտեր: Եվ Աստված գիտեր, թե ամբողջ ժամանակ նա ինչի միջով էր անցնում:

Աստված գիտի, թե ինչի միջով ես անցնում: Նույնիսկ գիտի, թե ինչպիսին է քեզ վրա կարգված իշխանության կամ ղեկավարության հանդեպ քո սրտի դիրքը: Եթե ամփոփելու լինեմ, ապա այսպես կասեմ. եթե դու չես կարողանում հնազանդվել այն մարդուն, ում տեսնում ես, դու չես կարող հնազանդվել Աստծուն, ում չես տեսնում: Կան շատ մարդիկ, ովքեր առաջնորդվում են «բոլորը պարտական են ինձ» գաղափարով կամ զոհի մտածելակերպ ունեն. նրանք ամեն պարագայում մի մեղավորի են փնտրում: Նրանք միշտ ասում են,

որ դա ղեկավարի սխալն է, ինչ-որ բան են անում հազիվ ծայրը ծայրին հասցնելու համար, կամ աշխատում են, երբ պահանջում են: Նրանք սովորաբար կատարողի մտածելակերպ ունեն. դու պետք է ասես, թե ինչ անեն, երբեք ինքնուրույն չեն մտածում: Իսրայելի զավակներն էլ հենց այդպիսին էին, նրանք տարիների ստրկությունից ազատվելուց հետո շարունակում էին ստրուկի պես մտածել՝ թեև արդեն ազատ էին: Ճորտի նման մտածելակերպը չէր կարող օգնել իրենց, երբ արդեն իրենց տրված երկրում հանդիպեցին հսկաների: Նախքան Ավետյաց երկիր մտնելը, հաջողության հասնելու համար Աստված պետք է մարզեր նրանց: Աստված պետք է մարզի նաև ձեզ, մինչև դուք էլ մտնեք Ավետյաց երկիր: Այն երկիրը, որի մասին խոսում եմ, քո ապագան է: Իսկ ինչպե՞ս մարզեց նրանց:

> *«Եվ քեզ խոնարհեցրեց և սոված պահեց և հետո մանանայով կերակրեց, որը ո՛չ դու էիր ճանաչում, և ո՛չ քո հայրերը, որ քեզ սովորեցնի, որ մարդը ոչ միայն հացով կապրի, այլ Տիրոջ բերանից դուրս եկած ամեն խոսքով»:*
>
> – Բ Օրինաց 8.3

> *«Նա անապատում քեզ մանանա ուտեցրեց, մի բան, որ քո հայրերը չէին ճանաչում, **որ քեզ խոնարհեցնի, քեզ փորձի, որպեսզի վերջում քեզ բարիք լինի»:***
>
> – Բ Օրինաց 8.16

Աստված խոնարհեցրեց նրանց, որպեսզի կարոտություն քաշեն, որ օգնության կարիք ունենան: Նրանք պետք է սովորեին վստահել Աստծուն, ոչ թե իրենք իրենց: Նրանց ավելի մեծ դժվարություն էր սպասում, քան ուտելիք հայթայթելն էր: Առջևում հսկաներ էին և պարսպապատ քաղաքներ, որոնք հեշտությամբ կկաշկանդեին նրանց, եթե Աստծուն իրենց խնդրից ավելի մեծ չտեսնեին:

Երկրորդը, նրանք պետք է սովորեին ինքնուրույն ճիշտ որոշում կայացնել առանց որևէ մեկի պարտադրանքի: Այսօր ես տեսնում եմ, թե ինչ սխալ են վարվում ծնողները. նրանք փոր-

ձում են ուղղել երեխայի վարքը, և ոչ թե սիրտը: Երեխային ասում են, որ սենյակը մաքրի: Երեխան շրխկացնում է դուռը և անում է այն, ինչ ասել են իրեն, բայց դա անում է ապստամբած սրտով, այլ ոչ թե հնազանդությամբ: Այն ծնողները, ովքեր ցանկանում են ընկերական լինել իրենց երեխաների հետ, գալիս և տեսնում են մաքուր սենյակը ու ասում են, թե ինչ հրաշալի գործ է արել: Դա սխալ է: Երեխան համապատասխանել է ձեր պահանջին արտաքուստ, բայց ոչ՝ ներքուստ: Հնազանդությունը սրտի կարգավիճակ է: Մի օր էլ ծնողը երեխայի կողքին չի լինի, որ դրդի ճիշտ ընտրություն անել: Երբ ծնողը հեռացնում է վերահսկողությունը, երեխան ազատ է լինում անելու այն, ինչ կամենում է: Այդ ժամանակ բացահայտվում է երեխայի սրտում եղածը: Հենց այս ժամանակ է, որ շատ ծնողներ տեղեկանում են, որ իրենց երեխան խնդիր ունի և չի կարողանում կողմնորոշվել: Նրանք անդադար կրկնում են, որ «Ջոնին այնքան անուշիկ բալիկ էր», ու զարմանք են վերապրում երեխաների վարքից, երբ նրանք քոլեջ են ընդունվում կամ որոշում են առանձին ապրել:

Աստվածաշունչն ասում է, որ Աստված ցանկանում է փորձել Իսրայելին, որպեսզի վերջում նրա համար բարիք լինի: Մենք հենց սրա մասին ենք խոսում: Ի տարբերություն այն ծնողի, ով ցանկանում է հաճոյանալ իր զավակին, Աստված մտահոգվում է Իր զավակի երկարատև բարեկեցությամբ: Նա փոխում է սրտի փոքրիկ վերաբերմունքը, նախքան այն քրոնիկ վարքագիծ կդառնա: Ահա հենց սա նկատի ուներ Աստված, երբ ասում էր, որ փորձելու է նրանց: Երբ նրանց հնարավորություն տրվի հնազանդվելու, նրանց սրտի վերաբերմունքը կբացահայտվի, ու Աստված կուղղի նրանց:

Բոլորը պետք է անցնեն հնազանդության թեստը: Եթե այսօր բնության մեջ առկա անապատի միջով չենք անցնում, այդ դեպքում Աստված որտեղ է մեզ փորձության ենթարկում: Որտեղ կարող ենք լսել Նրա ձայնը, որ հնազանդություն սովորենք և որակապես պատրաստվենք մեր հաջորդ առաջխաղացմանը: Հիշեք, թե Աստված Սավուղի համար ինչ ասաց՝ հնազանդությունն ավելի լավ է, քան զոհը: Եկեղեցում երկրպագության արտաքին

դրսևորումները ձեր հաջորդ առաջխաղացման նախապայմանը չեն: Կարո՞ղ է Աստված ձեզ իշխանություն վստահել: Ուրեմն որտեղի՞ց սկսել: Ընտանիքի՞ց:

> *«Որդինե՛ր, հնազանդ եղեք ձեր ծնողներին Տիրոջ մեջ, քանի որ սա է ճիշտը: Պատվի՛ր քո հորն ու մորը, որն առաջին պատվիրանն է խոստմունքով, որ քեզ լավ լինի, և որ երկար ապրես երկրի վրա»:*
>
> – Եփեսացիների 6.1-3

Ինչո՞ւ է ծնողներին հնազանդվելը երկար կյանք կամ հաջողություն ապահովում կյանքում: Արդյո՞ք հնազանդության համար Աստված ձեր անվան դիմաց բալեր է կուտակում: Իհարկե՝ ոչ, բայց եթե սովորեք հարգել և պատվել ձեր ծնողներին, ձեզ վրա կարգված իշխանություններին, այդ դեպքում դուք կպատվեք և կհարգեք Աստծուն: Եթե հարգեք Աստծո հեղինակությունը ձեր կյանքում, ապա կհնազանդվեք Նրան, և ամեն բան լավ կընթանա ձեզ համար: Այսպիսով, կարող եմ ասել, որ Աստված ձեր ծնողների նման է խոսում, երբ երիտասարդ էիք և նրանց հոգածության տակ էիք:

Երկրորդ տեղը, որտեղ Աստված կմարզի ձեզ իշխանություններին հնազանդվելու համար, մարդկային իշխանության ներքո է: Ձեր ղեկավարը, ձեր հովիվը, ոստիկանը և կառավարությունը, այս բոլորը իշխանության օրինակներ են, որոնց պետք է հնազանդվեք՝ համաձայն Աստծո կարգադրության:

Հիշում եմ, մեր եկեղեցում մի ընտանիք կար, որ անդադար բողոքում էր և իրենց խնդիրներից էր խոսում: Որպեսզի նրանց տունը չբռնագրավեին, նրանք 10.000 դոլարի կարիք ունեին: Եկեղեցում տասնյակ մարդիկ տեղյակ էին իրենց պատմությունից: Ի վերջո, մի ընտանիք որոշեց օգնել նրանց և 10.000 դոլար տվեց: Բայց մի քանի ամիս անց նրանք հայտնվեցին նույն իրավիճակում և կորցրին տունը: Ես խոսել էի այս զույգի հետ, երկուսն էլ գործազուրկ էին: Առաջարկում էի, որ ինչ-որ գործի անցնեն, մինչև կունենային իրենց ուզած աշխատանքը: Նրանք

կարող էին քաղաքի ինչ-որ ռեստորանում աշխատել, բայց ասում էին, որ այդպիսի աշխատանքը իրենց համար չէ: Կարծում եմ, ակնհայտ է, որ իրենց խնդիրը բնավ ֆինանսական չէր, այլ՝ իշխանության և պատասխանատվության ըմբռնման բացակայությունն էր: Ինչ-ինչ պատճառով նրանք չէին տեսնում, որ իրենք անձնական պատասխանատվություն ունեն կյանքի ղեկն իրենց ձեռքն առնելու և ամեն բան անելու խնդիրը հարթելու համար:

Իմ ընկեր Ռիկ Ռենները, ինչ-որ մեկին գործի ընդունելուց առաջ խնդրում է, որ ցույց տան տվյալ մարդու ավտոմեքենան, կամ առանց հրավերի գնում է այդ մարդու տուն: Նա հասկանում է, որ եթե մարդը պատասխանատվություն չի կրում իր մեքենայի համար, ուրեմն իրեն վստահված գործի համար էլ չի կրի: Եվ կարճ ժամանակ հետո նրա գրասենյակն էլ կդառնա այնպիսին, ինչպիսին իր ավտոմեքենան է:

Ես էլ իմ բաժին անապատային մարզումն եմ անցել: Եվ ուրախ եմ, որ Աստված թույլ չի տվել, որ իշխանության հանդեպ իմ ունեցած անտարբեր վերաբերմունքն ինձ հետ քարշ տամ: Նա խոնարհեցրել և փորձել է ինձ, որպեսզի պատրաստի ինձ վստահված առաջադրանքի համար:

Հիշում եմ, երբ դեռ ագարակի տանն էինք ապրում և ֆինանսական խիստ ծանր վիճակում էինք: Բարեբախտաբար, ինձ հաջողվել էր մի ներդրումային գործ գլուխ բերել, որի շնորհիվ կկարողանայի վճարել վարձերը, որոնք միշտ ուշացնում էի: Բայց գումարը ժամանակին չեկավ, ու գլխումս մի փայլուն գաղափար ծնվեց, որ մեկ ուրիշ բանկում հաշիվ բացեմ և մի կեղծ չեկ դուրս գրեմ իմ հիմնական բանկի հաշվին՝ հուսալով, որ հաջորդ օրը ակնկալվող գումարը կստանամ և կփակեմ նոր բանկում բացված հաշվի կեղծ չեկը: Բայց գումարը երկու շաբաթ շարունակ չէր փոխանցվում: Ամեն օր, մինչև գումարի տեղ հասնելը, ես մի կեղծ չեկ էի դուրս գրում իմ բանկային հաշիվներից մեկին: Եվ այսպես, երկու շաբաթ, և այդ կեղծ չեկերի գումարը հասավ 2.000 դոլարի, քանի որ գնում էի նաև սնունդ: Այդ ժամանակա-

հատվածում գումարն ավելանում և ավելանում էր:

Այս ամենը ավարտվեց, երբ մի օր բանկի կառավարիչը զանգեց ինձ վաղ առավոտյան և առաջին բառերը, որ դուրս եկան նրա բերանից, հետևյալն էին. «Գիտեմ, թե ինչ եք անում, և ես փակում եմ ձեր հաշիվը: Դուք պետք է փակեք ձեր հաշվի պարտքը և այս բանկում այլևս հաշիվ չբացեք»: Բռնվեցի: Ամենավատն այս իրավիճակում այն էր, որ իմ չեկերի վրա աստվածաշնչյան խոսքեր կային գրված, և ես վկայել էի բանկի կառավարչին, թե ինչ հրաշալի է Աստված: Փա՛ռք Աստծուն, այդ օրը գումարային փոխանցումը տեղ հասավ, և կարողացա գնալ բանկ և փակել պարտքը: Բայց ես պետք է տեսնեի այդ բանկի կառավարչին, ապաշխարեի նրա առջև և խնդրեի, որ Աստծուն չմեղադրեր այս ամենի համար, քանի որ ամեն բան իմ մեղավորության և հիմարության պատճառով էր:

Հաջորդ իրադարձությունը տեղի էր ունեցել իմ բիզնեսի առաջին տարիներին, երբ ինձ մարզում էր կազմակերպության տարածաշրջանային փոխնախագահը: Երբ նա ստուգում էր իմ վաճառքներից մեկը, նկատեց, որ ձևաթղթերից մեկը մոռացել էի տալ հաճախորդին, որպեսզի ստորագրի: Նա ասաց. «Խնդիր չկա, պարզապես պահիր լույսի ներքո, և որտեղ ստորագրություն չկա, արտատպիր: Ի վերջո, նրանք ուզում են այս ապրանքը և մնացած բոլոր տեղերը ստորագրել են»: Ես հենց այդպես էլ արեցի: Մեկ ամիս հետո իմ հաճախորդի իրավաբանից զանգ ստացա: Նա ասում էր, որ ինձ դատի է տալիս իր ստորագրությունը բանկում ելքային հրամանագրի տակ կեղծելու համար: Նա ինձնից պահանջում էր 100.000 դոլար: Գումարի չափն իջեցվեց մինչև 5.000 դոլարի, քանի որ իմ տարածաշրջանային փոխնախագահն այս ամենի մեջ իր պատասխանատվության մասն ուներ, և նրան աշխատանքից հեռացրին:

Սա ինձ համար դաս եղավ: Իմ նոր գործակալներից մեկը պետք է ապահովագրության քննություն հանձներ, բայց ուսումնական նյութերը ձեռք բերելու գումարը չուներ: Ես պատճենահանեցի իմ նյութից, որ օգտագործի: Իսկ նա թողեց դա քննական սենյա-

կում: Արդյունքում, մեկ այլ իրավաբանից զանգ ստացա, ով հեղինակային իրավունքները խախտելու համար էր ինձ դատի տալիս: Այդ օրերին հարկային գրասենյակի ճանապարհը ջրի ճամփա էր դարձել: Միշտ գործ ունեի ժամկետանց հարկային մուրհակների և տուգանքների հետ: Աստված սովորեցնում էր պատասխանատու լինել. Նա դաստիարակում էր ինձ: Նա գիտեր, որ մի օր ձեռքս միլիոնավոր դոլարներ են հայտնվելու, և թույլ չէր տալիս, որ դրանք կորցնեի: Շնորհակալություն Աստծուն այդ ամենի համար:

Ես պետք է սովորեի, որ Աստված էր ինձ առաջնորդում, բայց Նա միայն իմ աշխատանքը չէր դիտարկում: Նա նույնպես ստուգում էր իմ ազնվության ամրությունը: Դա է պատճառը, որ ասում եմ, որ Աստված քո ղեկավարի նման է խոսում: Քո ղեկավարը Աստծո ձեռքերում մի գործիք է, ով մարզում է քեզ հաջորդ առաջադրանքի համար, որ հնազանդ լինես իրեն: Կարո՞ղ ես հանձնել այդ քննությունը:

«Ո՛չ արևելքից, և ո՛չ արևմուտքից, և ո՛չ էլ անապատից որևէ մեկը չի կարող մարդուն բարձրացնել: Բայց Աստված է դատավորը. մեկին խոնարհեցնում է և մյուսին բարձրացնում»:

– Սաղմոս 75.6,7

«Ոչ մի խրատ խրատելու պահին հաճելի չէ, այլ ցավալի է: Բայց հետո դրանով վարժվածների համար այն արդարություն և խաղաղություն է վճարում»:

– Եբրայեցիների 12.11

«Ծառանե՛ր, հնազանդ եղեք ձեր երկրավոր տերերին <u>հարգանքով և վախով</u> և ձեր սրտի միամտությամբ, ինչպես Քրիստոսին կհնազանդվեիք: Ոչ թե նրանց բարեհաճությունը շահելու համար հնազանդվեք, երբ նրանց աչքը ձեզ վրա է, այլ ինչպես Քրիստոսի ծառաներ, որ <u>Աստծո կամքն են անում սրտանց</u>: Ամբողջ սրտո՛վ ծառայեք, իբրև թե Տիրոջն եք ծառայում, և ոչ թե մարդկանց՝ իմանալով, որ

Ասփված վարձահատույց կլինի ամեն մեկին ամեն արած բարիքի համար, թե՛ ծառա լինի, և թե՛ ազատ: Եվ դուք, տե-ր՛եր, նույնկերպ վարվեք ձեր ծառաների հետ: Նրանց մի՛ սպառնացեք՝ իմանալով, որ Նա, Ով ձեր և նրանց Տերն է, Երկնքում է, և Նրա առջև երեսպաշտություն չկա»:

– Եփեսացիների 6.5-9

Հնազանդություն՝ հարգանքով և վախով: Քո ղեկավարի նկատմամբ նման վերաբերմունք պետք է ունենաս: Պողոսը սահմանել է, որ ղեկավարին հնազանդվելը հավասարազոր է Աստծո կամքն անելուն: Մի՞թե զարմացաք: Ես զարմացել էի:

Ուրեմն, ո՞ւմ ձայնին է նման Աստծո ձայնը. քո ղեկավարի:

ՍԱ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ Է:

Ավարտելով այս սերտողությունը՝ հուսով եմ, որ այն ոգևորեց և քաջալերեց ձեզ: Սուրբ Հոգին իսկապես կյանքի հրաշալի Գործընկեր է. Մեկը, ով խոստացել է, որ երբեք ձեզ չի թողնի ու չի լքի: Ինձ համար մեծ պատիվ էր փոխանցել ձեզ այս անգնահատելի ճշմարտությունները:

– Գարի Կիսի

Պարտքերից ազատվելու և ապահով ներդրում կատարելու վերաբերյալ ավելի շատ տեղեկություն ստանալու համար կարող եք զանգել իմ ընկերություն՝ Ֆորվարդ Ֆայնենշլ Գրուփ (Forward Financial Group) 1-(800)-815-0818 հեռախոսահամարով:

Աստծո Թագավորության մասին ավելի շատ տեղեկություն ստանալու համար այցելե՛ք FaithLifeNow.com կայքը:

«Հավատքի կյանք» եկեղեցու մասին ավելին իմանալու համար այցելե՛ք FaithLifeChurch.org կայքը:

Գլուխ 12

ԻՆՉՊԵՍ ԱՂՈԹԵԼ ԵՎ ՄԿՐՏՎԵԼ ՍՈՒՐԲ ՀՈԳՈՎ

Աստծուց ամեն բան ստանում ենք հավատքով՝ հավատալով այն բանին, ինչ Աստված է ասել մեզ: Նույնը վերաբերում է այս պարգևը Աստծուց ստանալուն: Նախքան այս պարգևն ընդունելու համար աղոթելը, անպայման կարդացեք այն աստվածաշնչյան խոսքերը, որոնք նշված էին այս գրքում, որ վստահ լինեք, որ դա է Աստծո կամքը ձեզ համար, և որ ձեր հարցերը պատասխանված լինեն: Երբ վստահ լինեք, որ Սուրբ Հոգով մկրտությունը ձեզ համար է, այս աղոթքն արեք.

«Հա՛յր, խնդրո՛ւմ եմ, Քո հզոր Հոգով մկրտի՛ր ինձ: Ես ընդունում եմ այն ՀԻՄԱ, համաձայն Քո Խոսքի, որը կարողություն է տալիս ինձ աղոթելու Հոգով: Ես սա խնդրում եմ Հիսուսի անունով և Քո փառքի համար: Ամե՛ն»:

Դուք ոչ թե արտասովոր վերապրում կամ հատուկ զգացողություն եք փնտրում, այլ ամուր կանգնած եք Աստծո Խոսքի վրա և հավատում եք, որ երբ աղոթում եք, ստանում եք: Խնդրելուց և ստանալուց հետո սկսեք փառավորել Աստծուն և շնորհակալություն հայտնեք՝ Իր Հոգով ձեզ օծելու համար, ինչպես որ խոստացել էր:

Երբ աղոթում եք, պարզապես վստահ եղեք՝ գիտակցելով, որ երբ խնդրում եք, ստանում եք: Պարգևը ստանալու դրսևորված ապացույցը կարևոր չէ: Ձեր ապացույցը Աստծո Խոսքն է:

> *«Աղոթքի մեջ ինչ էլ, որ խնդրեք, հավատացեք, որ առել եք, և այն ձերը կլինի» (Մարկոս 11.24բ):*

Աղոթելիս երկրպագեք Տիրոջը, որ Աստծո Հոգին ազատ դրսևորի Իրեն ձեր աղոթքի լեզվում: Աստված չի շարժելու ձեր շուրթերը: Դո՛ւք պետք է բացեք այն, որ լեզուներով աղոթեք: Ոմանք աղոթելիս որովայնում ինչ-որ թրթիռ կամ պրկվածություն են զգում, կամ զգում են Աստծո Հոգուն:

Շարունակեք աղոթել և տրվեք Աստծո Հոգուն: Դուք կզգաք, թե ինչպես են տարբեր ձայներ կամ վանկեր դուրս գալիս ձեր հոգուց: Պետք է հավատքով տրվեք այդ ձայներին: Այդպես անելով՝ Աստծո Հոգու հոսքը և հորդանքը կուժգնանա:

Եթե ինչ-որ պատճառով անմիջապես չեք խոսի լեզուներով, մի՛ անհանգստացեք. դուք ստացել եք այն *հավատքով,* պարզապես շարունակեք գոհանալ Աստծուց Իր օծության համար: Տեսել եմ, թե ինչպես են մարդիկ մկրտվել Սուրբ Հոգով, բայց Հոգով սկսել են աղոթել հենց ճանապարհին, կամ էլ հաջորդ առավոտյան լոգանք ընդունելիս, կամ մի քանի օր հետո խոտը հնձելու ժամանակ: Կարևորը հավատքո՛վ ընդունելն է, և ոչ թե զգացմունքներով:

Հոգով աղոթելը թող դառնա ձեր առօրյայի մի մասը, և հզոր հավատքի կյանք զարգացրեք: Աստված կխոսի ձեզ հետ և կառաջնորդի գտնել տարբեր խնդիրների պատասխաններ: Վստա՛հ եմ, որ ժամանակ կհատկացնեք աղոթքին և կվայելեք Աստծո Արքայության բոլոր բարիքները, որոնք արդեն ձեզ են պատկանում:

ՆՇՈՒՄՆԵՐ

1. Ջեյըրդ Դուբլին, «Բանտարկված երկրպագուն, ով 88 միլիարդի դատական հայց է ներկայացրել ընդդեմ Ֆուտբոլի ազգային լիգայի Փեքերների հետ խաղում՝ Դեզ Բրայնի բռնած գնդակը չհաշվելու համար»: https://www. cbssports. com/nfl/news/jailed-fan-suing-nfl-for-88-billion-over-dez-bryant-non-catch-vs-packers/.

2. http://www.dictionary.reference.com/browse/Edified?s=t.

3. Լին Էդվարդս, «Հոգեբաններն ասում են, որ երեխաներն արդեն վեց ամսեկանում տարբերում են ճիշտը՝ սխալից»: Մայիսի 10, 2010թ. https://medicalxpress.com/news/2010-05-psychologists-babies-wrong-months.html.

Գարի Կիսիի
«Ձեր ֆինանսական հեղափոխությունը»
գրքաշարի գրքերը

Համաձայնության զորությունը

Հանգստի զորությունը

Մատակարարման զորությունը

Առատաձեռնության զորությունը

ՁԵՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

Մարտավարության զորությունը

Կյանքում բազմաթիվ կարևոր որոշումներ կան:

Ինչպե՞ս կարելի է իմանալ, թե որ տունն արժե գնել, ում հետ ամուսնանալ կամ ինչ գործի անցնել:

Եթե ցանկանում եք հաջողակ լինել, դրա համար անհրաժեշտ է մարտավարություն ունենալ: Բայց ինչպե՞ս կարող եք մարտավարություն մշակել, եթե բոլոր հարցերի պատասխանը չունեք:

Աստծո գաղտնիքները պահված են ձեզ համար, և ոչ թե ձեզնից:

Աստված ցանկանում է, որ դուք ունենաք բոլոր հուզող հարցերի պատասխանը, և դրա համար էլ ձեզ գաղտնի զենք է տվել:

«Ձեր ֆինանսական հեղափոխությունը» գրքաշարի երրորդ գրքում Գարի Կիսին բացահայտում է իր հաջողության էական բաղադրիչները և Աստծո Թագավորության ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ գաղտնիքը. մարտավարության զորությունը: Ամեն մարդ կարող է ձուկ որսալ, եթե իմանա, թե որտեղ գցի ուռկանը: Աստված ունի ձեր բոլոր կարիքների պատասխանները, բայց դուք պետք է հասկանաք, թե ինչպես է հնարավոր լսել այդ պատասխանները և կիրառել կյանքում: Այս գիրքը հենց այդ մասին է:

Միացե՛ք Գարիին, և միասին մեկնենք ճշմարտություններ բացահայտող ճամփորդության՝ բացահայտելով, թե ինչպես կարող ենք կյանքում կիրառել «Մարտավարության զորությունը»:

Գարի Կիսին հեղինակ է, քարոզիչ, գործարար, ֆինանսական մասնագետ և հովիվ: Նրա նպատակն է օգնել մարդկանց հաղթել կյանքում, հատկապես՝ հավատքի, ընտանիքի և ֆինանսների բնագավառներում: Գարին և կինը՝ Դրենդան, ստեղծել են մի քանի հաջողակ ձեռնարկություններ: Նրանք «Հավատքի կյանք՝ հիմա» ծառայության հիմնադիրներն են, որը թողարկում է երկու հեռուստատեսային հաղորդում՝ «Ֆինանսների կարգավորում» և «Դրենդա» անվանումներով, անցկացնում է համաժողովներ աշխարհով մեկ և տրամադրում է գործնական նյութեր: Կիսիները հովվում են նաև «Հավատքի կյանք» եկեղեցին, որը գտնվում է Օհայո նահանգի Կոլամբուս քաղաքին մոտ:

GKM GARY KEESEE MINISTRIES

garykeesee.com